ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆԵԱՆ
(Լ Ա Ս)

ՀԱՐՑԱԿԱՆԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՎԷՊ

II

891.99
Ա-74

ՓԱՐԻԶ

15.02.201

891.99
Ա-74

01 JAN 2009

19 NOV 2010

ԼՈՒԻԶԱ ԱՍԼԱՆԵԱՆ
(ԼԱՍ)

ՀԱՐՑԱԿԱՆԻ ՈՒՂԻՆԵՐՈՎ

ՎԷՊ

II-III

ՓԱՐԻԶ

15.02.2013

NOV 2010

ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

ԿԼԻՄԱՅ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГОС. БИБЛИОТЕКА
ՀՍՍՌ-Арм. ССР
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
им. А. Мясникяна
Ж441-70

15.02.201
20459
NOV 2010

1

Մեծ այն տունը, որ մի ժամանակ խնամքի ու սիրոյ բոյն էր, այժմ կիսաւեր է... — Դատարկ սենեակներ, սեւացած պատեր, փշրուած լուսամուտներ...

Գրիգոր աղայի ննջարանում մնացել էր միայն մի մահճակալ՝ կապոյտ պաստառներով գեղեցիկ այն ննջարանում, ուր նա իր կնոջ հետ միասին, այնքան երազներ հիւսեց:

— Աղջիկս տասը տարեկան է, տղաս տասնըմէկ, կրթելու ժամանակն է... Ճիշտ է, բաժանումը հեշտ չէ, սակայն, չպէտք է եսասէր լինել:

— Պպէտք է եսասէր լինել,— կրկնում էր կարծես ինքն իրեն աղա Գրիգորն ու ոտքի ծայրերի վրայ մտնում մանկանոց:

Այնտեղ, փոքրիկ մահճակալին, ձեռքերն երեսին դրած, քնած է Ռոզը: Հայրը մօտենում է նրան, համբուրում գլոյշ, շատ գլոյշ, ապա դառնում է հակառակ կողմը՝ կոանում դեռ չքնած չարաճճի Բարգէնի վրայ ու շոյում է նրա մանրիկ գանգուրները.— Իմ տղան, իմ տղան, իմ տղան,— շշնջում է նա ու ձեռքը վարանոտ քսում մազերին...

Մոտակոտ դառնում է ննջարան: Կանգնում է կնոջ դիմաց, կարօտով նայում նրա դէմքին, կարծես աչխա-

տում է ամուր գրոշմել նրա պատկերն իր յիշողության մէջ...

— Բա՛յց...

Աղա Գրիգորն անմիջապէս դադարում է:

Ու կինը երկու գաւակներով մեկնում է Փարիզ:

Անցնում են տարիներ: Գրիգոր աղան տանջւում է մենակութիւնից, տխրում է, յուսահատւում...

« Ռոզը տասնըչորս տարեկան է, վտանգաւոր տարիքն է, չեմ վստահում օտարի մօտ թողնել: » —

Քաշւած իր ննջարանում, վառարանի մօտ, մենակ՝ որբի պէս նստած աղա Գրիգորը, կարդում է կնոջ նամակը: Նրա սեղանի վրայ դրւած է սիրած այդ կնոջ լուսանկարը, իր թարմ ու գեղեցիկ դէմքով, իր բարձր ու լիքը մարմնով: Վերցնում է նկարը, մօտեցնում աչքերին:

Դուրսը ցուրտ է դեռ: Մարան իր գժուութիւններն է ցոյց տալիս, ու ոռնում է քամին: Վառարանի կրակը աւելի ու աւելի է բորբոքւում եւ աղա Գրիգորի մարմինը փչաքաղւում է: Սիրտն ուզում է կարծես դուրս ժայթքել տեղից:

Լուսանկարը դնում է վար, գլուխը յենում սեղանին ու լայն բացած բիբերով դիտում է սենեակը:

Մեծ լուսամփոփով ճրագը լուսաւորում է նրա գլուխն ու սեղանը միայն՝ սենեակի միւս մասերը կիսախաւար մթութեան մէջ թողնելով: Լուռ է ամեն ինչ, դատարկ է տունն ամբողջ, եւ դրսում քամին է սուլում...

— Գրիգորիյ Պետրովիչ, Գրիգորիյ Պետրովիչ...

Լսում է յանկարծ աղա Գրիգորն իր անունը:

— Ո՞վ կայ այդտեղ, կանչում է նա վախեցած ու ցած ձայնով:

— Ես եմ, ես:

Աղա Գրիգորը նայում է կիսաբաց դռան, որի առաջ, մետաքսէ շրջազգեստը հագին կանգնած է ուռ

դերձակուհին... Այն, որի հետ նա ծանօթացաւ անցեալ դիշեր... սրճարանում... բոլորովին պատահմամբ...

Աղա Գրիգորն առաջին անգամ հանդիպել էր նրան դեռ անցեալ ամրան փողոցում, երբ բարակ կերպասէ շրջազգեստով անցնում էր նա իր առջեւից: Բարձրահասակ ու լիքը մարմնով ռուս այդ կինը, այնքան նման էր աղա Գրիգորի կնոջ, այնքա՜ն նման... Նրա ոտքերն այնպէս փոքր էին, ինչպէս իր կնոջը, ու նա նոյնպէս սեւ ու փայլուն կօշիկներ ունէր հագին:

Այնուհետեւ աղա Գրիգորը յաճախ էր հանդիպել նրան իր ճամբու վրայ եւ շատ յաճախ զգացել, որ դերձակուհին հետապնդում է իրեն, ժպտում խոստմնալի ժպիտներով...

Ու մի օր յանկարծ, անսպասելի ծանօթութիւն, սրճարանի մէջ...

— Ես եմ, Գրիգորիյ Պետրովիչ, այդ ես եմ, նայի՛ր:

Աղա Գրիգորը նայում է: Մետաքսէ զգեստը ծփծփալով առաջ է գալիս, գալիս է, գալիս, մօտենում է սեղանին ու ձեռքը դնում նրա այրուող ճակատին:

— Խեղճ Գրիգորիյ Պետրովիչ... դուք հիւանդ է՞ք:

— Հիւա՞նդ: Այո՛... ջերմում եմ կարծես:

— Ջերմում է՞ք... — Ու ռուս դերձակուհին ժըպտալով եւ ատամները շորոր-շորոր տալով, բոլորովին մօտենում է աղա Գրիգորին ու զգուշութեամբ նստում նրա ծնկներին...

Աղա Գրիգորի մարմնով ելեքտրական ուժեղ մի հոսանք է անցնում: Նա աջ թեւով գրկում է գիրուկ մարմինը կնոջ ու ձախը դնում նրա ոտքին: Շոյում է լուռ: Կինը, գլուխը յետ գցած, յենւում է նրա ուսին ու չի շարժւում: Իր կինն էլ այդպէս էր անում... Յենւում էր ուսին ու չէր շարժւում... Աղա Գրիգորն սկսեց տաք-

տաք համբուրել նրա ձեռքերը, այտերը... բայց երբ բորբոքած շրթունքներն ինչան կնոջ շրթներին ու նա զգաց իր մարմնի ամբողջ զօրութիւնը, ցնցւեց յանկարծ ու սեղանին յենած՝ ծանրացած գլուխը բարձրացրեց...

Արթնացաւ:

Դրսում քամին շարունակում էր սուլել:

Աղա Գրիգորն անմիջապէս վեր թռաւ տեղից: Դուռը փակ էր: Նա վերցրեց պատից կախուած գլխարկն ու վերարկուն ու համարեա վազելով ինչաւ սանդուխքներից... Դերձակուհին հեռու չէր ապրում...

Փողոցի դուռը բանալիս Գրիգոր աղան յիշեց յանկարծ, որ սենեակի լոյսը չէր մարել...

Վերադարձաւ:

Կանգնեց մի պահ բակի աստիճանների վրայ, մութի մէջ, յիշեց Ռոզին... Բարգէնին...

Աղա Գրիգորը վերադարձաւ սենեակ, հանեց վերարկուն եւ օղու շիշը դրեց սեղանին:

« Ռոզը տասնըչորս տարեկան է արդէն, վտանգաւոր տարիքն է, չեմ վստահում օտարի մօտ թողնել... »

Յաջորդ առաւօտ աղա Գրիգորը հեռադրում է կնոջ.—

« Մնա՛ մէկ տարի եւս »:

Մէկ տարի եւս, երկու տարի եւս...

Ամեն գիշեր աղա Գրիգորն օղու մի շիշ էր դնում հարեւան նպարավաճառից...

— Հիւր ունեմ, Մեսրոպ, ասում էր նա ամաչելով:

Մեսրոպը ժպտում էր ցոյց տալու համար, որ հաւատում է նրա խօսքերի ճշմարտութեան...

— Ռուս դերձակուհին քամում է աղա Գրիգորին հա՛, գիտե՞ս Մարկոս:

— Հա՛, գիտեմ, Կիրակոս. ո՞վ չգիտէ ո՛ր: Ամեն գիշեր իր տանն է:

— Լաւ էլ կոնծում են...

— Ի՜հ, ինչ անենք, աշխարհն երկու օրւայ չէ՞...

— Ու Մարկոս, Կիրակոսը ծիծաղելով, իրար հրում, պատի տակից ամօթահար եղածի պէս շտապ քայլող աղա Գրիգորին են ցոյց տալիս:

Բոլոր անցորդները նայում են նրան ու տարակուսանքով գլուխներն են շարժում:

Աղա Գրիգորն այնպէս անճանաչելի էր դարձել... Խմելն իր ամենօրեայ սովորութիւնն էր արդէն եւ յաճախ էր նա հարբած տուն վերադառնում՝ ճանապարհին օղու նոր մի շիշ դնելով:

Այսպէս շարունակել սակայն անհնար էր... Եւ աղա Գրիգորը շուտով զրկւում է իր պաշտօնից:

— Այժմ կինը կը վերադառնայ... — Ասում էին մարդիկ չարամիտ ժպիտներով:

Եւ կինը երկու գաւակներով վերադարձաւ:

Ռոզը... Բարգէնը... Այդ ինչ աննման երեխաներ ունէր աղա Գրիգորը... — Ռոզն իսկական փարիզուհի՝ որ այնպէս չարաճճիօրէն ծիծաղում էր հայերէն խօսելիս... մոռացած բառերն օտարի շեշտով արտասանում, սխալւում յաճախ նրանց նշանակութեան մէջ: Բարգէնը լուրջ մի տղայ, երազուն աչքերով, նւիրւած նկարչութեան:

Գրիգոր աղան սթափւեց կարծես: Վճռեց մոռանալ ամեն ինչ, չխմել այլեւս...

— Բայց ի՞նչու հեռացրին քեզ պաշտօնից, հարցնում էր միշտ կինը:

— Այդ մասին դու մի մտածիր, ես նոր գործ կը գտնեմ: Դու տունդ կարգի դիր: — Համոզում էր աղա Գրիգորը, համարեա աղաչում:

Կինը հաւատում էր: Սակա՞յն... Սակայն, այդ ինչ տարօրինակ շշուկներ էին պտտում քաղաքում, այդ ինչ

խորհրդաւոր հայեացքներ էին, երբ նա թեւանցուկ քայլում է ամուսնու հետ... «Զէ՛,— մտածում էր աղա Գրիգորի կինը,— այստեղ մի բան կայ, ուրիշ մի բան...»

— Դէ, խանըմ ջան, տղամարդ ա չէ՞... Ախր հօ կնիկմարդ չի՞ր...

— Դու ի՞նչ ես լսել, Զաւահիր բաջի, դու քո լաւածդ ինձ պատմիր: Մի վախեցիր:

— Վալլահ, խանըմ ջան, ես շատ բան չեմ իմանում... Էն Կունդուլենց Ալեքսանի կնիկն էր ասում...

— Ի՞նչ էր ասում, Զաւահիր բաջի:

— Ընդուր էլ թիզ բացող Ոսկին ա ասել, եանի թէ... Դէ՛, ինչ մանամ խանըմ ջան, անցած բան ա... Հիմա հօ էնէնց չի՞:

— Առաջ ի՞նչպէս էր:

— Դէ առաջ շատ էր խմում: Ի հարկէ, մեղքը իրենը չէր, ուռուս կնկայ ձեռքն ընկնողը կը խմի էլ, կը դիժի էլ, խանըմ ջան:

Աղա Գրիգորի կինը հասկացաւ վերջապէս: Կար ուրուս մի կին...

Զսպելով վիրաւորուած կանայի ինքնասիրութիւնն ու դայրոյթը՝ նա լացք անող Զաւահիրից տեղեկացաւ ամեն մանրամասնութեան: Ցեռոյ կոտրուած սրտով, փշրուած էութեամբ վերադարձաւ ննջարան ու հեծկլտալով ընկաւ անկողնու վրայ:

Այլեւս ճար ու հնար չկար: Ընտանիքի առանցքը կոտրուել էր արդէն:

Աղա Գրիգորի կինը շատ ջանք թափեց իր լսածների մասին ոչինչ չասել ամուսնուն, ոչ իսկ յիշեցնել նրան իր անցած կեանքը: Բայց, երբ աղա Գրիգորը, չկարողանալով իրեն զսպել ու հրաժարուել արդէն պահանջ դարձած սովորութիւններից՝ մի քանի անգամ հարբած տուն վերադարձաւ ու երբ հաղիւ արցունքները զսպելով

կինն առանձնացաւ Ռոզի սենեակն ու հոնգուր-հոնգուր լաց եղաւ, այլեւս վերջին քօղն էլ պատուեց եւ ընտանեկան կռիւների ծայրը սկսուեց:

Տունը դարձաւ կատարեալ դժոխք:

Այնուհետեւ քաշուած իր տան չորս պատերի մէջ, աղա Գրիգորի կինը կամաց-կամաց կտրեց մարդկանց հետ իր յարաբերութիւններն ու շարունակ արցունքոտ ու ջղային, լուռ տառապեց, կուլեց յաճախ ամուսնու հետ, դայրացաւ, ու անիծեց իր օրը:

Այժմ մնում էր նրան միայն մէկ ճամբայ՝ վերցնել երեխաներին եւ հեռանալ քաղաքից: Վերադառնալ Ֆրանսա, իր եղբօր մօտ:

Ու մեծ տունը Գրիգոր աղայի, որ մի ժամանակ այնքան գեղեցիկ էր ու այնպէս ուրախ, խսպառ լքուեց ու ամայացաւ: Կապոյտ պաստառներով երբեմնի սիրուն ննջարանում մի մահճակալ մնաց միայն ու կոտրուած մի սեղան...

Ցուրտ էր այնտեղ... Սարսափ ազդող մի բան կար այդ տան մէջ...

Անծանօթ ու չար ոգիներ զուցէ, որ թունաւորելով աղա Գրիգորի արիւնը, այժմ աչք էին հեռացնում իրենց գոհից ու հրհռում էին անամօթաբար սենեակի իւրաքանչիւր անկիւնից: Անծանօթ ու չար ոգիներ... Աղա Գրիգորն ինքը եւս զգում էր նրանց գոյութիւնը, բայց երբեք չէր մտածում թէ ո՞րտեղից եկան նրանք, եւ թէ ի՞նչպէս եկան...

Նրա համար ոչինչ արժէք չունէր այլեւս՝ ոչ իսկ իր թշուառութիւնը:

◆

Լուսաբաց էր։

Երկնքից վարդագոյն լոյս էր կաթում երկրի վրայ։

Հարթ տանիքների, ծառերի կատարների, ծխնելոյզների վրայ հաղիւ զսպուած մի լռութիւն էր իջել, որ մերթ ընդ մերթ ճեղքւում էր այս ու այն բակից բարձրացող ոլորուն փետուրներով դունագեղ աքաղաղների կանչից՝ ծուղ-րու-ղու...

Քաղաքը վերածնունդի ժամն էր ապրում։ Սպասողական բոպէները հեծել էին իրար վրայ, ժամանակը բռնել էր իր շունչը, հողը ուռել՝ խորքից բարձրացող հառաչից...

Երբ չառագունած երկինքը պատուեց վերջապէս ու կարմիր նուռը պայթեց, հեռաւոր ու լուսաւոր աշխարհից ժողուած վարդագոյն շողեր շպրտելով լուսամուտների ապակիներին, մի դուռ ճռռաց զգոյշ ու կամաց։ Սիրուն մի գլուխ դուրս հանեց փարթամ իր մազերը, նայեց աջ ու ձախ եւ յուլունքէ երկու պայծառ աչքեր բարձրացան դէպի երկինք։

Հեռուից՝ զարնանային երազի միջից, լսւում էին, կարծես երկնքից եկող մեղմ զօղանջներ՝ տի՛նդ... Անտեսանելի ու անիրական զանգակների զօղանջներ, որ հատիկ-հատիկ ընկնում էին վար, ոլորւում մի վայրկեան, ու փշրւելով թափւում երկրի երեսին ու մարդկանց հոգիների վրայ։

Նա կամաց դուրս եկաւ փողոց։ Դարձաւ, երկու ձեռքով զգուշութեամբ զոցեց դռան փեղկն ու թեթեւ մետաքսէ ծածկոցն ուսերի վրայ հաւաքելով, նետւեց վաղորդեան թարմ միջոցի մէջ։

Հրաշքների ժամն էր... երբ կատարւում է հոգիների բոպէական ելքն այս աշխարհից, երբ հասունանում են ենթագիտակցութեան ու գերզգայնութեան մէջ պահւած թաքուն ձգտումները, իրական այս կեանքից, մարդուն դէպի յաւիտենականութիւնը, դէպի գերագոյն խորհուրդը հասցնելու համար։ Եւ մարդը հասկանում է գերզգայնութեան իրական գոյութիւնը, հաւատում է տեսիլներին, որոնք նետում են մեզ մի ուրիշ իրական աշխարհ։

Հրաշքի ժամը... Երբ մարդը վերակոչելով, վերարտադրելով, շուռ տալով, թափահարելով իր մէջ թմրած մի էութեան գոյութիւն, կարողանում է դուրս գալ այս աշխարհից, երեք չափերի վրայ կառուցւած սովորական կեանքից, մտնելու համար մի նոր չափի մէջ՝ հոգու աշխարհի մէջ։

Հոգու աշխարհը, որ այնքան մօտիկ է սիրող սրտերին...

Նա ձեռքը դրեց թրթռացող իր սրտին ու շարունակեց քայլել թեթեւ ու մանր քայլերով՝ մերթ յետ նայելով, մերթ ականջ կախելով իր ոտնաձայնին եւ յուլունքէ աչքերը դէպի երկինք դարձնելով։

Տի՛նդ... տի՛նդ... Երկնքի կապոյտը խառնւեց իր մտքում անորոշ մի աղօթքի հետ, որի թափանցիկութեան մէջ վերից հոսող զօղանջները, հատիկ-հատիկ դեղին մոմեր վառեցին։ Աչքերի ծովի մէջ հալւեց երիտասարդ հոգու թախիծը կապոյտ։

Այնպէս ուրախ էր իր մենակութեան համար։ Սիրտը լցւած էր եւ կամքը անզօր ընդդիմադրութեան։

Անզօր էր այնպէս, ինչպէս մէկ տարի առաջ, երբ չկարողանալով հակառակել մօր ուժեղ կամքին, այնպէս անմիտ ու այնպէս անսպասելի, մերժեց Բարդէնին...

Մերժե՞ց... Բայց ինքը բնաւ չէր անդրադարձել հետեւանքներին... Չէր կարողացել գալ դրութեան լրջութիւնը...

— Մայրս չի ուզում, Բարդէն,— ասել էր, երբ նա

այնպէս ամուր-ամուր սեղմում էր իրեն իր դրկի մէջ,— մայրս չի ուզում:

Գիշեր էր, հեռու մի փողոցում, մոխրահեր փշատենու տակ... Մանր ծաղիկների բուրմունքը հարբեցրել էր նրանց: Նրանք յենւել էին ծառի ծուռ ընին:

— Իսկ դո՞ւ, դու սի՞րում ես ինձ, Մարգարիտ:

— Ես սիրում եմ քեզ:

— Ուրե՞մն:

— Բայց յետո՞յ...

Այս հարցն էր ահա, որ ցնցել էր Բարդէնին:

Այո՛, ճիշտ է, Մարգարտի մայրը իրաւացի էր... Բարդէնը երիտասարդ, խեղճ մի նկարիչ... Գրիգոր աղայի որդին... Ընկած հօր դաւակ... Անդորձ ու աղքատ... Ի՞նչպէս էր պատահել, որ տարւած խենթ սիրով, երբեք չէր անդրադարձել այդ «յետոյ»ի վրայ: Տիկին Սաթենիկն իրաւունք ունէր: Նա յանկարծ հրեց, հեռացրեց իրենից Մարգարտին: Մարգարիտը վախեցած ու ինքն իրեն վայրկեանական անդարձ կորուստի առաջ ըզդալով, փաթաթւեց անմիջապէս նրա պարանոցին:

Բարդէնն աշխատում էր սառն ու անտարբեր ձեւանալ: Նա գիտէր Մարգարիտի մերժումի պատճառն ու հասկանում էր նրան: Գիտէր, որ տիկին Սաթենիկին պատիւ չէր բերի իրենց ամուսնութիւնը, իսկ Մարգարիտն անկարող էր հակառակել մօր կամքին...

Մարգարիտը միամիտ ու մանկունակ աչքերով, նայեց նրան, ջանաց մութի մէջ որոշել դէմքի արտայայտութիւնը...

Մի քանի շաբաթից յետոյ էր, որ Բարդէնը, մօր ու քրոջ հետ միասին, մեկնել էր քաղաքից առանց Մարգարտին մնաս բարեւ ասելու:

. . .

Երկար քայլեց Մարգարիտն առաւօտեան այդ թարմութեան մէջ: Դնաց մի քանի անդամ մինչեւ ծուռ ընով այն փշատենին, որ անտարբեր շարունակում էր կանգնած մնալ հեռաւոր փողոցի ծայրին, վերադարձաւ կրկին, սպասելով կարծես հոգին փոթորկող յուզումների հանդարտելուն:

Փիչ յետոյ ընութիւնը խաղաղւեց: Սպասողական վիճակը քաշեց իր վեշերն ու բաց կապոյտ թաւշի վրայ երեւաց ճերմակ արեւը... Բռնկւեց ժպիտը նրա նուրբ շրթունքների, զլխի թեթեւ թափահարումով, մէկզի նետեց տատանումները բոլոր, թեթեւ մետաքսէ ծածկոցը հաւաքեց ուսերի վրայ ու վճռողական քայլերն ուղղեց դէպի աղա Գրիգորենց տունը:

Երբ կարճ լռութիւնից յետոյ, աղա Գրիգորը նըստեց իր մահճակալի ծայրին ու սենեակի միակ աթոռն առաջարկեց Մարգարտին, նրանք բարեկամաբար նայեցին իրար:

— Պարոն Գրիգոր... Ես վճռեցի դալ ձեզ մօտ... Վճռեցի դիմել ձեր օգնութեան... Երկար սպասեցի, բայց արդէն հասել է ժամը... Մայրս այսօր...

Աղա Գրիգորը լռեց:

— Գիտեմ, զգում եմ, որ մենք մեղաւոր ենք ձեր առաջ,— շարունակեց Մարգարիտը ձայնը ցածրացնելով.— մենք մեղաւոր ենք ձեր առաջ, պարոն Գրիգոր... Իսկ ես՝ Բարդէնի առաջ: Բայց ես... այն ժամանակ... չէի կարող հակառակել մօրս կամքին, իսկ մայրս... Նա արդար չէ, նա չի կարողանում հասկանալ, հաւատալ սիրոյ զգացմունքներին...

— Սիրոյ զգացմունքների՞ն...

Մարգարիտը չիկնեց յանկարծ:

— Բարդէնն ու ես սիրում էինք իրար... — ասաց հազիւ լսելի ձայնով ու գլուխը կախեց:

Աղա Գրիգորը վեր կացաւ տեղից ու սկսեց քայլել սենեակում: Մարգարտի խոստովանութիւնը չզարմացրեց նրան: Ցաճախ էր հանդիպել նա Բարդէնին ու Մարգարտին միասին, յաճախ էր տեսել նրանց հեռաւոր փողոցներում, թեւ թեւի...

Նա մօտեցաւ Մարգարտին:

— Քո մայրը, աղջիկս, իրաւունք ունի:

— Պարոն Գրիգո՛ր...

— Իրաւունք ունի մայրդ, Մարգարիտ: Բարդէնն անարժան հօր զաւակ է... Արհամարհւած, բարոյական զսպանակները կորցրած մարդու զաւակ...

— Ես սիրում եմ Բարդէնին...

— Բարեկամանալ մի կորուած մարդու հետ,— շարունակեց աղա Գրիգորը յուզւած,— որ յետ դառնալու ոչ մէկ ճամբայ չունի այլեւս, որ այրել է բոլոր կամուրջներն իր ետեւից... Մտածե՞լ ես դու այդ մասին Մարգարիտ... Բարդէնը չաւարտեց իր ուսումը... Բարդէնս... Եւ դու պէտք է ապրէիր մի յարկի տակ նրա անարժան ծնողի հետ միասին... Ինձ հետ միասին, որ իր զաւակների երջանկութեան համար իսկ ոյժ չունեցայ կանգնելու, յետ դառնալու...

— Այդպէս մի ասէք, պարոն Գրիգոր... Եթէ ես կամք ունենայի, Բարդէնը չէր հեռանայ, չէր թողնի ինձ, իսկ մայրս, իսկ մօրս տեսակէտներն ու ցանկութիւնները...

— Այնուամենայնիւ, Մարգարիտ, որ մարդ անկարող է լինում երբեմն իր ուզածն անել... Երբեմն մարդ սիրուն երազներ է հիւսում, որոնց հասնելու համար ոչ մէկ խոչընդոտ կայ կարծես, բայց ներսում արթնանում է հուժկու, ամենակարող մի ուժ, որ դալիս է ու խորտակում

ամեն ինչ: Ես տեսայ մի օր Բարդէնին քո նկարի առաջ կանգնած... Տեսայ նրա սիրով լցւած աչքերը... Բայց նա գնաց... Ի՞նչպէս բերէր քեզ այս տան մէջ, ուր ծնողներն իրար հետ կռւում էին անդադար, ուր անհամաձայնութիւնն էր իշխում...

— Փախչում եմ եւ ես, պարոն Գրիգոր, փախչում եմ այն երջանկութիւնից, որ մայրս ցանկանում է պարտադրել ինձ:

— Մի հակառակիր մօրդ կամքին, աղջիկս: Խելացի ու հեռատես է նա:

Մարգարիտը լացակումած նայեց նրան:

— Մա՞յրս...

— Մայրդ իրաւացի է: Նա քո ապագայի մասին է մտածում: Շատ վաղուց էր սկսել մտածել... Երբ դուք՝ դու եւ Բարդէնը դեռ փոքր երեխաներ էիք ու խաղում էիք այստեղ, այս պարտէզում, մի օր մայրդ փսփսաց իմ ականջին.—

— Նայիր, ասաց, տես ի՞նչ սիրուն զոյգ է... Մարգարիտն ու Բարդէնն իրար համար են ստեղծւած... Այնուհետեւ մենք շատ յաճախ էինք խօսում այդ մասին... Մենք մի ժամանակ շատ լաւ բարեկամներ էինք... Բայց մայրդ արթուն է եւ զգաստ... Նա ճիշտ վարւեց, շատ ճիշտ վարւեց՝ խզեց մեզ հետ բարեկամութեան իր կապերը, յանուն իր ընտանիքի մաքրութեան, յանուն իր զաւակի ապագայի...

Աղա Գրիգորը ձեռքը դրեց Մարգարտի գլխին ու շարունակեց քնքշութեամբ.

— Դու դեռ շատ երիտասարդ ես, աղջիկս, քո առաջ տարիների երկար մի շարան կայ փռւած: Կեանքը քոնն է: Իսկական սէրը յետոյ է գալիս, հասուն տարիքի մէջ ու քեզ սպասում է իսկական երջանկութիւնը...

Մարգարիտը գլուխը կախ լսում էր աղա Գրիգորին,

Հայ ԽՍՀ Գրքերի Գոս. Գրադարան
ZUUՊ-Арм.ССР
Ա. Հմ. Ա. Մեսրոպի անվան

բայց սպասում էր կարծես, որ նա վերջացնէ իր խօսքը... Եւ երբ աղա Գրիգորը լռեց, Մարգարիտը գլուխը բարձրացրեց ու չեշտակի նայեց նրան: Նրա վճռական այդ շարժումն ու աչքերի մէջ բռնկուած հուրը, մի վայրկեան շփոթեցրեց Գրիգոր աղային:

— Պարոն Գրիգոր,— խօսեց վերջապէս Մարգարիտը,— ես եկել եմ խնդրելու ձեզ, եկել եմ աղաչելու, որ դրէք ու յետ կանչէք Բարդէնին:

Յանկարծ նա վեր կացաւ տեղից ու դոյդ ձեռքերով գրկեց աղա Գրիգորին:

— Կանչեցէ՛ք նրան, պարոն Գրիգոր, ասէք, որ ես սիրում եմ իրեն, որ առանց իրեն չեմ կարող ապրել...

Աղա Գրիգորը սարսափեց...

— Յե՞տ կանչել Բարդէնին... Գրել, որ վերադառնա՞յ... Ո՛չ, ո՛չ, Մարգարիտ, ոչ աղջիկս, այդ միանգամայն անկարելի է: Մտածիր թէ ի՞նչ ես ասում... Քեզ հետ միասին դու պէտք է դժբախտացնես եւ նրան... Դու պէտք է դժբախտացնես եւ ինձ... Իմ մեկ մխիթարութիւնը միայն այն է, որ դաւակներս այսօր հեռու են ինձնից եւ չեն տեսնում իրենց հօր այս սոսկալի անկումը, բարոյական այս անկումը... Նրանք չեն տեսնում իմ տանջանքները՝ թէ ինչպէս ամեն առաւօտ կշտամբում եմ ինքս ինձ, հայհոյում եմ, նախատում... Բայց երեկոյեան, ներքին մի ոյժ, խորքից բարձրացող մի պահանջ, քշում է ինձ ու ղցում նոր անկումների մի դուռ ու ես անկարող եմ պայքարել... Իմ Բարդէ՞նը, Մարգարիտ, դա՞յ ու տեսնէ՞ ինձ այսպէս...Ո՛չ, ո՛չ...այդ անկարելի է: Մենք լուռ դաշինք ենք կնքել իրար հետ՝ տանջել իրարից հեռու...

— Բայց կարելի է ստեղծել մի նոր կեանք...

— Ուշ է, ուշ... Գնա՛, Մարգարիտ, գնա՛ եւ լսիր մօրդ... Գիտես, անշուշտ, որ այսօր Ջաւէնը...

Բայց հազիւ էր աղա Գրիգորը վերջացրել իր խօսքը, Մարգարտի աչքերը լցուեցին արցունքով... Նա այլեւս ոչ մի բառ չարտասանեց, շտապ հեռացաւ աղա Գրիգորից եւ ձեռքերը երեսին սեղմած՝ դուրս փախաւ սենեակից...

2

Ճիշտ այդ օրն էր։

Մադամ Մառիի jour-fixe-ն անակնկալ ունէր...

Մարդիկ դեռ թէյ խմելու արարողութիւնը չէին վերջացրել, դեռ մինչեւ անգամ տանտիկինը կտրատած խմորեղէնները չէր բաժանել հիւրերին։ Շատախօս ու արագախօս տիկին Սասնիկը դեռ ժամանակ չէր ունեցել կողքին նստած մշտաժպիտ տիկին Նւարդին պատմել «monsieur Jean –ի ջէնտլմէն» վերաբերմունքի մասին, երբ այն երեկոյ... Ու դեռ մինչեւ անգամ հարեւան մըսավաճառի խանութի սեւ ու խոշոր ճանճը, որ շնորհիւ իր նրբին հոտառութեան, զգացել էր մօտակայ տան սեղանի վրայ դրուած անուշների հոտն ու թռել, այդտեղ էր եկել, մինչեւ անգամ նա՝ իր երկարաւուն մարմինն օդում տարուբերելով դեռ չէր վճռել թէ ո՞ր քաղցրեղէնի վրայ պէտք է իջնի։

Խօսել ու դատել էին միայն մի քանի անյաջող սէրերի, «անյարմար» ամուսնութիւնների մասին, փողոցներում թափառող անթիւ շների թունաւորման անհրաժեշտութեան մասին ու փոքրիկ Դեղդեմոնան հաղիւ մի անգամ էր միայն բարձրացել աթոռին ու՝ մէկ աչքը բանալով, միւսը փակելով, մատով քիթը խառնելով, արտասանել սովորական «Bonjour madame sans Soucis ին

եւ կողքին կանգնած մօր հրամանին հնազանդ, գլուխ տալ բոլորին՝ օդային համբոյրներ շռայլելով աջ ու ձախ։

Ճիշտ այն րոպէին, երբ բրդոտ ու անպոչ Fidèle-ը, տանտիրոջ հրամանին տեղի տալով, հաճել էր վերջապէս բարձրանալ երկու թաթերի վրայ ու բերանը բացած ուզում էր ընդունել մատերի ծայրով զգուշօրէն իրեն մօտեցրած շաքարի կտորը, յանկարծ բոլորի ուշադրութիւնը մէկ անգամից գամուեց սեղանի ծայրին նստած տիկին Հոռոմի վրայ։

Տիկին Հոռոմը յուզուած էր եւ խօսում էր արտասովոր եռանդով։

Նրա դէմքի արտայայտութիւնն այնպէս լարուած էր...

Բոլորը նրան էին նայում. որը բաժակը չրթին անշարժացած, որը թէյի գդալը բերանին մօտեցրած, որը ձեռքը հարեւանուհու թեւին սեղմած, սկսուած խօսքը կիսատ թողած...

Լայն ու կլոր դէմքը տիկին Հոռոմի, որ այնքան յիշեցնում էր հասած դեղձը, նրա սեւորակ աչքերը, փոքրիկ բերանն այնպիսի կենդանութիւն էին ստացել, այնպէս արտայայտիչ դարձել, որ ամեն ոք իր սրտի խորքում զարմանում էր նրա տարիքի համեմատ այդպէս թարմ մնացած արտաքինի վրայ։

Հպարտութիւն՝ դաղտնիքների մէջ արագ թափանցելու իր արտակարգ ընդունակութեան համար, երջանկութիւն՝ խառը միամիտ չարամտութեամբ, ուրիշներից աւելի բան գիտցողի հաճելի գիտակցութիւն ու բացայայտ որոշում, որքան կարելի է երկարացնել պատմութիւնը, մինչեւ բուն կէտին հասնելը՝ լսողներին մի փոքր չարչարելու անմեղ ցանկութեամբ լցած։ Ահա թէ ինչ էր արտայայտում այդ պահին տիկին Հոռոմի դէմքը։

Սկզբում նա սկսեց շատ ցածրաձայն, մէկ-մէկ ընդհանուր հետաքրքրութիւն արթնացնող բառեր նետելով աւելի հեռուները.

— Այո՛, ուղղակի սարսափելի էր...

— Ձեղած, չտեսնուած բան...

— Այդ ի՞նչ է պատահել, տիկին Հռոմ, ինչ ձեղած, չտեսնուած բաներից էք խօսում:

Կամաց-կամաց սեղանի շուրջ նստած հիւրերը մէկիկ-մէկիկ համախմբուեցին տիկին Հռոմի մօտ եւ սեղանի միւս մասն խաղաղ դատարկուեց...

Հարցեր, ժպիտներ, հետաքրքրութեամբ լի հայեացքներ...

— Օդը շատ լաւ էր: — Բոլորը զլխով հաւանութեան նշան արին:—Մտածեցի՝ ի՞նչ անեմ, ի՞նչ չանեմ... Վերջը վճռեցի, ինքս էլ չգիտեմ թէ ինչու եւ թէ ինչպէս, կառք նստել եւ գնալ կայարան: Պարզ, անմեղ մի պտոյտ: Գնացի: Ժամի երկուսն էր: Կառքս դեռ տեղ չհասած, աչքս ընկաւ յանկարծ կայարանի պատշգամբում նստած մի խումբ մարդկանց... Նայեմ... նայեմ... կարծես թէ ծանօթ դէմքեր լինէին: Հասայ կայարան, վար իջայ կառքից, բայց չմօտեցայ նրանց: Գուցէ, մտածեցի, սխալւում եմ, գուցէ ծանօթներ չեն... Թէեւ պարզ տեսնում եմ Նուբարի դէմքը, նրա կողքին Վարդենին, տիկին Սաթենիկն ու Վասիլ խանի տղան՝ Արշակը... Թէեւ, ասում եմ տեսնում եմ, որ նրանք են, прямо так, ինչպէս որ հիմա ձեզ եմ տեսնում, բայց դէ, մտածում եմ ինձ ու ինձ, գուցէ նրանք չեն, այլ նրանց նման ուրիշները... Որովհետեւ նրանք ի՞նչու պէտք է այդպէս՝ բոլորը միասին, կայարան գային... Զգիտէի չէ՛: Ես ոչի՛նչ չգիտէի:

Նրանք ուրախ խօսակցում, ծիծաղում էին: Այսպէս անցաւ կէս ժամ, մէկ էլ յանկարծ կայարանի կառավարիչը դուրս եկաւ իր սենեակից: Բոլոր ծառայողները հետեւեցին նրան: Եկան, կանգնեցին երկաթուղաղծի կողքին: Լսեցին դանդակների ձայներ, սկսեց իրարացում: Նրանք շտապով վեր կացան եւ մօտեցան կառավարչին:

— Վեց րոպէից այստեղ կը լինի, վեց րոպէից պէտք է, որ այստեղ լինի,— ասաց կառավարիչն ու կրկին անդամ նայեց ժամացոյցին: Նուբարն էլ նայեց իր ժամացոյցին:

Գնացքին էին սպասում:

Այստեղ էր ահա, որ հասկացայ վերջապէս. էս մարդիկ Զաւէնին եւ Ներսէսին դիմաւորելու էին եկել...

— Տիկին Սաթենի՞կն էլ:

— Հապա, տիկին Սաթենիկն էլ:

Ներկաները կռացած մէջքները շտկեցին ու իրար նայեցին տակաւին անորոշութիւն արտայայտող աչքերով:

— Յե՞տոյ, յե՞տոյ:

— Ես էլ նայեցի կայարանի մեծ ժամացոյցին: Վեց րոպէից մէկն անցել էր արդէն, մնացել էր հինգը: Վարդենին կախւել էր հօր թեւից, տիկին Սաթենիկը զլխարկն էր ուղղում, երբ յանկարծ... հո՛ւ... ո՛ւ... լսեց սուլիչի ձայնը...Ո՛ւ...փուհ-փուհ, փուհ-փուհ паровоз ի չունչը, զըմփ-զըմփ, զըմփ-զըմփ... հո՛ւ...ո՛ւ... Գալիս էր: Եկաւ... եկաւ... եկաւ... հասաւ:— Ու տիկին Հռոմը, որ աջ թեւը երկարած, մատերը բաց ու խուփ անելով, աշխատում էր գնացքի ձայներն ու սուլիչի սուլոցը տեսանելի դարձնել, յանկարծ ձեռքը խփեց սեղանին. — հասաւ: Բոլորը մի քայլ առաջացան դէպի պատմողը եւ վիզները երկարացրին: — Հասաւ, դռները բացուեցին ու լուսամուտներից զլուխներ կախ ընկան...

— Զաւէնս, Զաւէնս, երկրորդ լուսամուտին, երկրորդ լուսամուտին: — Նուբարը թեւերը տարածած՝ վա-

գեց դէպի տղան, որ լուսամուտից կախ ընկած աչ ու ձախ էր նայում, նրանց էր վնտրում:

— Հայրիկ, հայրիկ...

— Հոգիս, որդիս: Շուտ իջիր, շո՛ւտ:

Գլուխները կորցրել էին: Նուբարը վարից, Զաւէնը վերից, աշխատում էին համբուրուել:

— Եկա՞ր, եկա՞ր:

— Եկայ, եկայ:

— Իրերը լուսամուտից ինձ տուր:

Զաւէնը մեծ-մեծ պայուսակներ իրար ետեւից մեկնեց հօրը:

— Այս բոլորը քոնն ե՞ն, Զաւէն ջան:

— Այո՛, հայրիկ, բոլորը, բոլորը:

— Երեւի գրքեր են,— ասաց Նուբարն ու կառապանին նշան արաւ, որ կառքը մօտեցնէ:

Էդ էր: Մինչ կառապանը ձիերի գլուխներն էր դարձնում, մինչ Նուբարը մէկ ձեռքը գնացքի դռանը յենած՝ միւսով անհամբերութեան նշաններ էր անում, Զաւէնը վար իջաւ... Հայր ու տղայ իրար վզով ընկան... Համբուրեցին, համբուրեցին ու դեռ համբուրւում էին, մէկ էլ, գնացքի միջից դուրս թռաւ մի աղջիկ...

— Զեօվա, Զեօվա... — կանչեց ու մօտեցաւ:

Զաւէնը գրկեց նրան.

— Հայրիկ,— ասաց,— ծանօթացիր:

Նուբարը յանկարծ լրջացաւ, կամ աւելի ճիշտը որ ասեմ, քարացաւ, յետոյ գլխարկը հանեց ու շատ քաղաքավարի կերպով բարեւեց աղջկան:

— Դէ, Նուբարն առհասարակ քաղաքավարի մարդ է:

— Աշխարհ տեսած մարդ է, ձեւ գիտէ, իրեն պահել գիտէ:

— Ինչ խօսք, ինչ խօսք: Նուբարը միշտ էլ քաղաքավարի է, մանաւանդ կանանց հետ:

— Ես ինքս անձամբ առիթ եմ ունեցել ստուգել այդ. յիշում էք չէ՞, տիկին Սասնիկ, անցեալ տարի Նոր-Տարուն...

— Ցետո՞յ, յետո՞յ, տիկին Հռոմ:

— Ցետոյ, թէ — а вот и папочка: Դէ, պապա ջան, ծանօթացիր,— կրկնեց Զաւէնը հօրը:

— Շատ ուրախ եմ, ընկերուհիդ է հա՞, Զաւէն ջան:

— Չէ, չէ, հայրիկ... աւելի շուտ... կինս է:

— Կի՞նը:

— Կի՞նը:

— Կի՞նը՞...

— Հապա՞,— այդպէս ասաւ ու նորից գրկեց աղջկան:

Հետաքրքրութիւնն այնպէս էր պաչարել բոլորին, որ ոչ ոք չէր մտածում այլեւս թէյի մասին եւ հարեւան մսավաճառի խանութից եկած ճանճը, մեծ զոհունակութեամբ՝ անուշից անուշ էր թռչում, ոտքերը շաքարոտում ու բարձրաձայն երգ էր ասում...

— Ցետ դարձայ ի՛նչ տեսնեմ... Տիկին Սաթենիկը բարկացած, փրփուր դարձած, հովանոցը վեր բարձրացրած «Ֆայտո՛ն... Ֆայտո՛ն...» է ձայն տալիս.. Ինչ ձէնով է ձայն տալիս... էլ ի՞նչ եղաւ, ի՞նչ չեղաւ, Նուբարն ի՞նչ ասաւ, Զաւէնն ի՞նչ պատասխանեց, չիմացայ, որովհետեւ էդ ժամանակ գնացքից ծանր-ծանր վար էր իջնում Արշակի տղան, Ներսէսը... էդ էլ մի ուրիշ картина էր... Ո՞վ կը ճանաչէր: Կաշէ тужурка հագած, աղիւս-աղիւս կտորից կարած фуражка ն մինչեւ քիթը մտցրած:

— Ներսէս, տղաս, դո՞ւ ես:

— Ես եմ, ես, հայր:

Սրանք էլ էստեղ համբուրեցին:

Ես միայն էն տեսայ, որ Նուբարը գոյնը նետած, կառք բարձրացաւ ու էլ ոչ մի խօսք...

Fidèle-ը բարձրաձայն սկսեց հաչել:

Ամենքը յետ նայեցին: Դռան չէմքին կանգնել էր monsieur Jean-ը:

— O, monsieur Jean, monsieur Jean, s'il vous plaît... Quelle surprise, mon Dieu, quelle surprise... բացագանչեց տանտիկինն ու կոտրատելով մօտեցաւ հիւրին:

Անմիջապէս ամեն մարդ իր տեղը դրաւեց ու բոլորը ժպտացին՝ միատեսակ՝ իրը անտարբեր, բայց իրականի մէջ ներքին քաղցր զոհունակութիւն արտացոլող ժպիտով: Բոլորի հոգիներում ծւարած փոքրիկ սատանաներն արթնացել, թրթռում էին: Ամեն մէկն իր հոգին հարեւանի դէմքի վրայ էր կարդում ու ժպտում էին իրար անպատմելի ինքնաբաւականութեամբ լցած.— չէ՞ որ շատ քիչ անգամ է պատահում, որ բոլոր մարդիկ միատեսակ դգան ու մտածեն...

— Et madame Satenik ? et les demoiselles հարցրեց Jean-ը:

— Madame Satenik ?... Կը դայ, կը դայ: Այո՛, ինչպէս միշտ... Այնպէս չէ՞, տիկին Հռոմ: Ի՞նչ էք կարծում, կը դայ, չէ՞...

— Տակտի տեսակէտից պէտք է որ դայ: — Ասաց տիկին Հռոմը, գլուխը թէյի բաժակից չբարձրացնելով:

— Ձեմ կարծում դայ: Նա այնպէս դգայուն կին է... Ուզում եմ ասել, այնպէս նրբազգացն է որ...

— Որ ինչ:

— Ո՞ր... Իսկ դուք կարծում էք կը դա՞յ:

— Ես կարծում եմ, եթէ կարողանայ ինքն իրեն կառավարել, ինչպէս եւրոպացիք են ասում, այսինքն դսպել իր ներսում կատարուող փոթորիկները, կը դայ: Իսկ եթէ ոչ, չի դայ:

— Ես էլ ճիշտ ձեզ պէս եմ կարծում:

Երիտասարդ տանտիկինը աշխատում էր հիւրասիրել բոլորին: Խնդրում, ստիպում էր ուտել, թէյ էր առաջարկում ու կրկին, կրկին պնակների մէջ դաթա աւելացնում:

Ամառուայ առաջին շոգերն սկսուել էին արդէն:

Աւուրօրից Նուբարենց տան մէջ սպասողական վիճակ էր:

Զաւէնը դալիս էր:

Մանին այնքան երջանիկ աչքեր ունէր այդ օրը եւ Նուբարն այնպէս հպարտ կեցուածք... Սպասում էին անհամբեր: Ճաշից յետոյ Նուբարը, Արշակի հետ միասին, կայարան պէտք է գնար: Նրանք երկուսն էլ յուզուած էին: Արշակի մինուճար դաւակն էր դալիս... Վասիլ խանն արդէն մի քանի անգամ մտել էր Նուբարենց մօտ, դուրս եկել կրկին. նրա խամրած աչքերը նոր փայլ էին ստացել:

— Ձմեռայ, էս երջանիկ օրին էլ արժանացայ, Նուբար ջան:

— Ինչ մեռնել, կեանքը նոր է սկսւում, Վասիլ խան, կեանքի համը սրանից յետոյ է, որ պէտք է հասկանանք:

Անուշը դէպի փողոցի դուռը նայող լուսամուտի առաջ կանգնած, յենուել էր փեղկին, մնացել: Նա մերթ քիթն էր սեղմում պատուհանի ապակուն, արգելում շընչառութիւնը, մերթ ոտքերով պատն էր հարւածում ու շուտ-շուտ նայում թեւին կապած կոտրուած սլաքներով իր ժամացոյցին...

— Դեռ մէկ ժամ կայ,— մտածում էր Անուշն ու նորից քիթը սեղմում ապակուն:

Վերջապէս հեռուից լսեց կառքի անիւների ձայնը:

Մանին անմիջապէս ձեռքի դիրքը վար նետեց ու դուրս եկաւ բակ:

Զաւէնն շտապ իջաւ աստիճաններից ու ընկաւ մօր գիրկը: Արցունք եւ ուրախութիւն խառնուեցին իրար: Մանին երկար, երկար համբուրում էր որդուն, գրկում գլուխը, նայում կարօտով դէմքին:

Մայր ու տղայ այսպէս ջերմագին զուրգուրում էին, մինչ Նուբարը մշակների օգնութեամբ իրերն էր ցած բերում:

Նուբարը լուռ էր: Մանիի հարցական հայեացքներին նա պատասխանում էր լռութեամբ:

Շուտով բոլորը մտան սենեակ, ուր արդէն պատրաստ էր սեղանը: Նուբարը մտազբաղ էր, Մանին ուրախութեան հետ ինչ որ տարակուսանք էր զգում ու դեռ լաւ չէր հասկանում թէ բանն ինչումն է: Նրա մայրական զգացմունքները դեռ եւս իր կարօտած որդու շուրջն էին դառնում:

Անուշը, եղբօր գրկից ազատուած, աթոռը քաշել, միացրել էր Նատայի աթոռին ու աչքերը նրանից չէր հեռացնում: Նատայի մազերը բոլորովին դեղին էին, աչքերը բոլորովին կապոյտ, ապակու նման... Ու Անուշին թւում էր, որ Նատան մի տիկնիկ էր, անցեալ տարեայ հայրիկի իրեն նուիրած կապուտաչեայ տիկնիկի նման մի բան... Միայն սրա քիթը շատ էր ցից եւ Անուշի կարծիքով դա շատ, շա՜տ տգեղ էր, կարծես թէ բոլորի վրայ վերից էր նայում ու կարծես թէ ինքը չէր նայողը, այլ կարճ ու ցցած իր քիթը:

Խոհանոցում Սարգիսն ու Շուշանը հիացմունքով էին խօսում նորեկ աղջկայ մասին.

— Կասես սպիտակ Ֆաթուսխա լինի:

— Զրից դուրս եկած փերի ա... Լաւ մալ ա ճարել մարդի տղան:

Նուբարենց տունը կամաց-կամաց լցւում էր: Հարեւանները գալիս էին աչքալոյսի, մինչ Զաւէնը մի կողմ քաշւած, բացատրում էր Նուբարին իր ստացած վիկայականի արժէքն ու մանրամասնօրէն պատմում անցրած քննութիւնների մասին:

Նուբարը զարթացած նայում էր որդուն ու հպարտութեամբ դիտում ներկաներին:

Հօրը բաւականութիւն պատճառելու համար, Զաւէնը բացեց եւ պայուսակները, հանեց նրանց միջից թղթամթիւ հաստ-հաստ դրքեր, պատմեց, որ ինքը նրանց հեղինակներից մի քանիսի հետ ծանօթ է, որ նրանք իր ուսուցչապետներն են եղել...

— Ախ, հայրիկ, հայրիկ, կրթութիւնն անծայրածիր ծով է, հսկայ մի ծով ու մէջը նետւողն այլեւս չի կարող դուրս գալ, ափ չի երեւում: Վերցնենք, օրինակ, փիլիսոփայութիւնը...

Ու մինչ Զաւէնը խօսում էր, Նուբարը հիացած ու զմայլած, մոռացած ամեն տհաճութիւն, նայում էր նրան:

Ու մինչ Նուբարը նայում էր, Զաւէնի հոգու վրայ, առաջին անգամ լինելով, կամաց-կամաց անհասկանալի մի տրամութիւն էր իջնում...

Զաւէնն անմիջապէս զգաց այդ: Մութ ու տխուր զգացմունքներ էին ծնւում իր մէջ...

Մի բան փնտռող ու յաւէտ չգտնող՝ կէս ճանապարհին մնացած անցորդի բեկւած հայեացքով նայեց նա ձեռքի վիկայականին ու քիչ առաջ ոգեւորւած ձայնի թափն իջաւ յանկարծ:

Բարձրացրեց աչքերը, նայեց Նուբարի լուսաւորւած

դէմքին... « Հայրս միշտ նոյնն է մնացել: Բարի, միամիտ, վարած կրթութեան ուժին, լցած հաւատով, պայծառ մտքով, մաքուր հոգով... » Զաւէնն ակամայ վերյիշեց իր մանկութիւնը: Պատանեկութիւնն իր... Դարձաւ, դամեց աչքերը մօր երջանկութիւնից յուզուած դէմքին, բարութեամբ ու զորովով լցած աչքերին: Դիտեց պատերն ու կախուած նկարները բոլոր... Կապտագեղեստ փոքրիկ այն աղջիկը հայի կտորը ձեռքին կերակրում էր մեծ դամփուռին... Նկարը միշտ նոյն պատին էր, ինչպէս առաջ: Նոյն լուսամուտները, ծաղկաւոր նոյն վարագոյրները... Նոյն խսիրէ աթոռները, կամարաձեւ յենարաններով... Վերյիշեց զարոցական կեանքն իր, աւարտման հանդիսաւոր այն օրը, երբ հայրը, ճիշտ այսպէս, ինչպէս այսօր՝ հաւատով ու վստահութեամբ լցած ճառագայթող աչքերով, կանչեց իրեն առանձնասենեակ, ասաց, որ այդ օրը առաջին յաղթանակի օրն էր, որ այդ օրն սկսւում էր իրեն, Զաւէնի համար, դիտակից կեանքի նոր մի շրջան: Ու հայրն այնպէս լաւ, այնպէս ջերմագին համբուրեց իր ճակատը...

Ի՞նչ երջանիկ օր էր այդ օրը... Առաջին վկայականը...

— Հայրի՛կ...

— Բեղ հարկաւոր է հանդստանալ, Զաւէն:

— Ախ, այո՛, այո՛... Ես այնպէս յոգնած եմ, այնպէս յոգնած...

Զաւէնը ձեռքը տարաւ ճակատին ու թախանձանքով լի աչքերը գցեց հօր վրայ:

Նուբարն զգացած ու քնքոյշ նայեց որդուն: Երկա՛ր երկա՛ր նայեց:

— Ի՞նչու ինձ կանխապէս չէիր գրել, — հարցրեց ցած ձայնով:

— Ի՞նչի մասին, հայրիկ:

Նուբարը գլխով Նատայի կողմը ցոյց տուեց:

— Ах да... Հէնց այնպէս, փոքրիկ մի անակնկալ ձեզ համար,— պատասխանեց Զաւէնը ժպտալով:

Նուբարը նորից անհաճոյ, խիստ անհաճոյ մի բան զգաց: Ցիշեց տիկին Սաթենիկին, Մարգարտին... Իրենց այնքան մտերմիկ բարեկամութիւնը, իրենց յոյսերը... Իսկ կայարանո՞ւմ... Սմօթից Նուբարի դէմքը կարմրեց: Նրանք այնպէս ուրախ էին նախքան գնացքի մօտենալը... Տիկին Սաթենիկն ուղղակի յուզուած էր... եւ յանկարծ... Խայտառակութի՛ւն, խայտառակութի՛ւն... — Նուբարի դէմքը մերթ գունատւում, մերթ կարմրում էր: — Բայց, բայց Զաւէնը մեղք չունի... Չունի, ի հարկէ, չունի՛: Ես, ես եմ միակ մեղաւորը: Ներողութիւն, ներողութիւն, սիրելի տիկին Սաթենիկ, մենք՝ ես ու դուք, խոստովանէք, որ մի քիչ միամիտ վարուեցինք... Ի՞նչպէս կարելի էր, Զաւէնը դեռ չվերադարձած... Իսկ օտար այս աղջիկը...

Զաւէնն զգում էր, որ հօր մէջ մի բան էր կատարւում:

— Դու չգիտես, հայրիկ, դու չգիտես, հիւսիսի կանայք այնքան բարձր են, այնքան խելացի ու խորաթափանց... Նրանց հոգին վճիտ է ու մաքուր, իրենց կապոյտ աչքերի նման: Նրանք բնաւ չեն նմանւում մեզ, նենգ ու խարդախ արեւելցիներիս...

Նուբարը ոչինչ չի պատասխանում, յօնքերի տակից դիտում է աղջկան: Նատան, միանգամայն անտարբեր իր շրջապատին, թեք ընկած բարձին՝ ննջում էր: Բայց ճիշտ այդ ժամանակ սենեակի դռներն աղմուկով բացուեցին եւ շեմի վրայ յայտնուեց Մարջան հօրաքոյրը:

Զաւէնն ուրախացած ոտքի ելաւ:

— Բոյիդ մատաղ, Զաւէն ջան, ծաղկես, կանաչես,

էդ ի՞նչ հասակ ես նետել,— բացագանչեց Մարջան հօրաքոյրը թեւերը լայն-լայն բացած։— Տաս օր է աչքերս ճամբին էր, աւելացրեց նա անոյշ-անոյշ համբոյրներ դրոշմելով Զաւէնի այտերին, ճակատին ու սկսեց հիացած դիտել նրա սիրուն հասակը, նրա մազերը։

Լցւած ծանօթ, բայց արդէն մոռացւած բերկրանքով, Զաւէնն իր հերթին դիտում էր Մարջան հօրաքրոջը՝ նրա սերունդէ-սերունդ անցած, շեշտւած դիմագծերին, նրա շարժուձեւերին... Հին, շատ հին, բայց մտերիմ էին այդ բոլորը Զաւէնի օտարացած աչքերի համար եւ որքան շատ էր նայում նա, այնքան աւելի էր ուզում նայել, այնքան աւելի ջերմութիւն էր զգում իր մէջ։ Նրան թւում էր, որ Մարջան հօրաքոյրն այն մեծ երակն էր, որ յանկարծակի իր յայտնուումով մի վայրկեանի մէջ, կապեց իրեն, Զաւէնին, անցած բոլոր նախնիքների հետ...

Նա նստեց հօրաքրոջ կողքին։ Շոյեց նրա նշաձեւ նախշերով էիւլաջէն, նրա մետաքսէ շալի ծոփերն ու կրկին-կրկին գրկելով նրան, համբուրեց խորշոմած ձեռքերը, շոկեց բազմաթիւ ծալքերն իր շրջագդեստի...

— Իսկ Մարօ՞ն, հօրաքոյր, ո՞ւր է Մարօն։

— Մարօն հիւանդ է, Զաւէն ջան։ Վեց ամիս է, հիւանդ է Մարօս,— հառաչեց Մարջան հօրաքոյրը գլուխն օրօրելով,— էլ ճար չմնաց, էլ դեղ չմնաց...

Նուբարը բացատրեց Զաւէնին Մարօի հիւանդութիւնը եւ Զաւէնը հասկացաւ, որ վիճակն անյոյս է այլեւս։

— Կը լաւանայ, հօրաքոյր, մի մտածիր,— ասաց նա շոյելով հօրաքրոջ ուսը։

Մարջանի աչքերը թացացան ու նա խորը մի յոգւոց հանեց։

Հօրաքրոջ ներկայութիւնը Զաւէնի մտքերը նետեցին դէպի Բեհեղ տատը։

— Մէկ գիշերւայ մէջ վերջացաւ... Մահից առաջ մէկիկ-մէկիկ յիշեց բոլորիդ, ասաց թող երկնային ու երկրային զօրութիւնների ոյժն անպակաս լինի ձեր գլխից...

Հօրաքրոջ հետ Զաւէնը երկար խօսեց։ Բաւարարեց նրա տւած հարցերին, խօսեց իր եւ Նատայի մասին, հարց ու փորձ արաւ բարեկամներից, ազգականներից, յետոյ աննկատելի վեր կացաւ տեղից ու քայլերն ուղղեց դէպի տատի սենեակը։

Բեհեղ տատի սենեակն իր մահից յետոյ մնացել էր անձեռնմխելի եւ ամեն ինչ այնտեղ այնպէս էր, ինչպէս որ նա ինքն էր թողել։ Նոյն կանաչ խաս վերմակով ծածկւած քուրսին, վրան աղանձի ճերմակ տոպրակը դրած։ Նոյն սնդուկները՝ աստիճանական մեծութեամբ մէկը միւսի վրայ շարած, դեղին սաթէ համբիչը եւ ոսկեգոյն թելերով հիւսած սիրուն այն գորգը...

Զաւէնը մի քանի բոպէ տխուր կանգնեց դռան շեմին, չհամարձակւելով ներս մտնել։ Յետոյ ներս անցաւ, կամացուկ փակեց դուռն ու նստաւ բազմոցին։

Այդտեղ, ահա այդտեղ էր կազմւել ու կաղապարւել իր հոգին... Կիսախաւար այդ լռութեան մէջ... Այդտեղ էր թռիչք առել վառ երեւակայութիւնն իր՝ կտրել ծովեր ու լեռներ, պատռել էր խաւարն ու հասել «լոյս փնտռող» տղայի ետեւից...

Նա աչքերը փակեց ու յենւեց պատին։

« Կար չկար մի տղայ կար...

« Արմաղ, շարմաղ մի տղայ։ Արմաւի գոյն ոսկեփայլ մազերով, գիշերւայ պէս մութ ու սեւ աչքերով։ Զէյրանի պէս դեղեցիկ գլուխ ունէր նա ու սլաձիգ սրունքներ, վարդ ու շող էր թափւում երեսից ու շրթերից։ Հարս ու աղջիկ, իրենց երազներում, նրա սիրուն

պատկերն էին տեսնում ու նրան տենչում ծառերի թաւուտում, վարդերի թփերի տակ կամ կանաչ մարգերում։

« Այն քաղաքն, ուր ապրում էր չքնաղ պատանին, մեծ, շատ մեծ մի քաղաք էր՝ շրջապատուած մշտադալար անտառներով ու պտղատու ծառերով։ Սառնորակ աղբիւրներ ու աղամանդեայ ջրվէժներ, մշտահոս առուակներ ու շատրաններ կային ամենուրեք, որոնց մրմունջներին խառնւում ու նոյնանում էին երգերը դեռատի աղջիկների...—

« Հէյ ջան ոսկեծամ տղայ...
« աչերդ բոց, շրթերդ լալ,
« հէյ տղայ...

« Ո՞վ կար նրան հաւասար։ Նրա գեղեցկութիւնը վախ էր ազդում բոլորի վրայ, նա էր երազը բոլոր երիտասարդ ու բոցակէզ հոգիների, սիրոյ աստղն էր նա՝ իրիկնամուտի շառագունած երկնակամարին պլպլացող այն աստղը, որի ճերմակ փայլն այնքան տաք ու ջերմ խոստումներ էր անում լինող գիշերւայ հեշտանքների թովիչ հմայքների մասին։ Բայց տխուր էր ոսկեծամ տղան, սաստիկ տխուր։ Քաղաքն այդ նեղ էր դալիս նրան։ Հոգին թռիչք էր ուզում, միտքը սաւառնել տենչում։ Մինչ շուրջը խաւար, խաւար էր կարծես։

« Ո՞ւր գնալ։ Ո՞ւմ դիմել։

« Ու մի օր հրաշքն լինաւ երկնքից։

« Այդ գիշեր, ճմրան մի գիշեր էր։

« Փոքրիկ ու մութ սենեակում, խորասուզուած իր մտածմունքների մէջ, նստած էր տղան մեն-մենակ ու նայում էր թիթեղեայ վառարանին, որ վառւում էր ճարճատելով, բոցեր ու կայծեր դուրս նետելով։

« Ինչպէս եղաւ, ինչպէս չեղաւ, մէկ էլ այն տեսաւ, որ կրակէ մի գունդ, հապիւ ընկոյզի մեծութեամբ, վառարանի դռան կլոր անցքից դուրս գլորուեց եւ ընկաւ սախտակին։ Ընկնելն ու միջից կիսւելը մէկ եղաւ։ Հրեղէն մի թռչուն, բոցէ թեւերը թափահարելով, դուրս եկաւ կրակէ այդ գնդից ու թռաւ, նստեց յատակին։

« Երա՞զ էր, երազ չէր։ Թռչո՞ւն էր, թռչուն չէր... Ի՞նչպէս կարող էր այդպէս պլպլան կրակից շինուած թռչուն լինել...

« Մինչ այսպէս խորհրդածութիւնների մէջ էր, հրեղէն թեւաւորն իր ոսկէ կտուցը բացեց ու մարդկային լեզուով սկսեց խօսել.

« — Սիրուն տղայ, բարմաթիւ են քօղերը սեւ վարդոյրի, որ քաշուած է մարդկանց աչքերի առջեւ, բայց երկինքը լսեց քո աղաչանքը։ Դու լո՞յս ես տենչում, իսկ դրա համար երկնքի հրամանով պէտք է ճամբորդես։ Պէտք է գնաս հեռու, հեռո՛ւ երկրներ, շատ ազգեր տեսնես, շատ ժողովուրդների հետ ծանօթանաս եւ շատ լեզուներ սովորես։ Այդ լեզուների միջոցով կը կարդաս հրաշափառ գրքեր, կը լսես իմաստունների խօսքեր, շատ բան կը հասկանաս ու կըմբռնես եւ կը փարատի խաւարը...

« Այս ասելով հրեղէն թռչունն այնպէս չքացաւ, կարծես բնաւ չէր եղել։ Վառարանի կրակն էլ մարեց, վերջացաւ ու մութը պատեց սենեակը... »

Ու մութը պատեց սենեակը...

. . . . . .

— Սո՛ւս... կամաց... քնած է։

— Շատ էր յոգնած։ Ա՛ռ այս վերմակը, ծածկիր, թող մի քիչ հանգստանայ։

◆

— Բարի լոյս, Աննա բաջի։

— Աստծու բարին, Ալմաստ։ Նոր խաբարից-մաբարից ի՞նչ կայ։

— Ես բան չեմ մանում, Աննա բաջի։ Հէ՞ր, չէլի բան-ման կայ...

— Չէ՛, քո արեւ, էնէնց մէ բան չկայ։

— Բա, հէ՞ր ես հարցնում։

— Խօսք ա հարցնում եմ էլ, հարցնելը մեղք ա՞։

— Չէ, բալամ, մեղք չի, համմա ասում եմ, բալքա դու էլ մէ բան ես լսել...

— Հալբաթ քի, ո՞վ չի լսել, աղջի։ Մէկ բան, որ ասում են, մարդ էլ որ ականջ ունի, դէ կը լսի էլի՛...Հօ չե՞ս կարող արգելել, որ չլսի։

Ու երկու դրկից հարեւանուհիներն աւելի մօտեցան իրար։ Ալմաստը, որ փողոցն էր աւլում, աւելը դրաւ թեւի տակ ու մէջքը յենեց պատին՝ ամեն գնով Աննա բաջուն հարց ու փորձ անելու, «թարի տալու», հաստատակամութեամբ լցուած։

— Ի՞նչ են ասում, Աննա բաջի։

— Էհ, ինչ ասեմ, Ալմաստ ջան։ Ժամանակն ա խարաբ էլէ, ժամանակը...— ասաց Աննա բաջին ցաւով ու վշտով լցուած ձայնով։

— Հէ՞ր, Աննա քոյրիկ, էլի պարզերդ միտդ ա՞ ընկել,— շողոքորթ ձայնով հարցրեց Ալմաստը։ Նա շատ լաւ գիտէր Աննա բաջու մտքի եղածը, որ իրեն համար գաղտնիք չէր, բայց տարօրինակ հաճոյք էր զգում նրան խօսեցնելու, նրա շրթունքներից լսելու օրւայ նորութիւնը, նոր եռանդով, նոր դունաւորումով... Չէ որ ամեն մէկն իր ուզածն էր աւելացնում եղածի վրայ, իր ցանկացած համն ու հոտը տալիս նրան։

— Բա ի՛նչ, աղջի, մեր քաղաքի ջէյրանի նման տը-

ղաները, խալխի աղջիկներին առնում, տուն են բերում, թէ մենք կրթւած ենք, մենք խելօք ենք, էլ էստեղի աղջիկները մեր խարջին չեն գայ... Մեր նախշուն, նախշուն աղջիկները մնում են տանը։ Բա էսիկը դարդ չի՞, ցաւ չի՞։ Ես փառք Աստծոյ, աղջիկ չունեմ՝ համմա խմը, քոնը ո՞րն ա, մեր հայ ազգն ա չէ՞, մեր քաղաքի աղջիկներն են չէ՞... Ես էլէմ, դու էլէս, եա Ֆլանքեասը էլի, հաշիւը մէկ ա։— Խօսեց Աննա բաջին գլխի թաշկինակն ուղղելով ու մազերը ճակատի վրայից գոյդ ձեռքերով յետ-յետ անելով։

— Էդ ո՞ւմ մասին ես ասում։

— Դէ, էն սեւ կապուտ Նուբարի տղին եմ ասում էլի։ Հալբաթ իրանք կլմանան, իրանց տղէն, ես իմ իմացածն, իմ հասկացածն եմ ասում։

— Քեզի էտիկն ո՞վ ասաւ։

— Ինձի Հնագանդն ասաւ, թէ բա չասես, էսէնց-էսէնց բա՛ն...

— Հնագանդն ո՞վ ա։

— Հնագանդն, չե՞ս իմանում, էն Ֆընդըղ Մկրտչի կնիկը։

— Կտուր մեռնողի աղջի՞կը։

— Հա էլի, էն որ քիւֆթա Սօֆիի հայաթն ա քրէհ արել։

— Հա՛, հասկացամ։

— Ախր Հնագանդն տիկին Սաթենիկի չոր լւացողն ա...— աւելացրեց Աննան նշանակալի ու խորհրդաւոր ժպիտով գլուխը թեքելով դէպի իր խօսակիցը, որ իբր զարմացած նայեց նրան։— Հիմա, ասում են, կարդին սուդ ա անում, սեւ ա հագել, տանից էլ դուրս չի գալիս։

— Տեղն ա,— վրայ տուաւ յանկարծ Ալմաստը, այլ եւս անկարող շարունակելու իր չինծու անտարբերութիւ-

նը,— տեղն ա, մէկն ասող էլլի, մէ բան, որ հաստատ չես իմանում, ո՞ւր ես խալխին նստում ու պատմում՝ թէ Զաւէնն էսէնց էլաւ, աղջիկս էնէնց էլաւ...Հեռուից հեռու նշան դրածը էտէնց կէլլի:

— Էդ տիկին Սաթենիկը շատ էր ուռում, փուքսն ընկաւ: Ուր որ նստում էր՝ իմ աղջիկներս Ֆռանդ են, իմ աղջիկներս մէ հատիկ են... Մէ հատիկ դարդի եկան:

— Ասում են Նուբարը գնացել ա մօտը, չի ընդունել, ասել ա, ասէք տանը չի:

— Հալբաթ չի ունդունի, պատուի հարց ա:

— Համմա Նուբարը շատ մեղք չունի, Աննա բաջի, — յարեց Ալմաստը:

— Ունի՛, Ալմաստ, ունի: Իրան կտրտում ա, թէ էրէխէրքիս ուսում պէտք ա տամ: Եարաբ, էտ ուսումից մարդ բիւնուդ ա հանում, ես կոտոշ: Էն ա Խնեցի Մեսրոպի տղէն, ինչ պակաս տղայ ա, ոչ Ռուսաստան ա գնացել, ոչ Ֆրանդստան: Շէնքով, շնորհքով մէկն ա, լաւ էլ վող ա աշխատում:

— Խնեցի Մեսրոպի տղէ՞ն... Էնիկը բան չի աշխատում:

— Ո՞վ ասաւ, ամօթ ա, ամօթ. ես լաւ եմ իմանում, աշխատում ա, ինքն էլ ուսում առած տղայ ա:

— Ուսում առած տղան կօշկակարութիւն չի անի:

— Ո՞վ ա կօշկակարութիւն անում, տեսա՞ր որ չես իմանում: Մեսրոպի տղէն Նուբարի տպարանումը դրաշար ա: Ես քեզի ասում եմ էնիկը ուսումնական ա, ամեն բանից դլուխ ունի՝ թուղթի, դրքի մէջ ա սաղ օրը...

Ալմաստը դինաթափուեց... Լռեց եւ վերցնելով կողքին դրուած ջրով լի ցնցուղը, շտապ-շտապ սկսեց փողոցը ջրել՝ ջանալով չանցնել այն կողմը, որտեղ Աննա բաջու տունն էր սկսում: Աննա բաջին այդ դէպ, քթի տակ ինչ որ բան փսփսաց ու բարկացած ներս մտաւ:

Ալմաստը, ձեռքերը կողքին դրած, մի քանի րոպէ սպասեց, մինչեւ որ փողոցը սարստի, յետոյ փէչերը հաւաքեց, մէջքի վրայ հանդոյց արաւ ու սկսեց աւլել՝ աչքերը մէկ-մէկ դէպի հարեւանուհու ճեղք թողած դռան կողմը գցելով:

— Աննա բաջի՛... — Ալմաստը մօտեցաւ հարեւանուհու դռան: — Աննա քոյրի՛կ... Ախր խօսքներս կլսատ մնաց...

Աննա բաջին, որ դռան ճեղքից զգուշութեամբ նրան էր դիտում, ոտքի ծայրերի վրայ յետ-յետ գնաց ու ձէնծպտուն չհանեց:

Ալմաստը մի վերջին անգամ քննական հայեացքով նայեց նրա դռան՝ — դարդս հէնց դու էլլիր... — ասաց նա ինքն իրեն ու ցնցուղը վերցնելով աղմուկով ներս մտաւ:

3

Զաւէնն ամբողջ օրը մնաց այդում։ Նստեց սառնորակ առուակի եզրին, սուերաշատ ծառերի հովանու տակ, կերաւ պարտիզպանի բերած ճաշը, զրուցեց նրա հետ ու նորից փուեց խոտերի մէջ։

Ի՜նչ լաւ էր այդպէս մենակ լինելը... Մենակ այնտեղ, ուր իւրաքանչիւր ծառ հարազատ է քեզ, ուր հոսող ջրի կլկլոցը ծանօթ ձայնով խօսում է հետդ, ուր զեփիւռն ու հովն իսկ քեզ հին սիրահարի պէս են շոյում ու զգուում։

Միջօրէ էր։ Լուռ էր աշխարհը։ Ծառերի տերեւները թափանցիկ մի մթութիւն էին սփռում իրենց շուրջը։ Դաշտային ծաղիկները, սմբուլներն ու երիցուկները, գունագեղ թերթիկների վրայ, բացել, փռել էին իրենց հոգիներն ու նրանց բուրմունքն ուժեղացել էր։ Կապոյտից կախուած շլացուցիչ սկուտեղից վար թափուած ոսկեման լարերին անտեսանելի մատներ էին հպւում ու թափւում էր ճերմակաշող երաժշտութիւնն այդու խաղաղութեան վրայ։

Բնութիւնը տաղնապի բոպէներ էր ապրում...

Միջօրէ էր...

Մի բան էր կատարւում բնութեան ծոցում, խորհրդաւոր, թագուն մի բան... Ու աշխարհը լուռ սպասում էր... մինչ երկնքի լայնաբաց դռների առաջ ցնծղաններ էին շառաչում։

Այն զոյգ չինարները, որ Զաւէնի յիշողութեան մէջ անընդհատ դառնում էին, պտտում այնտեղ՝ ծննդավայրից հեռու ցուրտ այն քաղաքում... Որ սահող հազարաւոր դէմքերի ու երեւոյթների միջից ցցւում էին յանկարծ նրա մտապատկերի առաջ, ահա մեծացել բարձր-բարձր ծառեր են դարձել։

Զաւէնը կարօտել էր նրանց ու այցի էր եկել։

Ինչ լաւ էր, որ ոչինչ չէր փոխուել այդ այդու մէջ...— Այ ու ձախ կողմերում ընկած նոյն ծառոտ կածանները, կլոր աւազանը, փոքրիկ առուակի մշտահոս ջրի կլկլոցը, այնտեղ, վարը, անհամար նշենիներ եւ նոյն պարտիզպանը։

Իր վերադարձի առաջին օրերն էին։ Զաւէնը ողջ քաղաքը պրպտելու էր ելել։ Փնտրում էր կարծես մի բան, թանկագին մի բան, որ տարիներ առաջ թողել էր այդտեղ՝ ամեն փողոցի, ամեն նրբուղու քարի ու ծառի, դպրոցի բակի, ծանօթ դէմքերի վրայ սփռուած, դեռ չմեռած, դեռ թփրտուն յիշողութիւն մի անցեալ կեանքի, որ էր սկիզբն իր ներկայ գոյութեան։

Զաւէնն ամեն տեղ իրեն էր փնտրում, իր էութեան առաջին կէսը որոնում։

Տարիներ առաջ էր...

Զոյգ չինարների կատարներին, վերջալոյսով ողողուած չքնաղ մի իրիկուն, նա նետեց իր հոգին...

Արեւի պսպղուն նետերի ծայրին դէմ տուաւ իր պատանի սիրտը։

Զրի քաղցր մրմունջին խառնեց իր գաղտնիքների դեղը, լուսնին, երկնքին ու ամպերին պատմեց իր տենչերը։

Երազեց դպրոցի քարերի վրայ նստած, փորագրեց իր անունը դատարանների սեղաններին, որ անջինջ մնայ, յուսալի ու թախծոտ հայեացքով նայեց ուսուցիչներին,

որ խրախուսանքով նրա ուսն էին թոթուում ու վառ ապագայի, փայլուն ապագայի երազը սեղմեց կրծքին...

Այժմ եկել իրեն էր փնտրում:

Այն օրերին Զաւէնը յաճախ ասում էր ինքն իրեն.— Ի՜նչ գեղեցիկ է կեանքը, այս անծայրածիր, այս անըմբռնելի տիեզերքի մէջ... — Ու Զաւէնն զգում էր, որ առօրեայից բացի կայ, գոյութիւն ունի ուրիշ մի բան... Տաք ու յորդ մի հոսանք կայ մարդու մէջ՝ անբացատրելի զգացմունքների, հեռուներից եկող տեսիլների, մութի մէջ բռնկւած լոյսերի մի հոսանք, որի փայլն անցնում է սերնդէ-սերունդ: Յետոյ, այդ բոլորից բացի, կայ նաեւ այն, որ է Ամենագլխաւորը, բուն պատճառն ու միեւնոյն ժամանակ նպատակն ամեն ինչի եւ նրա հետ է կապւած սպասումը յաւիտենական:

Այդ Սպասումի ծայրին փայլում էր խոշոր մի աստղ:

Այդպէս էր մտածում Զաւէնն այն ժամանակ:

Զինարները վերից սլսլում էին: Զաւէնը պառկած խոտերի մէջ՝ նայում էր նրանց ու նրան թւում էր, թէ այնտեղ, վերեւում, կանաչ տերեւների միջում, դեռ կար մի մասնիկ իր նետած հոգուց:

Ծառերն այնպէս դեղեցիկ էին այդ պահին...Նրանց գագաթների տերեւները, որոնց վրայ արեւն էր շողշողում, թափանցիկ գոյն էին ստացել ու այնպէս անշարժ, այնքան հլու, կախւել էին բարակ ճիւղերից, կարծես անխօսութեան մատնւած կենդանի էակներ լինէին, որ թեթեւ մի զեփիւռի հպումից զարմանալի ճկունութեամբ պիտի օրօրէին իրենց նուրբ մարմիններն ու այնքան դեղեցիկ բաներ պիտի պատմէին արեւի ջերմ ճառագայթների տոչորուն համբոյրների մասին, օդի թափանցիկ պայծառութեան մասին...

Ինքը դնաց ու վերադարձաւ: Վերադարձաւ կատարեալը բերելով, իր թողածը շարունակելու համար: Վերադարձաւ բանալիների մի կապոց թեւի տակ, փակ դռները բանալու համար... Մինչ իր թողած հոգին բաժան-բաժան եղած, ահա հոսող առուակի ջրի պղպջակների մէջ հալւել, հոսել է կամ չինարի կատարին թառած, անտեսանելի է դարձել այլեւս:

Զաւէնը ճիգ էր թափում վերականգնել իր մէջ իր հին էութիւնը, վերակենդանացնել իր մէջ հեռաւոր մի պատկեր... Հեռաւոր մի պատկեր...

Ինչ պատկերի մասին էր խօսքը...

Ու թւում էր Զաւէնին, որ այդ մէկը՝ առուակի եզերին պառկած այդ մէկը, ինքը չէր այլեւս, այլ իր... Իր եղբա՞յրը մի դուցէ...

— Տիգրանս, Նատա ջան, բոլորովին Զաւէնի նման է: Նոյն ճակատն ու աչքերը, նոյն բերանը, միայն Տիգրանն աւելի բարձրահասակ կը լինի, Նատա ջան:

Նուբարը սեղանատան մէջ, Նատայի հետ միասին, իր հետ բերած պտուղները զամբիւղից հանում, ջրով լի ամանի մէջ էր տեղաւորում:

— Ի՞նչու դու չես մասնակցում Զաւէնի գրօսանքներին:

— Նա մենակութիւնն է գերադասում, իսկ ես չեմ ցանկանում խանգարել նրան: — Պատասխանեց Նատան:

— Սրանք իմ սիրած պտուղներն են:

— Իսկ այս, Նատա, կարմիր այս խնձորը, չե՞ս սիրում միթէ: Աշուղի խնձոր է կոչւում սա, սիրոյ խնձոր, որ միայն մեր երկրումն է ծաղկում:

— Այստեղի պտուղներն աննման են:

— Տիգրանս, Նատա ջան, բոլորովին Զաւէնի նման է: — Նուբարը հարցաց.— իսկ դու, Նատա, դու ի՞նչ կարծիք ունես իմ Զաւէնի մասին:

— Զաւէնը սքանչելի տղայ է,— պատասխանեց Նատան պարզութեամբ, շարունակելով կրծել ձեռքի կիսատ խնձորը:

Նուբարի աչքերը փայլատակեցին եւ նրա հոգու խորքում յանկարծ ջերմ մի զգացում ծնուեց Նատայի հանդէպ:

Ճիշտ է որ Նատայի յայտնուումով փչրուել էր Նուբարի երազն ու տան մէջ հասկանալի մի խորթութիւն առաջ եկել, բայց կամաց-կամաց հարթուում էր կարծես ամէն բան: Մանաւանդ որ տիկին Սաթենիկը մի քանի օր առաջ աղջիկների ու monsieur Jean -ի հետ միասին, հեռացել էր քաղաքից...

— Méditerranée -ի ափին villa պէտք է դնեմ,— ասել էր տիկին Սաթենիկը,— Նորան պէտք է ամուսնանայ, իսկ Մարգարիտը conservatoir պէտք է մտնէ:

Տիկին Սաթենիկի մեկնումը Նուբարին ներքին դոհունակութիւն էր պատճառել: Նրա ներկայութիւնն այդ քաղաքի մէջ մի քիչ նեղում էր նրան: Ու երբ մի օր, առաւօտ շուտ դործի դնալիս, տեսել էր նա տիկին Սաթենիկի դռների առաջ կանդնած կառքերը, ճամբորդական պայուսակները, սիրտը տարօրինակ թեթեւութիւն էր զգացել:

Սկզբում Նուբարը փորձել էր վերականդնել տիկին Սաթենիկի հետ իր հին բարեկամութիւնը, բայց նրա բոլոր ջանքերն ապարդիւն էին անցել...

Զաւէնի վերադարձի առաջին իսկ շաբաթը Նուբարը փորձել էր այցելել նրան: Պէտք էր վերջապէս բացատրել, խօսել, ասել... Եւ ի՞նչու կորցնել այդպիսի լաւ բարեկամութիւն: Ի վերջոյ, եղածն ի՞նչ էր որ...

Նուբարին ընդունել էր ինքը Մարգարիտը, չափազանց սիրալիր, որ մեծ գարմանք էր պատճառել նրան, յետոյ եկել էր Նորան, բժիշկը, բայց տիկին Սաթենիկը դուրս չէր եկել... Եւ Նուբարը տուն էր վերադարձել առանց նրան տեսնելու:

— Եւ խելացի տղայ է, այնպէս չէ՞, Նատա:

— Այո՛, Զաւէնը խելացի տղայ է:

— Ո՞ւրեմն... քո կարծիքո՞վ...

Նատան նայեց Նուբարին:

— Ուզում եմ ասել, Զաւէնիս ապագան...

— Ես համոզուած եմ,— վրայ բերաւ Նատան,— որ Զաւէնին լաւ ապագայ է սպասում:

— Ի՞նչպէս, ի՞նչպէս կարողացար հասկանալ այդ... — հարցրեց արտասանեց Նուբարը, հիացմունքի ժպիտը լայնացած բերանի վրայ դողդողացնելով...— Ասա՛, պատմիր, ի՞նչպէս... Դու ի՞նչպէս կարողացար...

— Պատմե՞մ: Ի՞նչը:

— Ի՞նչպէս իմացար դու այդ... այդ... որ նա խելացի է, որ...

Նատան հասկացաւ, հայրը մանրամասնութիւններ էր ցանկանում իմանալ Զաւէնի կեանքից: Եւ Նատան ուրախ-ուրախ պատմեց ամէնը, ինչ որ ինքը գիտէր Զաւէնի մասին:

— Համալսարանում Զաւէնն առաջին ուսանողներից մէկն էր,— ասաց նա:

Նուբարը լսում էր դործը կիսատ թողած, մէկ ձեռքին մի քանի հատ սալոր ճզմած, միւս ձեռքը ջրով լի ամանի մէջ պահած: Նա շարունակում էր ժպտալ ու հիացած նայել Նատային եւ վերջապէս էլ չհամբերեց... կռացաւ ու համբուրեց Նատայի ճակատը:

— Դու ինձ միանդամայն երջանկացրիր, միանդամայն երջանկացրիր: Ես... ես... բացարձակապէս քո

կարծիքին եմ... Ես պաշտում եմ Զաւէնին ու հպարտ եմ նրանով, Նատա՛, չափազանց հպարտ: Զաւէնիս փայլուն ապագայ է սպասում...

Նուբարը խօսում էր կարծես երազանքի մէջ ընկած մէկի պէս:

— Ախ, ես միայն մի բան եմ ցանկանում,— ասաց նա յուզած ձայնով, միայն մի բան... Որ երբ ժամանակը գայ, Զաւէնս հասնի իր փայլուն ապագային ու մարդիկ հիանան նրանով, յիշեն եւ ինձ, եւ ինձ... նրա հօրը, որ Արեւելքի այս հեռաւոր քաղաքի մէջ ընկած, ըմբռնեց կրթութեան արժէքն ու ոչինչ չխնայեց իր որդու համար...

Նուբարի ձայնը կտրուեց:

Մի քանի րոպէ երկուսն էլ լուռ էին:

— Իսկ ի՞նչ ես կարծում, Նատա ջան, Զաւէնս ո՞ր ասպարէզի մէջ է, որ պէտք է բարձրանայ:

— Ներկայումս այդ դժուար է որոշել, բայց նա շատ կը բարձրանայ:

— Շա՛տ կը բարձրանայ...— կրկնեց Նուբարն ու խորասուզուեց մտածմունքների մէջ:

— Գիտե՞ս ինչ,— ասաց Զաւէնը նոյն դիշեր Նապային:

— Ի՞նչ:

Սենեակը լուսաւորուած էր լուսնի լոյսով ու տան մէջ ամենքը քնած էին արդէն:

— Տեսնում ե՞ս երկար այդ խողովակը, որ այդպէս ողողուած է լուսնի լոյսով:

— Տեսնում եմ,— ասաց Նատան յենուելով թեւին:

— Երբ ես փոքր էի, ես կարծում էի այդ ճերմակ խողովակի մէջ բարի ոգիներ են ապրում ու այնպէս երջանիկ էի... Գնում էի, ձեռքս դնում խողովակին ու անասելի զօրութիւն էի ստանում՝ կարծես թէ թալիսման լինէր այդ խողովակը: Ես չգիտէի, որ ես երջանիկ էի, որովհետեւ մանուկ էի... Հիմա արդէն մեծացել եմ ու թալիսմանն այլեւս չի ազդում վրաս:

— Դու քանի՞ տարի ես ապրել այս տան մէջ, Զեօվա:

— Տասնըհինգ տարի:

— Իսկ այս տունը հի՞ն տուն է:

— Շատ հին, Նատա:

— Իսկ քո մանկութիւնը դեղեցի՞կ էր, Զեօվա:

— Իմ մանկութիւնը հէքեաթ էր, Նատա:

— Քո ծնողները քեզ շատ են սիրում:

— Ես էլ նրանց եմ շատ սիրում:

Երկուսն էլ լռեցին:

Զաւէնը ձեռքերը դրեց դլխի տակ ու շարունակեց պառկած դիտել՝ դիմացի պատերը, տանիքները, երկինքը... ու այդ բոլորը, բաց լուսամուտից, շրջանակի մէջ տեղաւորուած մի տեսարանի էր նմանում:

— Ի՞նչ ես մտածում:

— Ես մտածում եմ, որ վերջ ի վերջոյ, իմ ծնողները երջանիկ մարդիկ են: Հայրս արդէն յիսունի մօտ, շարունակում է նոյն եռանդով իր աշխատանքը, եւ նրա հոգին միշտ լցուած է հաւատով ու սիրով: Մայրս սիրում է կեանքը՝ երիտասարդ աղջկայ անխարդախ սիրով, վայելում է ընտանեկան օջախի քաղցրութիւնը, դաւակների սէրը... Իսկ ե՞ս...

— Իսկ դո՞ւ...

— Իսկ ես մտածում եմ՝ ահա պառկած եմ ես այստեղ, փոքրիկ այս սենեակում, որ տիեզերքի չնչին, աննշան մի անկիւնն է. կեանքի համար ի՞նչ արժէք ունի

իմ թշուառ գոյութիւնը... Ես պէտք է ապրեմ յիսուն, վաթսուն, եօթանասուն տարի, իսկ այդ տարիներն այնպիսի ոչնչութիւն են յաւիտենականութեան համար... Յաւիտենականութիւն, ուր ես չկամ ու չպիտի լինեմ՝ ես փոքրիկ մի հիւլէ... Եւ մինչդեռ հոսում է արիւնն իմ երակներում եւ ուղեղս անդադար աշխատանքի մէջ է, ճիգի մէջ է... Ինչ անտանելի է... Իսկ եթէ հեռուից նայելու լինես այս կեանքի վրայ, որով ապրում են այս տեղի մարդիկ եւ այն երջանկութեան, որով լցնում են նրանք իրենց գոյութիւնը, թւում է թէ ի՞նչ կարող է լինել աւելի լաւ: Իսկ մենք ճանճրանում ենք...

— Մենակ դրօսնելը քեզ մելամաղձութեան մէջ է դցում,— շշնջաց Նատան ու շուռ եկաւ միւս կողքի վրայ:

Մի քանի րոպէից յետոյ Զաւէնը լսեց նրա հանդարտ շնչառութեան ձայնը:

— Մարդկային հոգին մենակ, մենակ է ողջ տիեզերքի մէջ...— մտածեց Զաւէնն ու աչքերը յառեց ճերմակ խողովակին:

4

Նստած լուսամուտի տախտակին ու կռացած ֆրանսերէն մի գրքի վրայ, Վարդենին կարդում էր յափշտակուած:

Բարձր ու ճկուն մարմին ունէր նա, սեւ ու երկար հիւսեր. աչքերը նման էին շահանի խաղողի կլոր հատիկներին, որոնց մէջ խորասուզուողն առաջին վայրկեաններին քաղցր զգացողութիւնից յետոյ, հարբում էր ու լցւում անդուսպ տենչով:

« Մադամ Ռեկամիէն ծնուել է 1777ին: Նա արտասովոր հմայք ու գեղեցկութիւն ունէր, մադամ դը Ստալի անձնական բարեկամուհին էր՝ հալածուած Նապոլէոն Առաջինից: Դաւիթ նկարչի նկարը, որ գտնւում է Լուվրի թանգարանում... »

Աւարտական դասարանում էր Վարդենին ու իր հոգու մէջ հաւաքած արեւելքի ճաճանչները բոլոր, նայում էր կեանքին երազային ժպիտով: Տերեւների սօսափիւնը, գետիւռի չուն, ծաղիկների բոյրը, արտուտի ճախրը՝ ամեն, ամեն ինչ Թիթեռնիկի թեւերի վրայ հրաշքով մաղւած գունագեղ փոշու նման մաղւում էր նրա հոգու նուրբ թեւերի վրայ, նախշում նրանց հազար տեսակ նախշերով, հազարագոյն գոյներով ու Թիթեռնիկ իր հոգին ծաղկից ծաղիկ, թփից թուփ էր թռչկոտում՝ հաւաքելու համար նեկտարն անմահական:

Սիրտը բաց էր երկնքի նման, միտքը խաղաղ ու վճիտ, ժայռերի արանքում հրաշքով ընկած կապուտակ լճակի նման, ուր երկնքի կախարդանքներն են կաթում միայն, նրա բիւրեղ ջրերի մէջ հանդչելու համար:

« Իր սալոնը կենտրոն էր բոլոր մեծ իշխանների, բանաստեղծների ու նկարիչների, որոնց նա ընդունում էր իրեն յատուկ շնորհալիութեամբ: Մեծ դրող Շատոբրիանը սիրեց նրան, բայց մադամ Ռեկամիէն մերժեց ամուսնանալ ու մեռաւ մենակ, քաշուած հեռաւոր վանքի նեղ մի խցիկի մէջ »:

Վարդենին թեթեւ մի յոգւոց հանեց ու շարունակեց թերթել պատկերազարդ ժողովածուն: Ահա մադամ Վիժէ լը Բռէօնը եւ իր աղջիկը, նկարած իրեն, նկարչուհու կողմից: — « Տակաւին տասնըհինգ տարեկան չկար նա, երբ նկարեց իր մօր մեծադիր նկարը: Նրա տաղանդի լուրը հասաւ Անտուանէտ թագուհուն, որ շատ սիրեց երիտասարդ այդ արուեստագիտուհուն ու հովանաւորեց նրան... »

Նա երազկոտ աչքերը դամեց լուսամուտի ապակուն, որի թափանցիկ ճերմակութեան վրայ, դծագրուել էր իր դէմքի նուրբ անդրադարձումը: Վարդենին նայեց նրան մի քանի բոպէ. այնպէս, օտարի պէս... Նայեց, նայեց, սիրուն այդ դիմագծերին... Այնքան կենդանի, այնքան թրթռուն երեւաց իրեն այդ պատկերը... Նրա հոգում սիրոյ ու ծածուկ տենչի պէս մի բան արթնացաւ:

Ճերմակ պատին հպած ապակու մէջ արտացոլուած այդ դէմքը, չնաչխարհիկ գոյութիւն էր նրա համար: Ո՞րտեղից, ի՞նչպէս ծնուեց նա՝ անիրական այդ իրականութիւնը, որ ծռում էր գլուխը քնքոյշ նազանքով, սեղմում շրթունքները, շարժում ոլորուն երկար հիւսերը, թարթում խոշոր թարթիչները... Ու այդ բոլորը ճերմակ, ճերմակ, հազիւ ձեւաւորուած դծերով... Երազ ու հէքեաթ... Պատրանք ու տեսիլ...

Պատկերի շուրջը, ծառերի ճիւղերի անդրադարձումը, դիտաւորեալ զարդարանք էր հիւսել.— աջից ակացիայի լայն ճիւղն էր ձեռքը մեկնել, ձախից որթատունկի հինգթերթ տերեւներն էին երեւում եւ վերից ու վերից լուսամուտի զուգահեռ դծերը շրջանակաւորում էին նրան:

Արեւի կիզիչ ճառագայթների տակ բակի աղիւսներից տաք շունչ էր բարձրանում: Սեղանատան լուսամուտները ծածկուած էին թանձր վարագոյրներով: Սեղանի վրայ, ջրով լի ամանի մէջ, թարմ պտուղներ էին դրուած, որ սառոյցի թափանցիկութեան մէջ զարմանալի խաղ էին սարքել.— ծիրաններն ուռել, գնդակներ էին դարձել, տանձերը տափակել, կպել էին յատակին, կարմիր սալորները գունատուել՝ բաց վարդագոյն էին դարձել: Մէկ-մէկ յանկարծ հալուած սառոյցի մի կտոր, ընկղմում էր ջրի տակ, մի վայրկեան հպւում պտուղների փափուկ մարմիններին, շփոթութեան մատնում նրանց ու նրա շփոցը աղմուկ էր թուում զարմանալի այդ խաղաղութեան մէջ:

Դռների ու պատերի ետեւ դանուող փողոցներից անցնող հաղւադէպ անցորդների ոտնաձայները, դետնի տակից եկող խուլ հարւածների նման, զարնւում էին մարդու ականջին: Իսկ սենեակի մէջ լսւում էր միայն ճանճերի բզզոցը:

Պարտէզի հովասուն ծառերի տակ, կապերտի վրայ, թեք էին ընկել Զաւէնն ու Նատան:

— Տե՛ս, Նատա, տես, այս այն ծառն է, որի ծայրին ես վերջալոյսը դիտելու էի մագլցում: Ահա եւ իմ թթենին, որի ճիւղերի միջում տեղաւորուած, խորասուղ-

ւում էի ընթերցանության մէջ ու մնում այնտեղ ժամերով։

— Տես, Նատա, տես, Ջրհորի փայտին քանդակած իմ անունը, մառանի դռան հարթ ու լայն քարը. նրա աջ կողմը դարձեալ աւելի բարձր է քան ձախը ու ամեն անգամ մառան իջնելիս պէտք է դլուխդ կռացնես, չդիպչելու համար դէմ դիմաց ցցած այն կարասին, որի մէջ վհուկներ են ապրում... Որքան խորհրդալի է մեր տունը, չէ՞, Նատա։

Նատան աչքերով հետեւում էր Զաւէնի ցոյց տուած առարկաներին ու անտարբերութեամբ ժպտում։ Մինչ Զաւէնն աշխատում էր իր մէջ հրահրել, բորբոքել անցեալը։

Յանկարծ նա սկսեց բարձրաձայն ծիծաղել։

— Նայի՛ր, Նատա, նայի՛ր, խնդրում եմ... Զիս, իմ փայտեայ ձին...

Նատան դլուխը դարձրեց Զաւէնի ցոյց տուած կողմը։ Իրօք, այնտեղ, ծառի տակ, կանգնած էր խոշոր, բայց արդէն փչացած՝ բաշն ու պոչը ոչնչացած փայտեայ մի ձի, որ մի քանի օր առաջ Մանին տունը մաքրելիս, դտել էր Ջրամբարի դլխին նետած հին աթոռների ու սեղանների մէջ։ Անուշն իսկոյն նրան սեփականացրել էր ու շղթայով կապել ծառին, որ չփախչի...

Զաւէնը նորից ծիծաղեց, բայց յանկարծ նրա աչքերը լցեցին տխրութեամբ...— Ի՜նչ էր մի ժամանակ իրեն համար փայտեայ այդ կենդանին, որի մէջքին ցատկելով, նա՝ փոքրիկ տղայ, այնքան հեռու-հեռո՛ւ էր կարողանում թռչել... Որքա՜ն բան էր տեսնում նա, երբ աչքերը փակած մտրակում էր ձիուն ու սլանում... Ճանապարհը լայն էր ու անծայրածիր։ Իր աչքերի առաջ չկար սահման, իր մտքի համար չկար՝ վախճան։

— Այնպէս չէ՞, Նատա, այն, ինչ կարողանում է մարդուն տալ երեւակայութիւնը, այն, ինչին որ մարդը կարողանում է հասնել երեւակայութեամբ՝ դգալ, թափանցել, տեսնել բոլոր անբացատրելի, անտեսանելի համարուած երեւոյթները, այդ բոլորը հետագայում կորսուում, անյայտանում են, երբ զարդանում, մշակուում է միտքդ։

— Ի՞նչպէս։

— Միտքը մէկդի է նետում երեւակայութեան ուժն ու ամեն բան հիմնում տրամաբանութեան վրայ։ Մինչ երեւակայութիւնը սահման չունի, չի ենթարկուում տրամաբանութեան դծած սահմաններին։ Երբ ես նայում եմ կեանքին, մեր դեղեցիկ պարտէզին, ջինջ երկնքին ու այս սքանչելի ընկուզենուն, որի հովանու տակ այսպէս մեղկացած փուել ենք հիմա, ես տեսնում եմ ամեն ինչ, ճիշտ այնպէս, ինչպէս մի ժամանակ։ Եւ սակայն դգալ այնպէս, ինչպէս առաջ էի դգում՝ թափանցել այս բոլորի թաղուն էութեան, կախարդական արժէքների մէջ, բռնել այն, ինչ որ հասարակ լեզուով չի կարելի ասել, լսել խորհրդալի կանչը բնութեան, թափանցել անտեսանելիի մէջ, ես այլեւս չեմ կարող։ Եւ սակայն, այդ է իսկական հարստութիւնը կեանքի, մինչ ես աղքատ եմ։ Եւ այդ՝ որովհետեւ միտքս շատ է ներկայ ամեն տեղ. ամեն դգացողութեան, ամեն յոյզի ու ապրումի մէջ նրա քննադատ, նրա պրպտող ներկայութիւնն դգալի է։ Միտքը կաշկանդում է հոդին ու նա այլեւս չի կարողանում իր սեփական դօրութեամբ թափանցել երեւոյթների մէջ, նա աստիճանաբար կորցնում է իր ընդունակութիւնն ու ամեն ինչ դունատուում է...

— Կեանքի մէջ միշտ առեղծուած ես փնտրում, Զեօվա։

— Ի՞նչու, Նատա։ Ճշմարիտ չե՞ն ասածներս։

— Դուք հայերդ առհասարակ շատ էք սիրում փի-

լիսուիայել եւ շատ բան էք պահանջում կեանքից, գուցէ այն, ինչ որ նա չունի:

— Մենք ցանկանում ենք հասնել կատարելութեան, իրական կատարելութեան:

— Բայց ի՞նչումն է կայանում իրական կատարելութիւնը:

— Ի՞նչպէս բացատրեմ... Այն, ինչ որ, եթէ կուզես, այն ինչ որ մեր մանուկ երեւակայութիւնն իր ամբողջ ուժով կարողանում էր զգալ...

— Փայտէ ձիով թռած ժամանա՞կ... — հեգնեց Նատան:

— Ճիշտ այդպէս, փայտէ ձիով արեւը ճեղքելու ժամանակ... Այն, ինչ որ մատչելի է երեւակայութեան, ըմբռնելի է հոգուն, այդ բոլորը հասկանալ եւ ըմբռնել մտքով, անտեսանելին տեսանելի դարձնել, ցրել մեղ պատած խաւարը, պայծառացնել միտքը... հասնել դերադոյնին, գտնել գերագոյնը... Այդ է թաղնուած մեր հոգիների խորքում:

— Արեւելքի տարտամ մշուշի մէջ թաթախուած զգացողութիւններ...

Զաւէնը չպատասխանեց: Նա մի վայրկեան անդրադարձաւ իր վրայ՝ իր ներքին աշխարհի վրայ, իջաւ իր մէջ ու տեսաւ այնտեղ երկուութիւնն իր ենթադրեալ միատարը անձի... Ի՞նչ ասէր: Գլուխը բարձրացրեց, նայեց վերեւ... Երկինքը մտածկոտ, կապոյտ իր աչքերով վար էր նայում:

Զաւէնը յանկարծ խորը, խորը մի տխրութիւն զգաց:

— Ախ, Նատա, Նատա, ճշմարտութիւնն այն է, որ ներսս այրւում է:

Զաւէնը բռնեց նրա թեւից ու գլուխը յենեց ուսին.

— Միշտ իմ հոգու մօտ եղիր, Նատա, մի թող ինձ մենակ:

Նա փակեց աչքերը:

Дух безпокойный, дух порочный,
Кто звал тебя во тьме полночной.

— Ինչ խորն ու վեհ է սլաւոն հոգին,— մտածեց Զաւէնը՝ գլուխն աւելի հպելով Նատայի ուսին,— նրանք այնպէս խորաթափանց են, այնպէս զգայուն ու հասկացող:

Բայց իր մէջ ուրիշ մի մարդ, մի գուցէ այն, որ էր իսկականը, անորոշ շարժումներ էր անում, ինչ որ բաներ ասում, որ Զաւէնը լաւ չէր կարողանում հասկանալ: Դժգոհութիւնը, շաղախուած մութ տրտմութեամբ, պատել էր հոգին ու մոլորուած միտքը ցատկռտում էր սլաւոն հոգու շուրջը, կպչում էր նրա փեշերին, կախ ընկնում թեւերից:

— Ներսս, այստեղ մի բան կայ, որ նեղում է ինձ, Նատա:

— Ի՞նչ բան:

— Չեմ կարող բացատրել: Անհաճոյ մի զգացմունք:

— Զարմանալի է,— ասաց Նատան արհամարհական քրքիջով եւ ուսերն ուժգնօրէն վեր քաշելով,— զարմանալի է:

Զաւէնը փշաքաղուեց այդ ցնցումից... Բարձրացրեց գլուխն ու նրա աչքերը յանկարծ հանդիպեցին Նատայի սառն ու անտարբեր աչքերին... Զաւէնի մարմնով մի սարսուռ անցաւ: Նատան խկոյն զգաց այդ ու ջանաց ժպտալ, բայց Զաւէնը վախեցածի պէս աշխատեց խուսափել նրա հայեացքից ու ծանօթ պաղութիւնն անմիջապէս տարածուեց նրա երակների մէջ...

Զոր, ծակող պաղութիւն, որ Զաւէնը շատ անգամներ էր զգացել արդէն...

Նա մինչեւ անդամ յիշում էր այն նշանակալից օրը,

երբ առաջին անգամ օտարոտի այդ դդացումը բռնել էր իր հոգին։ —

Ութ տարի առաջ էր··· —

Возлѣ, нынѣ, вчужѣ, въявѣ.

Вкратцѣ, вскорѣ, развѣ, вмѣстѣ.

· · ·

Զաւէնը քննութեան էր գնում։

Զաւէնը գնացքի մէջ էր։

— Եթէ մէկ երեսի մէջ երկու տառասխալ ու երկու ստորակէտի սխալ անես, կորած ես։ Զափազանց խիստ են։ Գիմնազիան հեշտ բան չէ··· — ասել էր Գրիգորիյ Եւանգուլիչը։

Զաւէնը բոլոր դասագրքերը հաւաքել էր մեծ մի պայուսակի մէջ եւ անդադար կրկնում էր։ Վայ թէ յանկարծ մի բան մոռանար···

— Ամեն բան պէտք է լաւ յիշես, ամբողջ ծրագիրը։ Եթէ մի բան մոռանաս, նրանք հենց այդ մոռացածդ կը հարցնեն ու դարձեալ կորած ես։

Вѣрно, рѣдко, непремѣнно.

Նա կանգնել է գնացքի լուսամուտի առաջ եւ կրկնում է անդադար··· Ինքն էլ չիմանալով թէ ի՞նչ է ասում,— նայում է նախանձով դուրս, իր յուզմունքին անտարբեր շտապ-շտապ վազող ու անցնող տներին ու դաշտերին։

Գնացքը սուլում է ու թռչում։

Այնտեղ, անծանօթ այն քաղաքում, դպրոցի դռների մօտ կանգնած խոշոր ու մռայլ մի մարդ, սեւ համազգեստով, որի վրայ փայլում են բազմաթիւ դեղին կոճակներ, ընդունում է նրանց։

Դռնապանն է։

Նստում են վայտեայ նստարանին ու սպասում հերթի։

Զաւէնն աչքերը չի կարողանում հեռացնել դռնապանի կոճակներից··· Զգում է նրա հայեացքի ծանրութիւնը, նրա դաժան արտայայտութիւնը··· « Այն ես էի, որ այս ծանր դուռը բացեցի քո առաջ, խղճուկ օտարական։ Ուզեմ թեւիցդ կը բռնեմ, փողոց կը նետեմ ու դուռը վրադ կը փակեմ »։ — « Բայց ներեցէք, պարոն, ես վկայականներ ունեմ, վկայաթղթեր ունեմ··· Ես մի ամբողջ տարի գիշեր ու ցերեկ պարապել եմ, ես ամբողջ ծրագիրը գիտեմ···Եւ վերջապէս դուք ի՞նչ իրաւունք ունէք ո՞ր···» « Ախ, դուք իրաւունքից էք խօսում··· Առաջ մի ձեր թեւադրութիւնը դրէք, յետոյ կը հարցնեմ··· »։ Ու դռնապանը ձեռքերը մէջքին անցնում է նրա մօտից՝ մօտիկ, շատ մօտիկ···

Ինչ անհրապոյր, ինչ դաժան է այստեղ ամեն ինչ···

Զաւէնը մրսում է, Զաւէնը պաղութիւն ու չորութիւն է զգում։

— Ինչ հաճելի է տաքը, չէ՞, Նատա։

— Իսկ քիչ առաջ գանգատւում էի՞ր։

Զաւէնը լռեց։ Նստեց կապերտի վրայ ու մէջքը յենեց ընկուզենուն։

—Գիտե՞ս ինչ,— ասաց Նատան մի քիչ յետոյ,— ինձ թւում է, հայերն առհասարակ շատ են սիրում դժուարացնել կեանքը։ Դուք ամեն բան դարձնում էք անլուծելի եւ կեանքի ամենօրեայ ու սովորական երեւոյթները վերածում սարսափելի խնդիրների։ Կեանքը ծանր բեռ էք դարձնում ձեզ համար, իսկ նա հոսում է, հոսում···Դուք չէք կարողանում ըմբռնել ու վայելել նրա իսկական գեղեցկութիւնները։ Տխուր մարդիկ էք դուք հայերդ, Զեովա։

— Այսինքն:

— Մի տեսակ թագուն տխրութիւն ու վիշտ կայ ձեր հոգիներում: Անգոյն, անհոտ է ձեր կեանքը, տգեղ է ձեր կեանքը:

Զաւէնը դլուխը ծռեց, յետոյ խեղճացած ու ցած ձայնով, կարծես ինքն իրեն, հարցրեց՝

— Իրո՞ք: Բո կարծիքով դեղեցիկ չէ՞ օրինակ, փըռուել այսպէս, սքանչելի այս պարտէզում, ծառերի շուքի տակ, սառոյցով օշարակը կողքիդ ու լուռ՝ հիացմունքի մէջ ընկած դիտել կեանքը, դալ կեանքը քո ողջ էութեամբ, քո իւրաքանչիւր բջիջի թրթիռով: Եւ կամ առաւօտը կանուխ նստել նոր ջրած ու անուշաբոյր դունագեղ ծաղիկների, վառ կանաչների մէջ, յենուած մետաքսէ բարձերին ու լսել պսպղուն ինքնաեռի մեքամաղձոտ երգը· խորանալ, խորասուզուել, անէանալ... Մի՞թէ այդ երջանկութիւն չէ, մի՞թէ այդ դեղեցիկ չէ...

— Երջանկութիւնը կեանքը վայելելն է:

— Բայց ի՞նչպէս:

— Իրականօրէն: Շօշափելի իրականութեամբ: — պատասխանեց Նատան ծիծաղելով ու մատով խփեց Զաւէնի քթին:

Ներսից լսւում էր մետաղէ դդալի ձայնը, որով Նուբարը մածունն էր հարում թան պատրաստելու համար:

Նուբարը մենակ էր սենեակում ու խօսում էր ցածրաձայն՝ ինքն իր հետ: Նա ամուր-ամուր զարկում էր դդալը յախճապակէ ամանին, ջանալով հալեցնել սառոյցը:

Նուբարը մտազբաղ էր, շատ մտազբաղ:

Նամակաբեր Սէթը երէկ իրիկուն ապահովագրած մի նամակ էր բերել տպարան ու յանձնել Նուբարին:

Նամակը Տիգրանից էր:

— Իրաւունք ունի երեխան, ամիսը լրացել է, շուտով դպրոցի թոշակի ժամանակն է... Այս ինչ կարծր սառոյց է, չի հալւում կարծես... Ու դեռ անցեալ ամսւայ համար էլ պէտք է ուղարկել... Մածունը շատ թթու չէր, երեւի թանը համեղ չի լինի... Տեսնեմ թէ ինչ պէտք է անեմ, թէ ինչ կարող եմ անել:

Երբ ամենքը հաւաքւեցին սեղանատուն, Մանին նկատեց խկոյն Նուբարի դէմքի անհանգստութիւնն ու հասկացաւ, որ Տիգրանի նամակի հետեւանքով էր: Սակայն, ժպտուն եւ ուրախ նստեց նա սեղան, բաժանեց կերակուրը, լցրեց բոլորի համար չամիչով ու վարունգով պատրաստուած մածունն ու նայեց ամուսնուն:

— Լաւ, հոգս մի չինիր,— փսփսաց կամաց,— մի բան կանենք:

— Այո՛ ի հարկէ,— ժպտաց Նուբարը, բայց լրջացաւ խկոյն:

Այդ օրը ճաշն ամեն օրւայ պէս չէր: Նուբարի մտահոգ դէմքն ազդել էր բոլորի վրայ ու ոչ ոք չէր խօսում: Վարդենին, որ ոգեւորուած իր ընթերցումից, վճռել էր հօր հետ խօսել Ֆրանսա մեկնելու մասին, իր ապագայի մասին, Փարիզի ու Լուվրի մասին, թէեւ անտեղեակ հօր տրամութեան պատճառին, զգաց սակայն նրա ընկճուած տրամադրութիւնն ու լռեց: Նատան փորձեց կատակներ անել, չյաջողեց սակայն: Զաւէնն ակնյայտ ջղայնութեան նշաններ էր ցոյց տալիս ու փորձում էր չնայել Նատային, որ շտապ վերջացնելով ճաշը, թողեց բոլորին սեղանի շուրջ ու հեռացաւ սենեակից:

— Ի՞նչ էք ամեն հասարակ բան ողբերգութիւն դարձնում.— դիմեց Զաւէնը հօրը յանդիմանական ու դառնացած տոնով: — Ա՛հ, ինչ տխուր մարդիկ են հայերը...Կեանքը ծանր բեռ էք դարձնում ձեզ համար, իսկ նա հոսում է, հոսում...

Նուբարը չպատասխանեց: Նա չցանկացաւ անդամ պատմել, բացատրել որդուն թէ ի՛նչ վիճակի մէջ էին դտնուում իր դործերը... Որ պաւիրած թղթերի հակերը եկել մնացել էին, դրամ չկար, որ վերցնէր, որ տպարանի դործերը պակասել էին... Իսկ Տիդրանի ուսման դրա՞մը, իսկ տան ծա՞խսը...Ամեռը մօտենում էր, պէտք էր վառելիք դնել, լուս ու պանիր դնել, տունը լցնել... Նուբարին թւում էր, որ այդ բոլոր հարցերը չնչին, անհետաքրքիր՝ կեանքի նեղ նիւթական հարցեր էին, որոնցով չարժէր զբաղեցնել ոչ իր կնոջը, ոչ իր զաւակներին: Մինչ Զաւէնը շարունակեց:

— Մարդու թեւերը կոտրուում են ձեր ստեղծած այս մթնոլորտի մէջ: Հոգու թռիչքը պակասում է, միտքն ակամայ հասարակ ու մանր բաներով է սկսում զբաղուել: Ահա թէ ինչպէս է ստեղծուում ճղճիմ այս կեանքը:

— Եղբայրդ դրամ է ուղել, Զաւէն:— Ասաց վերջապէս Մանին, բայց զղջաց անմիջապէս:

— Դրամ է ուղել, կուղարկենք: Վաղը չլինի, միւս օրը լինի:

Վարդենին նայեց հօրը:

Նուբարը դարձեալ չպատասխանեց: Նա չուզեց ասել, որ հէնց այդ էր իր մտահոգութեան պատճառը՝ միւս օրը եւս դրամ չի կարող լինել, ո՞րտեղից պէտք է լինի... Ամառային ամիսները դործերը այնպէս վատ են լինում...

— Այո՛, ո՞րտեղից պէտք է լինի,— շարունակեց մտածել Նուբարը: Հարկ էր պարտք առնել: Գրիգոր աղան խոստացել էր դալ, միասին պէտք է դնային տոկոսով դրամ վերցնելու... Տոկոսով դրամ... Նուբարն առաջին անդամն էր, որ պարտք պէտք է անէր...

— Մեղք է Տիդրանը, Զաւէն ջան, պէտք է շուտ դրամ հասցնել նրան:

— Բայց դրա համար այսպէս տխուր կերպարանք

պէտք չէ ստանալ: Ի՞նչ կը մտածէ, ասա՛ խնդրեմ, ի՞նչ կը մտածէ Նատան:— Զաւէնը բորբոքւել էր ու խօսում էր ջղայնացած:

— Ի՞նչ անեմ,— ասաց Նուբարը մեղաւորի պէս,— իրաւացի ես:

— Ցետ կանչիր Տիդրանին, եթէ միջոցներ չունես շարունակելու:

Կարծես երկինքը տրաքեց Նուբարի դլխին:

— Զաւէ՛ն...— դոչեց նա աղերսագին ու միեւնոյն ժամանակ դարմացած ձայնով: — Դո՞ւ, դու կրթուած տղայ, ի՞նչպէս կարողացար այդ խօսքն ասել... Ի՞նչպէս կարելի է յետ կանչել, զրկել եղբօրդ, փչրել նրա ձրդտումները, փչացնել ապագան... Մեղք չէ՞: Լաւ մտածիր, Զաւէն, ու մի վիրաւորիր հօրդ:

Վարդենին դարմացած աչքերը դարձրեց եղբօր կողմը: Այդ Զա՞ւէնն էր այդպէս խօսողը... Այդպէս անտարբեր ու օտարի պէս...

Վարդենու սիրտը մինչ այդ անծանօթ մի ցաւ զգաց:

— Կարծում եմ իմ ասածների մէջ ոչինչ չկայ վիրաւորական,— պատասխանեց Զաւէնը հօրը,— ես դարձեալ կրկնում եմ, յետ կանչիր Տիդրանին, եթէ դժւարանում ես դրամ ուղարկել:

Նուբարի դէմքը սաստիկ կարմրեց: Նա հազիւ զսպեց բարձրացող յուզմունքը, որ վայրկենապէս բռնեց նրա ողջ էութիւնը... Բարձրացաւ տեղից, աննպատակ մօտեցաւ լուսամուտին, ուրքով հրեց կատուին, դարձաւ՝ նայեց բոլորին եւ ձեռքը խփելով սեղանին ասաց խեղդուած ձայնով:

— Ո՛չ, Զաւէն, ինչ դնով էլ լինի, Տիդրանը յետ չի դայ, նա պէտք է աւարտէ, ինչպէս աւարտեցիր դու...

Վարդենին թռաւ տեղից ու փաթաթուեց հօր պարանոցին:

5

Անցել էին ամիսներ։

Խաղողի որթերից ծանր-ծանր կախ ընկած ողկույզները գինի էին քամում մարդկանց սրտերի վրայ։ Կանաչ տերևների միջից, պսպղուն կարմրութեամբ, կլոր նուռն էր պէծին տալիս ու ժպտում՝ համբույրի սրատրաստ կիսաբաց բերանը դէպի վեր նայողի ծարաւ աչքերին դէմ տուած։ Այդ ժպտից դողում էին դիտողի շրթունքներն ու երակների մէջ ուժգնօրէն հոսում էր աշնան տենդը։ Դեղին սերկեւիլը, բնածին համեստութիւնից մղուած, թաղնուել էր մոխրագոյն կանաչութիւն ստացած տերևների մէջ. անոյշ բուրմունքով նա թմրեցնում էր արթնցած զգացմունքները եւ մօտեցողի ականջին կամացուկ շշնջում էր ամեռայ երգը։ Իսկ փարթամ, հասունութեան հասած դեղձը շողշողում էր մերթ կարմիր ու մերթ նարնջագոյն փայլով՝ իր թաւ մորթի զգայացունց հմայքը ցուցադրելով։

Ծառուղու երկշարք ծառերն առուակների կարկաչին էին խառնում իրենց դեղնած տերևների մեղմ խշխշոցը։ Աշնան այդ երգը նախ երերում էր բարձր ճիւղերի արանքում, ապա սողալով վար էր իջնում՝ գալարուում ծառերի բներին, յետոյ յանկարծ նետուելով հոսող ջրերի մէջ, խառնուում էր նրանց դեղին ու վաղում, փախչում։

Գեղեցիկ է Թաւրիզի ծառուղին։

Ցատուկ ջրկիրներ ամէն առաւօտ, տիկերը կողքերից կախած, ոտաբոբիկ, թեթեւ քայլերով գալիս են յատկապէս այդ ծառուղին ջրելու։ Թարմ ջրից, քարերից ու հողից այնպիսի անուշ բուրմունք է բարձրանում, որ անցորդները, քաղցր հաճոյքը երկարացնելու համար, յենուում են ծառերին, աչքերը դցում հոսուն առուակի ջինջ ջրին ու մնում անշարժ։ Խաղաղ հանդստութիւնը պարուրում է նրանց։

Առաւօտ է։

«Փարիզ» տպարանի դրան առաջ, աչքերը յառած կօշիկի ուռած ծայրին, մտադրաղ դէմքով, կանգնել է Նուբարը։ Հեռուից՝ փողոցի էն գլխից, լսում է փոքրիկ Հասանի տխուր երգը, որ պատի տակ, գետնի վրայ կրակ արած, եգիպտացորեն է եփում ու դիլ ձայնով դովում իր ապրանքը։ Նրա երգն այնպէս մելամաղձոտ է հնչում, կարծես փչրուած ու հալածուած սիրոյ տխուր մի պատմութիւն լինի։ Աղջրով լեցուն ամանը դրուած է կրակի մօտ։ Հասանը վերցնում է խորոված եգիպտացորենը, շտապ-շտապ ջրի մէջ է մտցնում՝ մի քիչ աղի դարձնելու համար ու շարունակում է գովել իր ամանը, իր աղջուրը, բոլոր էրուած սրտերի նման խորոված իր ապրանքը, բոլոր վառուող հոգիների նման բորբոքուող իր կրակը։

Նուբարը, ձեռքերը դրպանը դրած, լսում է ակամայ այդ երգը, շնչում է հողից բարձրացող անոյշ բուրմունքը եւ կօշիկի ծայրը շարժում օդի մէջ։ Ցանկարծ նա գլուխը վեր է բարձրացնում, յետոյ իսկոյն վար իջեցնում, շտապ մի շարժումով յետ-յետ գնում եւ անմիջապէս մտնում է ներս։ — Հակառակ մայթից, գլխարկը ձեռքում խաղացնելով, երեսը հովին տուած, մոլորուած աչքերն անորոշին յառած՝ քայլում էր Զաւէնը... Նուբարը յուզուած՝ կծում է ուժգնութեամբ վարի շրթունքը։ Փորձում է այն

կողմը չնայել, մօտենում է ապակէ վեղկին, հեռանում է կրկին, ձեռքերը գրպանից հանում, մազերը հարթում, կրկին մօտենում վեղկին:

Զաւէնի յանկարծակի յայտնուումը ակնյայտ յուզում է նրան: Մի վայրկեանի մէջ Նուբարը վերյիշում է նախընթաց դիշերուայ ամբողջ խօսակցութիւնը, վերապրում է այն, ինչ որ զգացել էր Զաւէնի անսպասելի խօսքերից յետոյ:

Զաւէնի անսպասելի խօսքերը... Այն էլ ուրիշի ներկայութեամբ...

Պատերազմ էր:

Բովանդակ հայ կեանքը տենդով էր բռնուած: Ամեն օր իրար հակասող լուրեր էին գալիս: Նուբարենց տունը ամեն երեկոյ հաւաքւում էին ծանօթներ, բարեկամներ. խօսում էին, զրուցում, բերնից բերան տարածուող նորութիւններ հաղորդում մէկ-մէկու եւ դուշակութիւններ անում:

— Ի՞նչ կը լինի, ինչպէ՞ս կը լինի:

Ու հապար անդամ նոյն ձեւերով նոյն բառերն էին կրկնում՝ «մարդասէր Եւրոպան», «ազնիւ պետութիւններ», «ռուսի սուրը կտրուկ»: Պատմում էին պատերազմի արհաւիրքների մասին, թէ ինչպէս կրակի թոհ ու բոհի մէջ այրւում, ոչնչանում էին ստեղծագործ մարդու աշխատանքի արդիւնքները:

Այս բոլոր խօսակցութիւնների ընթացքին, սակայն, Նուբարն իր հոգու խորքում թագուն մի գոհունակութիւն էր զգում,— իր որդին՝ Զաւէնը հեռու էր այդ տարասեներից... Զաւէնն այդտեղ էր, իր աչքերի առջեւ, խոնարհուած գրքերի ու թղթերի վրայ:

Առաջին ամիսների հանդստից յետոյ, Զաւէնը վճռել էր լրջօրէն նուիրուել իր պարապմունքներին: Պէտք էր մի բան անել: Պէտք էր հաւաքել, կարգի բերել ցրուած մտքերը, իսկ մնացածը ինքն իրեն կը լինի: Գրքերը թեւի տակ, նա սենեակից պարտէզ էր իջնում, նորից սենեակ բարձրանում, կարդում էր, գրում, քաղուածքներ անում, գրածը ջնջում ու կրկին գրում: Հազար ու մի փիլիսոփայական հարցեր մեխուել էին նրա ուղեղի մէջ ու հանդիստ չէին տալիս նրան:

Զաւէնի պարապմունքի ժամերին տնեցիք աշխատում էին աղմուկ չհանել՝ չխանգարել նրան: Անուշը ոտքի ծայրերի վրայ էր մանր գալիս ու խիստ ցածրաձայն զրուցում իր կատուի հետ: Մանին հոգատար աչքերը չէր հեռացնում որդուց՝ միշտ կամացուկ փսփսոցով ջանալով հասկացնել նրան, որ շատ չպարապէ, խնայէ իր առողջութիւնը:

Զաւէնի երբեմնի ապրումների, յուշերի, յոյզերի ու տենչերի կարօտալի փնտռումները դունատուել էին արդէն:

Ի զուր փնտռտուք...

Զաւէնը զգում էր, որ իր մէջ այլեւս կազմուել, ձեւաւորուել էր մի նոր հոգի... Այժմ, երբեմնի այդ հարազատ միջավայրը կամաց-կամաց խորթանում, օտարանում էր իրեն համար: Եւ ճիշտ այնպէս, ինչպէս մի ժամանակ՝ հեռու այն երկրում, կարօտում էր այստեղ թողածին, կարօտում ու տենչում էր իր սիրուն անցեալին, այնպէս էլ հիմա կարօտում էր այն հեռու երկրին, ուսանողական կեանքին, նրա հարազատ դարձած շրջանին, եւ բոլոր յոյզերին ու ապրումներին:

Տխուր էր կեանքն այստեղ Զաւէնի համար: Խոր-

հուրդները կորցրել էին իրենց նշանակութիւնը. դեղեցկութիւն, սէր՝ ամեն տեսակի զգացմունքներն ու ըմբռնումները փոխուել՝ տարբեր նշանակութիւն, տարբեր արժէքաւորում էին ստացել:

— Պլատոնի թէորիան, սիրելի հայրիկ, հիմնուած է իդէաների վրայ: Իդէան Պլատոնի փիլիսոփայութեան մէջ երկու նշանակութեամբ է գործածւում — առաջին՝ լոգիչէսկի եւ երկրորդը՝ մետաֆիզիչէսկի: Հասկանո՞ւմ էք: Մետաֆիզիչէսկի իմաստով իդէաները գտնւում են բնութեան եւ կեանքի հիմքում, իբրեւ այսպէս ասած Causae Finales: Իդէան, սիրելի հայրիկ, օբեկտիւ չէ: Հասկանո՞ւմ էք: Իրերն ու երեւոյթները ոչ այլ ինչ են, բայց եթէ ստուերներն իդէաների, իդէաներն են իսկական օրինակները, նախատիպերները, իսկ իրերը ձեւ են ստանում՝ ըստ իդէաների: Պլատոնը ժխտում է, ուրեմն, երեւոյթների իրական լինելը եւ ճանաչում է միայն իդէաների ըէալականութիւնը: Հասկանո՞ւմ էք:

— Ինչո՞ւ ես այդպէս յաճախ կրկնում, հասկանո՞ւմ էք:

— Ես ռուսերէն եմ մտածում, սիրելի հայրիկ:

Երեկոյ էր: Նրանք նստած էին պարտէզում, լայնաճիւղ ընկուզենու տակ ու մեղմ զրուցում էին:

Այդտեղ էր Վասիլ խանը ու Նուբարի վաղեմի բարեկամ պարոն Վարդանը, որ Մանիի պատրաստած դաթան ու վարդի անուշն առաջը դրած լուռ լսում էր Զաւէնի եւ Նուբարի խօսակցութիւնը:

Զաւէնը մի պահ մէկդի էր դրել գրքերն ու ոտքը ոտքին դցած, պատասխանում էր հօր հարցերին:

Պարոն Վարդանը ներողամիտ ժպիտով էր նայում Զաւէնին, ու Զաւէնն այդ գդում է: Թագուն մի հակակրանք կար նրանց երկուսի միջեւ, եւ իր հերթին Զաւէնը

վերից էր նայում «տեղացի» այդ մտաւորականի վրայ: Նրա ժպիտը ջղայնացնում էր Զաւէնին, իսկ պարոն Վարդանին ակնյայտ զայրոյթ էր պատճառում Զաւէնի իր հանդէպ ունեցած մեծամիտ կեցուածքը:

Մինչդեռ Վասիլ խանը հիացած էր: Իր սրտի խորքում նախանձի պէս մի բան էր շարժւում: Նա տեսնում էր, որ Նուբարի թափած ջանքերն ապարդիւն չէին անցել: Զաւէնը կատարեալ գրքի մարդ էր դարձել: Զաւէնն իրեն պահել գիտէր. նրա խօսելու եղանակը, շարժուձեւերը, ամեն-ամեն ինչ հիացմունք էին պատճառում Վասիլ խանին: Իսկ Ներսէ՞սը...Այդպէ՞ս էր իրենց Ներսէսը:

Շատ անգամներ Վասիլ խանը ցանկացել էր խօսել Նուբարի հետ Ներսէսի մասին՝ ասել, հարցնել, թէ հապա ինչո՞ւ նա ուրիշ տեսակ էր դարձել... Զաւէնի պէս պարապելու փոխարէն Ներսէսն անհոդ թրեւ էր գալիս քաղաքի փողոցներում, շրջապատում էր իրեն կասկածելի եւ ոչ-պիտանի ընկերներով՝ չկարողանալով իրեն պահել իր «ուսումին վայել եղանակով»:

Նուբարը մտքով հեռու սլացած, թէյի բաժակը ձեռքին, աչքերը սեւեռել էր մի կէտի:

— Մտածել, որ այսպէս խաղաղ նստած սեղանի շուրջ, մենք քաղցր զրուցում ենք, մինչ այնտեղ մարդիկ արիւն են թափում, կեանքեր են զոհւում,— ասաց Նուբարը՝ դանդաղօրէն դառնալով պարոն Վարդանի եւ Վասիլ խանի կողմը, երբ Զաւէնը լռեց ու վերստին կախեց գլուխն իր գրքերի վրայ:

Ամենքը լռեցին:

Մի քանի րոպէ լսւում էր միայն թէյի դդալների ձայնը, որով խառնում էին շաքարը, կամ մաքրում անուշի պնակը:

— Նուբար,— խօսեց վերջապէս Վասիլ խանը:

Նուբարն աչքերը դարձրեց նրա կողմը։

— Մեր Ներսէսն ախր էդ պատերազմի մասին ուրիշ-ուրիշ բաներ ա ասում...

— Ի՞նչ բաներ, Վասիլ խան։

— Ճիշտ ա, մարդիկ արիւն են թափում, մենք՝ հայերս էլ դուրս ենք եկել պատերազմի՝ մարդասէր Եւրոպայի կողքին, բայց մեր Ներսէսն ասում ա, որ էս բոլորը չարլատանների գործ ա, որոնք իրենց դրպանը լցնելու մասին են մտածում ու խեղճ անպաշտպան ժողովուրդին թնդանօթի կրակին են կապում։ Ես իրեն ասում եմ, որ քրիստոնեայ ազգերի ազատութեան խնդիր կայ, արդարութեան ու ճշմարտութեան խնդիր կայ։ Ախր էդ ազնիւ պետութիւնները...

— Պատերազմը, Վասիլ խան, շատ խորը պատճառներ ունի,— համոզուած շեշտով ասաց Նուբարը։

— Իսկ մե՞զ՝ հայերիս համար։

— Իսկ մեզ՝ հայերիս համար, Վասիլ խան, ի՞նչ իմանանք... Թէ որ մեծ Ռուսաստանը...

— Մենք յոյս ունինք, շատ մեծ յոյս,— ասաց պ. Վարդանը։

— Ռուսաստանը շատ մեծ դեր ունի կատարելիք պատմութեան մէջ,— ասաց Զաւէնը՝ առանց գլուխը բարձրացնելու։

Վասիլ խանը նայեց նրան։ Նա ցանկանում էր, որ Զաւէնը եւս մասնակցէր այդ խօսակցութեան, ուզում էր իմանալ նրա կարծիքները։ Նուբարը հաւանութեամբ շարժեց գլուխը. իր հայրական հպարտութիւնը չոյւում էր ամեն անգամ, երբ Զաւէնը գիտական տեսակներով ու փաստերով խօսում էր, բացատրում էր։

Բայց Զաւէնը չշարունակեց։

Վասիլ խանը կրկին դարձաւ Նուբարի կողմը։

— Ցետոյ, մեր Ներսէսը, Նուբար ջան, ասում ա որ...— նա լռեց մի վայրկեան,— գիտե՞ս ինչ ա ասում. ասում ա՝ հալա կռիւը չարլատանութիւն ա, չարլատանութիւն, էն Արտօն էլ, ասում ա, աւազակ ա, աւազակի պէս հայ ժողովրդին դէպի մահ ու կոտորած ա տանում։

Նուբարը յօնքերը կիտեց, մինչ պարոն Վարդանը վրդոված ձեռքի բաժակը աղմուկով վար դրեց։

— Թոռդ չափը անցընում է, Վասիլ խան,— ասաց պարոն Վարդանը,— իսկ ինքը ընդունա՞կ է այդպիսի անձնազոհութեան։ Տարիներով փախստական, միշտ սարերում, երբեմն կուշտ հացի կարօտ... Արտօնները հերոսներ են, Վասիլ խան։ Տարիներ շարունակ հօր վերջին միջոցներով կրթուել ու դեռ պիտանի՝ որեւէ գործ ցոյց չտուած քննադատել ուրիշներին...

Ու պարոն Վարդանը շրթունքներն իրար սեղմելով թափահարեց գլուխը։

Մինչ Վասիլ խանը շարունակեց.

— Ասում ա Արտօնները հայ ժողովրդի թշնամիներն են, որ նրանք մեր ազգի ճակատագրի հետ են խաղում, իրենց անձնական շահերի համար։ Ես ինչ իմանամ, էսենց-էսենց բաներ ա ասում։

— Ես էլ չեմ հաւանում Արտօնների ընտրած ճամբան, Վասիլ խան, բայց ուզում եմ, որ նրանց երազն իրագործուի,— ասաց Նուբարը.— Այդ ճամբին շատ-շատ լաւեր ու կտրիճներ կը գոհուեն... Դու տեսար, Վասիլ խան, նրանց հաւատով լի աչքերը, վճռականութիւն արտայայտող հայեացքը, այն գիշեր, երբ նրանք եղբօրս հետ միասին մեկնեցին Կովկաս։ Ո՞վ գիտէ, դուցէ վերջին անգամ էինք մենք տեսնում իրար... Մեծ է նրանց նպատակը, Վասիլ խան։

— Ի՞նչ նպատակ, հայրիկ,— Զաւէնը թեթեւ գլուխը բարձրացրեց։

— Նպատակը հայկական հարցի լուծումն է, որդիս։

Զաւէնը նորից դլուխը կախեց, շրջեց դրքից մի քանի էջեր, ապա հանդարտ, կարծես ինքն իր հետ խօսելով, ասաց.

— Իսկ ի՞նչ կը շահի մարդկութիւնը, եթէ հայկական հարցը լուծուի։

— Հայ ժողովուրդը, որդիս, ունի հող, երկիր, բնակչութիւն, հարստութիւն։ Պատերազմը հնարաւորութիւնների լայն դուռ կարող է բանալ մեր ապագայի, մեր զարդացման համար։ Յետոյ մեր հոդեկան, մեր կուլտուրական արժէքները...

— Մեր արժէքնե՛րը... Երբ մարդ ծանօթանում է, հայրիկ, մեծ ժողովուրդների պատմութեան, դրականութեան, փիլիսոփայութեան հետ, զդում է այն ժամանակ, որ մենք խեղճ ենք ու մեր արժէքները ոչինչ են, ոչինչ... Գիտութեան ու արուեստի անծայր ու անյատակ ծովի մէջ ընկած մի քանի կաթիլներ, եւ ուրիշ ոչինչ։

Նուբարը զարմացած նայեց Զաւէնին։ Թէյի բաժակը վերցրեց, նորից վար դրեց։

— Մենք ունենք հարուստ դրականութիւն, սքանչելի բանաստեղծութիւն, աննման հէքեաթներ մեր կիսատուռած քաջերի մասին,— խօսեց պարոն Վարդանը դառնացած ձայնով,— մինչնաղարեան կրօնական մեր երգերը, Յովհաննէս Մանդակունուց սկսած մինչեւ Ներսէս Շնորհալի, մինչեւ Յովհաննէս Երզնկացին։ Իսկ Նարեկացին, Ֆրիդը, Մկրտիչ Նաղաշը, Աղթամարի Գրիգորը, Նահապետ Քուչակն ու Սայաթ Նովան...

— Դրանցից եւ ոչ մէկը ոչինչ չեն աւելացնում համամարդկային արժէքների վրայ,— հպարտ սառնասրտութեամբ պատասխանեց Զաւէնն ու չեչտակի նայեց պարոն Վարդանին։

Մարդը չկարողացաւ այլեւս դսպել իրեն ու հեգնական մի ծիծաղ վար նետեց ատամների արանքից։

Զաւէնը բորբոքուեց, ջղային մի շարժում արաւ, շտկեց թեւի կոճակը, մատով լայնացրեց օձիքն ու ծխախոտն ատամների մէջ ծամելով ասաց.

— Ես ձեզ ճշմարտութիւնն եմ ասում, պարոն։

— Գիտեմ, գիտեմ, երիտասարդ, դուք համամարդկային արժէք համարում էք այն, ինչ որ օտար է, ինչ որ ձերը չէ, ինչ որ դրսից է գալիս։ Խոստովանեցէք, որ վաղուց մեռել է ձեր մէջ ընդունակութիւնը խանդավառուելու հարազատ զեղեցկութիւններով։

— Իսկ դուք ուզում էք համեմատութիւնն՞ը անել,— ձայնը բարձրացնելով ասաց Զաւէնը։

— Մի՛ յուզուիր, Զաւէն, մի՛ յուզուիր,— ընդմիջեց Նուբարը՝ տեսնելով Զաւէնի դայրոյթը։

— Ինչպէ՞ս չյուզեմ. իմ հոդին, իմ միտքը բողոքում է այդ ձեւի անարդարութիւնների դէմ։ Իմ ջղերի վրայ ազդում է, երբ մարդիկ չիմացած բաների մասին են խօսում։

Պարոն Վարդանը վիրաւորուեց։ Վեր կացաւ տեղից.

— Այդպէս է, այդպէս,— ասաց նա դայրացած.— Գնում էք, վերադառնում, ուրանում էք ձեզ եւ մոռանում ամեն ինչ...

— Լաւ, լաւ, մի՛ վրդովուիր, բարեկամ, մի՛ վրդովուիր,— դիմեց Նուբարը հիւրին՝ դրութիւնը մեղմելու նպատակով,— նստիր, ջահել է, չի հասկանում, ես էլ նոյն կարծիքին եմ։

Նուբարի խօսքը սակայն կիսատ մնաց բերնի մէջ։ Զաւէնը յանկարծ ձեռքը խփեց սեղանին, եւ բաժակները շրխկացին...

— Դու էլ նոյն կարծիքին ես... Ի հարկէ, նոյն

կարծիքին ես... Դուք բոլորդ էլ մի ձեւի մտածելակերպ ունեցող մարդիկ էք... Ինչո՞ւ, ինչո՞ւ կծկւել նեղ՝ ազգային պատեանի մէջ: Խնդրանքի պէս գլուխը ներս առնել եւ ոչինչ չտեսնել... Նեղմիտ ու ճղճիմ են ձեր տեսակէտները, յետադէմ մարդիկ էք դուք...

Տարօրինակ մի բոպէ էր...

Նուբարի վրայ սառը ջուր լցրին: Նա շշմեց ու քարացաւ նստած տեղում...

Զաւէնը զայրոյթից դունատւել էր ու մինչ սպասում էր պատասխանի, պարոն Վարդանն արհամարհական մի հայեացք գցեց նրա վրայ ու լուռ՝ առանց որեւէ խօսք արտասանելու՝ ձեռքը տարաւ գլխարկին: Բայց Զաւէնը կանխեց նրան, հրեց աթոռը եւ ծխախոտը մէկ կողմ նետելով՝ շտապ հեռացաւ պարտէզից:

Նուբարի գլուխը քարշ էր ընկել կրծքին: Նա կարծես չնկատեց մինչեւ անդամ ոչ Զաւէնի հեռանալը, ոչ պարոն Վարդանի իրեն ցտեսութիւն ասելը... Ինքնաբերաբար նա սեղմեց իրեն մեկնած ձեռքն ու կրկին գլուխը կախեց կրծքին...

Զնախատեսուած մի բան էր կատարւել:

Նուբարը փորձեց քննել ու դատել: Այդպէ՞ս պէտք է լինէր: Բայց յուզմունքը թոյլ չէր տալիս մտածելու, ցաւի պէս մի բան սեղմում էր իր ներսը: —

Իր ու Զաւէնի միջեւ մութ մի տարածութիւն էր բացւել...

Գիշերն արդէն իջել էր, ծառերը կախել էին գլուխները, երկինքը բարձրացել էր եւ մութ կապոյտ գոյն ստացել: Պարտէզի պատերը թաղւել էին իջնող մթութեան մէջ:

Վասիլ խանը վաղուց մեկնել էր արդէն, բայց Նուբարը շարունակում էր մնալ իր բազկաթոռի մէջ: Ծխում էր: Այնպէս անսովոր էր թւում նրան պարտէզն այդ իրիկուն: Ոչ ոք չկար նստած իր կողքին... Ոչ ոք: Նա, յանկարծ իրեն մենակ զգաց: Մարմնով թեթեւ մի դող անցաւ:

Տարօրինակ զգացմունք: Նուբարը երբեք այդպիսի բան չէր զգացել... Մենա՞կ... Շտկւեց նստած տեղում ու աշխատեց մտածել՝ առնասիրտ կերպով մտածել:

Թփերի արանքից լսւում էր ծղրիթի միօրինակ երգը: Զեփիւռն իջել էր, եւ պարտէզի վրայ թեթեւ, շատ թեթեւ մի սլսլոց էր լսւում:

Զնախատեսուած մի բան էր կատարւել: Ու այդ էր արդէն ցաւալին:

Ի՞նչը:

Ցաջորդ առաւօտ Նուբարը շուտ դուրս եկաւ տնից: Նա չնախաճաշեց, ջանաց ոչ ոքի հետ չխօսել ու դուրը կամաց բանալով՝ գնաց տպարան:

«Սիրել միշտ, սիրել յաւիտեան...

«Սիրել ու տանջւել...

«Կապոյտ թախիծը պատել է հոգիս: Ամեն ինչ այնպէ՞ս գեղեցիկ է եւ այնպէս տխուր... Ես գրում եմ քեզ, որովհետեւ ցանկանում եմ բաժանել քեզ հետ այն, ինչ որ տանջում է ինձ... Ա՛խ, ինչն է այսպէս տանջում ինձ... Ես ինքս լաւ չեմ հասկանում, բայց զգում եմ, թէ կայ մի բան, որ սեղմում է հոգիս, որ լցնում է հոգիս ու ես երջանիկ եմ որ տանջւում եմ...

«Աղաչում եմ, աշխատիր հասկանալ ինձ: Փորձիր զգալ, որ այստեղ՝ հեռւում տառապանքի գեղեցկութեան

մէջ թաթախուած մի հոգի տանջւում է ու սիրում, եւ իր տանջանքից մի մասնիկ քեզ է ուղարկում...

« Մենակ մի հոգի... Ընկած աշխարհի հեռաւոր մի անկիւնում...

« Մենակ...

« Ներիր, որ այսպէս պարզ եմ խօսում քեզ հետ: Եւ ինչպէ՞ս անսպասելի, ինչպէ՞ս յանկարծակի ստեղծուեց այս կապը իմ ու քո միջեւ... Քաղցր է այս զգացմունքը, Զէօվա:

« Պարտէզի վրայ դեղին ձանձրոյթ է թափւում... Ես ուզում եմ արտասուել. գլուխս ափերիս մէջ առնել ու արտասուել... Յետոյ ուզում եմ մի բան անել, մի բան անել... Ա՛հ, հեռանալ, հեռանալ »...

Նա գլուխը բարձրացրեց, անփոյթ գոցեց ձեռքի գիրքը, որի մէջ պատահմամբ գտել էր Նատայի մի քանի տարի առաջ իրեն գրած հին նամակները, եւ տխուր աչքերը յառեց պատուհանի ապակու վրայ խաղացող արեւի շողերին:

Նատան...

Զաւէնը նրա մէջ տեսել էր Տատեանային, դժբախտ Լիզային... «Սիրել կամ մեռնել, Զէօվա»... Նրա զգացումներն այնպէ՞ս վճիտ, այնպէ՞ս ուժեղ էին թւում...

Թւո՞ւմ...

Այդպէս չէ՞ր, ուրեմն:

— Շօշափելի իրականութեամբ,— հնչեց յանկարծ Զաւէնի ականջին մի քանի ամիս առաջ իրենց պարտէզում, ընկուզենու տակ արտասանած Նատայի խօսքերը...

Ու նրան թւաց, որ կրկին լսեց Նատայի անսպասելի եւ չոր ծիծաղը... Այն ծիծաղը, որ այնպէս ցնցել էր իրեն... Նրա աչքերի առաջ պատկերացաւ Նատայի այդ պահի սառն անտարբերութիւն արտայայտող դէմքը. վերյիշեց վերստին ժպտելու նրա ձիգը, մինչ ինքը վախեցած պէս աշխատել էր խուսափել նրա հայեացքից:

Այդ առաւօտ էր: Զաւէնը նստած էր իր սենեակում, նախասենեակի սեղանի առաջ:

« Կապոյտ թախիծը պարուրել է հոգիս »,— կարդաց նա կրկին:

Կարդաց ու զգաց կարծես, որ երբեմնի «կապոյտ» այդ թախիծն այլեւս թանձր ու ճնշող՝ մոխրագոյն մի գանգուած էր դարձել ու պարուրել էր իրեն:

Նա ձեռքով անհամբերութեան շարժումներ արաւ, կարծես փորձելով արագօրէն հեռացնել իրենից մի բան... մի բան, որ եկել էր կպել իր ճակատին, իր աչքերին...

Զաւէնը չիմացաւ թէ ինչո՞ւ, չիմացաւ թէ ինչի՞ համար, բայց զգաց, որ իր հոգու վրայ քարի պէս ծանր մի բան կար կախուած: Ու թւաց յանկարծ Զաւէնին, որ ժամանակը եկել է, եկել հասունցել է, եւ ահա, ահա մի բան պէտք է կատարուի, մի շատ անհրաժեշտ բան...

Վարանոտ մատներով սկսեց խաղալ սեղանի սփռոցի ծոպերի հետ:

Կապոյտ ու նարնջագոյն գծերով ճերմակ սփռոցի տեսքն ինչ որ գոց փեղկեր բացեց իր ուղեղի մէջ եւ հեռու, հեռու մշուշների ու մուժերի միջում, պայծառ ինչպէս մոգական լապտերից նետուած շլացուցիչ կապոյտ եւ նարնջագոյն լոյսերի ժապաւէններ...

Զաւէնը մի վայրկեան մոռացաւ ամեն ինչ: Հոգու խորքում ուրախ մի թրթիռ առաջացաւ՝ մանկութեան պայծառ մի առաւօտի յիշողութիւն, ճերմակ սփռոցի կապոյտ ու նարնջագոյն գծերով զարդարուն... Ինքն այնպէս փոքրիկ, փոքրիկ մի տղայ էր, ծնօտը հազիւ էր հասնում սեղանին, իսկ սեղանի վրայ դեղին ինքնաեռն

էր եռում, մօր քնքոյշ ձեռքերն էին շարժւում՝ խառնւած բաժակների թափանցիկ ապակիների հետ։

Սթափւեց յանկարծ։ Մէկ կողմ հրեց դիրքը։

Նատան արդէն հագնւել, մօտեցել էր սեղանին։

Պատուհանի ապակու վրայ արեւի շողերը լուսէ պար էին բռնել։ Ապակին մերթ ոսկի, մերթ կարմիր ու դեղին փայլով թրթռուն շողեր էր ցայտում չարաճճի պատանու աչքերի պէս։ Կարծես հրաբորբոք մի սիրտ, թարմ այդ առաւօտի ջինջ միջոցի մէջ, իր հրէ բոցերն էր նետում։

Աշնան արեւը նազանք ու կիրք ունի իր մէջ, աշնան մրդերը՝ կրակ ու մեղր։ Երկինքն աշնան մութ փիրուզէ գոյն է ստանում եւ աւելի է իջնում երկրի վրայ՝ նրա հասուն գեղեցկութեան ու թանձրացած հիւթերի հմայքն ու քաղցրութիւնը մօտիկից զգալու համար։ Զեփիւռը կրքոտ գալարւում է ծառերի բներին, գգւում, շոյում է պտուղներին, յետոյ խանդոտ ծափ է տալիս պարտէզում, ու մարդկանց աչքերը լցւում են անհուն թովչութեամբ։

— Այնպէս չէ՞, Զէօվա. այսպէս առանձին նախաճաշելն աւելի հաճելի է, այնպէս չէ՞։

Զաւէնը ոչինչ չպատասխանեց։

— Դու պէտք է հասկանաս, սիրելիս, որ ինձ համար վերջապէս շատ էլ հետաքրքիր չէ ամեն օր ժամերով կոտրատւած ռուսերէնով պատմութիւններ լսել... Պարտէզում թէյ խմելը, հանդերձ ընտանեօք մի սեղանի շուրջ հաւաքւելը, միօրինակ, ձանձրալի սովորութիւններ են, Զէօվա։ Մենք՝ ես ու դու վերջ ի վերջոյ ուրիշ ըմբռնումների տէր մարդիկ ենք։ Մենք հասուն մարդիկ ենք, անկախ անհատներ... Հիմա դու չես կարող մտածել այնպէս, ինչպէս քո ծնողները։ Իսկ ե՞ս մանաւանդ...

Նա շտկում է ուսերից վար սահած պարսկական

մետաքսէ շրջազգեստը եւ դեղեցիկ կապոյտ աչքերը դարձնում է Զաւէնի կողմը. նայում է քնքշութեամբ։

— Ես արդէն շատ դիջումներ եմ անում, Զէօվա։ Ամեն օր նոյն մարդիկ, նոյն գործողութիւնները, նոյն խօսակցութիւնները... Կարծես թէ քարացած քաղաք ենք ընկել ու այս քարացած անշարժութեան մէջ դուք նոր միօրինակութիւններ էք ստեղծում։ Տխուր է, Զէօվա, տխուր ու ձանձրալի...

Նատան ոտքը գցեց ոտքին, հագուստի թեւերը վեր քաշեց ու արմուկները դնելով սեղանին, երեսն առաւ ափերի մէջ։

« Նատան իրաւացի է,— մտածեց ինքն իրեն Զաւէնը,— ճշմարիտ են իր խօսքերը »։

— Այո՛, Նատա, տխուր է ու ձանձրալի։

— Մի ժամանակ, երբ դու ինձ պատմում էիր Արեւելքի մասին, ես կարծում էի, թէ ծաղիկներն իսկ լեզու ունեն այստեղ, ծառերն իսկ հէքեաթներ գիտեն փսփսալ ու արեւն այստեղ պատկերանում էր աչքիս աղամանդէ հսկայ մի գունդի պէս, որի շողերի տակ եռացող կեանք՝ հեշտանք, ջերմութիւն, երփներանգ դեղեցկութիւններ ու հազար ու մի տեսակ կախարդանք էի տեսնում...

Զաւէնը լուռ լսում է Նատայի խօսքերը, զարմացած էր կարծես...

Ու կրկին նրան թւաց, որ կեանքը ինչ որ սպասողական վիճակի մէջ էր ընկել... Անխուսափելի մի բան կար կախւած օդի մէջ, եւ ձգւած, լարւած էին զգացմունքները... Այդ ձգումից ու լարումից էր, որ անցեալը ցաւագին մի դեղեցկութեամբ էր զգացնել տալիս իրեն, իսկ ներկան տամուկ ու դժնդակ էր երեւում...

Բայց Զաւէնի մտորումները տեւեցին միայն մի ро-

պէ։ Նա կրկին մտաւ անմիջական իրականութեան մէջ ու դառնալով Նատային՝ ասաց.

— Այո՛, Նատա, բայց հիմա ամեն ինչ փոխուել է արդէն...

Ցանկարծ նա բռնկուեց. հոգու խորքում թաղնուած խուլ մի զգացում, որ մինչ այդ լուռ կծկուել էր մնացել, շրթերից դուրս եկած բառերի հետ միասին ձեւաւորուեց, դարձաւ որոշ ու պոկուելով դուրս եկաւ նրա սրտից. արտասանած բառերը կրկնակի իմաստ ստացան, քիչ առաջ կարդացած նամակից ծնուած տրամադրութիւնը վերստին պաշարեց նրան։

— Հիմա ամեն ինչ փոխուել է,— կրկնեց նա՝ չարութեամբ նայելով Նատայի աչքերի մէջ։

Զաւէնի ձայնը դարմացրեց Նատային։

— Բո այդ սպանների այցելութիւններն ինձ դիւր չեն գալիս, հասկացա՞ր,— ասաց Զաւէնն անսպասելի արագութեամբ ու վեր կացաւ տեղից։

Նատայի դարմանքը փոխուեց ծիծաղի։

— Օ՛... ասացէք խնդրեմ, այս էլ մի ուրի՞շ նորութիւն... Բայց դու լաւ գիտես, Զէօվա, որ ես սովոր եմ միշտ կաւալերներով շրջապատուած լինել։ Դու գիտես, որ մեր տանը միշտ պարահանդէսներ էին լինում. չէ՞ որ ես մեծացել եմ սպանների շրջանում, նրանց քաղաքավարի ու վայելուչ ձեւերի մթնոլորտում։ Նրանք այնպէ՛ս դեղեցիկ են բարեւում, յետոյ կռանում ձեռքդ են համբուրում, մատուցում են ծաղիկ, թեւդ մտած՝ առաջնորդում են քեզ բիւֆէտ, խնդրում, աղաչում են, որ ուտես, որ խմես, միշտ զարմալի, միշտ ուրախ բաներ են պատմում... Սիրում են կառքով պտոյտի տանել, ցատկում են կառքից, ձեռքը քեզ մեկնում, որ իջնես ու կառապանին առատ վարձատրելուց յետոյ, կրկին ու կրկին խոնարհւում են քո առաջ, կրկին անգամ ձեռքդ են համբուրում... Մարդ իրեն թագուհու պէս է զգում նրանց շրջանում։ Ես գինուորականի աղջիկ եմ, Զէօվա, ես սովոր եմ դրան։

Ու Նատան զոռոզ-զոռոզ նայեց Զաւէնին։

— Բայց, Նատա... բայց...— ասաց Զաւէնը, որ արդէն ջղայնացած՝ միայն առիթ էր որոնում դայրանալու ու զոռզոռալու։

— Առանց բայցերի, խնդրում եմ, առանց բայցերի. դու խանդում ես եւ ուրիշ ոչինչ։

— Բայց այդ բնական է, Նատա։ Դու նրանց ընդունում ես օրւայ ամեն ժամին, կատակներ ես անում, ազատ, քեզ անվայել կատակներ... եւ իմ ներկայութեամբ։

Ու նա ուժգնութեամբ թափահարեց ձեռքերը։

— Իսկ դու կը ցանկայիր, որ քո բացակայութեան ժամանակ անէի, հա՞։ Տեսնո՞ւմ ես, Զէօվա, դու ինձ չես կարողանում գնահատել, դու կոչտ արեւելքցի ես, դու չես կարողանում ըմբռնել այդ նրբութիւնները... Դու... դու... վիրաւորում ես իմ ինքնասիրութիւնը...

Ու Նատան յանկարծ գլուխը դցեց թեւերի վրայ ու սկսեց հեկեկալ։ Այնպէ՛ս յանկարծ ու այնպէս բնական։

Զաւէնը լռեց։

Բայց հակառակ իր սովորութեան՝ նա չմօտեցաւ Նատային, ձեռքը չդրեց նրա ուսին, ներողութիւն չխնդրեց իր կոպիտ վերաբերմունքի համար, այլ վերցնելով դլխարկը շտապ դուրս եկաւ սենեակից։

Դուրս եկաւ սենեակից՝ ինքն էլ չիմանալով թէ ինչո՞ւ. ցանկութիւն դգաց միայն հեռանալ, դուրս փախչել տանից...

Նա մի քանի րոպէ անշարժ կանգնած մնաց պար-

տէզի ատիճանների վրայ... Այնտեղ, ճերմակ սիռոցով ծածկուած սեղանի առջեւ, մեն-մենակ նստել էր Մանին...

Առաւօտեան պարտէզը... լցուած աշնանային ծաղիկների բուրմունքով, պտղատու ծառերի ծանրացած ճիւղերով, այս ու այն կողմ թափթփուած դեղնած ու կարմրած տերեւներով ու խաղողի տունկի տակ, ճերմակ սեղանի կողքին մօր լուռ ու քնքոյշ ուրուագծով...

— Հայրիկն ուր է,— հարցրեց Զաւէնը մօտենալով մօրը:

— Հայրդ գործի է գնացել, Զաւէն:

— Ա՞յսքան կանուխ:

Մանին տխրութեամբ նայեց Զաւէնին:

— Այո՛, այսքան կանուխ: Ի՞նչ անէ խեղճ մարդը:

Վերջին բառերը դժգոհութիւն պատճառեցին Զաւէնին: Նրան թւաց, որ մայրը դիտաւորեալ ասաց այդ՝ իրեն մի բան հասկացնելու համար:

Նրանք մի պահ լուռ մնացին դէմ դիմաց:

— Հայրդ այս տարի շատ է ընկել, Զաւէն ջան:

Զաւէնն անտարբերութեամբ ուսերը շարժեց:

— Ծերացել է, հասկանալի է:

Մանին գլուխը կախեց ու ցածրաձայն փսփսաց.

— Գործերը վատ են գնում: Նրա յոյսը քեզ վրայ էր:

Զաւէնը սառուցեալ դայրացաւ:

— Ես ուղղակի զարմանում եմ ձեզ վրայ,— ասաց նա կոպտութեամբ,— ի՞նչ է, չարչիութի՞ւն կ՚ուզէիք որ անէի ձեզ համար... Ես եօթ տարի չարչարուել, գլուխս եմ յոգնեցրել, հասկանում է՞ք, գլուխս...

Մանին դունատ լսում էր որդուն: «Երեխաս իրաւունք ունի, տպարանի գործը դժուար է, իր բանը չէ»:

— Մի՛ բարկացիր, Զաւէն ջան, մի՛ բարկացիր. ես հասկանում եմ քեզ, բայց դէ էն մարդն էլ մեղք է, չէ՞:

— Ես ի՞նչ անեմ, մայրիկ ջան, ասա՛, ես ի՞նչ կարող եմ անել:

«Իրօք, երեխան ի՞նչ կարող է անել, մանաւանդ որ առողջութիւնն էլ լաւ չէ, օր օրի վրայ մաշւում է»: Նա տխուր հոգածութեամբ նայեց Զաւէնին: Ո՞ւր էին երբեմնի այն կրակոտ աչքերը, կարմիր այտերը, լիք-լիք թիկունքները...

Մանին յանկարծ վեր ելաւ տեղից:

— Մատաղ լինեմ քեզ, Զաւէն ջան, նստի՛ր, մի երկու հատ թարմ ձու բերեմ կեր:

— Չեմ ուզում:

— Կաթ բերեմ սուրճով պատրաստուած ու կարագ: Լաւ կարագ կայ տանը:

— Պէտք չի:

— Դու պէտք է լաւ սնուես, որդի, դու պէտք է կորցրած ուժերդ վերականգնես: Տե՛ս, ինչ գունատ ես: Կ՚ուզե՞ս քեզ բժշկի մօտ տանեմ:

— Օ՜, մայրիկ, այդ ձեր սանտիմենտալիզմը... Հանդիստ թողէք ինձ, հանդիստ թողէք ինձ... Ազատութիւն չկայ այս տան մէջ... Մենք հասուն, անկախ անհատնե՞ր ենք վերջապէս, թէ՞ ոչ:

— Ախորժակդ լաւ չէ, դուցէ բժիշկը մի դեղ տայ...,— շարունակում էր յուզուած Մանին՝ աղաչանքով նայելով որդուն:

Բայց Զաւէնը չէր լսում մօրը: Առանց ուշադրութիւն դարձնելու նրա յուզմունքին, ջղայնացած, թողեց նա նրան խեղճացած նստած աթոռի ծայրին ու լցուած անորոշ մի դայրոյթով դէպի ամենքն ու դէպի ամեն ինչ, դուրս եկաւ փողոց:

◆

— Կեանքն իր երկաթեայ օրէնքներն ունի։ Ուզենք թէ չուզենք, պիտի կատարուի պատմութեան անհրաժեշտ ընթացքը։ Արտադրական ուժերի զարգացման հետեւանքով պիտի փլի դրամատիրական աշխարհը եւ նրա աւերակների վրայ պիտի ստեղծուի մի նոր աշխարհ... Դիալեկտիկայի օրէնքն է այս, անհրաժեշտ օրէնքը։ Պիտի գայ մի նոր շրջան՝ համաշխարհութիւն, որ լինելու է ծնունդը նախկին երկու շրջանների՝ դրութեան եւ հակադրութեան, բերելով իր հետ նոր կեանքի նոր ըմբռնումներ։ Պիտի ստեղծուի նոր մարդը, որ պիտի ժխտէ բոլոր հին զաղափարները։ Իսկ հիմա թոյլ տուր ինձ քեզ ասել, Բաղրատ, որ հոգիս փառաւորւում է ամեն անգամ, երբ տեսնում եմ քեզ ու խօսում եմ քեզ հետ։ Ասա, ինչպէ՞ս, ինչպէ՞ս կարողացար պահել հոգուդ բիւրեղութիւնն անտանելի այս ճահիճի մէջ։

Բաղրատը գլուխը կախ լսում էր իր վաղեմի ընկերոջ ու սրտում ուրախ էր, շատ ուրախ։ Ներսէսի խօսելու ձեւը, նրա մտերմիկ վերաբերմունքը շատ մեծ բաւականութիւն էր պատճառում իրեն։ Նրանք հանդիպում էին դրեթէ ամեն առաւօտ, միեւնոյն սրճարանում, նստում էին կլոր սեղանի առաջ ու Ներսէսն այնքա՜ն հետաքրքրական բաներ էր պատմում...

— Ինչպէ՞ս չես ազդւել ազգայնամոլութիւնից, ներքին ոյժի մղումով հեռու ես պահել քեզ այդ բոլորից։ Ցնչում եմ դեռ մեր ժամանակ, մեր դպրոցների ազգայնամոլ աշխարհայեացքով ուսուցիչներին... Շատ բան չի փոխուել այն օրից, աւա՜ղ։ Բայց մի օր պէտք է կարուի շղթան, եւ կեանքը պէտք է մտնէ բնականոն հունի մէջ։

Ներսէսը ծանրութեամբ վերցրեց կաթով լի իր բաժակը ու մօտեցրեց շրթունքներին։

— Մի բուռ ժողովուրդ, ընկած Արեւելքի հեռաւոր այս անկիւնում, ինչ որ յետադէմ երազներ է որոճում... Այսօր, երբ ամբողջ առաջաւոր մարդկութիւնն է պայքարում համամարդկային մեծ զաղափարների համար, մենք քաշւել ենք մեր ազգային պատեանի մէջ... Հաւատա՛ ինձ, Բաղրատ, կայ աւելի մեծ ճշմարտութիւն, աւելի մեծ արդարութիւն քան ազգի ազատութիւնը։ Դա, մարդու ազատագրումն է մարդուց, որովհետեւ երբ մարդը ստիպւած է իր բազուկներով արժէքներ ստեղծել, որի տէրը ինքը չէ, միւս բոլոր ձեւի անարդարութիւնները նսեմանում են ինքնին։ Կեանքն իր երկաթեայ օրէնքներն ունի եւ, ուզես չուզես, պէտք է կատարուի անխուսափելին։ Ահա թէ ինչո՛ւ են ծիծաղելի այս տեսուչներն ու Արտոները եւ ազգային մեծամեծները։ Գիտե՞ս, Բաղրատ, ազգային ճակատ ստեղծելով, նրանք իրենց դասակարգային, մանր բուրժուական շահերն են պաշտպանում։ Նախ՝ լայնացնում են իրենց ազդեցութեան սահմանները եւ յետոյ ազգամիջեան կռիւներով հայ բանւորի ուշադրութիւնն իսկական պայքարի ճակատից դարձնում են մի այլ կողմ, այսինքն՝ մթագնում են բանւորի դասակարգային գիտակցութիւնը։ Մենք՝ հայերս, բացասական մի գիծ ունենք՝ չենք սիրում ընթանալ դարի հետ։ Մինչ առաջաւոր ազգերի լաւագոյն մտաւորականութիւնը լծւել է աշխատաւորական պայքարի, մենք դեռ ազգային կուռքեր ենք շինում ու պաշտում, որովհետեւ չենք զարգանում, ապրում ենք հնաոդարեան զգացումներով եւ... շարունակում լալ, երբ մէկը երդում է՝ «Ահա, մայրիկ, ես գնում եմ ազգիս համար զոհւելու»...

Ներսէսը քահ-քահ ծիծաղեց՝ միանգամայն զոհ իր սուր գիտողութիւնից։

Ճիշտ այդ վայրկեանին էր ահա, որ նրանք երկուսն

էլ գրեթէ միաժամանակ նկատեցին Զաւէնին, որ դեռ ջղայնացած Նատայի ու մօր հետ ունեցած խօսակցութիւնից, կիտած յօնքերով, գլխարկը ձեռքի մէջ խաղացընելով անցնում էր սրճարանի առջեւից:

— Զաւէ՛ն,— ձայն տուեց Ներսէսը:

Զաւէնը կանգնեց:

— Նստի՛ր, եղբայր, նստիր տեսնենք, ի՞նչ ես էլի մթնել,— ասաց Ներսէսը ու քաշելով Զաւէնի թեւից նստեցրեց նրան իրենց կողքին:

Յետոյ քննական մի հայեացքով Ներսէսը չափեց Զաւէնին ու չկարողանալով ժպիտը զսպել, դարձաւ Բագրատի կողմը.

— Տեսնո՞ւմ ես... Մեր Զաւէնը մէկն է այն շատերից, որ թէեւ շատ կարդացած է, բայց դեռ չի կարողացել ուղղութիւն տալ իր գլխում հաւաքուած պաշարին... Զաւէնը նման է այն մարդուն, որ ծախել է իր հողին սատանային, բայց որ փոխարէնը չի կարողանում օգտուել սատանայի իրեն տրամադրած բարիքներից...

— Բագրատը շատ պարարտ հող է սերմեր ցանելու եւ ապագային հունձք ունենալու համար: — Ասաց Զաւէնը դիմելով Ներսէսին: — Շարունակիր քարոզներդ:

— Դու մտքերի հասարակ փոխանակութիւնը համարում ես քարոզ, Զաւէն, եւ ինքդ էլ միշտ խոյս ես տալիս ինձ հետ խօսելու այդ նիւթերի մասին:

— Որովհետեւ դուք ինչ որ առաքելական դեր էք վերցրել ձեզ վրայ՝ լուսաւորել պղտորուած մտքերը... Գիտե՞ս ի՞նչ, իմ մտքերը պղտորուած են լոյսերի շատութիւնից:

— Այդ է պատճառը, որ դու ինձ տդէտ համարելով՝ կարծում ես թէ ամեն տեսակի սերմ կարելի է ցանել իմ անկիրթ հողու մէջ...,— նեղացած ձայնով ասաց Բագրատը խօսքն ուղղելով Զաւէնին ու դառնութեամբ յի հայեացքը ձգելով նրա վրայ: — Ինչ հայրդ էլ ինձ վրայ միշտ վերից է նայել, Զաւէն... Բայց մենք մի ժամանակ ընկերներ ենք եղել...

Զաւէնը նայեց Բագրատի վշտացած դէմքին ու ջանալով մեղմացնել ձայնը, ասաց.

— Մենք դարձեալ ընկերներ ենք, Բագրատ: Դու ինձ լաւ չհասկացար... Երբ ես ասում եմ՝ պարարտ հող, ես ի նկատի ունեմ քո անարատ մնացած, չթունաւորուած միտքը, քո մաքուր հոգին... Ես էլ մի ժամանակ քեզ պէս էի եւ գուցէ երջանիկ էի... Իսկ ի՛նչ վերաբերում է հօրս, Բագրատ, նա հին մարդ է, ունի իր տեսակէտները, նա կարծել է թէ քեզ պիտի կարողանայ ուղղել:

— Հայրդ բուրժուա է, Զաւէն,— ասաց Ներսէսը ծիծաղելով,— եւ իր դասակարգին յատուկ բացասական գծերով բուրժուա...

— Թո՛ղ մարդկութեան քո այդ ստորաբաժանումների խաղը, Ներսէս: Միլիոնները դասակարգերի բաժանել՝ ծիծաղելի գործ է: Ասա խնդրեմ, բուրժուա է և՛ իմ հայրը, բուրժուա է և՛ Նօրելը, բուրժուա է և՛ Մուրոզովը... Մարդկութիւնը ստորաբաժանումների կարելի է ենթարկել միայն մի ձեւով՝ բաժանել մարդկութիւնն այնքան մասերի, որքան որ մարդ կայ աշխարհի վրայ:

— Միշտ նոյն անհատապաշտն ես: Կարծում ես որ անհատն ու դաղափարն այն հզօր գործօններն են կեանքի մէջ, որ կարող են տիրել աշխարհը: Թէ իմանաս ի՞նչպիսի հնութեան հոտ է գալիս այդ խօսքերից... Անհա՛տ... Դաղափա՛ր... Դարը փուլ է եկել եւ իր փլատակների տակ թաղել Պլատոն, Բէրկլէյ, Ֆիխտէ, Հեգել, իրենց հին ու նոր դաղափարապաշտ սիստեմներով: Դրոշակը վայր է ընկել անհատի ձեռքից եւ ընկել է ամբոխների ձեռքը: Խօսքն այսօր նրանցն է՝ ամբոխներինը:

— Նախ մի բան խնդրեմ, Ներսէս,— չորութեամբ ասաց Զաւէնը,— ինձ հետ վիճելիս երբեք մի աշխատիր ինձ որոշ ուղղութեան կամ դպրոցի հետեւորդ պատկերացնել: Ես չեմ կարող համակերպուել մարդու ճակատին ցուցանիշներ կպցնելու ցանկութեան: Անհատապաշտ, գաղափարապաշտ, նիւթապաշտ՝ այս խօսքերը զատարկ խօսքեր են, Ներսէս, հողուն ոչինչ չասող խօքեր...

— Դու հիւանդ ես, Զաւէն, ինտելիգենտաշէնայով:

— Լինել ինտելիգենտ՝ դա ինքնին մի նպատակ է՝ ընդհակառակը, առողջ երեւոյթ:

— Առողջ երեւոյթ... եւ մաքերի անկանոնութիւն գլխի մէջ... Իսկական ինտելիգենտ լինելու համար հարկաւոր է մի կարեւոր բան, որ դուք՝ քեզ պէս մտածողներդ չունէք, Զաւէն:

— Ի՞նչ:

— Բանալի: Դուք բանալի չունէք վակ դռները բանալու համար եւ կուրօրէն հաւատում էք, որ գիտութեան դռները բաց են ձեր առաջ: Իսկ մենք ունենք այդ բանալին: Երբ օրինակ, մենք բացում ենք պատմութեան դուռը եւ ներս մտնում դարերի մէջ, մեզ համար ամեն ինչ պարզ է, ամեն ինչ հասկանալի:

— Ո՞րն է ձեր այդ բանալի կոչուած մոգական գաւազանը:

— Դասակարգային պայքարը: Մարդկութեան ամբողջ պատմութիւնը դասակարգային պայքարի պատմութիւն է՝ այս կամ այն ձեւի տակ: Նոյնն է եւ այսօր:

— Պրոպագանդիստ...

— Ես պրոպագանդիստ չեմ: Ես պատիւ ունեմ պատկանելու մի հոսանքի, որ իր նոր խօսքով նոր պատգամներ է բերում շահագործուող ու հարստահարուող միլիոններին...

— Ես պատիւ ունեմ պատկանելու... Դու խօսում ես գաղափարապաշտի պէս, այսինքն ճիշտ հակառակ քո ուսմունքին... Գիտե՞ս, սահմանները շատ են խառնուած: Զգիտես թէ որտեղ է սկսւում ձեր սրաշտած նիւթը եւ որտեղ վերջանում ձեր ատելի գաղափարը:

Զաւէնը վեր կացաւ տեղից:

— Եւ դեռ դու ինձ մեղադրում ես, որ չեմ որոշել թէ ո՞ր կողմին եմ պատկանում...Մի բան միայն կ՝ասեմ, որ կարեւորը մարդկային անհատն է, մարդկային անհատը: Նա պէտք է ձգտէ լինել ուժեղ եւ կատարեալ:

— Ինչպէս, օրինակ, դու եւ քեզ նմանները,— ծաղրեց Ներսէսը,— դու «կատարելութեան» հասած անհատ, որ ձեռքերդ ծալած նստել ես... Ի՞նչ օգուտ քեզնից, Զաւէն:

— Իսկ դո՞ւ. ո՞րն է քո գործը... Լաւ խմացիր, Ներսէս, կեանքում կողմեր չկան, կան միայն աւելորդութիւններ եւ ժամանակի կորուստ: Ցտեսութիւն:

— Մենք դեռ կը հանդիպենք,— զոռաց նրա ետեւից Ներսէսը, բայց Զաւէնն արդէն անցել էր մայթը ու չլսեց Ներսէսի վերջին խօսքերը:

Հեռուից՝ փողոցի էն դլխից լսւում էր փոքրիկ Հասանի տխուր երգը...

Ծառուղու երկարութեամբ Զաւէնը մի քանի անդամ դնաց ու վերադարձաւ՝ դլխարկը ձեռքի մէջ խաղացնելով: Երեսը հովին էր տւած, աչքերը անորոշին յառած: Նա մի քանի անդամ դլուխը դարձրեց, նայեց հօր տպարանի կողմը...

Փիչ առաջ լարուած ջղերը թուլացել էին արդէն. անորոշ իր դայրոյթին փոխարինել էր նոյնքան անորոշ մի թախիծ...

Նա կրկին նայեց տպարանի կողմը... Փեղկերի ետեւում կանգնել էր Նուբարը եւ իրեն էր դիտում...

Զաւէնը տեսաւ հօրը...Ցիշեց երէկ դիշերուայ իրենց պարտէզի խօսակցութիւնը... պարոն Վարդանին... Ի՞նչ դատարկ խօսակցութիւն...

Շտապ, առանց երկար մտածելու, Զաւէնն յանկարծ ծռեց մայթը ու քայլերն ուղղեց տպարանի կողմը:

Նուբարը նկատեց այդ եւ հեռացաւ փեղկից:

Տպարանի ներսի սենեակի խորքում զանգաղութեամբ դառնում էր մեքենայի խոշոր անիւը, որ վերջին ժամանակներս Բագրատի փոխարէն պատահական մարդիկ էին պտտցնում: Այլ կողմում՝ տառերի տախտակէ արկղիկների վրայ կռացած, երեւում էր գրաշարի դունատ դէմքը:

Զաւէնը ներս մտաւ:

— Հայրի՛կ...

— Որդի՛ս...

Նուբարը կռացաւ եւ յատակից մի չոփ վերցրեց: Զաւէնը երեսը դարձրեց ու սկսեց ամենայն ուշադրութեամբ կարդալ պահարանի ապակու ետեւ դրուած դանադան այցետոմսերի վրայ տպուած անունները:

Մի ձի խրխնջաց դրսից, թեթեւ մի հով շարժեց վարագոյրի կախ ընկած փէշերը:

Նուբարը գգոյշ աչքերը բարձրացրեց Զաւէնի վրայ.

«Կարապետ խան Մելքոմեան».

«Միրզա Աստուր»:

Ահա, ահա իր որդին, կրթուած, համալսարան աւարտած իր տղան... Իր Զաւէնը, իր Ջանքերի պտուղը...

Նուբարը մի քիչ յետ-յետ քաշուեց եւ հիացաւ յանկարծ...

Այդ ի՞նչ հասակ էր, ի՞նչ աքանչելի մազեր, ի՞նչ

սլաձիգ սրունքներ, համաչափ կազմուածք... Կարծես նոր էր տեսնում Զաւէնին. նայում էր, նայում ու չէր կըշտանում:

Մի րոպէի մէջ Նուբարի մտքից թռան, չքացան յանկարծ բոլոր սեւ ու անախորժ մտքերը, բոլոր կարծեցեալ վիհերը, բոլոր մութ տարածութիւնները, որ նախընթաց դիշեր այնպէս անսպասելիօրէն բաժանել էին նրան իր որդուց՝ իր Զաւէնից... Նա անհուն ցանկութիւն զգաց գրկելու, համբուրելու աքանչելի այդ դլուխը, սեղմելու նրան հայրական իր կրծքին, ասելու, որ ինքը հպարտ է իրմով, որ նա՝ Զաւէնը տան ճրագն է, իր սրտի կրակն է, ընտանիքի աստղն է, մօր աչքի լոյսն է:

Նուբարը այնպէ՞ս, այնպէս երջանիկ էր...

«Կարեւորն այս է, ա՛յս է կարեւորը. մնացածը մանր բաներ են, հասարակ, անցողակի դէպքեր»,— մտածեց Նուբարը եւ ժպտաց ինքն իրեն:

— Այցետոմսերը քանիսո՞վ էք տպագրում. հայրիկ:

— Տեսակները կան, Զաւէն ջան, նայած տեսակին, թղթին, տառերին...

Ու քիչ յետոյ, երբ հայր ու տղայ դէմ դէմի նստած, անհուն սիրով լցուած իրար հանդէպ, բարեկամաբար զրուցում էին, Զաւէնը յանկարծ լռեցաւ ու խորն ու երկար մի հայեացքով նայեց հօրը.

— Հայրի՛կ...

— Ի՞նչ կայ, Զաւէն:

— Հայրիկ, ինձ թւում է, թէ ես գրականութիւն եւ փիլիսոփայութիւն չէր, որ պէտք է ընտրէի իբր մասնագիտութիւն...

— Ա՞յլ:

— Այլ... ուրիշ մի բան...

6

Այդ տարի ձմեռային ամիսներն անցնում էին շատ աննկատ։

Նուբարենց տունը գրեթէ ամեն օր լի էր հիւրերով՝ Զաւէնի ընկերները, Նատայի ազգակից բարեկամները, երկաթուղու վարչութեան մէջ ծառայող ռուս պաշտօնեաներ, երիտասարդ սպաներ։ Գալիս էին Նուբարենց մօտ, երգում, նւագում գարմօշկի կամ կիթառի վրայ, ուրախանում եւ զանազան զուարճալիքներ պատմում «Կարապետ»ի մասին...

Երկաթուղու վարչութեան կառավարիչը բարձրահասակ, ճաղատ գլխով ու շատ երկար բեխերով մի մարդ էր, որ փողոցով անցնելիս այնպէս էր քայլում, կարծես թէ ուզում էր համազգեստի բոլոր կոճակները ցոյց տալ։ Նրա բեխերը կոշտ էին եւ իւրաքանչիւր մազ, իրեն համար անկախ, ցցւում, կանգնում էր նրա տնկուած քթի տակին ու բոլորը միասին այդպէս ցից-ցից, ծածկում էին վերի ծուռ շրթունքը։ Այս հանգամանքը նրա դէմքին բարկացած կատուի արտայայտութիւն էր տալիս, որ շատ էր վայելում իր կեցուածքին։

Ամեն անգամ, երբ չինովնիկների խումբը գալիս էր Նուբարենց մօտ ընթրիքի, բարկացած կատուի արտայայտութիւն ունեցող մարդը սկսում էր ժպտալ։ Քիչ յետոյ, երբ զգում էր որ արդէն բաւականաչափ կերել է, սկսում էր մէկ մէկ բանալ իր բաճկոնի փայլուն կոճակները...

— Эх брат, ты хороший человек,— ասում էր նա Նուբարին, շրթունքների իւղը լիզելով եւ ձեռքի լիքը բաժակը Նատային դէմ տալով,— Я ваш настоящий друг, нас-то-ящий...

— Այս ռուսները զարմանալի սրտաբաց մարդիկ են, — հիանում էր Նուբարը եւ, ի պատասխան կառավարչի անկեղծ խօսքերին, գրկում էր նրա մէջքը եւ միւս ձեռքով կրկին ու կրկին լցնում դատարկուած բաժակը։

— За ваше здоровье, Нубар Аветикович, за ваше дорогое здоровье. Дай Бог вам...

Կար նաեւ մէկ ուրիշը, որ, կարելի է ասել, ոչնչով յետ չէր մնում կառավարչից, եւ այնտեղ, որտեղ բացակայ էր կառավարիչը, կարողանում էր իրեն պահել ճիշտ նրա պէս,— դոռող ու ինքնավստահ, կուրծքը դուրս ցցած, գլուխն աքլորի գլխի պէս երկարած։ Նա ունէր գեղեցիկ, թաւ մօրուք, որ ըստ իր գեղագիտական ճաշակի բաժանուած էր երկու հաւասար մասերի ու մէկն աջ, միւսը ձախ քաշուած գնացել, միացել էր բեխերին։ Սա այն երեւելի յատկութեամբ էր օժտուած, որ ի վիճակի էր ամբողջ մի շիշ օղի միանգամից խմել... Յետոյ սկսում էր երգել, բոլորի հետ համբուրուել եւ ի վերջոյ լալ։ Լացը տխուր բռմանների հետեւանք էր, երբ Նատան սկսում էր երգել ու նւագել իր կիթառը, երբ բաժակը, բաժակի էր դարնւում։ Այդ ժամանակ էր, որ աշխարհիս բոլոր մարդիկ լաւ էին երեւում նրա աչքին, բոլորին սիրում էր նա իր ամբողջ հոգով, բոլորին խղճում էր ամբողջ խղճով ու բոլորի համար արտասւում...

— Дальше, голубчик, дальше,— աղաչում էր նա համբուրելով Նատայի ձեռքը։

Եւ այդ ժամանակ էր, որ նրա մօրուքի գոյդ մասերը ձգտում էին իրար գալ՝ ակնյայտ կերպով տենչալով բաժանուել բեխերի խուրձից։

Կային նաեւ լուռ ու ժպտուն դէմքեր. շրթունքային ժպիտներ, որ աչքերի արտայայտութեան վրայ բնաւ չեն ազդում եւ որ վախ առաջացնող արտայայտութիւն են տալիս դէմքին: Նրանք գալիս էին լուռ, նստում մէկը միւսի կողքին, մէկ-մէկ Սիբիրից, Արխանգելսկից բաներ պատմում, մէկ-մէկ «Тоска по родине» երգում...

Նատան լաւ բարեկամներ ունէր նաեւ ռուս սպաների մէջ: Հիւսիսից եկած նոր այդ մարդկանց նիստ ու կացը, կեանքի ու մարդկանց հանդէպ ունեցած իրենց անկաշկանդ վերաբերմունքը, ամենից աւելի գրաւել էր Վարդենուն: Նրա դեռատի, տակաւին չկազմակերպուած էութիւնը շարունակ փնտռում էր թարմութիւն, նորութիւն, եւ իր շուրջ տարբեր այդ խառնուածքների ստեղծած տարբեր մթնոլորտը նրա հրէ հոգուն զովացնող հովի պէս էր դիպչում:

Վիշտ ու թախիծ անելանելի,
Սիրտս ցա-ւա-գին հեծե՛ց...
Ա՛խ ինչո՞ւ այս վի՛-շտը՝ ծա՛նր ու տխուր
Ոչ ոք, ախ, ոչ ոք չըմբռնեց...

Երգում էր յաճախ Նատան ու նւագում կիթառի վրայ: Վարդենին լսում էր նրան, նրա հոգու մէջ ինչ որ բան էր շարժւում, աչքերը ցաւագին արտայայտութիւն էին ստանում ու միտքը դեգերում էր անծանօթ երգերի դռների առաջ:

Ա՛խ ինչո՞ւ այս վի՛-շտը՝ ծա՛նր ու տխուր
Ոչ ոք, ախ, ոչ ոք չըմբռնեց...

Կրկնում էր կիթառը հիւանդ սրտի նման, արձագանգում երգի վշտալի բառերի բովանդակութիւնը, եւ Նատան հառաչում էր...

Ա՛հ, Նատայի երգերը՝ հոգի քաշկռտող, սիրտ տրորող...

Մանին առատօրէն հիւրասիրում էր բոլոր իր նոր հիւրերին աշնան պատրաստած գանգանատեսակ անուշներով, գաթայով, ընտիր մրգերով:

Մի անգամ Նատայի ծննդեան օրն էր:

Մեծ սենեակի աւելորդ իրերը հանել էին, դորգերը մաքրել ու երկար սեղան էին պատրաստել: Սպասում էին հիւրերի:

Զաւէնն աշխատում էր ամեն ինչ այնպէս կարգաւորել, որ Նատան գոհ մնայ:

— Այսօր պէտք է լաւ ուրախանանք, վերյիշենք մեր հին օրերը, խմենք այսօր, Նատա,— ասում էր Զաւէնը:

Նա ոգեւորւել էր, մինչ Նատան նստած բազմոցի վրայ ոտքերն էր ճօճում ու կիսաձայն մի երգ ասում:

Վարդենին ներս մտաւ խոհարարի հետ եւ սեղանի վրայ դասաւորեց պատրաստի ուտելիքները: Մինչ Անուշն այս ու այն կողմ վազվզելով աշխատում էր օգնել իր քրոջը:

Զաւէնը երգում էր Նատայի հետ միասին ու երկուսն էլ խորասուզւել էին երգի մելամաղձոտ ելեւէջների մէջ: Կարծես թէ երկուսն էլ ինչ որ մի բան էին մտաբերում՝ մոռացած մի բան, որ հիմա չկար: Ամուսինների ներդաշնակ այդ երգի տխուր մեղեդին ինչ որ մի անիմաստ կորուստի եւ խորն ափսոսանքի զգացմունք էր արտայայտում:

Լռիր, իմ վիշտ, լռիր,
Մի դիպչիր հին վէրքերիս,
Երբեք, երբեք յետ չի գայ ..
Երազն անդարձ ու սիրուն

Փողոցի դրան աղմուկը ցրեց նրանց վիշտը...

— Բռաւо, բռաւо, Նատալիա Իվանովնա, խնայեցէք ժամերով կարելի է կանգնել ու լսել ձեր երգը:

Վարդենին վազեց ընդառաջ եկեւորներին: Նատան վեր ելաւ ու ձեռքը մեկնեց նրանց, որ վայելուչ շարժումով կռացան մէկիկ-մէկիկ ու համբուրեցին:

— Բարեւ ձեզ, Զաւէն Նուբարիչ...

— Բարեւ ձեզ, Վարդենի Նուբարովնա...

— Համեցէք, համեցէք պարոնայք, խնդրեմ, խնդրեմ:

— Նատալիա Իվանովնա, շնորհաւոր ձեր ծննդեան տարեդարձը...

— Նատալիա Իվանովնա, լաւագոյն մաղթանքներս...

— Նատալիա Իվանովնա...

Զաւէնը խնդրում էր հիւրերին նստել: Կառավարիչը տեղ գրաւեց սեղանի գլխին, միւս պաշտօնեաները նրա շուրջը բոլորուեցին ըստ իրենց աստիճանների: Եկել էր եւ Սերգէյ Պետրովիչը, սպայական իր տարազով, պըսպղուն ուսադիրներով... Եկել էին եւ ուրիշ սպաներ իրենց կանանց հետ: Բոլորը միասին կատակում էին, բարձր ու զուարթ ծիծաղում, հաճոյախօսութիւններ անում:

— Էհ, բարեկամ, ես օղու չիշը չեմ տեսնում,— ասաց կառավարիչը եւ հարցական նայեց Զաւէնին:

— Օղի շատ կայ, Նիկոլայ Նիկոլայիչ, միայն պէտք է խմել:

— Ուրախութեան առաջին պայմանը խմելն է, Զաւէն Նուբարիչ:

Բոլորն արդէն տեղաւորուել էին: Վարդենին համեստ ժպիտով լցրեց օղու առաջին բաժակները:

Նիկոլայ Նիկոլայիչը կանգնեց ու պատուիրեց բարձրացնել բաժակները:

— Սիրելի սեղանակիցներ, այսօր իմ միակ պահանջն է ձեզնից ուրախութիւն... Խմէ՛ք եւ ուրախացէք:

Ամենքը ծիծաղեցին:

— Առաջին բաժակը մենք պէտք է պարպենք մեր սիրելի Նատալիա Իվանովնայի կենացը, որպէս «յանցաւոր» այսօրեան խնջոյքին:

Քիչ յետոյ նա կրկին վեր կացաւ տեղից:

— Պարոնայք, բաժակները լեցուն: Պարոնայք, աշխարհիս երեսին կայ, գոյութիւն ունի մի մեծ ոյժ: Այդ ոյժի անունը ռուսական քաղաքակրթութիւն է... քաղաքակրթութիւն, դէպի որը ձգտում են Նուբար Աւետիքիչի պէս բոլոր գիտակից անհատները... Պարոնայք, ես առաջարկում եմ...

— Նուբար Աւետիքիչ, ձեր կենացը...

— Նուբար Աւետիքիչ, ձեր ողջ դերդաստանի կենացը... Մանկա Ստեփանովնայի հետ միասին:

Եւ խումբը երգեցին՝ բարձր ու առողջ ձայներով սկսեց երգել՝

Հեռու, հեռու աշխարհից,
Մայր Վոլգայի ափերից...

Բաժակներն ուրախ դիպչում էին իրար: Սերգէյ Պետրովիչը, որ նստել էր Նատայի մօտ, մի բոպէ բաժակը դատարկ չէր թողնում: Նա անդադար նայում էր Վարդենուն ու նրա հասցէին ինչ որ բաներ փսփսում Նատայի ականջին:

Թուխ այդ աղջիկն իր հարբեցնող սեւ աչքերով, իր անարատ դէմքով, իր շրթունքների նորաբաց վարդի հանդոյցով, նրա ուշադրութիւնն էր գրաւում:

Նատան ծխում էր եւ երգում։ Կենացները յաջորդում էին իրար ու բաժակները պարպւում առատօրէն։ Ամեն մի կենացից յետոյ խումբը գոռում էր՝

— Խմիր մինչեւ վե՛րջ։

Զաւէնն ուրախ էր։ Նա մասնակցում էր երգերին, հաճոյախօսութիւններ էր անում ու բարձր ծիծաղում, երբ հիւրերը հայերի մասին զարճալիքներ էին պատմում։ Ու աղմկալի ծիծաղից յետոյ նորից հնչում էր Նատայի երգը, որի ձայնն ամենից աւելի ուժեղ էր լսւում.—

Այսօր ես ու դու թոռլինք իրարու,
Առանց աւելորդ լաց ու արցունքի...

Բոլորն էլ աչքերը գցել էին Նատայի վրայ, լսում էին ուշադրութեամբ։

Կեանքում մէկ անգամ միայն կը սիրեն,
Եւ դու իմ հոգում կ'ապրես անհատնում։

Երգն ու գինին ազդել էին բոլորի վրայ։ Խոհարարը զգուշութեամբ կերակուրներն էր բերում, եւ Վարդենին տեղաւորում էր նրանց սեղանի վրայ առանց աղմուկ հանելու, մերթ ընդ մերթ քնքշութեամբ իր մօտ կանչելով Անուշին մի կողմ հրելով։

— Թո՛ղ, Անուշիկ, թող, մի՛ խանգարիր։

Անուշն խակոյն գլուխը քաշում ու յետ յետ էր գնում։ Բայց մի անգամ էլ, երբ խոհարարն եկաւ ու յանձնելով լեցուն պնակները, վերցրեց պարպւածները, ձեռքից մի քանի հատ դանակ, պատառաքաղ սահեցին ու վայր ընկան։ Անուշն անմիջապէս մօտ վազեց, Վարդենին կռացաւ ու յանկարծ... նրանց երկուսի աչքերն ընկան սեղանի տակ հատաքսած ոտքերի զոյգերին... Նատայի բարակ մետաքսէ գուլպաներով ոտքերը տեղաւորւած էին Սերգէյ Պետրովիչի ոտքերի արանքում...

Կայծակի պէս մի բան չանթահարեց Վարդենուն... Նա ձեռքի ափը դրեց Անուշի աչքերին, որ կռացած ընկած դանակների վրայ, բնազդօրէն ու զարմացած, նայում էր փաթաթւած զոյգ ոտքերին... Բայց Անուշն արդէն տեսել էր ամեն ինչ։

Նրանք գլուխները բարձրացրին, նայեցին Նատային... Նատայի աչքերը ժպտում էին, մինչ շրթունքները կրկնում էին բառերը վերջին երգած իր երգի... Զաւէնը հիացած լսում էր նրան, իսկ Սերգէյ Պետրովիչը, իբր ոչինչ, շարունակում էր Նատայի ականջին բաներ փըսփսալ։

— Բռաւո, բռաւո, Նատալիա Իվանովնա, ձեր կենացը, մասնաւորապէս ձեր կենացը... Աստուած վկայ, իսկական արւեստագիտուհու նման էք երգում... Ոչ, ոչ, աւելի շուտ երգում էք այնպէս, ինչպէս միայն սիրող կինը կարող է երգել... Ես խմում եմ անխարդախ զգացմունքների կենացը, սիրոյ կենացը... Զաւէն Նուբարիչ, ալլահվերդին ձեզ մօտ...

— Горько, горько,— գոռացին բոլորը։

Զաւէնը ծիծաղեց։ Մօտեցաւ Նատային, բաժակը ձեռքին։ Եւ Նատան նստած տեղից դրկեց նրա գլուխը...

7

Տխուր էր սակայն այդ տարի ձմեռը փոքրիկ Անուշի համար: Տատի մահից յետոյ աշխարհը փոխուել, շուռ էր եկել նրա աչքին ու, թէեւ հայրիկը փոքրիկ Սեսիլի պէս շատախօս ընկերուհի էր գտել նրա համար, Անուշը դոհ չէր սակայն:

Փոքրիկ Սեսիլը··· կապուտաչեայ մի Ֆրանսուհի էր նա, շատախօս ու թրթռուն: Սկզբում Անուշը շատ սիրով էր խաղում նրա հետ, ցոյց էր տալիս նրան իր դրքերը, իր խաղալիկները: Նրան դիւր էր գալիս Սեսիլի բըլբլուն լեզուն, նրա շարժուձեւերը, բէվէրանսները, որ նա կատարում էր այնպէս շնորհալի ձեւով: Անուշին գրաւում էին նաեւ նրա գոյն-գոյն հագուստները, որ յիշեցնում էին այն բազմատեսակ տիկնիկները, որ հայրիկը բերել էր տալիս Սեսիլի երկրից, գլխին թիթեռնիկի ձեւով կապած ժապաւէնը, նրա համարձակ պահուածքը: Բայց իր հոգու մէջ՝ խորը, շատ խորը գտնուող մի ծալքում, կար սմենքից թաքուն մի դժգոհութիւն, մի տխրութիւն ու նա յանկարծ ամեն բան թափելով Սեսիլի առաջ, փախչում էր ուրիշ սենեակ ու չէր ցանկանում այլեւս դուրս գալ:

Անուշի մտածմունքները բոլորովին այլ ուղղութեամբ էին ընթանում:

« Կար չկար, կեանքի հարար ու մէկ օրերից մէկում, աղքատ մի տան մէջ, ձմեռը ծխոտ բուխարիկի կողքին չոքած՝ կլկլացող գետնախնձորի կաթսայի առջեւ, ամառը մի հատիկ թզենու հովանու տակ պատսպարուած մի մայր ու մի տղայ կար: Աղքատ էին ու մենակ մայր ու տղան: Մենակ այս լեցուն աշխարհի մէջ: Մայրը բուրդ էր գդում՝ մի կտոր հաց վաստակելու համար. տղան, թզենու տուերի կամ բուխարիկի բոցի տակ, երազներ էր հիւսում:

« Լուռ ու հնազանդ ճակատագրին, ամեն առաւօտ մայրը լոյսի հետ միասին արթնանում էր, իր գզրոցի առջեւ ծալապատիկ նստում: Տղան, գլուխը ձեռքերի մէջ առած, արցունքներ էր քամում իր աչքերից, աշխարհի իմաստը չըմբռնելու անզօրութիւնից յուսահատ եւ յաճախ բուռնցքները սրտին դրած, սեղմում էր ուժգին, ունայնութեան ցաւը աւելի խորը չդգալու համար: Եւ մի երեկոյ, երբ տղան գիշերուայ խաւարից զարհուրած, աչքերն աստղերին, ճակատը երկնքին դէմ առած, սպասում էր արեւի փրկարար՝ մտքերը ցրող լոյսին, երկինքը ճեղքուեց եւ լուսէ մի պատկեր ինքաւ նրա առջեւ:

« — Տեսնո՞ւմ ես այս ճամբան, որ ձգւում է ձեր տան արեւմտեան կողմը: Այդ է քո ուղին: Գնա՛ այդ ուղիով, անցիր չոր ու ցամաք անապատը, հեռո՛ւ, հեռո՛ւ երկրներ մտիր, մինչեւ հասնես ամայացած քաղաքներին: Այդ քաղաքներից մէկում Դեւն իր բնակութիւնն է հաստատել: Գտիր այդ Դեւին եւ խարոյկի վրայ այրիր իր հոգին: Դեւի հոգի՞ն, որ բոլորից ծածուկ խորհրդաւոր թագաստոցում է պահուած, եօթ քարի ետեւ գտնուող մի փոսի մէջ:

« Այս ասելով լուսէ հոգին թափրտաց, երկինքը նորից մէջտեղից պատռուեց եւ նրան իր մէջն առաւ:

« Այդ գիշեր մայրը մեռաւ···

«Դեղնաւուն աւազի վրայ, արեւի պայծառ լուսաւորութեան տակ, մութ ու վեհ, ինչպէս սեւ ամպերի շարան, ծփծփում էր երկար մի կարաւան: Անհաշիւ օրեր ու գիշերներ լուսացել ու մթնել էին ճամբորդների գլխին, լուսինը մի քանի անգամ նորել, հասունացել եւ չքացել էր երկնակամարից, բայց կարաւանը շարունակում էր իր հլու երթը եւ այդ հլութեան մէջ մի վեհութիւն կար:

— Ալլահը կամենայ, լուսինն այս անգամ բոլորելիս քաղաքի դարբասները կ'երեւան: Գիտեմ որ շատն անցել, քիչն է մնացել,— յոյս էր տալիս պատկառելի ծերունին՝ կարաւանի երէցն ու պետը:

«Բախտ որոնողների, սէր փնտրողների, լուսէ ճամբաներ երազողների մի կարաւան էր դա, որ աշխարհի չորս կողմից հաւաքւել իրար խաչաձեւող մեծ ճանապարհների վրայ հանդոյց էր կազմել: Գնում էին, ո՛րը վարդ ու սոխակը շրթին, ո՛րը խաւարի քօղն աչքերին ու սրտին: Գնում էին կապոյտ յուլունքէ յուռութքը թեւներին կապած, «աշուղի կարմիր խնձորը» սրտներին սեղմած:

«Ճանապարհն այս անգամ շատ էր դժւարացել: Այնտեղ, ուր եօթ ճամբաներ խաչաձեւում էին իրար, առաջնորդ ուղտը ամենաերկար ճամբան էր բռնել. իսկ չկատարել նրա կամքը՝ նշանակում էր վտանգի ենթարկել կարաւանը: Եւ Ալլահի կողմից նշանակուած այդ ճանապարհը երկար էր, շատ երկար:

«Ամեն գիշեր յոգնած ուղտերը կլոր շրջաղծով նըստում էին արեւից տաքացած չոր աւազի վրայ, մի քանի ժամ հանգստանալու, դէպի մութ տարածութիւնն ի վեր ցցուած սապատներով: Եւ փոշոտ, խանձուած երեսներով մարդիկ որոնող հայեացքներով եւ արեւի ճառագայթները տակաւին բիբերի մէջ պահած աչքերով փուռում էին դեպ-

նին ու յոգնաբեկ մէջքերը յենում ուղտերի գանգուածին: Խաւարի մէջ, բնութեան գրկում մխրճուած այս կենդանի էակները աստուածային մի բան ունէին իրենց հոգիներում:

«Սակայն օրերը դարձան շաբաթներ եւ շաբաթներն՝ ամիսներ:

«— Ջուր, ջուր...

«Ծարաւից տապակած լեզուները չէին դառնում մի հարց կամ մի խօսք արտասանելու: Ու վերջապէս աստղազարդ մի մութ գիշեր բոլորը դեմին թափուեցին: Ոմանք երեսն ի վար հողը լիզելով, ոմանք երեսն ի վեր աստղերից ջուր աղերսելով: Լուռ էին: Մթութեան մէջ միայն ուղտերի միօրինակ որոճն էր լսում եւ մէկ-մէկ էլ ծանր ու խուլ հառաչանքները տանջող ճամբորդների:

«Այդ գիշեր ալեզարդ ծերունին, կարաւանի երէցն ու պետը, մօրուքը շփելով երկար ու բարակ մտածեց: Մէկ նայում էր վեր, անապատի մէջ այնքան բարձր երեւցող աստղերին, մէկ ներքեւ աւազների վրայ փռուած կարաւանին ու սիրտը մղկտում էր:

«— Ի՞նչ յանցանք ունի քո ստեղծածը, Տէ՛ր, ի՞նչ յանցանք: Զէ՞ որ քո ցոյց տուած ուղին բռնեցինք:

«Բայց հրաշքը հեռու չէր: Աստուած լսեց ծերունու մղկտոցը: Ու տակաւին աչքերը երկնքի աստղերից վար չէր առել, իր կնճռոտ ու խոշոր ձեռքը դեռ ճերմակ մօրուքի վրայ մնացել էր անշարժ, երբ ալեզարդ գլուխը յետ դարձրեց ու ճիշտ իր կողքին տեսաւ յանկարծ խոր, խոր մի ջրհոր... Անոյշ խոնաւութեան բաղձալի հոտն անմիջապէս տարածուեց ամեն կողմ: Բոլորը սթափուեցին: Ո՛րը սողալով, ո՛րը փորի վրայ քարշ գալով, եկան խմբուեցին փոսի շուրջը եւ լեզուները ճպճպացրին:

«— Բայց ո՞վ է այն քաջը, որ պիտի իջնէ ջրհորը,

կարաւանին ջուր հայթայթելու համար,— հարցրեց Ծերունին աչքերը չորս կողմը դարձնելով։

« Ամենքը լուռ էին։ Շատերն իրենց անզօր ձեւացրին, շատերը թոյլ ու անկարող։ Ոմանք բարձրաձայն լացին, ուրիշները խուլ մնացին։

« Այն ժամանակ, մինչ այդ բոլորից անտես մնացած ջահել մի տղայ ուղտերի սապատների ետեւից դլուխը վեր հանեց։

« — Ես կ'իջնեմ,— ասաց,— ահա այս թոկը կապէք մէջքիս եւ տուէք ինձ մի դոյլ։

« Բոլորի աչքերը փայլատակեցին։ Ամենքը մէկէն վեր ցատկեցին իրենց պառկած տեղից. ո՛րը դոյլ, ո՛րը թոկ բերաւ. ամեն մէկն իր հերթին քննեց կապած հանդոյցը։ Գրկեցին պատանուն, համբուրեցին նրա ձեռքն ու ոտքը եւ հազար ու մի օրհնանքով փոսն իջեցրին, դոյլ, շատ դոյլ, որպէսզի վտանգ չպատահի։

« Երբ տղան արդէն հասել էր ջրին եւ ոտքերը երկու խոշոր քարի դէմ տւել, իջեցրին եւ դոյլը։

« Այսպէս, անապատի այրող աւազները Աստծոյ հրամանով սառը ու զովաբար ջրով շաղախուեցին։ Ուղտերն էլ խմեցին, յաղեցան եւ ճամբորդներն իրենց տիկերը լցրին։ Յետոյ դլուխները փաթաթեցին ճերմակ շորերով, բարձրացան նստեցին սապատներին, եւ առաջնորդ ուղտը բռնեց դիմացի ճամբան։ Բոլորը դոհ էին, բոլորը երջանիկ։ Ի՞նչ լաւ է հրաշքը եւ ի՞նչ բարի է Աստուած։ Բայց ոչ ոք չմտածեց այն անձնուէր տղայի մասին, որ թոկը մէջքին կապած մնաց ջրհորի երկու քարերի վրայ կանգնած։

« — Հո՛ւյ, հո՛ւյ... հո՛ւյ,— գոռաց տղան թաղմաթիւ անդամներ, բայց ի զուր...

« Մենակ էր այլեւս։ Գլուխը յետ դցած, վիզը ցաւից շարժել չկարողանալով եւ ձեռքով չօշափելով խոնաւ ու մամռոտ պատերը ջրհորի, մէջքը դէմ տւաւ պատին եւ այսպէս խօսեց Արարչին.

« — Դու էիր որ հոդուս մէջ վառեցիր կայծը սիրոյ եւ բարութեան։ Այն բոպէին, երբ ոչ ոք չէր ուզում իջնել այս փոսը, դու իր սրտի մէջ դութ զարթեցրիր եւ ներշնչեցիր ինձ անվախութիւն։ Ինչո՞ւ հապա հանդուրժեցիր այս անարդար վերաբերմունքը։ Ինչպէ՞ս եղաւ որ թոյլ տուիր այդ զղացմունքի ծնունդը նրանց հոդիներում։ Դրա՞ն էի արժանի ես ուրեմն,— ասա լռեց եւ դլուխը կախ մնաց անշարժ։

« Այդ ժամանակ մութ այդ փոսի մէջ, կապոյտ եւ կարմիր լոյսերի շողեր փայլատակեցին, ողջ պատերն ադամանդի պէս դանազան երանդներով պսպղացին եւ երկընքից մի ձայն լսեց.

« — Ոչինչ չկայ աննպատակ եւ ի զուր։ Ամեն մարդ իր ճակատագիրն ունի եւ ոչինչ չի կարելի անել՝ դարձընելու կամ փոխելու համար այն բոլորը, ինչ որ պէտք է, որ կատարւի։ Նայիր աջ եւ կը համոզւես։

« Տղան դարձաւ, նայեց փայլփլող պատերին եւ ահա աջ կողմից դետինը շարժւեց ու ճերմակ լոյսով ողողւած մի ճանապարհ բացւեց։

« — Գնա՛,— լսւեց նորից նոյն ձայնը վերից եւ տղան անմիջապէս նետւեց լուսէ այդ ճամբան։

« Շատ գնաց թէ քիչ, Աստւած գիտէ։ Շատ նեղ ու լայն ուղիներով, ընդարձակ դաշտերով ու ծմակներով անցաւ, շատ լեռներ ու ձորեր կտրեց, շատ փորձանքներից ազատւեց, մինչեւ որ վերջապէս հասաւ ամայացած քաղաքներին։

Ամեն կողմ քանդւած շէնքեր ամեն կողմ երբեմնի հոյակապ տների աւերակներ, քանդւած ճանապարհներ,

վլած աշտարակներ...— մեծ մի քաղաքակրթութեան զարհուրելի խորտակում... Բայց յանկարծ նա դէմ-դիմաց ելաւ տակաւին կանգուն մնացած սեւ քարից շինուած բարձր մի շէնքի: Հսկայ այդ շինութեան ճակատը զարդարուած էր մարդկային դանկերով, պատերն ի վեր կախուած էին կմախքներ եւ առջեւից հոսում էր կարմրաջուր մի գետ: Ամեն ինչ լուռ էր սակայն: Ոչ մի մարդկային շունչ եւ ոչ մի կենդանի էակ: Կատարեալ ամայութիւն:

« Այս է անպատճառ Դեւի քաղաքը,— մտածեց ալրդան ինքն իրեն: Բայց ինչպէ՞ս անել, որ կարելի լինի մօտիկից տեսնել այդ հրէշին: Նա վճռեց սպասել: Դատաւ խոշոր մի քար, տեղաւորուեց նրա ետեւում եւ անշարժացաւ:

« Շատ չանցած, քիչ չանցած, մէկ էլ յանկարծ գետինը սկսեց դողալ, ամպերը գոռացին եւ գետի կարմիր ջուրը փրփրաց:

Դեւն էր: Սեւ ժայռի պէս ծուռ-մուռ գլխով, ահռելի բերանը կացնի մէկ հարուածով բացուած մութ խոռոչ, գիշատիչ ատամները ուռած շրթների արանքից սպառնալիս դուրս պրծած ահռելի դեւը: Երկու ոչխար մէկ ուսին, երկու կով միւս ուսին եւ մի մեծ դոմէշ գիրկն առած, նա, լայն ականջները հովին տալով, գալիս էր: Գալիս էր մռնչելով ու փչացնելով, հսկայ մարմինը ուռած տիկի նման, աջ ու ձախ օրօրելով, ոտքերը մէկ-մէկ կաղնի բուն:

« Երբ հասաւ իր ապարանքին, վար դրաւ բեռները, չոքեց գետի ափին, մէկ ձեռքով բռնեց դոմէշի գլուխը, խաղալիկի պէս ոլորեց, պոկեց մարմնից, միւս ձեռքով կաշին քաշեց, հանեց եւ սկսեց ագահութեամբ լափել: Սար, ձոր արձագանգ տուին նրա ատամների սոսկ վայրագօրէն փշրուող ոսկորների ճարճատիւնից: Յետոյ նոյն

ձեւով եւ արագութեամբ մաքրազարդեց նաեւ ոչխարներն ու կովերը, ապա դերանանման թեւը տարածելով մօտակայ բլրի ընդլին՝ արմատախիլ արաւ մի ծառ, մաքրեց ատամներն ու ահռելի մռութը երկնքին դէմ տալով սկսեց հռհռալ: Ողջ բնութիւնը թնդաց այդ հռհռոցից, լեռների գագաթները դողացին եւ դաշտերի հարթութիւնները երերացին: Կարծես աղէտաբեր մի երկրաշարժի նախնական ցնցումներ լինէին, որոնց պէտք է յաջորդէր կործանող ուժգին հարւածը: Երբ մի քիչ խաղաղուեց եւ տեսաւ, որ իր շուրջն ուտելու այլեւս բան չէր մնացել, ընկաւ գետի վրայ, ծծեց, ծծեց, լայն շրթերը ջրի երեսին փռած, մինչեւ որ բոլորովին յագեցաւ, ապա փուեց գետնին, արեւի տակ ու մնաց անշարժ:

« Տղան ժամանակ համարեց դուրս գալ իր թագըստոցից: Ելաւ զգոյշ, կանգնեց իրեն պատսպարող քարի գլխին, հեռուից ստուգելու համար, թէ կեղծ քուն չի՞ մտել արդեօք սոսկալի հրէշը: Երբ հաւաստիացաւ, որ խորն էր նրա քունը, վար ինչաւ, կանգնեց ճամբու վրայ, վերյիշեց լուսէ հոգիի տւած բոլոր պատուէրները եւ քայլերն ուղղեց դէպի ապարանք: Գնաց, տան մէջ գտնուած բոլոր մեծ ու փոքր քարերի ետեւ նայեց, բոլոր խոռոչները տնտղեց, բոլոր կասկածելի անկիւնները փնտռեց, բայց ամեն տեղ մարդկային դանկերից բացի, ուրիշ ոչինչ չգտաւ: Երկար փնտռտուքից յետոյ, վերջապէս բնազդորէն մօտեցաւ եօթ խոշոր քարերից շինուած մի անկիւնի, ուր եւ իրօք թագցրած էր Դեւի հոգին՝ ապակէ մի սրւակ, ամուր փակուած եւ այդ եօթ քարերի ետեւ գտնուող փոսի մէջ թաղուած:

« Տղան ծառերի ճիւղերից եւ չորացած մացառներից պատրաստեց մեծ մի խարոյկ, դտաւ յարմար մի բարձրութիւն, ելաւ վրան եւ, երբ կրակն արդէն բորբոք-

ւել, բոցավառուել էր, առաւ սրւակն ու ամբողջ ուժով նետեց կրակի մէջ։ Ու յանկարծ երկինքը մթնեց, ամպերն իրար վրայ եկան, իրար խախուեցին, երկիրն ահռելի թափով դղրդաց։ Ժայռի լանջին կպած սեւ քարէ շէնքը աղմուկով փլեց, դետը վարարեց ու ծածկեց նրան ու մէկէն վերից խոշոր մի զանգուած սոսկալի ուժով դետին նետուեց եւ քառասուն կանգուն հողի մէջ մտաւ։ Դեւի մարմինն էր։ Գլուխը միայն դուրս մնաց, որ մի քանի անգամ թափահարուեց, ցնցուեց, ապա քարացաւ եւ չարտեսիլ սեւ մի ժայռ դարձաւ։

« Խարոյկը մարելու վրայ էր արդէն։ Երկիր ու երկինք կամաց-կամաց խաղաղւում էին ու թուում էր թէ ամեն ինչ վերջացաւ, երբ միանգամայն անսպասելի հողի մի շերտ աղմուկով փուլ եկաւ եւ տակից այլանդակ մի միջատ իր եռանկիւնի գլուխը դուրս հանեց։ Պսպղուն, վայրի աչքերը պտտցրեց աջ ու ձախ, յառեց տղայի վրայ ու՝

« — Հա, հա, հա,— քրքջաց յանկարծ։ — Արդէն այսպէս է եղել միշտ։ Բաւական է, որ իր հոգու մի մասնիկն ազատուի միայն եւ ընկնի հողակոյտի վրայ, որ յետոյ գնայ աշխարհ եւ վերսկսի իր կեանքի պատմութիւնը։ Ահա ես, իր հոգուց ազատուած այդ մասնիկը... հա, հա, հա, որքան միամիտ ես դու, որքա՜ն միամիտ...

« Տղան աչքերը չորս արած նայում էր, ականջները սրած լսում։ Կարծես ողջ աշխարհում ինքն էր մնացել միայն ու մէկ էլ այդ քրքջացող միջատը։

« Կենդանին սակայն կամաց-կամաց սկսեց ձեւափոխուել։ Մերթ ոտքերը ներքեւ կախած օդի մէջ երերուող մարդ էր դառնում, մերթ ինքն իր վրայ գալարուող օձ։ Մէկ գոմէշի մարմնով եւ ձիու գլխով հրէշի վերածուում ու մէկ դունչը դէմ տուած ոռնացող վագր դառնում։ Յետոյ յանկարծ սկսեց վոքրանալ-փոքրանալ, ի վերջոյ դարձաւ թեւաւոր մի բզէզ, որ թրթռալով թռաւ, խպառ չքացաւ։ Հեռից չարունակւում էր լսել միայն իր յարատեւ քրքիջը...

« — Չի յաջողւի, չէ՛, չի յաջողւի...

« Այն ժամանակ տղայի հոգին յանկարծ անասելի դայրոյթով լցւեց։ Երկու ձեռքերը բռունցք շինած, դուրս սրծած աչքերով, խոցած սրտով եւ կծկւած ուղեղով նա այլեւս առանց ինքն իրեն հաշիւ տալու եւ առանց յետ նայելու սկսեց վազել՝ հասնելու համար անյայտացող միջատին, որ քրքջալով գնաց վերսկսելու իր հին պատմութիւնը... Եւ նրա վազքը քանի գնում արագանում էր։

« Ու երբ ճանապարհին շուրջը նայեց, զարմացած տեսաւ, որ ինքը մենակ չէր այդպէս վազող. անհամար մի բազմութիւն իրեն պէս, երկու ձեռքերը բռունցք շինած, աղերսալի աչքերով եւ խոցած սրտով, նոյն խաւար ճարածութիւնն էր կտրում »։

Այսպէս էր պատմում Մարջան հօրաքոյրն ու համակ դայրոյթ դարձած, հառաչում անդօր։

— Հապա բալաս, ու դեռ մինչեւ այսօր չարի ետեւից ոչ ոք չի կարողացել հասնել։

Այդ ձմեռ, իր աղջկայ՝ Մարօի մահից յետոյ, Մարջան հօրաքոյրը յաճախ էր գալիս Նուրբաբենց մօտ ու չարաթներով մնում էր այնտեղ։

Զմեռուայ գիշերներին նստում էր նա վառարանի կողքին, Անուշի գլուխը դնում ծնկին ու խօսում էր, խօսում։ Ու թէեւ ժպտուն ու բարի Բեհեղ տատի միանգամայն հակապատկերն էր Մարջան հօրաքոյրը, Անուշը սակայն միշտ սիրում էր լսել նրան։ Մարջան հօրաքոյրը միշտ դժգոհ, միշտ ծառացած հոգի ունէր։

— Սիրտս նեղ է, նեղ,— գանգատւում էր յաճախ,

— ուզում եմ կանգնել բակի մէջտեղում, ձեռքերս դնել ականջներիս եւ մի լաւ գոռալ, մի լաւ ճչալ:

Երազուն ու խորհրդապաշտ Բեհեղ տատի պէս նա շատ հէքեաթներ չգիտէր: Գիտցած երկու հէքեաթից մէկը Սասունցի եւ միւսը չար Դեւի հէքեաթն էր, որ նա սիրում էր պատմել ամեն անգամ, երբ առիթ ստեղծուէր:

— Աշխարհիս բինովրէն Սասունցի է, բալաս, Սասունցի: Նրա բնակավայրը գտնւում է կարմիր աւազների անապատում, քառասուն կողք-կողքի կպած, գլուխ գլխի տուած կապոյտ ժայռերի կատարին: Գետնի մէջ փորուած վարի խոռոչներում իր ճուտերն են վխտում, թռչկոտում, հռհռում: Ինքը բաղմած մութ ամպերի մէջ, երկար պոչը հրէ լեզուի պէս աշխարհի վրայ փռած, պոռերը մինչեւ երկինք մխրճած: Ամեն անգամ, երբ նա շնչում է, նրա շնչից սեւ-սեւ ամպեր են գոյանում, ամեն անգամ, երբ կրակէ պոչը շարժում է, աշխարհը չարիքով է լցւում:

Այսպէս էր պատմում Մարջան հօրաքոյրը Սասունցի մասին: Անուշը լսում էր բիբերը խոշորցրած եւ յօնքերը վեր քաշած: Իր իսկական մեծութիւնը սակայն Անուշի համար մնում էր դարձեալ անըմբռնելի: Հօրաքրոջ ասելով նա կարող էր փոքրանալ, փոքրանալ եւ՝

— Այ էն թաղում դրուած չիրուխի մէջ տեղաւորուել: Իսկ եթէ ուզենայ, այնքան կը մեծանայ, որ տեսնել իսկ չես կարող: Կամ ոտքը կը տեսնես, կամ մի մատը միայն...

Եւ պատմում էր թէ ինչպէս ինքը մէկ անգամ, երբ դեռ ջահել հարս էր, գնացել էր գիւղ: Դաշտում, ինչպէս եղաւ, ինչպէս չեղաւ, մնաց մենակ:

— Արեւն արդէն մայր էր մտնում: Գիւղացիք բոլորը քաշուել էին: Ծառ, մացառ իրար էին խառնուել: Երկինքը կպել էր երկրին... Մին էլ նայեմ, ի՞նչ տեսնեմ... Նա՝ ինքը: Կարմիր կրակէ պոչը ոլոր-մոլոր դաշտում փռած, ծայրը մինչեւ երկինք նետած, ամբողջ գլուխը դիմացի լերան դէմ տուած, մեծ-մեծ ատամները բաց հրռ...հրռ...

— Ցետո՞յ: Հապա ի՞նչ արիր...

— Ի՞նչ արի: Ուշս կորցրի:

Անուշը կծկւում էր նստած տեղը:

— Հապա՞, էդպէս է, Սասունցի ամեն տեղ է: Մառանի խցիկների, թաղում դրուած ամանների, ծալքում, պահարանում... եւ միշտ էլ նա է յաղթողը, բալաս:

Հօրաքրոջենց բակում «քառասուն» աստիճան խորութեամբ մութ մի մառան կար, ճմեռուայ փայտ ու ածուխի շտեմարան, ուր իջնելն ու մի վայրկեան մնալը մեծ քաջութիւն էր Անուշի համար, թայց ուր հօրաքոյրն իջնում ու ժամերով ուշանում էր:

— Ինչո՞ւ մեծերը սատանաներից չեն վախենում:

— Որովհետեւ բոլոր մեծերի մէջ մի փոքրիկ սատանայ կայ,— բացատրում է հօրաքոյրը: — Երբ նրանց աչքին երեւում է մեծ սատանան, նրանք իրենց փոքրիկ սատանայի միջոցով սկսում են նրա հետ խօսել, կատակել, մինչեւ որ կամաց-կամաց հեռանալով մութից դէպի լոյս են դուրս գալիս: Իսկ լոյսի մէջ արդէն սատանայ չկայ:

— Ուրեմն, բոլոր մեծերի մէջ մի փոքրիկ սատանայ կա՞յ:

— Այո՛:

— Որտե՞ղ:

— Ահա, ճիշտ այստեղ,— եւ կնճռոտ ձեռքը խփում էր ակօսներով լի ճակատին:

Այսպէս էր որ Անուշը իմացել էր սատանայի գոյութեան մասին:

Հօրաքրոջից բացի թափառական փալչիները եւս խո-

սում էին նրա մասին։ Զրով լեցուն ամանին նայելով, դդզված մազերով դնչուն խորհրդաւոր ձայնով «սատանի աչքի», «սատանի պոչի» մասին զանազան տեղեկութիւններ էր տալիս...

— Գնա՛, առաւօտ շատ կանուխ, բարձրացիր ձեր տան տանիքը, երեսդ դարձրու արեւելք եւ երեք անգամ, թու, թքիր սատանի չիլ աչքին։

— Էհ, քոյրիկ, մատանի՞դ ես հարցնում։ Տանդ մէջ է։ Սատանի պոչը պէտք է կապես, երեք օր չի քաշի, կը դանես։

Եւ ո՞ւր էր իր իսկական բնակութիւնը։ Ինչո՞ւ էր այդպէս թշնամաբար վերաբերւում մարդկանց։

Անուշը ոչինչ չէր հասկանում ու գիշերը, անկողնում, վերմակի մէջ փաթաթուած, բաց աչքով երազ էր տեսնում... Ահա սատանան՝ բուի կերպարանք առած, սեղանի վրայ նստած իրեն է նայում...

Անուշն խսկոյն երեսին խաչ էր հանում։

Այդպէս էր ասել հօրաքոյրը,— որ ձարքերը դան, խաչ հանիր երեսիդ, կը չքւեն։

Ու ամեն անգամ տատանայ բուն կանչում էր՝

— Այո՛, այո՛ այո՛...

Անքուն, անքուն գիշերներ։ Երկար ու սարսափներով լի։

Անուշը նստած է իր փայտեայ մահճակալի մէջ։ Գիշեր է, ձմրան ցուրտ գիշեր։ Վառարանի կրակը վաղուց մարել է արդէն, լուսամուտները ծածկուած են հաստ վարագոյրներով։ Անուշը գիտէ, որ ծածկուած են, բայց ահա, ահա մէկի արանքից, լուսնի հալած արծաթի տակ, ճերմակ ձիւնն է պսպղում եւ ներդաշնակում փեղկին յենուած Նուբարի սպիտակահեր գլխի հետ։

— Հազար բուբլի, հազար բուբլի, կը լինի երկու հազար բուբլի։ Մեծ դորգը ութ հարիւր յիսուն, ոսկէ վզնոցը վեց հարիւր... Շուտով կ'աւարտէ, յետոյ չորս տարի համալսարան...

Վարագոյրի պատուածքից լուսինը բաց մնացած անկողնու ճերմակ սաւանի վրայ չանչ է չինել։ Մութ անկիւնում ինչ որ սեւ բան է շարժւում։ Այնտեղ ժամացոյցն է, կողքին Գրիգոր Արծրունին, միւսը պապն է, աթոռին նստած։ Մութի մէջ շրջանակները շարժւում են կարծես, պատը մօտենում է մահճակալին... զրընգ... զրընգ...

Ժամը չորսն է։ Ցնցւում է։

— Էն էլ ութ հարիւր յիսուն, կը լինի...

Մութ անկիւնի սեւ սուերը նորից սկսում է շարժւել. մերթ տարածւում, մինչեւ առաստաղն է հասնում, մերթ սողալով յատակից սահում, վառարանի վրայ է մագլցում ու մէկէն ցատկում, ժամացոյցի սլաքներին է կպչում...

— Հօրաքոյր, հօրաքոյր... Սատանան արդէն մեր տունն է մտել...

Ու ամբողջ գիշեր Անուշը վախենում է ու ամբողջ գիշեր Անուշը սարսռում է...

Լուսաբացի մթնշաղին միայն, երբ արեւի առաջին ճառագայթները վարագոյրի բաց մնացած ճեղքերից ներս էին սողում, ողջ գիշեր այդպէս թփրտացող սուերները սկսում էին կամաց-կամաց հալչել ու դէպի պարտէզ նայող փեղկերը չառաջելով բացւում էին վերջապէս։

Անուշը նայում էր զարմացած աչքերով... Դրսում բարի ու ժպտուն երկինքն, անտեղեակ ներսում կատարւող անց ու դարձին, իր կապոյտ հովանին էր փռել աշ-

խարհի վրայ։ Զմրան արեւի ճերմակ շողերը կտրին իջած ձիւնի հետ համբուրւում էին եւ նրանց համբոյրից ձիւնն երջանկութեամբ լցւած, պսպղուն շողեր էր արձակում՝ պլպլում, պլպլում... Կատուն, լուսամուտի փայտեայ վանդակին նստած իր փիլիսոփայութեամբ լեցուն աչքերը յառել էր միջոցին եւ պոչն էր շարժում ի նշան գոհունակութեան թէ՞ խորհրդածութեան։ Իսկ այնտեղ, աջ պատին, Անուշի մահճակալի ետեւում, կախւած էր Բեհեզ տատի մեծադիր լուսանկարը, որ խոհուն աչքերով նայում էր վար ու ժպտում աշխարհին։

Ու թւում էր յանկարծ, որ կեանքն այնքա՞ն, այնքա՞ն լաւ է... Առարկաների վրայ բարի հոգի էր իջնում, նոր վառւող վառարանի չրթ-չրթթացող կրակի խրաքանչիւր հարւածի հետ Անուշի սրտում նոր շող էր ծագում, եւ ամեն ինչ ժպտում էր ճիշտ տատի մեծադիր նկարի խաղաղ աչքերի նման։

Որքա՞ն բան կար թաղնւած այդ աչքերի մէջ... որքան բան...

8

1915 թւի գարունն իր լիակատար հմայքի մէջ էր։

Եղբեւենիներն իրենց յասմիկագոյն ու կարմիր ծաղիկների փնջերով, փոքրիկ, ցածլիկ ծառերի դեղին ծաղիկները, բոլոր, բոլոր վարդերը՝ կարմիր, ճերմակ, վարդագոյն բացւել էին ու սփռւել ամեն կողմ։

Այգիների մօտից անցնելիս անոյշ բուրմունքը, թեթեւ զեփիւռի հետ միասին, զարնւում էր մարդու երեսին, մարմինը թմրում եւ ուղեղը գօրաւոր, ընտիր խմիչքի ազդեցութեան ենթարկւածի պէս, քաղցր հարբումի պատրանք էր ստանում։ Քաղաքն արտասովոր թարմութիւն ու դեղեցկութիւն էր ստացել, ծաղկած ծառերի եւ ծաղիկների շնորհիւ։ Վերի յարկի լուսամուտից դիտելիս անասելի մի զարթութիւն էր իջնում հոգու վրայ՝ այնքա՞ն թովիչ էր պատկերը։

Անոյշ թմրութիւն է իջնում մարդու վրայ մայիսեան այդպիսի օրերին։ Ա՜հ, չմտածել ոչինչ, հանգստացնել միտքն ու հոգին ու նայել աշխարհին պտղաբեր ծառերի նման, որ կանգնել են ահա հպարտ ու դեղեցիկ, անտարբեր իրենց գեղեցկութեան հանդէպ։

Թափանցիկ թեւերով միջատներ ու ճանճեր, գունաւոր ու պսպղուն, թարմ կանաչների վրայ անհոգ թրթռում են ու իրենց հասկանալի եղանակով բնութեան գովքն են երգում։ Երկինքը լայն-լայն բացել է կապոյտը, կար-

ծես ամեն դեղեցկութիւն եթերային իր գրկի մէջ սեղմելու անհուն ցանկութեամբ լցած։ Հեշտանքի մէջ ընկղմուած նա լուռ կռացել է երկրի հմայքների վրայ ու պայծառ իր աչքի՝ պսպղուն արեւի հաղարաւոր ճառագայթները, սիրահարի նետերի նման թափել է ներքեւ՝ ծաղկած քաղաքի վրայ։

Լուռ ու կախարդական այս ժամին հեռւից՝ վերից, շատ վերից, լսւում է արտուտի դայլայլը։

Հեշտանք ու կիրք կայ բնութեան մէջ։

Դէպի Աստուածածին տանող ճանապարհը լցած է բազմութեամբ։

Ոմանք իրենց ուտելիքներն ու խմիչքները էշերի վրայ են բարձել, ուրիշները կապոցներ են շինել ու վայտի ծայրին հագցնելով դրել են ուսներին, ոմանք խուրջինների մէջ են տեղաւորել ամեն ինչ ու բոլորը միասին դանդաղ բարձրանում են այդինների մէջ ընկած ծառուտ ճանապարհով։

Պառաւ տատերը, տըքտըքալով, բայց ուրախ, հետեւում են իրենց զաւակներին ու թոռներին, որոնք կաւակելով, զանազան ճիշտ ու անճիշտ պատմութիւններ պատմելով ու ծիծաղելով, շտապեցնում են յետ մնացողներին։

Մի խումբ երիտասարդ արհեստաւորներ, առողջ դէմքերով, արեւից վառած այտերով, քայլում են գինուորական քայլերով ու բարձրաձայն երգում։ Ջահէլ հարս ու աղջիկ ջրի կլկլոցի պէս մունջիկ-մունջիկ գրուցում են եւ մանուկներն իրար ձեռք բռնած շարան-շարան առաջ են վազում։

Ղարադաղի լեռներից իջած եղնիկի աչքերով երիտասարդ մի աղջիկ, դաշտի ծաղիկներից գունաւոր փունջ շինել, կրծքին է խփել։ Նրա գլխի գունաւոր բարակ շալը թեթեւ քամուց շարժւում է անդադար ու սպառնում ամեն րոպէ վար սահել, ի յայտ բերելու համար փարթամ, մուգ-շագանակագոյն մազերը։ Հաղուստի երկար քղանցքը թեթեւ քայլածքից նազանքով շորորւում է ու ենթադրել տալիս նրա ուղղաձիգ սրունքների ճկուն դեղեցկութիւնը։ Նա առաջ է ընկել, թեւին սեղմած փոքրիկ մի դամբիւղ եւ դնում է կարծես ինքն իրեն համար։

Բազմաթիւ կառքեր, մերթ դանդաղ ու մերթ սրարշաւ, անցնում են ոտքով քայլողների մօտից, ձեռքով կամ թաշկինակով նրանց ողջոյններ ուղարկելով։

Ամենքը մասնակցում են հանդիսաւոր այդ տօնին ու թւում է թէ ողջ քաղաքը ոտքի է։

Ու ահա հեռւում, «էն ա հա՜» արդէն երեւում է փոքրիկ առուակը, որի շուրջը մի շարք կեռասենիներ կան տնկուած։ Ջինջ ջրի մէջ երկինքն ու ծառերն են անդրադարձել ու ցածլիկ խոտերը վառ կանաչութիւն են ստացել։

Տեսարանը պարզ է... անստուեր, անկնճիռ մի պարզութիւն, որ այնքա՜ն ներդաշնակում է մարդկանց հոգիների հետ՝ դեղեցիկ իրենց պարզութեամբ, անկնճիռ հոգեբանութեամբ, հեռու մանուածապատ մտածումներից ու բարդութիւններից։

Աստուածածնի երկաթաձող դռները բացւել էին արդէն։ Մատաղաւորները, ոչխարների եւ գառների հետ միասին, կանգնել էին դրանը։ Քաղաքից դուրս ընկած մեծ մի այգի էր դա, որտեղ տարիներ առաջ մարդկանց աչքին «լուս ցերեկի պէս» երեւացել էր Աստուածամայրը ճերմակ երկար շրջազգեստով, գլխին ոսկէ մի պսակ։ Նրա անուան նուիրւած մեծ այդ այգու մէջ շինուած էր փոքրիկ մի մատուռ։

Ծառերի միջից երեւցող հասարակ քարերից շինուած

այդ մատուռը հեթանոս մեհեանի էր նման։ Երբ քահանան ոսկեգոյն շուրջառն ուսերին, սաղաւարտը գլխին, ծնծղաների ու բուրվառի շրփոցի տակ կատարում էր սովորական իր ծէսը, երբ մարդիկ մատուռի առջեւ, սուր դանակներով մատաղներ էին մորթում եւ կարմիր արիւնը ողողում էր քարերը, իսկ հեռուից արդէն դուռնի ձայնն էր լսւում, թւում էր թէ հեթանոս մի ծիսակատարութիւն էր տեղի ունենում...

Բազմութիւնը շրջապատել է մատուռը։ Կանայք, գլխներին ծփծփան քողեր դցած, ոսկէ ճակատանոցներով, աղջիկները գոյնզգոյն հագուստներով, երանութեամբ լի աչքերը յառել են ոսկէ խաչին, որի վրայ արեւն իր ճառագայթներն է խաղացրել... Նրանք նայում են խաչի մէջ անդրադարձած արեւին ու ոսկուն՝ հուր ու փայլին, լսում են ներսից հոսող երգեցողութեան ձայնը ու հարազատ, խիստ հարազատ, բայց վաղուց կորսւած ու անյայտութեան մատնւած մի զգացմունք, թրթռալով դնում, հոգու խորքում թաղնւած լարերին է դարնւում...Երգը, ոլորուն շղթայ դարձած, բարձրանում, փաթաթւում է բռնկւած խաչի ոսկէ թեւերին, յետոյ վէտվէտալով վար է իջնում, խառնւում է մատաղացու ոչխարների ու դառների բառաչների հետ...

Օդից արեան հոտ է գալիս։

— Ա՛ռ, աղջիկս, այս փոքրիկ կուժն ա՛ռ։ Վրան ծաղիկներ ցանիր, բոլորից հաւաքած իրերը՝ մատնոց, օղ, մէջը դիր, դնա եօթն անդամ էս բակի շուրջը պտտիր։ Այս ու այն կողմ չնայես, չխնդաս ու չխօսես։ Ա՛ռ աղջիկս, ա՛ռ այս փոքրիկ կուժը։

Բեհեղ տատը Անուշի երեսին ճերմակ մի քող էր դցում ու սափորը ձեռքը դնում։

Արեւի դեղին շողերը բակի աղիւսների վրայ մեղր էին մաղել։ Իրար վրայ հակւած գոյդ եղբեւենիները, ջուխտակ քոյրերի պէս, գալար ճիւղերով սիրոյ ու դըգւանքի շոյանքներ էին փոխանակում։ Պատն ի վեր մագլցած կանաչ որթերը ըմբոստ թեւերը դէպի պարտէզ էին պարզել, իրենց ստւերների տակ կանաչաւուն լուսաւորութիւն ստեղծելու համար։

Պարտէզը, արեւելեան նախշոտ գորգի պէս, կարմրին ու կանաչին էր տալիս... Կենտրոնում՝ քառակուսի ծաղկանոց, չորս բոլորը վարդենիներ։ Մէկ կողմը դեղին նարգիզ, միւս կողմը շահպրակներ. մէկ կողմը կարմիր մեխակ, միւս կողմը թաւշէ վարդեր եւ անկիւններում բազմագոյն պնանուն ծաղիկներ, կրակի բոցեր, լոյսի փայլփլող ճառագայթներ։ Ու յետոյ շուքեր եւ շուքեր։

Փոքրիկ, մոխրագոյն ծիտերը, թառած ամեն թփի, ամեն ճիւղի, տարօրինակ այս լուսաւորութեան եւ ստւերների մէջ, պսպղուն երանգներ էին ստանում, դեղին ու կարմիր, կանաչ ու մանիշակագոյն։

Լուռ ջերմեռանդութեամբ, անորոշ ու վեհ զգացմունքներով, Անուշը սկսում էր դառնալ բակի շուրջը։ Փարէ սանդուխների վրայ նստած տատը, ծնկները գըրկած, սպասում էր։

— Բեր, աղջիկս, բեր սափորդ, ջրով լցրու, քողդ վրան դցիր, գոյդ վարդենիների տակ դիր ու թո՛ղ. թող, որ այս գիշեր աստղերի խորհուրդը մէջն ընկնի եւ առաւօտեան բարի լոյսի շողը վրան կաթի։

Այդպէս էր յիշում Անուշը Համբարձման տօնը...

Այդ տարի Մարջան հօրաքոյրն եկաւ կապեց բոլոր կապոցները, դրաւ բակի պատի տակ։ Առաւօտ կանուխ ամենքը միասին հաւաքւեցին ու ճամբայ ընկան։

Այդ տարի Նուբարը ոչխարի փոխարէն մի գոյդ ճերմակ աղաւնիներ մորթեց մատուռի քարերի վրայ։ Ու

մինչ ներսից լսւում էր երկինք բարձրացող աղօթքի ձայնը, ու մինչ թեթեւ հովը շոյում էր կանանց գլխի քօղերն ու աղջիկների մազերի հետ էր խաղում, իսկ ծառերի տակից լսւում էր դուռնի ձայնը, անդին՝ օդի մէջ, խունկի պալանները, ոլորւած արեւի ճառագայթներին, սողալով վեր էին բարձրանում՝ հասցնելու համար ամպերին ստեղծագործութեան առեղծւածի առաջ չբարած մնացած ջերմեռանդ մարդկանց հոգիների անբացատրելի զգացմունքները:

Զաւէնն ու Նատան այդպիսի տօների չէին մասնակցում: Նուբարն իր սեղանի շուրջն էր հաւաքել Տիգրանի երբեմնի ընկերներին:

Հանդիսաւոր օրերին Նուբարի հայրական սիրտն առանձին կարօտով էր յիշում բացակայ իր զաւակին... Նա գիտէր մանաւանդ, որ Տիգրանը դեռ մանուկ հասակից տարօրինակ սիրով էր կապւած հին աւանդական տօներին: Գիտէր նրա սէրը Բարեկենդանի տօնի, Վարդավառի, Դրնդեզի հանդէպ ու զգում էր, որ Համբարձման այդ օրը Տիգրանի հոգին իրենց հետ էր...

Կարօտի ու սիրոյ իր զգացմունքներին զոհացում տալու համար Նուբարն այդ տօներին միշտ իրենց մօտ էր հրաւիրում, տանը կամ դաշտում, Տիգրանի հին ընկերներին, որոնց հետ Տիգրանը մեծացել էր եւ որոնց համար Նուբարենց տունը հարազատ տուն էր: Այդ ընկերներից ամենից աւելի Նուբարը սիրում էր Հայկին:

Հայկը կենսուրախ, առողջ եւ զարթ բնաւորութեան տէր մի տղայ էր, որ Տիգրանի մեկնելուց յետոյ Վարդենու մտերիմն էր դարձել: Եւ Վարդենու համար նա այլեւս եղբօր պէս էր, այնքան մաքուր, այնքան հարազատ կապ էր ստեղծւել նրանց միջեւ:

Հայկի հետ էր կիսում նա ասպադայի իր երազը...

Նրանք երկուսով յաճախ իրար մօտ էին դալիս, խօսում էին, դատում, վճռում ու հիացմունքով կարդում հեռացած ընկերների խանդավառ նամակները:

Հեռացած ընկերներից ստացած նամակներից ամենից աւելի նրանց ոգեւորում էր Փարիզից եկած նամակները...

Իր մեկնելու առաջին տարին Գրիգոր աղայի տղան՝ Բարգէնը, որ նրանց մանկութեան ընկերն էր եւ որի վերադարձը վերահաստատել էր նրանց մէջ եղած երբեմնի կապը, մի քանի անդամներ գրել էր նրանց:

Գրել էր, նկարագրել Եւրոպան, ու թէեւ Բարգէնի նամակները միշտ լի էին կարօտով, ու թէեւ Բարգէնը յաճախ Արեւելքի գեղեցկութիւնների դովքն էր անում, նրանք ի սրտէ նախանձում էին Բարգէնին ու գրում էին նրան երկար-երկար նամակներ:

Այժմ բոլորւած Նուբարի սեղանի շուրջը, ուր ներկայ էր եւ Գրիգոր աղան, նրանք կատակներ էին անում, երգում, պատմութիւններ պատմում, վերյիշում էին իրենց մանկութեան օրերը... Նուբարը ուրախանում էր նայելով նրանց, մինչ աղա Գրիգորի աչքերը լցւում էին արտմութեամբ:

— Կանաչը բեր մաքրե՛նք, աղջի: Օղու մարդէն պատրաստիր:

— Վա՛յ, տեսար հալա, աղը մոռացել եմ:

— Ես չատ ունեմ, խնամի, քեզի կը տամ:

— Տես, տես, հազար անդամ ասացի, որ մեծ սփռոցը դրէք հա՛... Տէր ողորմեա Աստուած, էս ջահէլների գլխին խելք չի մնացել:

— Ժամանակն ա խարաբ էլէ, ժամանակը: Ի՞նչ ես թողել, ի՞նչ ես վնտռում, այ կնիկ:

— Ես աղջիկ ժամանակս մօրս խօսքից չէմ դուրս գայ։ Հիմա հա ասա, լսողն ո՞վ։

Հեռուի պատերի տակ արդէն օջախներ են պատրաստել ու մատաղները կրակի վրայ դրել։

Կանայք ուտելիքի կապոցներ են բացում, տղամարդիկ խորոված մսերը կտրատում, աղ ու սոխ են ցանում վրան։

Շուտով ամեն մի ծառի տակ, խոտերի վրայ բացւում են գորգեր եւ կապերտներ։ Իւրաքանչիւր ընտանիք իր բարեկամներով ու ազգականներով ճաշի «սեղանն» է պատրաստում։ Մատաղ անողները փոքրիկ, միատեսակ ամանների մէջ բաժին-բաժին արած միսը ձեռներին, մօտենում են սրան, նրան ու խնդրում են չմերժել։ Զանազան տեղերից լսւում են երգի ձայներ, բաժակաճառեր։

— Աղա Մնացական, կենացդ, այ մարդ, բա ինչո՞ւ էդքան հեռու ընկար մեզնից։

— Շնորհակալ եմ, շնորհակալ, անուշ լինի։ Աղջի, էս օղու շիշը տար Գասպարին։

Իրար անվերջ պատառներ ու լեցուն բաժակներ ուղարկելով, ամենքն ուտում, խմում, երգում, ուրախանում են։

— Տունդ չէն մնայ, պարոն Նուբար, դաւակներդ մէկ-մէկ ճրագ դառնան դրանդ գլխին։

Լցնում են բաժակները, Մարջան հօրաքոյրը բաժանում է դաֆռանով փլաւը, վրան խորոված-ի շամփուրներ դնելով։

Ճաշից յետոյ հարս ու աղջիկ, շրջապատում են փոքրիկ Անուշին։ Ու նախ կամաց, յետոյ աստիճանաբար ուժեղանալով բարձրանում է բախտի երգը, երիտասարդ շրթերից դուրս թռած տենչալի հառաչների պէս՝

Զան գիւլում, ջա՜ն, ջան...

Փոքրիկ Անուշը կախարդւած, թաթիկը սրբացած սափորի մէջ է մտցնում... Ու աստղերի խորհուրդը, լուսաբացի առաջին շողը՝ սկիզբն ստեղծագործութեան, հեթանոս մի մատուռի կողքին, երգի ու գոհաբերութեան փառաւոր ծիսակատարութիւնից յետոյ, կաթում է բալորի մաքուր հոգիների մէջ...

Կրակը բռնկել ա,
Իմ սիրտը բռնկել ա,
Սրտիս հետ խաղ մի անի,
Արիւնս բռնկել ա։

Բոլորը շրջապատել են երգողներին։ Ոմանք կանգնած են, ուրիշները նստել են, տղաներից մի քանիսը բարձրացել են ծառերի վրայ... Ամեն կողմից լսւում են նոր ու նոր բառերով հիւսւած տողեր, որ խումբն անմիջապէս լրացնում է ջան գիւլում ջան, ջա՜ն հանդերգով ու մէկիկ-մէկիկ սպառւում են սափորի մէջի իրերը.

Արի տղայ քո հրով,
Լցրու սափորս քո հրով.
Աղբիւր գնացած աղջիկ եմ,
Լցրու սափորս քո ջրով։

— Բա՛հ, սամավարս հանդաւ։ Թելքս տուի ջահէլներին, մոռացայ կրակի վրայ ածուխ դնել։

— Հա դէ, ղոչաղ, բռնի էս խալին մի թափ տանք, նորից փռենք։ Համմա վիճակդ լաւ վիճակ էր հա՜, միտդ պահիր որ նշանածիդ ասես։

— Ես նշանած չունեմ։

— Լաւ, լաւ, աշկեարա չունես, մտքիդ մէջը կ'ունենաս։

Ջան գիւլումով տակայն օրը չի վերջանում։ Մէկ

տեղ երկսեռ երիտասարդներ երկձայն խումբ են կազմել ու թառի ընկերակցութեամբ երգում են: Զուխուռ Պետրոսը մի քանի հոգի շուրջն առած՝ ինքնաբուխ երգեր է յօրինում ու ձեռքի զաւալին խփելով սիրատենչ հառաչներ արձակում: Արդէն տարիքն առած տղամարդկանց մի խումբ՝ վարակւած ընդհանուր ոգեւորութիւնից «եայլի» է բռնել թռչկոտում է, իսկ այդու խորքից լսւում է մելամաղձոտ շւիլի երգը:

Բազմաթիւ ինքնաեռներ իրենց մեղմ երաժշտութիւնը խառնել են ընդհանուր ուրախութեան ու ապակէ բաժակների միջից մուգ նարնջագոյն թէյը արտակարգ բնոյթ է ստացել:

Գիշեր էր: Անլուսին, աստղալի մի գիշեր: Տան մէջ բոլորը քնած էին արդէն՝ յոգնած այդ օրւայ գբօսանքից:

Նստած մենակ իրենց պարտէզում, գլուխը դրած թեւերի վրայ, Վարդենին նայում էր երկնքին: Աստղերի լոյսը թեթեւ մթնշաղ էր թափել ծառերի վրայ ու մայիսեան գիշերը շնչում էր մեղմօրէն:

Վարդենու մտքի մէջ կապոյտ լոյսեր էին իջել: Նա մտածում էր Համբարձման տօնի խորհուրդի մասին, Բեհեղ տատի մասին...

Համբարձման տօնը Բեհեղ տատը ծաղկամօր տօն կ'անուանէր... Ծաղիկներ, որ այնպէս առատօրէն բացւել, թափւել էին այդ օրն ամեն կողմ... Վարդենին հարբել էր նրանց բոյրից... Նստած այժմ պարտիզում, նա նայում էր ակամայ իրենց ծաղկած ծառերին: Նայում էր եւ երկու սուրբ ծառերին՝ ընկուզենուն եւ թթենուն, որոնք երբեք, երբեք չպէտք է կտրւէին...Կրակ կը թափւէր տան գլխին, եթէ կտրւէին... Նայում էր տանձենուն, խնձորենուն... Եւ ի՞նչ գարմանք... Մի ծառ ունէր այդ պարտէզը, դեղձի խոշոր մի ծառ, որ տնկւած օրից բար չէր տալիս: Անցեալ տարի, ամրան վերջին եկաւ Մարջան հօրաքոյրը, առաւ կացինը եւ սպառնագին մօտեցաւ ծառին...

— Չէ, մի՛ խփիր,— ասաց նա ինքն իրեն, իբր ուրիշ մէկը, որ աշխատում է համոզել,— մի՛ խփիր: — Թէ բար չտայ, կը խփեմ,— պատասխանեց հօրաքոյրը ու կացինը կրկին մօտեցրեց ծառին...

Վարդենին յիշում էր այս տեսարանը, որին ինքը ականատես էր եւ որի վրայ Նուբարը ժպտում էր ներողամտօրէն... Բայց դեղձի ծառն այդ տարի իրօք որ բար էր տւել...

— Ծառերի մէջ ոգի է ապրում,— ասում էր հօրաքոյրը,— պէտք է միայն խօսեցնել նրանց:

Այդ գիշեր Վարդենին իր ողջ էութեամբ էր զգում պարթեւքը գարնան, տրաքումը կոկոնների, աճումը ցողունների: Միտքը հանդիստ, յանձնել էր ինքն իրեն հոգու ճաճումին, իսկ հոգին նետւած բնութեան մեծ օրօրոցի մէջ, տարուբերում էր իրար հիւսւած երազի եւ իրականութեան վարդագոյն ամպերի միջեւ:

Նա այնպէս երջանիկ, այնքան խաղաղ էր այդ պահին:

Յանկարծ մի շշուկ վախեցրեց նրան: Գլուխը բարձրացրեց: Ծառերի խշշո՞ց էր արդեօք... Քամի չկար սակայն: Ոտնաձա՞յն: Նա նայեց աջ ու ձախ ու ակամայ ոտքի ելաւ: Շշուկը կրկնւեց այս անգամ աւելի լսելի: Պարտէզի աջ կողմից էր՝ այնտեղից, ուր պատը ցածրանալով նայում է դէպի փողոց...

Անշարժացած, Վարդենին փորձեց մթութեան մի-

ջից մի բան որոշել։ Նա դարձրեց գլուխը աջ, դարձրեց ձախ, աչքերի բիբերը լայնացրեց... Բայց ոչինչ չկարողացաւ տեսնել...

— Սուս, կամաց,— լուեց յանկարծ Նատայի ձայնը,— կամաց, սիրելիս...

Միւսը պատասխանեց...

Վարդենին սկսեց դողալ... Բնազդմամբ արտասովոր մի վախ պաշարեց նրան։ Սիրտը սկսեց արագ-արագ բաբախել... Զար մի ոգի բարձրաձայն քրքջաց... Եւ յանկարծ բացուեցին շառաչով մառանի դռները...Կարասների մէջ ապրող չար վհուկները թափուեցին պարտէզ... Ջրամբարից կաղալով դուրս ցատկեց եօթ գլխանի կախարդը, խնեցու վրայ հեծած պառաւն իջաւ վերեւից, սկսեց պտտուել պարտէզի գլխին... Ծառերը մէկ-մէկ սատանաներ դարձած, շարժուեցին, իրար անցան, եւ հեռուից լուեց չար բուի կանչը...

— Բո՛ւ... բո՛ւ...

— Սէրեօժա,— փսփսաց Նատան...

Վարդենին այլեւս հաղիւ կարողացաւ դսպել իրեն։ Վազելով փախաւ ու ընկաւ սենեակ։ Եւ այնտեղ թաղելով գլուխը ճերմակ բարձերի մէջ, հեկեկաց, հեկեկաց...

Խեղճ, խեղճ Զաւէն...

Յաջորդ օրը երեկոյեան նա դդոյշ մօտեցաւ Զաւէնի սենեակի դրան։

Նատան տանը չէր։ Սենեակում լոյս էր վառուում։ Զաւէնը պարապում էր երեւի...

Նա մի քանի անգամ առաջացաւ, որ բանայ դուռը, յետ եկաւ նորից, կանգնեց աստիճանների գլխին... Ինչպէ՞ս սկսել... Խօսել նախ Համբարձման տօնի մասին... Չէ, չէ, աւելի լաւ է սկսել Նատայի տօնակատարութիւնից, նրանց ոտքերի հպումից... Զաւէնը պէտք է անպատճառ իմանայ։ Տան մէջ կեղծիք էր մտել, մինչ Զաւէնն ա՛յնպէս մաքուր սիրով է սիրում Նատային։ Մաքուր սէր... Սէրը միայն մաքուր ու անկեղծ կարող է լինել, այնպէս ինչպէս իր հայրն է սիրում մայրիկին... մինչ Նատա՞ն... եւ Զաւէնը չգիտէ այդ... Նա սովոր չէ կեղծիք տեսնելու ընտանիքի մէջ, ստելու իր զգացմունքները։

Զդոյշ ու անձայն Վարդենին բացում է դուռը ու կանգնում շէմքին։

Սկզբում նրան թւում է որ սենեակում մարդ չկայ։

Սեղանի վրայ վառուում էր ճերմակ լուսամփոփով ճրագը, բայց աթոռը դատարկ էր։

Նա բարձրացնում է աչքերը... Նայում է վարանոտ... Նայում է, նայում — Չի ուզում հաւատալ... Ոչ, այդ անկարելի է... անկարելի է այդ...

Ինչպէ՞ս... Զաւէ՞նը... Զաւէ՞նն է այդ...

Վարդենին ակամայ պահում է շնչառութիւնը...

Դիմացի պատի մօտ, մէջքը դէպի դուռը դարձած, կանգնած է Զաւէնն ու չոյում է, համարեայ իրեն հպած, ուռած ու կարմիր այտը տան կարանողուհու...

Ոտքերի ծայրերի վրայ դուրս է դալիս Վարդենին Զաւէնի սենեակից, առանց դուռը գոցելու։

Դանդաղ իջնում է նա աստիճաններից, կանգնում մի րոպէ։ Ցաւ, վիրաւորանք, տխուր ու սեւ զգացմունքների մի հոսանք թանձրանում, իջնում է իր վրայ... Նա կամացուկ սրբում է աչքից կաթած արցունքը եւ առաջին անգամ իր կեանքում զգում է, որ իրենց տունը ծփում, ծփծփում է մոխրագոյն ու անթափանց մի մշուշի մէջ...

◆

— Իջեցրէք այս հին նկարները սենեակի պատերից։ Հանէք ամեն ինչ, որ մեռածներին է պատկանել մի ժամանակ։ Մաքրէ՛ք ամեն ինչ։

— Բայց այս սենեակը տատիդ սենեակն է, Զաւէն։ Իր ձեռքով է դրուած ամեն բան, իր ճաշակով է դասաւորուած։

— Սանտիմենտալիզմ եւ ուրիշ ոչինչ։ Ի՞նչ պէտք է անեմ ես նրա ճաշակը։ Այս սենեակը ինձ համար յարմար առանձնասենեակ կը դառնայ։ Այս գոյդ ոսկեթել գորգերը պէտք է ծախել, անդուկները դատարկել ու ոչնչացնել, ծաղկաւոր վարագոյրների փոխարէն ճերմակ վարագոյրներ պէտք է կախել։

— Ճիշտ է ասում տղան, Մանի։ Մենք հին մարդիկ ենք, կապուած ենք հին իրերի հետ, բայց որ լաւ մտածես, կարողանաս ազատագրել հոգիդ ու բաց աչքերով դիտես կեանքը, կը տեսնես որ դրանք աւելորդ զգացմունքներ են։ Քանի որ ինքը պէտք ունի առանձնասենեակի, թող դատարկեն տատի սենեակը։ Տղան պէտք է պարապէ, յօդուածներ, աշխատութիւններ է ուզում գրել... Թո՛ղ, Մանի ջան, թո՛ղ։ Կեանքի վրայ պէտք է նայել քաղաքակիրթ մարդու պէս՝ շիտակ, դէմ դիմաց։

— Այդ սենեակը միշտ մի պատրանք էր տալիս ինձ, որ նա դեռ ապրում է, որ նա մեզ հետ է։

— Իրականութիւնը չես կարող ժխտել, Մանի ջան։ Մենք միշտ սիրել ենք ինքնախաբէութեամբ զբաղուել, բարդացնել ամեն սովորական ու հասարակ երեւոյթ, մեր հոգիների համար չեղած պատրանքներ ստեղծել, երազներով ապրել։ Պէտք է իրապաշտ լինել, ճշմարիտը տեսնել։ Այսպէս է դատում Զաւէնը եւ երեխան իրաւունք ունի։

Մենք արեւելցիներս զգացմունքներով ապրող մարդիկ ենք, պէտք է ջանալ մտքով ապրել...

Ու Նուբարն այնպէս խեղճացած, այնպէս ընկճուած նայեց իր կնոջը, որ Մանին երեսը դարձրեց։

Անուշը հալածուածի պէս ընկաւ մառան։ Բարձրացաւ այնտեղ նետուած քուրսու չոր տախտակի վրայ ու գլուխը երկու ձեռքերի մէջ առնելով աշխատեց մտաբերել...

Զառ ֆիւլաջէն քանդեցին չալեր չինեցին, տասներկու ձեռք չկարած փէչը հագուստներ կարեցին... Իսկ աղանձի տոպրա՞կը... Տատի ձեռքով կարուած աղանձի տոպրակը, որի մէջից բոված ցորենի հատիկների հետ միասին մէկիկ-մէկիկ թափւում էին բառերն իր հէքեաթների...

Ու Անուշը գլուխը երկու ձեռքերի մէջ առած աշխատեց մտաբերել, յիշել, վերյիշել...

Ի՞նչը...

Ինչ որ մի բան, որ չկար այլեւս, որ ընդմիշտ կորել էր, բայց որ թրթռում էր այնտեղ՝ ներսում...

Անուշին թւաց յանկարծ, որ ինքը լսում է տատի ձայնի ելեւէջները, տեսնում է նրա ժպտուն ու փառաւոր դէմքը, զգում է համը իր պատրաստած աղանձի...

Ի՞նչ էր ասում հեռու աշխարհից եկող այդ ձայնը...

— Դուրս եկ մառանից, այդտեղ շատ ցուրտ է, ի՞նչ ես ծոի նման չոր տախտակին թառել։

— Ո՞ւր է տատիս աղանձի տոպրակը... Աղանձի տոպրակն եմ ուզում...

Լալիս է Անուշը, մղկտում։

— Այս երեխան խենթ է։

Մենք արեւելցիներս զգացմունքներով ապրող մարդիկ ենք, պէտք է ջանալ մտքով ապրել...

Ու Նուբարն այնպէս խեղճացած, այնպէս ընկճուած նայեց իր կնոջը, որ Մանին երեսը դարձրեց։

Անուշը հալածուածի պէս ընկաւ մառան։ Բարձրացաւ այնտեղ նետուած քուրսու չոր տախտակի վրայ ու գլուխը երկու ձեռքերի մէջ առնելով աշխատեց մտաբերել...

Զառ ֆիւլաջէն քանդեցին չալեր չինեցին, տասներկու ձեռք չկարած փէչը հագուստներ կարեցին... Իսկ աղանձի տոպրա՞կը... Տատի ձեռքով կարուած աղանձի տոպրակը, որի մէջից բոված ցորենի հատիկների հետ միասին մէկիկ-մէկիկ թափւում էին բառերն իր հէքեաթների...

Ու Անուշը գլուխը երկու ձեռքերի մէջ առած աշխատեց մտաբերել, յիշել, վերյիշել...

Ի՞նչը...

Ինչ որ մի բան, որ չկար այլեւս, որ ընդմիշտ կորել էր, բայց որ թրթռում էր այնտեղ՝ ներսում...

Անուշին թւաց յանկարծ, որ ինքը լսում է տատի ձայնի ելեւէջները, տեսնում է նրա ժպտուն ու փառաւոր դէմքը, զգում է համը իր պատրաստած աղանձի...

Ի՞նչ էր ասում հեռու աշխարհից եկող այդ ձայնը...

— Դուրս եկ մառանից, այդտեղ շատ ցուրտ է, ի՞նչ ես ծոի նման չոր տախտակին թառել։

— Ո՞ւր է տատիս աղանձի տոպրակը... Աղանձի տոպրակն եմ ուզում...

Լալիս է Անուշը, մղկտում։

— Այս երեխան խենթ է։

9

Պատերազմի տարիները Նուբարի ընտանիքի համար անցան տաղտկալի միօրինակութեան մէջ։

Մի քանի տարի առաջ տեղի էին ունեցել զարհուրելի դէպքեր... Հայ ժողովրդի մի մասը կորցրել էր իր հայրենիքը... Աշխարհիս բոլոր կողմերում ցրուած իւրաքանչիւր հայի սրտին սուզ էր պատել ու մթնել էր երկինքը։

Ռուսաստանում ծայր էր տուել արդէն յեղափոխութիւնը։ Երկու տարի առաջ Նատան մեկնել էր Ռուսաստան՝ այլեւս չվերադառնալու պայմանով... «Այսպէս լաւ է, Զէօվա,— գրել էր նա Զաւէնին իր նամակի մէջ,— մեր սիրոյ փրկութեան համար մենք պէտք է հեռու լինենք իրարից»... Նուբարը քաշւում էր տպարան, Մանին մտադրաղ տարուած էր ընտանեկան հոգերով։

Զաւէնը շատ անգամներ փորձել էր ձեռնարկել որեւէ գործի։ Փորձել էր զբաղւել մասնաւոր դասերով, բայց իր ջղային բնաւորութեան պատճառով չէր յաջողել։ Հրաւիրւել էր դպրոցում պաշտօնավարելու, իբր ուսուցիչ, բայց այստեղ էլ հանդիպել էր անյաջողութեան։

Դպրոցում Զաւէնը ծառացել էր այն երեւոյթի դէմ, որ ուսուցիչները, ուղղակի կամ անուղղակի կերպով, քաղաքական սերմեր էին ցանում աշակերտների անկազմակերպ հոգիների մէջ։ Մանաւանդ Ներսէսը, որ հեռուներից սկսելով, դդոյշ, բայց յամառօրէն, կարողանում էր իր ցանկացած ուղղութիւնը տալ աշակերտութեան։

— Դու ոճրագործութիւն ես անում,— ասում էր Զաւէնը Ներսէսին,— դու պղտորում ես անարատ հոգիները, բռնանում ես դեռ չկազմակերպուած մտքերի վրայ։

— Իմ միտումներս ազնիւ են, եւ ես նրանց ցոյց եմ տալիս կեանքի ճշմարիտ ճամբան,— պատասխանում էր Ներսէսը։

Իր բռնած դիրքի համար Զաւէնը դարձել էր չսիրուած ուսուցիչ։ Եւ մի օր էլ, երբ դասի ժամանակ ըմբոստի մէկը ծառացել էր իր դէմ, Զաւէնը բղաւել էր, դասարանը սկսել էր աղմկել, Զաւէնն աւելի էր գայրացել եւ ի վերջոյ մի ապտակ էր իջեցրել ըմբոստ աշակերտի երեսին... Այնուհետեւ դէպքերը դասաւորւել էին այնպէս, որ Զաւէնը ստիպուած էր եղել թողնել դպրոցը՝ հրաժարւել պաշտօնից։

Երբ տեղի էին ունենում հոգաբարձական ընտրութիւններ, եւ քաղաքը երկու մասի բաժանուած դէմ-դիմաց, էր դալիս, Զաւէնը ցոյց էր տալիս Ներսէսին աշակերտների խմբերի վրայ, որ մեծերի պէս գայրանում էին ու յուզւում...

— Տեսնո՞ւմ ես այս տխուր պատկերը։ Անհատը մեռնում է դրանց մէջ... շաբլօնով մտածող, շաբլօնով գործող մարդիկ են դարձել,— ասում էր նա չեշտելով շաբլօն բառը։

— Այո՛,— պատասխանում էր Ներսէսը,— դատակարդային պայքար է, միակ մղիչ ոյժը յառաջադիմութեան ու մարդուս ազատագրման։ Միայն,— աւելացնում էր նա խորհրդաւորութեամբ,— պէտք է ցանկալի ուղղութիւն տալ այդ պայքարին...

Ընտրական ամբողջ այդ յուզումը եւ ընդհանրապէս

հայ գաղութը հետաքրքրող ամեն հարց, Զաւէնը համարում էր «վոթորիկ մի բաժակ ջրի մէջ» ու ներողամտորէն ժպտում...

Ցաճախ քաղաքային պարտէզում Բագրատի ու Ներսէսի ընկերակցութեամբ շրջում էր նա, մեռցնելու համար ժամանակը: Վիճում էր նրանց հետ... Իսկ նրանք տարուած էին օրւայ խնդիրներով, քաղաքական հարցերով, ուստական մեծ յեղափոխութեամբ եւ բոլոր երեւոյթների վրայ նայում էին յատուկ ակնոցով:

— Եթէ այդքան ապարդիւն անցրած ժամերդ,— ասում էր Զաւէնը Ներսէսին,— դու յատկացնէիր գիտական որեւէ աշխատանքի, ինչե՞ր չէիր կարող անել...

— Դարը ուրիշ բան է պահանջում,— պատասխանում էր Ներսէսը,— դարը անյետաձգելի հարցեր է ապարդեղ նետել, որոնց անմիջական պատասխանը պէտք է տալ: Քո ասած աշխատանքները ուրիշ՝ աւելի խաղաղ շրջանի համար են: Պատմական տարբեր շրջաններում, քաղաքացու դերը տարբեր է լինում: Այսօր պահանջւում է գործնական միջամտութիւն:

Զաւէնը դալիս էր տուն պղտորւած մտքով, փակւում էր իր սենեակում ու ժամերով մնում էր այնտեղ առանձնացած... Փոթորկայոյզ ներկայ այդ կեանքի մէջ ո՞ւմ էին պէտք փիլիսոփայական իր աշխատանքները... Ու թւում էր Զաւէնին, որ արտաքին պայմաններ՝ իրենից դուրս գտնւող զօրութիւններ իր դէմ էին ելել ու խանգարում էին իր անհատի բնական զարգացումը... որ ինքը կանգնած էր մեն-մենակ, անհաշտ հանրային կեանքը բնորոշող եւ ալեկոծող երեւոյթների առաջ: Եւ թւում էր նրան, որ ճշմարիտը ինքն էր, իսկ Ներսէսները հոսանքին յանձնւած, կորսւած մարդիկ էին:

Այսպէս էր մտածում Զաւէնն ու այսպէս պատասխանում Ներսէսին, երբ վէճի էր բռնւում նրա հետ: Այժմ սակայն Ներսէսը չկար՝ նա մեկնել էր Ռուսաստան, եւ Զաւէնը մնացել էր բոլորովին մենակ:

Նուբարը կորցրել էր իր սովորական անդորրութիւնը: Նա չէր կարողանում այլեւս երկար նստած մնալ իր սիրած անկիւնում, խաղաղութեամբ լցած հոգիով դիտել իր շուրջը, կամ կարդալ: Նա քայլում էր սենեակից սենեակ, իջնում էր պարտէզ, նստում մի բոպէ, յետոյ կրկին շարունակում քայլել... Ցաճախ Վասիլ խանն էր գալիս, բայց այժմ նրանց խօսակցութիւնները հանդիսաւոր բնոյթ չէին կրում. Վասիլ խանը գալիս էր Նուբարի մօտ մի բան հարցնելու կամ մի լուր իմանալու համար:

— Հայերի գործերը, Նուբար ջան, կարծես թէ էլի վատանում են: Ի՞նչ նոր լուր...

Նուբարը շարժում էր գլուխը ափսոսանքով, մի բան կորցրած մարդու պէս, որով ուզում էր ասել, որ մխիթարական ոչ մի լուր չկայ...

Դեռ յունւարից սկսած Զուլֆայից եկած տեղեկութիւնները սարսափելի էին... Ամեն կողմ աւար ու արիւն ... Ազգամիջեան թշնամական կռիւները ծայր էին տուել սահմանից այն կողմ... Ռուսը քաշել էր իր զօրքը... Գնացքները ամեն օր յարձակման էին ենթարկւում...

Նուբարը Տիգրանից ոչ մի լուր չունէր, եւ նրա սիրտը կտոր-կտոր էր լինում:

Ճանապարհները վտանգւած էին...Ընկել էին Կարսն ու Ալեքսանդրապոլը... Մայիսի կէսերին Արարատեան դաշտը բոլոր կողմերից շրջապատւած էր թշնամիներով..

Պիտի վերջանա՞ր արդեօք այդ սարսափելի մղձաւանջը... Պիտի ազատւէ՞ր արդեօք հայ ժողովրդի վերջին բեկորը դէթ իր կովկասեան հայրենիքի մէջ...

Նուբարը մռայլ էր: Իր խիղճը հանդիստ էր սա-

կայն... Ինքը վաղուց էր նախատեսել բոլոր այդ վտանգները, ինքը հեռու էր մնացել որեւէ մասնակցութիւնից, եւ կարողացել էր ազատել Զաւէնին զինուորակոչութիւնից... Ինքը... Բայց այդ բոլորը բաւական չէին չգալու համար ողբերգութեան ամբողջ ուժգնութիւնը... Պատմութեան քամիները ոռնում էին հայ աւերակների վրայ, սպառնալով մարել վերջին ճրագը... Հեռաւոր այդ երկրում ընկած փոքրիկ հայ գաղութը տաղնապի օրեր էր ապրում... Ամենքը սպասողական վիճակի մէջ էին:

Ու մի օր էլ...

Ժողովուրդը խուռն ի խուռն չտապում էր եկեղեցի, իրար հետ քչփչալով, յուզած, հեւ ի հեւ...

Ի՞նչ էր պատահել, ի՞նչ էր պատահել...

Եկեղեցու բակը լցած էր բազմութեամբ: Մարդիկ տարակուսած նայում էին իրար: Սահմանի այն կողմից եկել էին մարդիկ ու ինչ որ նոր լուրեր էին բերել...

Նուբարը սաստիկ յուզած էր... Նա կանգնել էր խնձորենու տակ ու աչքերը չէր հեռացնում Առաջնորդարանի աստիճաններից, որտեղից պէտք է իջնէին նորեկները: Նա անհամբեր էր: Սպասում էր, որ վերջանային բոլոր այդ արարողութիւնները, նորեկները գային, ասէին իրենց խօսքը, հաղորդէին ժողովրդին նոր լուրերն իրենց, որպէսզի յետո՞յ, յետոյ էլ ինքը մօտենար նրանց ու հարցընէր, հարց ու փորձ անէր ե՛ւ իր դաւակի՝ Տիգրանի մասին... Սահմանից այն կողմ չէի՞ն տեսել նրան, որեւէ բան չէի՞ն լսել նրա մասին...

Անուշը կանգնած հօր կողքին, յենւել էր խնձորենուն ու հետաքրքրութիւնից բռնկւած աչքերի բոցը թափում էր բազմութեան վրայ: Նա անընդհատ դիմում էր հօրը, դանդաղ հարցեր էր տալիս նրան, բայց Նուբարը չէր պատասխանում:

Աստիճանների վրայ սկսեց իրարնցում... Երկու հոգի արագ-արագ իջնում էին աստիճաններից... Շունչը բռնած բազմութեան միջից նրանք անցան եւ ուղղւեցին դէպի պատւանդանի վրայ իրենց համար պատրաստւած սեղանի կողմը...

...

Հազարաւոր աչքեր նրանց վրայ էին դամւել... Հազարաւոր ականջներ նրանց խօսքին էին սպասում... Նուբարն այնքան մօտիկ էր խօսողին... Նա տեսնում էր նրա ամեն մի շարժումը եւ աշխատում էր բաց չթողնել ոչ մի խօսք:

« Քաղցով եւ տենդով բռնւած մի ժողովուրդ... Մի ժողովուրդ սեղմւած իր երկրի մերկ լեռներին, անդէն ու անզօր »...

Ժողովուրդը շունչը բռնած լսում էր...

Նա նկարագրում էր մեծ սարսափի օրերը, տասնեւհինգ թուի ջարդերը, հողերի բռնագրաւումը, գաղթը...

Ամենքը յուզւած էին... Յուզւած էր ե՛ւ Նուբարը...

Ճառախօսը կամաց-կամաց ոգեւորւում էր...

« Մայիսի քսանչորսին էր... մեզ մնացած փոքրիկ հողամասի վրայ... Երկաթուղու դծով դէպի մեզ էր շարժւում հսկայ մի բանակ... Վերջին հարւածն էր... մահ կամ ազատութիւն... Եւ ահա հայ ժողովուրդը մէկ մարդու պէս ոտքի ելաւ... Ոտքի ելաւ հայ ժողովուրդը, հայրենակիցներ, առիւծ դարձած առաջ նետւեց եւ... յաղթեց »...

Կեցցէների տարափի ու ոգեւորւած ծափերի տակ թնդաց ողջ բակը... Արցունք էր հոսում սակայն բոլորի աչքերից... Այնքա՞ն կորուստներից յետոյ մի լոյս, մի յոյս էր ծագել...

Անուշը գրկեց խնձորենու բոյնը եւ սկսեց արագ-

արագ պտտել նրա շուրջը, խենթացածի պէս: Տաք մի հոսանք բարձրացել էր իր մէջ, այտերը վառում էին...

Եւ ահա, ճիշտ այդ ժամանակ, Նուբարը նկատում է, որ մօրուքաւոր նորեկը, որ քիչ առաջ կանգնած էր ճառախօսի մօտ, կամաց-կամաց ամբոխը ճեղքելով դէպի իրեն է գալիս:

Նուբարը զարմացած նայում է նրան: Այո՛, չէր սխալւում: Մարդը մօտեցաւ, մօտեցաւ եւ կանգնեց նրա առաջ:

— Պարոն Նուբարը դուք է՞ք,— հարցրեց նա քաղաքավարութեամբ,— ես նամակ ունիմ ձեզ համար:

— Նամա՞կ...

Նուբարի սիրտը սկսեց արագ-արագ բաբախել...

Նամա՞կ... Տիգրանի՞ց արդեօք...

Ու մինչ Նուբարը տարակուսած նայում էր սահմանի այն կողմից եկած մարդուն, վերջինս գրպանից հանած թղթերի կապոցի մէջ փնտռում էր նամակը:

Տեւեց երկար մի րոպէ...

Ու վերջապէս: Նուբարը դողդոջուն ձեռքը մեկնեց ու առաւ նամակը... Նրա ականջին շարունակում էին հընչել ծափերի տարափն ու բանախօսի կրծքից բարձրացող թաւ ձայնը:

« Ո՞վ կարող էր սպասել... Բայց հրաշքը եկաւ... Սովի ու ջարդի մատնուած մի ժողովուրդ ոտքի ելաւ ու կատարեց պատմական մեծ մի գործ... Որպէս ամուր պատսանդան, հայ ամբողջ սիւիւռքի եւ դալիք սերունդների համար, Սարդարապատը ստեղծեց »...

◆

— ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ... Այս ես եմ գրել, պարոն Նուբար: Հիմա ես բոլոր տառերը ճանաչում եմ... Էս հասակիս մէջ սովորեցի... Մեռնեմ իմ հայրենիքին... Հիմա մի ուխտ ունեմ, պարոն Նուբար՝ գնալ Հայաստան ու իմ հայրենիքիս փոստատան ցրիչը դառնալ...

Նուբարը նայում է իրեն մեկնած թղթի կտորին, երեխայի ձեռագրով գծագրուած տառերին... Նայում է Սէթի դէմքի վրայ տարածուած երջանկաւէտ ժպիտին ու չարունակում է քայլել, ձեռքին ամուր բռնած մեծ մի ծաղկեփունջ: Ինչպիսի ոգեւորութեամբ էր լցուած ծերունի նամակաբերի հոգին... Նուբարը դրեթէ զարմացած էր:

Հայաստանի Հանրապետութիւն... փոքրիկ մի հողամաս, շրջապատուած թշնամիներով...

Նուբարը զգում էր, որ իր հոգին չէր ուրախանում, չէր ոգեւորւում... Նա զգում էր, որ մեծ ու նշանակալից մի բայց կար կախուած փոքրիկ հայրենիքի գլխին: Բայց Նուբարը չէր ցանկանում փչացնել Սէթի ուրախութիւնը, եւ չէր հարցնում նրան՝ իսկ յետո՞յ, Սէթ, իսկ վա՞ղը, վա՞ղը... եւ Սէթը նամակներով լիքը պայուսակը թեւի տակ, քայլում էր նրա հետ կողք-կողքի:

Նրանք հասել էին արդէն քաղաքի վերջին տներին եւ ուղղուել էին դէպի դերեզմանատուն:

Հայաստանից եկած նամակը, որ այնպէս յուզել էր Նուբարին, Տիգրանից չէր: Արտօն էր գրել: Երկար ու բարակ նկարագրութիւններից յետոյ, Արտօն գրել, խընդրել էր Նուբարին իր կողմից ծաղկեփունջ դնել «անմոռաց սիրածի»՝ Մարօի դերեզմանի վրայ եւ Նուբարը անձամբ էր կատարում Արտօի խնդիրքը:

Տիգրանի մասին Արտօն ոչինչ չէր գրել... Նուբարի

եղբայր Համբարձումն անյայտ կորել էր ու Նուբարի սրտի տխրութիւնը փարատելու փոխարէն, կրկնապատկուել էր։

Սէթը, իր աշխատանքը թողած, շարունակում էր քայլել Նուբարի կողքից եւ անդադար խօսում, հարց ու փորձ էր անում։ Իր հայրական զգացմունքն այնպէս էր չոյլել...

Նուբարի ստացած նամակի մէջ, խմբական մի լուսանկարի վրայ, զինուորական տարազով, փամփուշտակալներով ծածկուած, հրացանը ձեռքին նկարուած էր Արմաշը...

— Ես սրանց հոգուն մատաղ, պարոն Նուբար, մի տես, մի տես ի՞նչ ասլաններ են...

— Նայիր այս ջահէլներին, Սէթ... Ի՞նչպիսի դէմքեր են... յոգնած, տանջուած... Եթէ դու մեզ մօտ լինէիր, Սէթ, երբ Հայաստանից եկածները ինձ մօտ հիւր էին ու լսէիր նրանց պատմութիւններն այն արհաւիրքների մասին... Մեծ մի փոթորիկ է անցել հայ աշխարհով, տակն ու վրայ արել, աւերել մի ամբողջ երկիր... Մի ամբողջ ժողովուրդ քաղաքակիրթ մարդկութեան առջեւ սրի ու հրի է մատնուել...Եթէ լսէիր թէ ինչե՞ր էին պատմում նրանք... Դաշտերում, ձորերում թափթփուած դիակներ, քարերի տակ լքուած մանուկներ, որոնց հաւաքել են հարիւրներով, հազարներով... Կարծես խօսքը խնձորի մասին լինէր, Սէթ... Կարծես թափ էին տուել մի մեծ խնձորենի ու պտուղները վաճառքի հանել աշխարհի չորս կողմերի վրայ... Կարելի է խելագարուել... Խելագարուել կարելի է... Նայիր, նայիր այս լուսանկարին։ Տես ինչպէ՞ս է փոխուել Արտօն, սա է՝ յենուած խուրջինին, Արմաշիդ կողքինը... Գրում է, որ կարօտել է տաք կերակրի, փափուկ անկողնու...

Նրանք մտել էին արդէն գերեզմանատուն եւ քայլում էին նրա գլխաւոր ուղիով։

Նուբարը մէկ-մէկ կանգ էր առնում գերեզմանների առաջ, բարձրաձայն կարդում էր քարերի վրայ փորագրուած ու արդէն հնացած տառերն ու նորից առաջանում։ Յետոյ նրանք ծուեցին դէպի աջ ու կանգ առան։ Նուբարը կռացաւ, համբուրեց գերեզմանաքարը ու ծաղիկների փունջը դրեց նրա վրայ։ Յետոյ կանգնեց, սեւեռուն հայեացքը դցեց շիրմի վրայ ու մնաց անշարժ։

Նա մնաց այդպէս երկար, երկար րոպէներ։ Սէթը նոյնպէս լուռ էր։ Գլխարկը ձեռքին նա կանգնել էր Նուբարի կողքին ու յարգանքով սպասում էր նրան։ Սէթը գիտէր, որ Մարօից աւելի Նուբարի սիրտն այդ պահին լցած էր Տիգրանով... Նա գիտէր, զգում էր, որ Նուբարին տանջում, չարչարում էր Տիգրանի երկար լռութիւնը...

Փիլչ յետոյ Նուբարը նորից կռացաւ, համբուրեց հողը ու վերջին անգամ նայելով գերեզմանին, քայլերն ուղղեց դէպի դուռը։

Յունիսեան արեւը բարձրացել էր արդէն ու նրանք տրագացրին իրենց քայլերը։

Նուբարի աչքերի մէջ սառել էր արցունքի մի կաթիլ։

10

Զգոյշ, ինչպէս գիշերային ոգիներ, հացթուխ Հարսնուկն ու Ֆանին, ներս սողացին սենեակ, այնտեղից պատշգամբ:

Կլոր լուսինը կպել էր երկնքին, տունն ամբողջապէս մութի մէջ էր: Լուռ նստեցին: Հարսնուկն անձայն մօտեցրեց ջրով լի ամանը Ֆանուն, եւ Ֆանին յետ արաւ իր երեսի ծածկոցը:

Հոդեխօսներին յատուկ գունատ, մեղրամոմի պէս, երես ունէր նա, խոշոր ու բայն բացուած աչքեր, որոնց բիբերը քաշուել՝ աչքի խոռոչի վերեւում ծւարել էին: Երկար, սեւ ծածկոցը, որ ծածկում էր նրա դլուխը, իջնում էր ցած՝ ուսերն ի վար: Տարօրինակ մի բան ունէր այդ կինը, որ լուսնի ճերմակ լոյսի տակ վախ էր առաջացնում մարդու մէջ:

Նա աչքերը բարձրացրեց ու նայեց լուսնին: Մի քանի անդամ ձեռքը նետեց դէպի երկինք, ասես բռնելու համար լուսնի կլոր այտից, յետոյ կռացաւ, նայեց ամանի ջրին, բոլոր մատների ծայրերը ի մի հաւաքեց, թափահարեց ջրի վրայ՝ մատների միջի ոյժը նրա վրայ ցանելու համար ու յանկարծ քարացաւ. ջուրը սկսել էր «եռալ»...

Երկար մնաց Ֆանին այդ վիճակի մէջ անշարժ, աչքերը ջրին: Տեսնո՞ւմ էր նա արդեօք երթն աստղերի, աւեղծւածային ընթացքը համաստեղութիւնների, զգո՞ւմ էր րիթմը տիեզերքի, որ համապատասխանում էր իր սրտի զարկին. անցնում էր ծովեր, թռչում ցամաքներ, թէ՞ մթնոլորտի մէջ, սովորական աչքին անտեսանելի, ձեւաւորւած երեւոյթներ էր տեսնում, կատարւած դէպքերի տեսիլների մէջ խորասուզւում, դալիքը փնտռում...

Նա զգուշութեամբ ձեռքը դրաւ հիւանդի դլխին: Հանդարտ բարձրացրեց աչքերը լուսնին ու հնչեց յանկարծ մետաղէ իր ձայնը, որ կարծես դետնի տակից էր դալիս:

— Ներսում բան ա պատահել:

— Մեծ մի քար ընկել ա հոդու չիւչի վրայ:

— Շիւչէն փչրւել ա:

— Աղջիկ կա՞յ մէջը:

— Աղջիկ չկայ: Բոլորտիքը մութ ա, խառն ի խուռն ա: Գայլ ու առիւծ եմ տեսնում: Ինքը չկայ, ներսը փնտրւել ա, չիւչէն ա կոտրւել: Դժար ա գործը:

— Մի ճար արա, Ֆանի: Էլ բժիշկ չմնաց, էլ դեղ չմնաց...

— Ի՞նչ անեմ, ջին չի, որ բռնեմ, դուրս քաշեմ:

Լռեցին:

— Մէկ անդամ էլ փորձէք դուռնով պարացնել: Էլաւ, էլաւ, չէլաւ, ես անզօր եմ:

— Լաւ է ասում, խանում Ջան, էդ մէկն էլ արա,— վրայ բերաւ Հարսնուկը: Անցեալ տարի բարեկամիս աղջիկը էսէնց մի բան էր էլէ, դուռնով պարացրին: Հաստաքւեցին բարեկամ, հարեւան, եօթ օր, եօթ գիշեր պարեցին, աղջկան էլ պարացրին, անցաւ դնաց...

Մանին հառաչեց յուսահատւած:

◆

Մութ էր։ Լուռ ու խաւար մի գիշեր։

Փողոցից, կողք-կողքի, արագ քայլերով, մերթ ընդ մերթ իրար հրելով, յուզուած, մէկ-մէկու անկապ խօսքեր նետելով, ընթանում էին երկու ստուերներ։

Նրանք շտապում էին. երբեմն-երբեմն վազում, յետոյ կանգ էին առնում, խորը շնչում ու նորից շարունակում իրենց ճամբան։

Շուտ տեղ հասնելու փափաքը տանջում էր նրանց, եւ որքան շտապում էին, հասնում փողոցի ծայրին, թեքւում յաջորդ փողոցը, վազում, նորից դէպի աջ ծռւում, նորից դէպի ձախ դառնում, այնքան ճանապարհը երկար էր թւում։

Մութը սեւ մի սաւան էր փռել քաղաքի վրայ։ Բարերը սպառնալից ցցւել էին ճանապարհին, սիւներն անշարժ էին դարձել, տների ուրուագծերը աղօտացել էին։ Մերթ ընդ մերթ այս ու այն կողմ կատուների կանաչ աչքերն էին պսպղում միայն եւ լսւում էր շների հաչոցը։

Գիշերը լուռ էր ու անտարբեր։ Փողոցներն աւելի նեղացել էին կարծես եւ նրանց ոլորապտոյտ, անվերջանալի անկիւնադարձերը, անելանելի լաբիւրինթոսի պէս, շշմեցնում, ջղայնացնում էին նրանց։ Թւում էր թէ ընկել են խաւար՝ ամեն կողմից փակւած անմուտք ու անելք դետնուղիի մէջ ու ժամանակն այնպէս երկար, այնպէս անտանելիօրէն երկար էր...

Ամեն բան արագութեամբ սահում էր, անցնում նրանց աչքերի առջեւից։ Հատ-հատ բաց մնացած խանութների մթագնած ապակիները, թարթում էին իրենց պղտոր լիբերը. լսւում էր դռների երկաթէ բախիչների հարւածների ձայնը ու թեթեւ քամու սուլոցը վար էր թափում, արդէն դեղնած, տե՛ւ նները ծառերի։

Նուբարի սրտի տակ սեւ մի կասկած էր մտել... Զարագուշակ մի կասկած...

Նա կանգնեց յանկարծ, բռնեց Բագրատի թեւը...

— Չլինի՞ թէ...— ու սարսափեց իր մէջ ծնւած գաղափարից...

Փակ դրան առաջ կծկւած սեւ մի շուն ցատկեց տեղից ու վազեց նրանց վրայ։ Անցորդներից ոմանք կանգնեցին զարմացած, նայեցին նրանց ու պատերի վրայով քայլող կատուները անթարթ պլզած, կանաչ աչքերով, դիտեցին փողոցը։ Մի աստղ ընկաւ անհունի խորը։

Նուբարը գլուխը մօտեցրեց Բագրատի գլխին, երեսը երեսին՝ ջանալով մթութեան մէջ նայել նրա դէմքին՝ գուշակել ճշմարտութիւնը...

— Դու ինձանից մի բան ես թաղցնում, Բագրատ...

— Ես ոչինչ չգիտեմ, ոչինչ... չեմ թաղցնում... Ես միայն...

— Դու միայն ի՞նչ... ասա՛, ասա՛...

— Ինձ միայն մայրս ասաց, որ քեզ լուր տամ...

Նուբարը թողեց նրա թեւն ու շտապ շարունակեց քայլել։

Բագրատը հազիւ էր հասնում նրա յետեւից։

Երբ քրտնած ու հեւալով հասան վերջապէս ու կանգ առան Բագրատենց տան դրան առաջ, Նուբարը բնազդմամբ ձեռքը դրաւ սրտին... Մի բոպէ երկուսն էլ անշարժացան... Բագրատը հրեց դրան փեղկը, որ աղմուկով գնաց, կպաւ ետեւի պատին։ Իջան կիսախաւար դաւիթը։ Նուբարը ձեռքը տւաւ Բագրատին, որ ուղեկցեց նրան դէպի բակ։

Փոքրիկ քարիւղի ճրագը ձեռքին, նրանց առաջ դուրս եկաւ Մարջանը։

— Ի՞նչ է պատահել, քոյր,— հեւալով հարցրեց Նուբարը, կցկտուր ու խուլ ձայնով:

Մարջանը լուռ առաջ անցաւ՝ դէպի սենեակ տանող աստիճանները լուսաւորելու համար: Նուբարը հետեւեց նրան... Երբ հասան նախասենեակ, Մարջանը յետ-յետ քաշւեց: Նուբարը հրեց կիսափակ դրան փեղկն ու այլայլած ու յուզած ընկաւ սենեակ...

Ընկաւ սենեակ ու մնաց սառած:

Այնտեղ, դորգածածկ բազմոցի վրայ, փռւել էր Տիգրանը...

Տիգրա՞նը... Մէկ ձեռքը գլխի տակ դրած, միւսը կախ, դէպի յատակը երկարած... Գունատ, նիհար, երկարած մօրուքով...

Նուբարն ամբողջ մարմնով դողալով մօտեցաւ նրան... Ահաւոր, անսպասելի մի դժբախտութեան առաջ էր զգում նա ինքն իրեն...

— Տիգրա՞ն... զաւա՞կս...

Տիգրանը վեր կացաւ, նստեց: Առանց յուզմունքի կամ ուրախութեան որեւէ նշան ցոյց տալու, նա լուռ նայեց հօրը...

— Զաւա՞կս...

Տիգրանը թոյլ տւաւ, որ հայրը փաթաթւի իր պարանոցին, համբուրէ դեղնած այտերը:

Նուբարը երկու ձեռքով բռնեց նրա գլուխը, հեռացրեց իրենից, նայեց այդ դէմքին... Տիգրանի, իր սիրասուն Տիգրանի դէմքին...— Կապոյտ ակօսներ աչքերի տակ, նիհար, վտիտ այտեր, ծածկւած առատ մազերով, սրւած քիթ ու աչքեր... աչքեր... Ի՞նչ սոսկալի անդունդ էր բացւել նրանց մէջ...Ի՞նչ լայն վիհ...անհուն, անյատակ մի վիհ...

Նա ջանաց թափանցել այդ աչքերի մէջ, ջանաց բըռնել որդու հայեացքը, բայց Տիգրանը սառն էր ու անտարբեր...

— Ասա՛, խօսի՛ր... պատմի՛ր... պատմի՛ր ինձ... Ինչպէ՞ս եկար, ո՞ւմ հետ եկար...— գրկեց կրկին, սեղմեց կրծքին ջերմօրէն, ջերմօրէն:

Տիգրանը թոյլ-թոյլ հպատակւում էր:

Աղերսագին աչքերով Նուբարը նայեց Մարջանին... Մարջանն ուսերը վեր քաշեց, ցաւագին արտայայտութեամբ նայեց իր եղբօր:

— Եկած բոպէից այսպէս է,— շշնջաց անհամարձակ:

— Չի խօսում, Մարջան, չի խօսում, որ ցաւն հասկանամ...

Մարջանը գոգնոցի ծայրով սրբեց աչքերը:

Վախեցած Նուբարը կրկին դարձաւ դէպի Տիգրանը եւ հապիւ գսպելով արցունքները սկսեց շոյել նրա խիտ մազերը, նրա չորացած ձեռքերը...

Հայր ու տղայ նստած էին կողք-կողքի, եւ մինչ Նուբարը սիրով լցւած, կարօտագին ու զարհուրած նայում էր իր զաւակին, Տիգրանը լուռ էր:

Նուբարը հանեց թաշկինակը, սրբեց քրտնած ճակատը:

— Տիգրան ջա՞ն,— կանչեց աղերսագին...

— Հայրի՛կ, սո՛ւս, սո՛ւս կաց, հայրիկ...

Նուբարի ձեռքից թաշկինակը փայր ընկաւ... Նա զարհուրած նայեց որդուն: Այդ ի՞նչ սոսկալի ձայն էր... ճաքած, դեղին ձայն...

Տիգրանի աչքերը լայն-լայն բացւել էին, ու նա վախեցած անհանդիստ հայեացքներ էր նետում դրան կողմը:

Յետոյ նա աչքերի կոպերը իրար մօտեցրեց, գլուխը

ծռեց ուսի վրայ ու վիրաւոր այծի պէս մնաց այդպէս։ Հայրը վախենում էր այլեւս դիտել նրան։

— Հայրի՛կ,— ասաց յանկարծ Տիգրանը՝ կռանալով հօր կողմը,— հայրիկ, ես մարդ եմ սպանել, դիտե՞ս...

Նուբարը յետ-յետ գնաց...

Տիգրանը ձեռքը քսեց այտին, յետոյ քաշեց դէմքի վրայի երկարած մազերը ու աչքի տակից նայեց հօրը։

Նուբարը սաստիկ յուզուած, դրկեց նրա մէջքը, փորձեց հանդստացնել, շոյել, դդւել նրան։ Յետոյ կռացաւ վրան, ջերմ-ջերմ համբուրեց մազերը, այտերը, էլի, էլի...

Բայց յանկարծ Տիգրանը ընդոստ դլուխը յետ քաշեց ու ձեռքերն ամուր կրծքին խփելով դոռաց հօր երեսին.

— Հեռու, հեռու ինձանից...

Կանգնեց... Խոշորցրեց բիբերը, սեղմեց շրթունքներն ու ջղային մի ցնցումով, դլուխը թեւերի մէջ առնելով, փուեց բազմոցին...

Տեսարանը զարհուրելի էր...

Նուբարը, ինքն իրեն կորցրած, փուեց որդու վրայ։

Դէպքը պատահել էր այսպէս։

Այդ գիշեր, ընթրիքից յետոյ, Մանին պատրաստել էր ինքնաեռն ու բաժակներն էր սրբում, թէյը լցնելու համար։ Զաւէնը դասաւորում էր նարդիի քարերը, նարդի խաղալու համար Գրիգոր Եւանդուլիչի հետ, որ սեղանի մի կողմում նստած Անուշի հետ ռուսերէն էր պարապում։

— Կրիլովի առակները պէտք է անգիր սովորես, յետոյ կ'անցնենք ուրիշ գրողների։

Անուշը լսում էր Գրիգորիյ Եւանդուլիչին, բայց աչքը չէր հեռացնում պատի ժամացոյցից... Դասը երկարում էր...

Տասներկուամեայ Անուշի համար Գրիգորիյ Եւանդուլիչը կատարեալ փորձանք էր... Նրա դէմքը ճրագի լոյսի տակ աւելի կարմիր էր երեւում, հաստ մատների եղունգներն աւելի տափակ։ Խօսելիս, Գրիգորիյ Եւանդուլիչը, կարծես շունչը չէր առնում՝ ա՛յնպէս միօրինակ, միալար էր հնչում նրա ձայնը։ Իսկ թառերը, մէկը միւսի նման, բոլորն էլ կարծես միատեսակ բովանդակութիւն ստացած, դլորւելով դուրս էին գալիս նրա չոր շրթունքներից, ընկնում էին սեղանի վրայ, դիպչում գրքերին, տետրի թերթերին եւ Անուշի մէկ ականջից մտնելով, անցնում էին վզդալով, միւս ականջից անմիջապէս դուրս փախչելու համար։ Նուբարը լսում էր Գրիգորիյ Եւանդուլիչի արդէն բազմաթիւ անգամներ լսած բացատրութիւնները։

Յանկարծ դուռը բախեցին ամուր ու երկարատեւ բախումներով...

Ամենքը իրար նայեցին։

Այդ ի՞նչ օտարոտի բախում էր... Այդպէս բախեցին դուռը, երբ Մարօն էր մեռել... Այդպէս բախեցին, երբ դաղաղադործը եկաւ Բեհեզ տատի դաղաղը չինելու համար...

Զաւէնը դաղարեցրեց իր դործը։ Անուշն անմիջապէս վեր թռաւ տեղից, վազեց դէպի պատշդամբ, այնտեղից տանիք բարձրացաւ ու կռանալով դէպի փողոց, ձայնեց.

— Ո՞վ է։

— Շուտ, հայրիկիդ ասա, թող վար իջնէ,— լսեց փողոցի մութի միջից Բագրատի ձայնը...

Անուշը յետ եկաւ:

Նուբարն անմիջապէս առաւ գլխարկն ու իջաւ փողոց...

— Ահա թէ ինչու Բագրատն այնպէս չարադուշակ կերպով էր բախում մեր դուռը,— հաղիւ արտասանեց Նուբարը, բազմոցին փռուած Տիգրանի մէջքը գրկելով ու գլուխը վրան դնելով,— եւ ճանապարհին ոչինչ չէր ուզում ասել... Ոչինչ չէր ուզում ասել...

Մարջանն աչքերը սրբելով՝ կռացաւ Նուբարի վրայ:

— Երեխան վախացել է: Վեր կաց ճարի մասին մտածենք:

Նուբարը թուլացած, թոյլ տուաւ, որ Մարջանը բռնէ նրա թեւերից ու բարձրացնէ: Նա յուսահատ նայեց Տիգրանին, որ անտարբերութեան մէջ ընկած, աչքերը յառել էր առաստաղին...

Այդ օրուանից Տիգրանն այլեւս կամաց-կամաց կորցրեց ե՛ւ իր յիշողութիւնը, ե՛ւ խօսելու ընդունակութիւնը... Դարձաւ լռակեաց, համր մէկի պէս, չճանաչեց ոչ ոքի ու գիշեր ու ցերեկ մնաց պառկած, միանգամայն անշարժ վիճակի մէջ, անտարբեր շրջապատի դուրգուրանքին ու լացին:

Բժիշկներին ու դեղերին յաջորդեցին դրբացներն ու Ֆանկիները, բայց ամեն ինչ անցաւ անօգուտ:

11

Գիշեր է, ձմրան ցուրտ մի գիշեր: Աշխարհի վրայ լռութիւն է իջած ու լսւում է կարծես ձիւնի փաթիլների վայր ընկնելու ձայնը: Երկիրը սպիտակ լոյս է ճառագայթում՝ ձիւնը պսպղում է տարածուն մի լուսաւորութիւն սփռելով իր շուրջը: Գորշ երկինքը, պճրանքի մէջ մտած երկրից սէր է աղերսում: Երկիրը, մերկ իր գեղեցկութիւնը փռած նրա շլարած աչքերի առաջ, տառն իր նազանքների հմայող թրթռումներն է ցոյց տալիս, պսպղացող փաթիլների փափուկ սաւանի տակ՝ ջերմ իր ծոցի մէջ դալիք պտուղների սերմը դուրգուրալով:

Ձիւնը քուլա-քուլա թափւում է քնած քաղաքի, կըծկւած տների վրայ: Թեւատարած ծառերի սեւ ճիւղերի վրայ, ձիւն է կանգնել ու բները տեղ-տեղ ճերմակ կաւով ծեփւած են կարծես: Ծխնելոյզներն անձայն ծխում են: Մերթ ընդ մերթ լսւում է չան հաջոց, որ ով գիտէ ինչի՞ց դրդւած, կարճ ու ողբագին ոռնում է իր բնից: Տնների դռներն ամուր փակւած են ու չկայ որեւէ լուսաւոր պատուհան փողոցի վրայ: Հատ-հատ տնկւած մենակեաց սիւների գլխին քարիւղի ճրագները, ձիւնի փաթիլներով պարդարուն, պլպլում են ու լուսաւորում նեղլիկ փողոցների ճերմակութիւնը:

« 1922 թիւ, Թաւրիզ·

« Շուրջս ամեն բան արդէն ապրած ու թառամած է,

իսկ ներսս այրում է: Ապագաս ծածկել է թանձր ու սեւ ծոցի տակ: Վախենում եմ խորտակել եւ ընդմիշտ ընկնել... Ա՜հ, միօրինակ ու միապաղաղ այս միջավայրը, ուր մեռնում է ամեն տեսնչ, մարում ամեն ձգտում »...

Քաշված սենեակի մի անկիւնը, փոքրիկ սեղանի առաջ, Վարդենին կռացել է իր յուշատետրի վրայ:

Ներսից՝ Տիգրանի սենեակի բաց դռնից, երեւում է երկար մի ճրագ, որի դեղին լոյսը, խառնուած տիրող լռութեան, անախորժ մի զգացում է մաղում հոգիների վրայ: Սենեակի խորքից բարձրացող Տիգրանի շնչառութեան ձայնը ճեղքում է թանձրացած տխրութիւնն ու գայթակղելով անցնում, մտնում է միւս սենեակը, ճանկռելու համար Մանիի սիրտը, որ ծնկները դրկած եւ կռացած նրանց վրայ, նստել է անշարժ, դրան մօտ դրուած բազմոցին ու վշտալի աչքերը յառել է դեռնի դորգի սեւ նախշին:

Գեռնի դորգի սեւ նախշը լայնանում... ուռչում է Մանիի մութ ու տխուր սրտի նման:

Անուշը նստած մօր կողքին, գլուխը քնքշութեամբ յենած նրա թեւին, խորասուզուել է իր ներաշխարհի մէջ:

Սենեակի հակառակ անկիւնում Նուրարը, մխրճուած հինաւուրց բազկաթոռի մէջ, աշխատում է ամփոփել ցրուած մտքերը: Նա մերթ ուղղում է ակնոցները, լցնում կամ բարձրացնում է ճրագի պատրոյդը, աչքերն է յառում առաստաղին ու մտածում է, անընդհատ մտածում...

Զաւէնը դարձնում է գրքի էջը.—

« Ելնելով Անորոշի ընդերքից, անհատն ինքն իրեն գտնում է անսկիզբ ու անվախճան այս աշխարհի մէջ՝ շրջապատուած ուրիշ անհամար անհատներով, որոնք բոլորն էլ իրենց ամբողջ կեանքը ուիրում են անընդհատ ճիգի ու տառապանքի...

« Աւելորդ եւ անօգուտ ճիգ ու տառապանք: Ոչինչ չի կարող լցնել ահաւոր անդունդը մեր հոգիների... Մարդը միշտ հիասթափուած, միշտ յուսահատ է... Հիասթափուած իր ձգտումներից, յուսահատուած իր յոյսերից ... Հեռուում ցցուած է շարունակ մահուան ուրուական »...

— Եւ դու արի ու տես, որ իրականի մէջ,— մտածում է Նուրարը,— որ իրականի մէջ պատահում է չեղածն ու չսպասուածը...

Նա յուզմունքից ուժեղ մի շարժում է անում, ձեռքն ամուր խփում է ճակատին, կարծես ջանալով դուրս քշել այնտեղից անվերջ ճանկռող մի միտք եւ բարձրաձայն հառաչում է:

Զաւէնն աշխատում է չլսել հօր հառաչանքները՝ խորասուզուել իր ընթերցանութեան մէջ, բայց չի կարողանում... Նա դժգոհութեամբ կիտում է յօնքերն ու ծածուկ դիտում Նուրարին:

Զաւէնը գիտէր հօր հառաչանքների պատճառը. հառկանում էր նրան... Տիգրանի անբուժելի հիւանդութիւնը շատ էր ընկճել Նուրարին... Զաւէնը գիտէր որ հայրը գոհ չէր եւ իրենից՝ Զաւէնից... Բայց ի՞նչ կարող էր անել...— Ինքը կրթուած, համալսարան աւարտած, դրականութիւն եւ փիլիսոփայութիւն ուսումնասիրած Զաւէնը, ի՞նչ կարող էր անել... Ծնողների սիրոյ համար չէ՞ր արդէն, որ ապրում էր այդ մթնոլորտում, ուր ասպարէզ չկար իրեն համար, ուր ճանճրանում էր, տխրում ու ծերանում... Նա յիշեց ինչպէս մի քանի օր առաջ, երբ գլուխն ուսերի մէջ մտցրած ու խորասուզուած մտքերի մէջ, դանդաղ քայլերով տուն էր վերադառնում երեկոյ-

եան պատոյտից, ականջին հասաւ խօսակցութեան ձայն, որ իր ետեւից էր գալիս.

— Սրան նայիր, Գարեգին, ծերացե՞լ է, ինչ է, այս խեղճ տղան:

Խօսողը թէեւ փսփսոցով էր, որ չշնչաց այս խօսքերը իր կողքից քայլողի ականջին, Զաւէնը լսեց սակայն ու նրան թւաց մի վայրկեան, որ սրտի մէջ տարիներէ ի վեր ձգուած մի լար կտրուեց յանկարծ: Նա ցնցուեց անմիջապէս, ընազդմամբ բարձրացրեց կախ ընկած գլուխը, շոկեց մէջքը, ուսերը թափահարեց ու փորձեց հպարտ, ինքնավստահ երեւալ, բայց զգաց ճշմարտութիւնն արտասանուած այդ խօսքերի ու դառը մի զգացում, որ արդէն իսկ բուն էր դրել իր մէջ, թանձրացաւ ու ձեւաւորուեց:

Այդ օրուանից Զաւէնն աւելի ջղային, աւելի բարկացկոտ էր դարձել: Ոչ մի տեղ հանգիստ չունէր, գոհ չէր, ու իր միակ ընկերը դարձել էր կարծես Շոպէնհաուէրը միայն.—

« Ներկան միշտ սեւ է ու տխուր, իսկ ապագան անորոշ է, անորոշ···

« Կեանքը, բոլոր իր հոգսերով, խաբուսիկ յոյսերով, անհամար հիասթափութիւններով, արժանի է միայն մեր զզուանքին »:

Նուբարն աչքերը փակեց: Ամենօրեայ մտքերը, սեւ ու թունաւոր ճանճերի նման, եկել բզբզալով թափուել էին գլխին ու բազմայոտ իրենց ոտքերով քրքրում էին վէրքերը նրա:

Նուբարը օր օրի վրայ ճերմակում էր: Նրա երբեմնի խրոխտ կեցուածքը վաղուց էր կորել, գլուխը քարշ էր ընկել կրծքին, մէջքը կորացել էր: Խօսելիս նա այլեւս առաջուայ պէս հաւատով լեցուն չէր արտասանում բառերը, չէր ժպտում ու չէր կատակում: Նրա ձայնը հնչում էր պղտոր ու լալկան, կարծես թէ մութ հորից էր բարձրանում··· Մութ մի հոր, ուր ընկել էր Նուբարը, հէքեաթի ջրատու այն տղայի նման, որ անապատի մէջ ծարաւ հոգիներին դոյլերով ջուր մատակարարեց, բայց որ ինքը մնաց մենակ, լքուած բոլորից, հորի յատակին, մթութեան եւ անելանելի վիճակի մէջ···

Վերից եկող մի ձայնի էր սպասում կարծես Նուբարը, հրաշք բերող մի ձայնի, որ կանչէ, որ ցոյց տայ իրեն լուսաւոր այն ուղին, որ տանում է դէպի փրկութիւն···

Տնեցիք խուսափում էին նրա հետ երկար խօսել: Առաջուայ հոգատար ու քնքոյշ Նուբարը չէր այլեւս· չէր շոյում զաւակներին, քաղցր խօսքեր չէր ասում կնոջ: Գնում էր նա Տիգրանի սենեակը, կանգնում ժամերով նրա մահճակալի մօտ, դլուխը քարշ, մատներով ոմուր մազերը շփելով, նայում էր, նայում Տիգրանի նրբացած դէմքերին, անթարթ հայեացքին, նստում էր յաճախ, ոտքը ոտքին գցած, խորասուզուում, արդէն արժէքը կորցրած ու խիստ ցաւից պաղած, մտքերի մէջ, երբեմն-երբեմն կռանում էր որդու վրայ՝ մօտիկ, շատ մօտիկ, աշխատում էր դուցէ հայրական իր շնչով սթափեցնել համրացած հոգին, կեանքի կոչել նրան եւ, ի վերջոյ աւելի ու աւելի յուսահատ դուրս էր գալիս սենեակից ու նեռւում փողոց: Գնում էր թափառելու մենակ, դատարկ փողոցների մէջ ծուարած այդ քաղաքի· գնում էր հովին, քամուն ու բաց երկնքին պատմելու անհուն վիշտն իր հայրական:

Այդ գիշեր Նոր Տարւայ գիշեր էր···

Այդ գիշեր սենեակի մէջտեղում ճերմակ սփռոցով երկար սեղան էր բացուում, լուսաւորուած խոշոր ճրագներով, հազար ու մի տեսակ բարիքով: Պատի տակ կանգնած էր պլպլակներով ու խաղալիկներով զարդարուած ծառը, վառ մոմերի դողդողացող լոյսերով ծփծփուն: Տունը

ցնծութեան մէջ էր... Դրսից, ձիւնը ճերմակ վարդի թերթեր էր թափում պատուհանների ապակիների վրայ, պատերի վրայ մոմերի լոյսերի խաղը, ստուերներ էր թրթռացնում, պատշգամբ տանող լուսամուտի լայն տախտակին, եռում էր դեղին ինքնաեռը՝ տաքուկ մի մթնոլորտ ստեղծելով իր շուրջը: Վարագոյրների դունագեղ ծալքերը ծիծաղում էին ու նրանց թերթիկները, երազի մէջ երևացած թիթեռնիկների պէս, զգացմունքից զգացմունք էին ցատկռտում:

Նուբարը նայեց շուրջը· այն անկիւնին, ուր ցցում էր ծառը, պատուհանի տախտակին, ուր եռում էր ինքնաեռը...Մանին, իր խշխշուն մետաքսէ զգեստով սահում էր նրա աչքերի առջևից, գլխի բարակ քօղը զարթ նագանքով շորորցնելով... Ու յանկարծ Նուբարի պատող հայեացքը կանգ առաւ Վարդենու վրայ... Ուժեղ մի սարսուռ անցաւ նրա ողջ մարմնով... Սարսուռ, որ վայրկենապէս պարուրեց նրան, իջաւ մինչեւ խորքը թմրած իր հոգու ու զգաստացրեց պաղած միտքը:

Վարդենին, կռացած յուշատետրի վրայ, շարունակում էր գրել: Նրա աչքերը ա՜յնպէս տխուր էին...

Ինքը մնաց այլեւս... ու ոչ մի յոյս ունալու, շարունակելու կիսատ մնացած կրթութիւնը... Թաւրիզը բանտի պէս մի բան էր դարձել նրա համար, տունը կորցրել էր իր հրապոյրը, ուր ամէն ոք քաշւել, իր հոգու թագաւորն էր իջել...

Նա կլանուել էր յուշատետրով· մերթ յուզած արագարագ շարում էր տողերն իրար ետեւից, մերթ կանգ առնում, թերթում էր հին էջերն ու խորասուզուում նրանց մէջ: Վերջին տարիներն իր մտքերն ամենից աւելի պտըտուել էին մի զգացումի շուրջ՝ դուրս գալ, գնալ, փախչել, հեռանալ... Ու նոյն միտքը տարբեր բառերով, տարբեր արտայայտութիւններով, անցնում էր կարմիր գծի պէս յուշատետրի էջերով՝ իր հոգու էջերով:

Սակայն, Վարդենու մատաղ հոգին լցուած էր եւ ուրիշ զգացմունքներով... Ամէն անգամ, երբ գրիչը կանգ էր առնում ու Վարդենին կամացուկ փակում էր աչքերը, անմիջապէս Բագրատի ստուերն էր ուրուագծւում նրա մտապատկերի մէջ... Բագրատը... Մարջան հօրաքրոջենց Բագրատը...

Երէկ իրիկուն նա մեկնել էր Թաւրիզից:

Վերջին ժամանակներում դէպքերն այնպէս արագորէն էին յաջորդում իրար... Երկու տարի առաջ ընկել էր Հայաստանի Հանրապետութիւնը եւ Հայաստանը խորհրդայնացել էր: Սահմանի այն կողմից նորէն եկել էին մարդիկ, ոգեւորւած խօսքեր ասել: Ներսէսը գրել էր, կանչել Բագրատին: Մեկնելուց առաջ նա եկել էր Վարդենու մօտ մնաս բարեւի: Նրանք միասին դուրս էին եկել փողոց ու լուռ քայլել էին առատ թափւած ձիւնի վրայով... Անցել էին փողոցից փողոց... Բագրատը խօսել էր նրան Հայաստանի մասին՝ Նոր Հայաստանի մասին, համամարդկային եղբայրութեան ու հաւասարութեան մասին... Խօսել էր ոգեւորւած, հաւատով լցւած ձայնով...

« Ես գնում եմ, Վարդենի, գնում եմ նվիրւելու հոյակապ մի գործի,— ասել էր նա,— եւ ուրախ եմ, որ գնում եմ: Գնում եմ մոռացութեան տալով ամբողջ մի կեանք՝ երիտասարդ, անպտուղ մի կեանք, որ հոսեց, անցաւ այս փոսի մէջ »...

Նրանք շարունակել էին քայլել ու մէկ էլ յանկարծ, երկար լռութիւնից յետոյ, Բագրատը բռնել էր Վարդենու ձեռքը ու սեղմել էր իր ափերի մէջ... Այդ սեղմումից Վարդենու հոգու մէջ թաղնւած մի զգացում արթնացել

էր խսկոյն... Բայց Վարդենին անմիջապէս լռեցրել էր նրան... Միտքը արթնացած զգաստութեան էր հրաւիրել... Չէ՞ որ Բագրատն իր հօրաքրոջ տղան էր... Մինչ Բագրատը երազանքի մէջ ընկած շարունակել էր.

« Ափսոս, Վարդենի, որ այստեղ անցրած կեանքիս ճանապարհի վրայ կանգնած ես եւ դու եւ պիտի խանդարես ինձ մոռանալ այս անցեալը... Պիտի խնդարես»...

Բաժանուելիս Վարդենին սեղմել էր Բագրատի ձեռքն ափսոսանքի խորը զգացումով: Բագրատի ընկերակցութիւնից զրկուելը շատ զգալի էր նրա համար. վերջին ժամանակները նրանք ա՛յնպէս մտերմացել էին իրար հետ... Բայց այժմ Վարդենու համար կար միայն մի իրողութիւն, դա իրենց տունն էր, իր ընտանիքը, որի վրայ տխրութեան քօղ էր իջել ու ճնշում էր, ճնշում իրեն...

Նուբարը շարունակում էր դիտել Վարդենուն:

Այն օրից, երբ հայր ու աղջիկ, կանգնած դէմ-դիմաց, նայել էին իրար, թափանցող, մէկը միւսի հոգին կարդացող ու ըմբռնող հայեացքով, երբ Վարդենին լացակումած թափել էր իր սրտի վրայ ծանրացածը՝ «երբ հերթն ինձ հասաւ, ամէն բան փոխուեց... Դու ինձ խոստացար ուղարկել շարունակելու իմ կրթութիւնը, դու չկատարեցիր քո խոստումը, հայրիկ» ու թաշկինակը սեղմել էր աչքերին, այդ օրից Նուբարն այլեւս երբեք եւ ոչ մի խօսք չէր լսել նրանից:

Վարդենին տխուր նայում էր ամէն երեկոյ տուն վերադարձող հօր մտահոգ դէմքին: Նրա կռացած մէջքին, փոս ընկած աչքերին, օգնում էր նրան վերարկուն հանել, առնում էր ձեռնափայտն ու գլխարկը եւ քնքշութեամբ համբուրում էր նրան:

Նուբարը գիտէր, Նուբարը հասկանում էր իր աղջկան... Բայց այդ երեկոյեան, Վարդենու քաշուած այդ

վիճակը, նրա յուզմունքով լի դէմքը, չափազանց ազդեց Նուբարի վրայ...

«Դու չկատարեցիր քո խոստումը, հայրիկ,— հնչեցին նրա ականջին Վարդենու բառերն եւ նա վերյիշեց այդ պատկերը...

Նուբարի սիրտը ճմլուեց: Նա մեղաւոր զգաց իրեն Վարդենու տխուր այդ վիճակի համար, ջանաց միաժամանակ արդարացնել իրեն,— դէպքերը, պատերազմը, դժբախտութիւնները...

« Բայց ես ի՞նչ մեղք ունեմ, ես ի՞նչ մեղք ունեմ, հայրիկ »...

Նուբարը յանկարծ ցանկութիւն զգաց գրկելու, զգուելու Վարդենուն, խոստովանելու նրան իր թուլութիւնը, իր պարտազանցութիւնը... Խոստանալու անպայման մի բան անել: Մի բան անել... Ի՞նչ անել, երբ գործերն այնպէս վատ էին գնում, երբ աշխատանք չկար:

Նա վեր կացաւ եւ դանդաղ մօտեցաւ Վարդենուն: Վարդենին գլուխը բարձրացրեց, նայեց հօրը՝ խղճացող մէկի պէս... Որքա՜ն էր փոխուել հայրիկը... Նա ակամայ թեւով ծածկեց յուշատետրի էջը: Նուբարը ձեռքը դրաւ նրա գլխին: Վարդենին բռնեց խսկոյն այդ ձեռքն ու համբուրեց ջերմութեամբ: Հայր ու աղջիկ այնպէս լաւ էին հասկանում իրար...

Նուբարը մի բոպէ կանգնեց, այնպէս, կարծես գլխի մէջ մի միտք ծագեց... Ցետոյ նշան արաւ Վարդենուն, որ վեր կենայ տեղից: Վարդենին վակեց տետրը ու մօտեցաւ նրան: Նուբարը գրկեց Վարդենուն ու կամացուկ տարաւ նրան դէպի լուսամուտը եւ, այնտեղից մատով ցոյց տալով իրենց երկրորդ բակն, ասաց.

— Ինչի՞ս է պէտք... կը ծախեմ ու քեզ եւ Անուշին...

Զաւէնը գլուխը բարձրացրեց ու հարցական նայեց հօր կողմը:

« Միշտ նոր տանջանքի դուռ է բացում էր համար, — մտածեց Զաւէնը,— ինչ տարօրինակ մարդ է... »

Վարդենին սեղմեց հօրը:

— Այո՛, կարելի է ծախել,— կրկնեց Նուբարը:

— Բայց կարելի է և՛ չծախել,— լսեց յանկարծ Զաւէնի ձայնը:

Հայր եւ աղջիկ դարձան նրա կողմը:

— Աղջիկները պէտք չունին բարձրագոյն կրթութեան,— շարունակեց Զաւէնը, այնպէս կարծես ի միջի այլոց:

Նուբարը հեռացաւ լուսամուտից ու սկսեց քայլել սենեակում:

Վարդենին շարութեամբ նայեց եղբօրը:

— Աչքերդ մի՛ յառիր վրաս,— ասաց Զաւէնը շեշտակի նայելով քրոջը,— ո՞ւմ է պէտք քո կրթութիւնը, ի զուր...

— Իսկ քո՞նը,— դոչեց յանկարծ Վարդենին ու ինքն էլ զարմացաւ իր ձայնի կոպտութեան վրայ:

Զաւէնը վեր կացաւ տեղից:

— Համարձակութիւնդ... Իսկ ի՞մը... Իսկ ե՞ս...

Նուբարը մի վայրկեան քննող հայեացքով չափեց որդուն: Այդ հայեացքը զգալի կերպով բարկացրեց Զաւէնին: Նա գիտէր, որ տան մէջ ոչ ոք այլեւս առաջուան պէս չէր յարգում իրեն, ոչ ոք իր վրայ, իր «ապագայի» վրայ հաւատ չունէր այլեւս... Նա կատաղած մի քանի քայլ առաջացաւ դէպի Վարդենին:

— Դու ինձ քի՞զ հետ ես համեմատում,— դոռաց գլուխը երկարած, Շոպէնհաուէրը ձեռքին յետ-յետ պահած:

Մանին տեղից վեր թռաւ վախեցած:

— Լռեցէք, լռեցէք, տանը հիւանդ կայ, լռեցէք ի սէր Աստծոյ... Զաւէն, որդիս...

Բայց Զաւէնն ուշադրութիւն չդարձրեց մօր վրայ: Նրա լարուած ջղերը բաց էին ընկել արդէն եւ անկարելի էր այլեւս զսպել:

— Անպէտք աղջիկ...

— Դու ես անպէտք,— դոռաց Վարդենին վիրաւորուած, չկարողանալով զսպել իրեն,—դու մինչեւ անդամ...

Բայց Զաւէնը չթողեց, որ նա վերջացնէ իր խօսքը, մօտեցաւ նրան բարկութեամբ, դունատուած դէմքով ու իրեն համար իսկ անսպասելի կերպով, կոպիտ մի շարժումով բռնեց նրա թեւից...

— Ի՞նչ ասացիր, կրկնիր հապա...

— Զաւէն, Զաւէ՛ն,— կանչեց Մանին լացակումած, նեռւելով դէպի քոյր ու եղբօր կողմը... — Տունս դարձել է կուի բուն, տունս քանդուել է... Զաւէ՛ն...

Անուշը վազեց քրոջ կողմը, ձեռքով բնազդմամբ հրեց Զաւէնին, որ հեռանայ, բայց Զաւէնը բարկացած չնայեց իսկ նրան:

— Այո՛, անպէտք ես,— կրկնեց Վարդենին դայրոյթով ու փորձեց յետ քաշել թեւը...

Եւ պատահեց այն, ինչ որ Նուբարը երբեք չէր կարող երեւակայել...

Զաւէնը դեռին նետեց ձեռքի գիրքը եւ առանց աջ ու ձախ նայելու, ուժեղ մի ապտակ իջեցրեց Վարդենու այտին...

Կարծես ողջ տունը քանդեցին Նուբարի գլխին... Նա արագութեամբ մօտեցաւ Վարդենուն, ցցեց յանկարծ երբեմնի իր փառահեղ գլուխն ու մէկ ձեռքով պաշտպանելով աղջկան, միւսով հրամայական շարժում արաւ Զաւէնին հեռանալ:

Զաւէնը մնաց անշարժ ու կոպտութեամբ դառնալով հօր կողմը, դոռաց.

— Դու հայր չես, դու քո զաւակներին դաստիարակել իսկ չես կարողացել մինչեւ այսօր:

Արհամարհանքով արտասանուած այս մեղադրանքը, անսպասելի նետի պէս դարնուեց Նուբարի սրտին...

— Չհամարձակուես դոռալ հայրիկի վրայ,— առաջ անցաւ Վարդենին,— չհամարձակուես...

Ու մինչ Զաւէնը պատրաստուում էր կրկին անակնկալ մի ելոյթի, ու մինչ Նուբարի գլուխը աստիճանաբար կրկին քարշ էր ընկնում իր կրծքին, իսկ Մանին լալիս էր, յանկարծ ներսի սենեակի դռների շէմքին, ոտքից գլուխ ճերմակ շապիկ հագած, սեւ մազերն անկարգ ճակատն ի վար թափած, խոշոր աչքերով, գունատ երեսով՝ ուրուականի պէս կանգնեց Տիգրանը...

Մի վայրկեան կարծես տիեզերքը քարացաւ, երկրագունդը պահեց իր վայրագ պտոյտն ու մարդիկ տեղն ու տեղը անշարժացան...

Լայն, խոշորցրած բիբերով, Տիգրանը կանգնեց դրան շէմքին ու նայեց բոլորին... Ոչ ոք տեղից չշարժուեց: Նուբարը ձեռքերը կախ, կուացած գլխով, իրանը մի քիչ առաջ թեքած, Մանին գլուխը բռնած ու արցունքի կաթիլները այտերին անշարժացած, Զաւէնը ձեռքը առաջ՝ դէպի Վարդենին մեկնած, դայրոյթը դէմքին քարացած, Վարդենին ու Անուշը պատին սեղմուած...

Նայում էին վախեցած, երկնքից իջած ոգու պէս անսպասելի այդ յայտնուումին:

Տիգրանը սկսեց կամաց-կամաց առաջանալ: Քայլ առ քայլ... Եկաւ, եկաւ, հասաւ սենեակի մէջտեղը, միշտ նոյն դիրքի մէջ՝ լուսնոտ մէկի պէս... Նա դարձաւ, նայեց մօրը, երկա՛ր, երկար նայեց. նայեց Նուբարին, Զաւէնին, բոլորին, բոլորին... Յետոյ դգուշութեամբ բարձրացրեց ձեռքերը դէպի վեր ու... ու առաջին անգամ լինելով չորս տարիների համբուրեան ընթացքին բացեց մոմէ շրթունքները եւ խուլ՝ մեռելային ձայնով ու դողդողացող վանկերով թոթովեց...

— Ո՞ւր է Բե-հեզ տա-տը...

Սմենքը ցնցուեցին:

Մանին ընկաւ Զաւէնի գիրկը, Վարդենին ու Անուշը աւելի սեղմուեցին պատին, կարծես ցանկանալով մի անցք բանալ նրա կարծր դանդաւածի մէջ, մի անցք, որ կլանէր, որ տանէր իրենց, հեռացնէր այդ տեսարանից... Ու յանկարծ ճերմակ մազերը երեսին թափուած, կնճիռներով ակօսուած ճակատով Նուբարը, գոյդ ձեռքերի մատներն իրար հագցնելով՝ աղաչական պահուածքով, աղերսագին աչքերով, վազեց դէպի Տիգրանը ու համարեա ընկաւ, չոգեց նրա ոտքերի տակ... փլած, խորտակուած Նուբարը...

ԵՐՐՈՐԴ ՄԱՍ

ՔԱՈՍԻ ՄԻՋԻՑ

1

Հսկայ ջրաղացքարն ահռելի արագութեամբ դառնում է։ Մարդիկ գլուխները կորցրած, բոլոր ջղերը լարած, վազում են փախչող կեանքի ետեւից...

Տարածութիւնն անթափանց է, մշուշոտ։ Քաղաքի սիրտը ճեղքող գետնայարկ գնացքը դղրդում է անընդհատ, օձապտոյտ իր մարմինը քարշ տալով, սառը լոյսերով ողողուած, խոնաւ անցքերի միջով։

Էյֆէլը հեռուում վառւում է, բորբոքւում, բռնկւում յանկարծ հրդեհի լաւանների մէջ, աստղեր բացում ու մարում եւ դագաղի ձեւով ցցւում մութի մէջ։

Առաւօտեան մութ ու լուսին, քնաթաթախ, դալկացած դէմքերով, յոգնատանջ մարմնով մարդիկ իջնում են գետնայարկ։ Խումբ-խումբ ներս են խուժում բանւորները, մի բոպէ սպասում։ Հեռուից արագ սահելով հասնում է գնացքը։ Դռներն արագօրէն բացւում են, եւ մարդիկ իրար հրելով ներս են խցկւում, կարծես մի աներեւոյթ ձեռք նրանց սեղմում իրար վրայ է գլորում։ Վագոնները լցւում են, որքան որ հնարաւոր է, շառաչով փակւում են դռները, եւ գնացքը կշտացած վիշապի պէս, ոլորւում է, վշշում ու սողալով մտնում քարէ ծանր կամարների տակ՝ իր հետ տանելով անթիւ զոհերն անկուշտ հրէշի։

Հրէշը չոքել է իր բազմաթիւ ոտքերի վրայ, երկար սեւացած ծխնելոյզներից թանձր ծուխ է արտաշնչում եւ անյաղ ու վայրի աչքերով դիտում է աշխարհը։

Ներսում, մեքենաների հսկայ մի անտառ... Անթիւ շարաններ բանւորների... Մի տեղ ձուլում են, միւս տեղ յղկում, մէկ ուրիշ տեղ ներկում ու փայլեցնում:

Դառնում են ֆրէզ-ները, տուպի-ները, մորտէզ-նե-ը, պէրսեօր-ները...

Մարդը կանգնել է խոշոր մեքենայի առջեւ: Բարձ-բացնում է ձեռքը, իջեցնում, նորից բարձրացնում է... նորից իջեցնում... Ու այդպէս անընդհատ: Ցենած միշտ աջ ոտքին, մէջքը ծռած, վիզն առաջ երկարած — այս-պէս տասը ժամ, այսպէս ամեն օր — բարձրացնում է ձեռքը, յետոյ իջեցնում: Նա պէտք է վերցնէ նեռուած տախտակը, բռնէ սուր դամին՝ պէտք է ծակէ տախտակը: Այդպէս է անում նա հարիւրերորդ, հազարերորդ անդամ, այդպէս է անում նա ամբողջ օրը, ամբողջ կեանքն իր: Նա միայն այդ է անում: Եւ մարդ-օղակներից կազ-մուած հսկայ շղթան շարժւում է, շառաչում...

Տիկ-տակ-տա՛կ, տիկ-տակ-տա՛կ:

— Էն ի՞նչ հասակ էր է՛... Էն ի՞նչ աչքեր էին անիրաւի աղջկայ աչքերը...

Տիկ-տակ-տա՛կ, տիկ-տակ-տա՛կ:

Փողոցի մութի մէջ պսպղում են հարանեւորների վառ լալաներն ու ջահերը, որոնց միջից երեւում է ինքը՝ հարսը, կանաչ կարմիր հագուստներով, վարդագոյն քո-ղով եւ երեսն ի վար, երկու կողմերից կախուած ոսկէ թելերով, փայլփլուն, պսպղուն...

— Արմաղ-չարմաղ աղջիկ...

— Թէժ թոնրի կրակ աղջիկ...

— Մի տես է, մի տես, հէնց ա արեւի կտոր:

Զուռնան նուագում է «Տարան-տարան»ը եւ օդի մէջ հրձիգներ են տրաքում...

Տրա՛ք...

Դղրդում է մեքենան, դառնում է կաչէ գօտին, պտտցնում երկաթների մէջ թաղուած խոշոր անիւը... Պէտք է շտապել. հարեւանը իր ժամանակին կը նետէ պիէս-ը, եթէ ուշանայ հերթը կը կորցնէ, շղթան կը քայ-քայւի: Երկու վայրկեանի մէջ պէտք է հասցնել: Երկու վայրկեան... Ողջ կեանքը կարելի է վերյիշել... Երկու վայրկեան... Մէկ խոշոր շունչ:

Շըրխկ... շըրխկ...

— Տեսա՞ր, Արտո, տեսա՞ր, Արտո, տեսա՞ր, Ար-տո...

Զընգ հա զընգ, զընգ հա զընգ, մէկը միւսի ետեւից հարսի բաժինքն են բերում...

— Ա՛յ ջան, ա՛յ ջան...

— Տօ, Արտո, գոյշ եղիր, մատերդ տակովը չտաս, մատերդ...

Արտօն մի վայրկեան սթափւում է:

Մեքենայի սեւ գանգուածն իր սուր ատամներն է ցոյց տալիս նրան: Կողքի հայ տղան յօնքերն է կիտում:

— Խելքդ մեքենայի վրայ պահիր, այ մարդ:

Նրանց աչքերը մի պահ հանդիպում են իրար. ջերմ զգացումը վառւում է երկուսի հոգիների մէջ: Մեքենա-ների աղմուկի միջից տխուր մի երգ իր յանկերգն է կրկնում...

Եար ունէի բոյով չինա՛ր,
Դէմքով անընման...
Եար ունէի բոյով չինար...
Եար ունէի...

— Տեսա՞ր, Արտո, տեսա՞ր, Արտո, տեսա՞ր, Ար-տո...

◆

— Մօտեցէք, մօտեցէք, պարոններ եւ տիկիններ, մի՛ վարանէք, պարոններ եւ տիկիններ։ Դուք չգիտէք, թէ ինչի՞ց է յաճախ առաջ գալիս ընտանեկան ողբերգութիւնը։ Բայց եթէ դուք կարողանաք առերես մանր երեւացող ձեր ամեն մի կարիքի մասին ժամանակին մտածել...այո՛ պարոններ եւ տիկիններ, պէտք է լրջօրէն մտածել։ Մի՛ նայէք այդպէս՝ տարակուսանք արտայայտող աչքերով։ Ես վաճառում եմ կօշիկի ներկ, «Լա Լիւն» մարկը։ Ուշադրութիւն։ «Լա Լիւն» եւ ոչ թէ ուրիշ յայտնի կամ անյայտ մարկ։ Կօշիկի ներկը, պարոններ եւ տիկիններ, մէկն է ոչինչ կարծուած մանր այն անհրաժեշտութիւններից, որ պատճառ է դառնում ընտանեկան անհաճոյ խօսակցութիւնների, ընտանեկան անհամաձայնութեան, ընտանեկան ողբերգութեան։ Ահա ձեր ամուսինը յոգնած տուն է վերադարձել ու ցանկանում է մաքրել իր կօշիկները։ Նա վերցնում է ներկը, քսում է կօշիկներին ու փորձում է փայլեցնել... Շփում է, շփում... Կօշիկը չի փայլում, սակայն։ Ներկը վատն է, «Լա Լիւն» չէ։ Զղայնանում է ձեր սիրելի, ձեր շատ սիրելի ամուսինը, դոռում է, գոյրանում... Այո՛, մտածեցէք, սիրելի տիկիններ, մտածեցէք միայն...

— Հինդ Ֆրանկ, հինդ Ֆրանկ, հինդ Ֆրանք, հինդ Ֆրանկ... Մէկը, երկուսը, երեքը, ահա ձեզ չորսը... Զորս հատ դեղեցիկ փողկապ... Մարդասիրական տեսակէտից եմ մօտենում ես այսօրուայ վաճառքին... Հինդ Ֆրանկ... հինդ Ֆրանկ... հինդ Ֆրանկ...

Փարիզ։

«Իտալի» հրապարակի տօնավաճառն է։

Ժողովուրդը թափւել է փողոց։ Հրապարակը լցւել

է բազմութեամբ։ Աջից ու ձախից լսւում են մեքենայ նւագարանների ձայներ, պտտւում են կառուսելները, բարձրանում դառնում են սաւառնակները։ Ճօճանակներից լսւում են կանացի ճիչեր։ Էլեքտրականացած տախտակամածի վրայ դղրդում են ինքնաշարժեր։

Թւակալած դունաւոր անիւները դառնում են անդադար՝ խոստանալով շահողին մի չիշ դինի կամ շամպայն, մի քիլօ շաքար կամ մի տուփ շօկօլատ։ Ոմանք ոյժը չափող գնդակներ են նետում, ուրիշները երկար հեռադիտակներով լուսինն են դիտում։ Մարդիկ դառնում են կառուսելների պէս, քրքջում են, գոռգոռում...

Շրջապատի աղմուկին անտարբեր, Արտօն հանդարտօրէն անցնում է տօնավաճառի միջով։ Կարծես ոչինչ չկայ՝ ոչ ծիծաղ ու երգ, ոչ քրքիջ ու ճիչ։ Լուռ, գլուխը կախ անցնում է նա ուրիշ մոլորակից ընկած մէկի պէս, աչքերը մերթ այս, մերթ այն կողմը նետելով։

— Մէկ Ֆրանկ, մէկ Ֆրանկ, մէկ Ֆրանկ... Մարինան ցուցադրւած է եւրոպական բոլոր քաղաքներում։ Դարվինի օրէնքի ցայտուն ապացոյցն է նա... Կէս կին, կէս կապիկ...

— Այս կողմ, սիրելի ժողովուրդ, այս կողմ համեցէք։ Այստեղ է գտնւում Մարսի բնակչուհին՝ Մարսից ընկած աղջիկը,— երկար խողովակը բերանին դրած կանչում է խոշոր մի մարդ։— Ողջ է, բայց շղթայւած է... Մտէք, զարմացէք։

Մի ուրիշ տեղ մանկամարդ մի աղջիկ է կանգնած, երեսին փոքրիկ դիմակ, վրան՝ սեւ ծածկոց։

— Գեղեցիկ է Վենիւսի նման,— խօսում է խռպոտ ձայնով, ուռած դէմքով մէկը,— ով ներս մտնէ մերկ պէտք է տեսնէ նրան, բոլորովին մերկ... Եւ նա մենակ

չէ··· Մա՛ք, պարոններ եւ տիկիններ··· Այս ոչ այլ ինչ է, եթէ ոչ գեղեցկութեան ցուցադրութիւն՝ արուեստ։

Սեւ դիմակի տակից կարմիր շրթունքները ջղային շարժումներ են անում։ Մինչ երկաթեայ վանդակների միջից երեւում են երկու երիտասարդներ, սեւացած մարմիններով, գլուխները փետուրներով զարդարուած, մերկ ու նիհար···

«Վայրենիներ են»···

Նրանք անդադար դոռում են, վայրի շարժումներ են անում, սպառնում են յարձակուել ժողովրդի վրայ, շիկացած երկաթի ծայրն են բարձրացնում, քսում են արդէն բորբոքուած եւ ուռած լեզուներին···

Ժողովուրդը լուռ դիտում է։

Ամեն մարդ պէտք է իր ապրուստը շահէ։

Ու դառնում են կարուսելները, ճչում են կանայք, աղմկում են նուագարանները, դղրդում են էլեքտրական կառքերը։

Տօն է։

— Մամա, թաբլիէս ուզում եմ արա։

— Ամա՛ն, ձդէ, տղաս, ձդէ՛ նայիմ··· Տասնըչորս, տասնըհինգ, տասնըվեց։

— Մամա, ես կայիէս կորցրել եմ, ինձի սու տուր՝ նորը աշըքէ ընեմ։

— Աղջի Շուշա՜ն···

Շուշանը հագուստների հաշիւը թողած ու որդու վրայ բարկացած մի հայեացք նետելով՝ գլուխը բաց լուսամուտից դուրս է հանում։

— Ի՞նչ կայ, Սիրանոյշ։

— Նոր ֆոնֆէֆսիոն բերած եմ, կ՝ուզես նէ եկ առ։

Շուշանը գլխով հաւանութեան նշան է անում։

Ու յանկարծ բոլոր լուսամուտներից կանացի գլուխներ են դուրս նայում։

— Մեզի ֆոնֆէֆսիոն չկա՞յ։

— Կայ, կայ, ամենքիդ ալ կայ։ Քիչիկ մը համբերէք, որ գատեմ։

Գլուխները ներս են քաշւում, եւ տունը նորից լցւում է կարի մեքենաների միօրինակ ձայնով։

Բոլոր յարկերի վրայ, բոլոր լուսամուտների առաջ, հայ կանայք, մէկ-մէկ հատ մեքենայ դրած՝ կարում են։

Ոլորապտոյտ աստիճաններ, որ բարձրանում են բակի ճիշտ մէջտեղից, տարօրինակ տեսք են տալիս նրան։

Բակը, որ հաղուագիւտ մի երեւոյթ է Փարիզի մէջ, ունի երկու ծառ, որոնց ճիւղերը շոյում են մի կողմից տան լուսամուտները, միւս կողմից կողքի պատի նեղ պատշգամբը։ Շէնքը չորս կողմից շրջապատել է նրան ու լուսամուտէ իր աչքերը դամել է փողոցի մուտքին։

— Սեղրակն եկաւ···

— Մեխակը գնաց···

— Մնացականը գործ բերաւ···

Շուշանի սենեակը պանդոկի բնակիչների կենտրոնավայրն էր։ Այդտեղ էին գործերը բաժանում, այդտեղ էին հաւաքւում բոլորը՝ իրենց վիշտը եւ ուրախութիւնը պատմելու, իրար նոր լուրեր հաղորդելու, հինը քրքրելու։

Փոքրիկ քառակուսի մի սենեակ էր այդ, որի մէջ զարմանք պատճառող կանոնաւորութեամբ տեղաւորուած էին տախտակէ մահճակալներ, կարի մեքենաներ, սեղան, աթոռ եւ հազար ու մի տեսակ մանր-մունր իրեր։ Պատերը զարդարուած էին բազմաթիւ մեծ ու փոքր լուսանկար-

ներով,— երեխաներ, երիտասարդ տղաներ, մանկամարդ աղջիկներ:

— Ամ կորսուած եղբօրս թոռն է· ամ մէկը հօրաքրոջս աղջկայ քեռայրին եղբայրն է· ամ պստիկն իր մանչն է, միւսը աքսորի ճամբին սպաննուած հօրաքրոջս անդրանիկ տղայի դաւակն է,— բացատրում էր ամեն անգամ Շուշանը, երբ մէկն ու մէկը մօտենում էր պատերին ու դիտում լուսանկարները:

— Ամենքդ միասի՞ն կ'ապրիք:

— Ամենքս միասին:

— Մամա, քաբլիէս, մամա, կայիէս...

Շաբաթ երեկոյ էր:

Արտօն հանդարտաքայլ ներս էր մտնում բակ: Պանդոկի բնակիչներն արդէն սկսել էին ուրախանալ: Վարի յարկից լսւում էր բանժոյի միօրինակ նւադը: Մէկը վերի լուսամուտին կրթնած՝ « Հէյ ջան սարեր » էր երգում: Մէկ ուրիշն իր սենեակից ձայնակցում էր նրան: Երիտասարդ աղջիկներ դրամաֆոնի վրայ պարի եղանակներ էին նւադում: Ուրիշ մի տեղից տաճկական երգի ձայն էր դալիս:

Արտօի դէմքի վրայ քաղցր մի ժպիտ խաղաց: Նա կանգնեց մի բոպէ՝ լսելու համար տարբեր կողմերից եկող տարբեր այդ ձայները եւ առանց ուշադրութիւն դարձնելու լուսամուտներից դէպի բակ կռացած բազմաթիւ գլուխների վրայ, մտաւ նախադաւիթ:

Կիսախաւար աստիճաններից Արտօն սկսեց բարձրանալ դէպի վերցերորդ յարկի իր սենեակը, բայց հազիւ մի քանի յարկ բարձրացած, դդաց յանկարծ, որ մէկը շտապ՝ համարեա վազելով բարձրանում էր իր ետեւից: Արտօն ակամայ յետ-յետ դնաց... Աստիճանների կիսախաւարի մէջ նա ճանաչեց խոկոյն նրբակազմ այն աղջկան

եւ հէնց այն էր՝ ժպիտը դէմքին ուղում էր բարեւել... Բայց աղջիկը, առանց ուշադրութիւն դարձնելու Արտօի վրայ, առաջ անցաւ ու արագօրէն բանալով իրենց բնակարանի դուռը՝ ներս մտաւ ու անյայտացաւ:

Աղջկայ ետեւից դուռն աղմուկով փակւեց: Փոքրիկ մի այցետոմս դուրս թռաւ տեղից ու պտտւելով ընկաւ յատակի վրայ:

Արտօն մի պահ զարմացած կանգնեց, ձեռքով երեսը շփեց, յետոյ մօտեցաւ, վերցրեց գետնին ընկած այցետոմսն ու խնամքով ամրացրեց դրան վրայ՝

«Տիկին Սաթենիկ Դաւիթ»:

Արտօն չգիտէր սակայն, թէ ովքեր էին դտնւում այդ պահին տիկին Սաթենիկի մօտ:

Երջանիկ օր էր այդ օրն Արտօի համար:

Շաբաթ էր:

Արտօն կարող էր հանդարտութեամբ հանւել, պառկել իր մահճակալի վրայ, դուռը ներսից փակել ու անձնատուր լինել իր երազներին: Այդ օրը նա կարող էր երազել, ինչքան որ ցանկանար: Առաւօտեան զարթուցիկի դիլ ճչոցը չպէտք է ցնցէր իրեն:

Նա ներս մտաւ սենեակ, վառեց լոյսը: Իր հաւատարիմ ընկերն այնտեղ էր դարձեալ՝ սենեակում էր:

Նա նստեց մահճակալին ու ժպտալով աչքերը յառեց այդ «ընկերոջ» վրայ: Ի՞նչ վառ էին նրա թելերի գոյները, կարծես նոր քաղւած ծաղիկների ալւան-չալւան փնջեր լինէին:

Ա՜հ, իր այդ հարազատ բարեկամը, իր սրտի ու մտքի գաղտնիքների, տենչերի ու յոյզերի միակ ընկերը... — Իր խուրջինը:

Ի՞նչ օրեր էին տեսել նրանք երկուսով միասին, մերթ

բաց դաշտի մէջ, մերթ սարերի լանջին, քարերի վրայ։ Միասին էին ուրախացել, միասին լացել...

Արեւելքի հոտն էր բուրում նրանից։ Արեւի վառման շողերը դեռ թրթռում էին նրա նախշերի վրայ... Նշաձեւ ծաղկաւոր այդ նախշերը, խաս թելերից հիւսուած՝ կարմիր, կանաչ, դեղին, սպիտակ...

Ու մինչ յոգնած իր ուղեղի մէջ անընդհատ կրկնւում էր գործարանի մեքենաների աղմուկը, իսկ աչ ոտքը միեւնոյն դիրքի մէջ պահելուց թմրել ու ցաւում էր, հաւատարիմ այդ «ընկերը» իր անկիւնից ժպտում էր նրան, ու Արտօն մտովին վերյիշում էր նրա խորքում թաղնուած զանազան ու դարմանազան կախարդանքների մասին...

2

Ճիշտ նոյն օրն էր։

Թղթի մի կտոր ձեռքի մէջ ամուր պահած՝ Վարդենին ու Անուշն անցնում էին փողոցից փողոց։

Նուբարը կատարել էր իր խոստումը։— Վարդենին ու Անուշը եկել էին Եւրոպա։

«Թող գնան,— մտածել էր Նուբարը,— աշխարհ կը տեսնեն, քաղաքակիրթ մարդկանց հետ կը շփւեն, լեզուն կը կատարելագործեն։ Եթէ որեւէ դիպլոմ իսկ չստանան, դարձեալ շատ բան կը սովորեն ու իրենց ապագան կը հարթեն»։

Եւ գարնանը, իրենց նման մի խումբ երիտասարդների հետ միասին, Վարդենին ու Անուշը ճամբայ էին ընկել դէպի Եւրոպա։

Անուշն արդէն մեծացել՝ հասուն աղջիկ էր դարձել։ Իր աչքերի կրակոտ արտայայտութեան վրայ աւելացել էր այժմ լրջութեան ու խմաստութեան դեղեցկութիւնը։ Եւ այժմ, մայրաքաղաքի լայն փողոցներով, քայլում էր նա, երիտասարդի իր հասունութեամբ, որի հոգու դռները բաց էին այլեւս կեանքի առաջ։

Փարիզ գալու առաջին օրերն էին։

Փարիզը խառն ի խուռը շարժանկար էր... այնպէս, ինչպէս է նա ամեն նորեկի համար, որ չի կարողանում մէկ անգամից ընտելանալ նրա սոսկալի թոհ ու բոհին։

— Փողոցի մինչեւ ծայրը բարձրացէք, յետոյ ծուէք աջ, յետոյ ձախ,— բացատրում էին նրանց անընդհատ:

Եւ նրանք գնում էին մոլորուածի պէս:

Գնում էին, գնում, կանգնում էին պատուող կարուսելների, թռչող սաւառնակների առաջ, լսում հետաքրքրութեամբ այս ու այն կողմից եկող ձայներն ու աղաղակները, եւ մարդիկ նրանց հրում էին, մարդիկ նրանց գլորում էին:

Նրանք այնպէ՞ս յոգնել էին, իսկ հրապարակը այնքա՞ն մեծ էր: Կանգնում էին, դիտում զարմացած: Զէ՞ որ Եւրոպա էին գտնւում... Եւ, սակայն, վայրագ ու կատաղի էր թւում նրանց այդ բոլորը:

Ուրիշ մի մոլորակ էր այս, ուրիշ տեմպ, ուրիշ զարկ, խորթ, անհարազատ, որ թափում էր նրանց վրայ կարծես մոխրագոյն մի փոշի: Պաղ աչքերով, չփոթուած մըտքով նայում էին նրանք իրենց շուրջը, շտապ շարժուող մարդկանց, եւ անխուսափելի հարցեր մէկը միւսի ետեւից ծնւում էին նրանց ուղեղի մէջ.— ո՞վ եմ ես, ո՞ւր եմ եկել, ի՞նչ եմ փնտռում... Ու իբր պատասխան նրանք լսում էին զիլ ձայնը երկար այն շեփորի, որ հրաւիրում էր տեսնել Մարսից ընկած աղջկան: Իբր պատասխան նայում էին գիտունի արտայայտութիւն ունեցող մարդուն, որ հատիկ-հատիկ բացատրում էր Մարինայի կէս կին, կէս կապիկ լինելու հրաշքը:

Ամեն բան այնպէ՞ս մշուշապատ էր ու այնպէս պըղտոր:

Գոնէ, չո՛ւտ տեղ հասնէին:

— Նախ՝ դէպի աջ, յետոյ՝ դէպի ձախ...

Նրանք անցել էին արդէն հրապարակի վրայ բացուած ծառուղին ու մտել նեղ փողոցների մէջ: Լայն ծառագարդ պողոտաների կողքին՝ Փարիզի մէջ այդպիսի նեղ փողոցներ... Ծխից սեւացած պատերով երբեմն վրայ կուտակուած տներ... բաղմաթիւ փակ լուսամուտներ, որոնք այնպիսի տխուր տպաւորութիւն էին թողնում...

Վարի յարկերում դետեղուած էին խանութներ, սըրճարաններ, սրճարաններ ու սրճարաններ: Հսկայ տների կողքին՝ տեղ-տեղ քանդուած շէնքեր կային, շրջապատուած ցանկապատերով ու յետոյ կրկին՝ նեղ փողոցներ ու կրկին սրճարաններ:

Անսովոր ինքնաշարժերի եւ ելեքտրաքարշերի դարհուրելի հոսանքին, անսովոր մարդկանց խումբ ի խումբ գրոհին, Վարդենին ու Անուշը շարունակում էին քայլել:

Բաւական քայլելուց, ուրիշներին անվերջ ճանապարհ դիջելուց, մեղաւոր ժպիտով ամեն կողմ «ներողութիւն» շռայլելուց յետոյ, նրանք վերջապէս հասան «աջ կողմի չորրորդ փողոցը» եւ կանգ առան անկիւնի տան առաջ՝

— Hôtel Ortolan.

Կարդաց Վարդենին դրան ճակատին:

— Վար նայէ, աղջի, վար նայէ, ան ովքե՞ր են...

— Հայ ըլլալու են:

— Հայ են, հայ են, մարդ կը փնտռեն:

Բակի մէջ կանգնած էին Վարդենին ու Անուշը եւ աջ ու ձախ էին նայում:

— Տիկին Սաթենիկն այստե՞ղ է բնակւում,— հարցրեց Վարդենին Ֆրանսերէն լեզուով:

— Որո՞ւն կը հարցնես, եաւրում,— ձայնեց մէկը վերից:

Վարդենին առաջացաւ դէպի լուսամուտը եւ գլուխը վեր բարձրացրեց:

— Տիկին Սաթենի՞կը, պարսկաստանցի՞ն։ Հա, հոս է, հոս, աղջիկս։

Վարդենին այս անգամ գլուխը դարձրեց հակառակ կողմը եւ տեսաւ, որ բակի չորս բոլորը գտնուած լուսամուտներից բազմաթիւ գլուխներ կռացել՝ իրենց են նայում...

Բայց մինչ այս, մինչ այն՝ Շուշանն արդէն բակումն էր։

— Եկէք, եկէք ես ձեզի իրեն քովը տանիմ,— տիկին Սաթենիկը հոս է, մերին հարեւանն է։ Եկէք, իմ եռեւէն եկէք։

3

Տարիներ էին անցել։

Աննկատելի արագութեամբ գլորւել էր ժամանակը։ Ժամանակը, որ ա՛յնպէս անգթօրէն վայրագ իր հոսանքի մէջ առնում տանում է ամեն ինչ, որ չունի ոչ չափ, ոչ կշիռ, որ արհամարհում է մարդկային բոլոր ճիգերը եւ ամեն բան անհասկանալիին հասցնելու տենդով բռնուած՝ հոսում է, հոսում...

Ութ տարի էր արդէն, որ տիկին Սաթենիկը Եւրոպա էր։

Ո՛ւթ տարի...

Պատերազմի տարիներն ապրել էր նա Նիսում, իր աղջկայ՝ Նորայի հետ միասին եւ այժմ մէկ տարի էր միայն, որ տեղափոխուել էր Փարիզ։

Բժիշկ Դաւթի մահից յետոյ, տիկին Սաթենիկը վճռել էր այլեւս Թաւրիզ չվերադառնալ եւ Մարգարիտի հետ միասին տեղաւորուել էր Հօթէլ Օրթոլանի մէջ։

Այն ժամանակ, երբ Վարդենին ու Անուշը մտան բակ, տիկին Սաթենիկը նստած էր իր բնակարանի լուսամուտի առաջ, որ բացւում էր փողոցի վրայ եւ կռացած ծնկներին վուռած դորշ մի շրջագգեստի վրայ, արագարագ քաշում էր ասեղը, մերթ ընդ մերթ անհամբեր մի հայեացք ձգելով փողոցի կողմը։

Տարիները փոխել էին տիկին Սաթենիկին։ Նրա եր-

բեմնի խրոխտ կեցուածքը խոպոռ անյայտացել էր։ Աչքերի մէջ երեւում էր ինչ որ յուսախաբութիւն, ինչ որ վախ, որ առաջ է գալիս, երբ մարդ անմիջական չփման մէջ է մտնում կեանքի հետ։ Նրա խոշոր կազմուածքն այլեւս նախկին ինքնավստահութիւնը չէր ներշնչում։ Իր ձեւերը նոյնպէս փոխուել էին՝ աւելի զգոյշ, համակերպւող մարդու ձեւեր էին դարձել... Սեւ, երկար շրջազգեստը, որ իջնում էր մինչեւ ոտքերը, աւելի երկար էր երեւցնում նրա հասակը։ Թեւերը զարդարուած էին սեւ ժանեակներով, գօտին սեղմուած էր հին ձեւի սեղմիրանով, որ բարձրանում էր մինչեւ կուրծքը։ Գլխի կենտրոնում հաւաքուած մազերի գունդը չկար այլեւս. տիկին Սաթենիկի մազերը կտրուած էին «ա լա գարսօն»...

Արագ արագ սահում էր ասեղը ծնկներին փռուած զորշ շրջազգեստի վրայով, մինչ ինքը ցածրաձայն խօսում էր աթոռի մօտ կծկուած ծեր իր շնիկի հետ։

— Տեսա՞ր, Fifi, tu as vus Fifi... ասաց, որ ընկերուհու մօտ է գնում, ընկերուհու մօտ... Հը՞, Fifi...

Տիկին Սաթենիկը շտապում էր։ Պէտք էր ձեռքի կարը շուտ վերջացնել, յանձնել Շուշանին, յետոյ սկսել միւս շրջազգեստը...

Վերջնականապէս Եւրոպա հաստատուելու իր վճռից յետոյ, տիկին Սաթենիկը կարգադրել էր ծախել Թաւրիզի իր տունն ու պարտէզն ու Մարգարտի հետ տեղափոխուելով Փարիզ՝ իր ապրուստը շահում էր կարով։

«Այս քաղաքը մեծ է, մեզ ոչ ոք չի ճանաչում, իսկ այնտեղ, իմ ծննդավայրում, ո՞վ կարող է իմանալ, որ մադամ Սաթենիկը Փարիզ նստած կար է անում»,— մտածում էր տիկին Սաթենիկը։

Այս հարցում սակայն, տիկին Սաթենիկը չարաչար

սխալւում էր։ Նրա հեռու ծննդավայրում ապրող տիկին Հռոմն ամեն բան գիտէր...

— Несчастное созданье, — ասում էր տիկին Հռոմն իր բարեկամներին, — ուղղակի դժբախտ... Ամբողջ օրը մայր ու աղջիկ կար են կարում... Էն խեղճ մարդու գլուխն էլ այստեղ կերան... Ես ոչինչ չունեմ, ի հարկէ, ես ոչինչ չունեմ. լաւ է Փարիզ ապրելը։ Բայց ապրես, եւ ոչ թէ, ամօթ է ասել, նահատակւես։

Բայց այս լուրերի մասին ինքը՝ տիկին Սաթենիկը որեւէ տեղեկութիւն չունէր ու չարունակում էր հանգիստ սրտով իր գործն անել։

Ամրացնելով հագուստի վերջին կոճակը՝ տիկին Սաթենիկը նորից անհամբեր մի հայեացք է նետում փողոցի կողմը։

Մարգարիտն ուշանում էր։ Ու թէեւ նա ասել էր, որ ընկերուհու մօտ է գնում, տիկին Սաթենիկը սակայն ներքին մի կասկած ունէր իր սրտում... Եւ այդ էր պատճառը, որ նրա անհամբերութիւնը կամաց-կամաց փոխւում էր ջղայնութեան։

— Խենթ աղջիկ... Երեւի դարձեալ այն անպիտան նկարչի...

Ու յանկարծ աստիճանների վրայ աղմուկ...

Շուշանը փակ դրան ետեւից ձայն էր տալիս արդէն։

Ի՞նչ էր, ո՞վ էր...

4

Տիկին Սաթենիկը հազիւ ժամանակ ունեցաւ սեղանատնից քաշել՝ դուրս տանել կարի մեքենան։ Շտապ հաւաքեց բոլոր կարերը, սեղանի վրայից ասեղ, մկրատ ու մատնոց վայրկենապէս անհետացան, եւ նա վերջապէս ընդառաջ ելաւ իր հիւրերին.

— Tiens, bonjour, tiens, բարեւ··· դուք որտե՞ղ, Փարիզը որտեղ··· étudiantes...regardez moi ça...

Ու տիկին Սաթենիկը կռացաւ վերջապէս եւ ուշացած երկու համբոյր դրոշմեց, ինքնաբերաբար իրեն դէմ տըրուած, Վարդենու եւ Անուշի գոյգ այտերին։ Բայց Վարդենին ու Անուշը չփոթութեան մէջ էին ընկել արդէն···

Վարդենին ժպտաց, ինչ որ բաներ ասաց, նայեց տիկին Սաթենիկի կտրած մազերին, թեւերի ժանեակներին, աչքերը երբեք չկարողանալով պահել նրա աչքերի մէջ, յետոյ կրկին ժպտաց եւ դրաւելով առաջին պատահած աթոռը խոպան լռեց։

Անուշը լուռ հետեւեց քրոջ օրինակին։

Լռեց եւ ինքը՝ տիկին Սաթենիկը։

Քննող, գննող հայեացքով նա սկսեց ոտքից գլուխ չափել նախ Վարդենուն, յետոյ Անուշին···

Իսկ Վարդենին ու Անուշը սառել էին մնացել։

Այնպէ՛ս անհամբերութեամբ էին սպասում նրանք այդ հանդիպումին··· Օտար քաղաքի մէջ երբեմնի բարեկամուհու տեսութեան··· Տիկին Սաթենիկի ընդունելութիւնը սակայն փոխել էր նրանց զգացմունքները։

Անուշը չգիտէր ի՞նչ անել· զարմացած, շւարած նայում էր իր շուրջը··· Ու մինչ տիկին Սաթենիկը, ջանալով բարձր պահել իր գլուխը, դանդաղօրէն գննում էր նրանց, Վարդենու յիշողութեան մէջ կրկին ու կրկին կենդանի կերպով վերարտադրւում էր Թաւրիզը··· Տիկին Սաթենիկի կեանքն այնտեղ··· Իր հայրը՝ Նուբարը··· Ու ահա, ահա իրենց մեկնումի օրը, վերջին այն օրը, Նուբարի խօսքերը···

Լայն քարւանսարայի քարքարոտ բակումն էին։ Կառապանները ձիերն էին լծում· ամենքը սպասում էին յուզւած··· Ինքը կանգնած էր մայրիկի կողքին ու հարիւրերորդ անգամ լինելով հաշւում էր նրա հագուստի մանրիկ կոճակները, որոնք վերից վար կոճկում էին սեւ շրջազգեստի կուրծքը։ Ա՛հ, մայրիկն այնպէս տխուր, տխուր էր այդ օրը··· Իրենց մեկնումը, անշուշտ, յիշեցնում էր նրան Տիգրանին, նրա մեկնումի օրը··· Ի՞նչ յոյսերով էին լցւած ծնողական սրտերն այդ օրը··· իսկ հիմա՞· Տիգրանը մնացել է տանը, գամւած իր անկողնուն։

Մեկնումի օրը Վարդենին վերջին անգամ այցելել էր նրան, կռացել համբուրել էր նրա գունատ ճակատը, մոմէ այտերը, լացակումած չոյել էր նրա գեղեցիկ գլուխը, առատ մազերը···

— Գնում եմ, Տիգրան ջան,— ասել էր։

Բայց Տիգրանը լայն լայն բացած իր աչքերով նայել էր նրան անտարբեր ու անտարբեր եւ ոչինչ չէր պատասխանել։

— Մայրիկ ջան, մի՛ մտածիր,— Վարդենին շոյում էր մօր ձեռքերը,— մի՛ մտածիր, մայրիկ ջան···

— Շուտ նամակ կը գրես,— պատասխանում է Մանին, աշխատելով սառնասիրտ երեւալ:

Ու մինչ Վարդենին խոստումներ է անում, իսկ Մանին լսում է նրան ու չոյում իրեն փարած Անուշի գլուխը, նրանց մօտենում է Նուբարը:

Վարդենին դարմացած նայում է հօրը... Հայրիկն այդ օրը այնպէ՛ս հպարտ երեւոյթ ունէր... Նրա կռացած մէջքը շտկւել էր կարծես, աչքերի մէջ հաւատի, յոյսի եւ լաւատեսութեան կայծեր էին փայլում:

Թողնելով Մանիին Անուշի կողքին, հայր ու աղջիկ թեւ թեւի սկսում են քայլել բակի երկարութեամբ:

— Անցածն անցած է, գաւակս,— ասում է Նուբարը հաստատուն ձայնով,— պէտք չէ յուսահատւել: Ամեն բանի պատճառը պատերազմն էր եւ, սակայն, այժմ խաղաղ է աշխարհը: Գնա, աղջիկս, գնա՛ կրթւիր: Ես չեմ ուզում, որ քո մէջ կիսատ մնայ այդ տենչը: Կրթութիւնը բարձրացնում է մարդու հոգին: Աշխատեցէք երկուսդ էլ լաւ օգտւել Եւրոպայից:

Ու յետոյ հայրիկը հեռացնում է նրան, տանում բակի հեռաւոր մի անկիւն: Այնտեղ, քարի վրայ նստած, մի փոքր յուզւած, բայց ինքն իրեն իշխելով, Նուբարը շարունակում է.

— Մեր ընտանիքն իր զոհն տւաւ, Վարդենի...Մենք կորցրինք Տիգրանին... — նա գրկում է Վարդենուն ու այլեւս չկարողանալով զսպել իրեն՝ շշնջում է նրա ականջին.— Կորցրինք մենք Տիգրանին, Վարդենի, բայց պէտք է մտածել Զաւէնի մասին:

Վարդենին սեղմւում է հօր կրծքին:

— Այո, գաւակս, պէտք է մտածել Զաւէնի մասին: Նա քո եղբայրն է, եւ դու պէտք է անես այդ նրա համար:

Վարդենին տարակուսանքով նայում է հօրը: Նուբարը շարունակում է.

— Եղաւ, պատահեց... Նատան օտար էր... Հասկանալի է... Նատան մեղք չունի... Բայց Զաւէնի հոգու համար... Այդպէս եղաւ: Անցածն անցած է, բայց դեռ ապագայ կայ մեր առաջ: Ես գիտեմ, որ տիկին Սաթենիկը...

Եւ Նուբարը պատմել էր Վարդենուն իր եւ տիկին Սաթենիկի երբեմնի երջանիկ ծրագրի մասին՝ Մարգարտին եւ Զաւէնին իրար հետ ամուսնացնելու ցանկութեան մասին, որ հակառակ իր կամքին, այնպէ՛ս անյաջողութեան էր մատնւել...

— Տիկին Սաթենիկը վիրաւորւել էր... Իրաւունք ունէր... Ես նրա առաջ, մանաւանդ Մարգարտի առաջ շատ մեղաւոր եմ, Վարդենի... Այդ պատճառով անձամբ գրել չեմ կարող ու մանաւանդ այսքան տարիներ յետոյ... Բայց ես գիտեմ, որ Մարգարիտը դեռ չէ ամուսնացել... Այժմ նրանք Փարիզ են, եւ դու անձամբ նրանց տեսութեան պիտի գնաս, աղջիկս... Գնա, փորձի՛ր առանձին խօսել իրեն, Մարգարտի հետ, փորձիր համոզել նրան... Ես գիտեմ, որ նրա սիրտը կոտրւեց այն օրից, երբ Զաւէնն ուրիշի հետ ամուսնացած վերադարձաւ: Եւ այդ է պատճառը, որ մինչեւ հիմա նա չի ամուսնացել: Բայց դու ասա իրեն, բացատրիր... Ինքդ լաւ ես հասկանում, թէ ի՞նչ պէտք է ասել... Միայն աշխատիր համոզել: Եւ այն ժամանակ ես նամակ կը գրեմ տիկին Սաթենիկին, ներողութիւն կը խնդրեմ նրանից եւ Զաւէնը կը դայ Փարիզ... Բայց գլխաւորը նախ՝ ինքը Մարգարիտն է:

Եւ Նուբարը տւել էր Վարդենուն տիկին Սաթենիկի հասցէն:

Վարդենին ակամայ աչքերը պտտցրեց սենեակի

չորս բոլորը, նայեց դռներին... Մարգարիտը չկար, սակայն: Ներսի սենեակի դռները բաց էին, եւ ոչ ոք չկար այնտեղ:

Անուշն իր հերթին սկսել էր դիտել տիկին Սաթենիկի բնակարանը, պատերը, կահկարասին:

Սենեակի յատակը, ուր նստած էին նրանք, ծածկուած էր երկու փոքրիկ արեւելեան գորգերով: Պատերի վրայ կախուած էին պարսկական մանրանկարներ ոսկեգօծ շրջանակներով, ու նրանց կողքին ամրացած էր մեծադիր նկարը Սուրբ Թերէզի, դէպի երկինք բարձրացած աչքերով: Պատի տակ դրուած կար ցածլիկ մի բազմոց, նախշուն բարձերով զարդարուած: Ճակատի պատի մօտ գտնուում էր հայելիով պահարանը, որի վրայ հազար ու մի տեսակ մանր առարկաներ կային շարուած: Այդտեղ էին այն գոյգ արծաթէ ծաղկամանները, որ Անուշը յիշում էր իր մանուկ օրերից, երբ նրանք այցելում էին տիկին Սաթենիկին: Այնտեղ էր եւ ձեռանկար սքանչելի այն արկղը, որի մէջ մի ժամանակ տիկին Սաթենիկն իր զարդերն էր պահում:

Բայց մինչ այս, մինչ այն՝ տիկին Սաթենիկը սկսել էր խօսել արդէն:

— Մի տարի առաջ Մէդիտերանէի ափին էինք՝ Նորայի մօտ...

Տիկին Սաթենիկի դէմքի վրայ առաջին պահին արտացոլուած անբարեացակամ արտայայտութիւնը կամաց-կամաց սկսել էր հալուել: Նա շտկեց իրեն ու մինչեւ անգամ թեթեւ մի ժպիտ խաղացնելով շրթունքների վրայ՝ դարձաւ դէպի Վարդենին եւ ասաց.

— Թաւրիզից յետոյ Փարիզ... Երեւակայում եմ՝ ի՞նչ տպաւորութիւն:

Վարդենին անմիջապէս նրա ժպտին պատասխանեց ժպիտով:

— Շատ մեծ քաղաք է, մէկ անգամից դժուար է ճանաչել:

— Mais je pense bien... փոքրիկ, խղճուկ մեր այն քաղաքից յետոյ: Դեռ այն ժամանակ, երբ ես Թաւրիզ էի, գոնէ մի բան էր... Դէ, վերջապէս, մէկ երկու ընտանիքներ կային. եւրոպական հիմնարկութիւններում կանոնաւոր մարդիկ էին ծառայում... jour fixe եւ այլն... Իսկ հիմա՞:

— Շատ բան չի փոխուել,— ասաց Վարդենին ժպտալով,— Թաւրիզը նոյնն է, ինչ որ առաջ՝ նոյն jour fixe-ները, նոյն...

Բայց տիկին Սաթենիկը չթողեց, որ նա իր խօսքը վերջացնէ:

— Hélas, ma petite, hélas, շատ բան է փոխուել, — հառաչեց նա, ձեռքերը մէկը միւսի վրայ դնելով եւ տեղաւորելով փորի վրայ, գլուխը վեր բարձրացրեց: — Hélas, ես ամեն մանրամասնութիւն գիտեմ, ինձ միշտ գրում են: Ո՞ւր են հիմա երբեմնի մարդիկ:

Եւ տիկին Սաթենիկը ձեռքով այնպիսի մի շարժում արաւ որ Վարդենին ու Անուշն անմիջապէս հասկացան, որ խօսքը վերաբերում էր իրեն՝ տիկին Սաթենիկին:

— Որովհետեւ,— շարունակեց տիկին Սաթենիկը, — շատ բնական երեւոյթ է: Եւրոպայում ապրելուց յետոյ դժուար է, շատ դժուար: Ուրիշ է, օրինակ, մադամ Մառին: Այո՛, ճիշտ է նա եւս մի անգամ եկել է Եւրոպա, mais, ուրիշ է մէկ անգամ գալը, մի քանի բաներ տեսնել կամ չտեսնելը, տեսածը հասկանալ կամ չհասկանալն ու վերադառնալը, ուրիշ է գիտակից մէկի հա-

մար... Ի դէպ, մադամ Մառին շարունակո՞ւմ է իր հին կեանքը:

Բայց ոչ Վարդենին եւ ոչ Անուշը մադամ Մառիի կեանքի մասին որեւէ տեղեկութիւն չունէին:

— Այո՛, դիտեմ... վերջին տարիները դուք այնպէս քաշուած կեանք էիք վարում... Մանաւանդ Զաւէնի դժբախտութիւնից յետոյ,— ասաց տիկին Սաթենիկը՝ դէմքին խղճհարուածի ցաւագին մի արտայայտութիւն տալով:

Նրա ձայնի մէջ Վարդենին զգաց անմիջապէս հին ոխը:

— Իսկ տիկին Երանուհի՞ն, ի՞սկ տիկին Հռոմը... Գրել էին, որ տիկին Սաթենիկի ամուսինը ինչ որ ուրիշ մի կնոջ... բայց laissons... Ինձ համար բնաւ հետաքրքիր չէ տիկին Սաթենիկի intime կեանքի մէջ մտնելը: Գիտէ՞ք, այստեղ, Եւրոպայում մարդիկ ուրիշների կեանքով զբաղուելու սովորութիւն չունեն, եւ մենք էլ վարժուել ենք այդ բանին: Ասենք, ես առաջ էլ...

Եւ տիկին Սաթենիկն ուզեց խօսքը փոխել:

— Եթէ իմանաք թէ ինչքա՞ն հետաքրքրական բաներ կան այս քաղաքի մէջ... այնպիսի curiosité-ներ... Օ՛ լա, լա, լա... Իմ Մարգարիտս այժմ այնպէս է վարժուել Փարիզին, որ ուրիշ ոչ մի քաղաքում չի համաձայնուում ապրել:

— Իսկ ո՞ւր է հիմա Մարգարիտը,— հարցրեց վերջապէս Վարդենին:

Տիկին Սաթենիկն անհանդիստ մի ակնարկ նետեց ժամացոյցի վրայ, յետոյ քննական աչքով նայեց Վարդենուն եւ առանց պատասխանելու նրա հարցին՝ ասաց նշանակալից ձայնով.

— Մարգարիտս այժմ աւելի է գեղեցկացել:

Բայց Վարդենին ոչինչ չպատասխանեց:

Տիրեց անհաճոյ մի լռութիւն:

— Օ՛, oui, այն էլ ասում,— սկսեց նորից տիկին Սաթենիկը,— այնպիսի curiosité-ներ կան այս քաղաքում, mes enfants. c'est quelque chose extraordinaire.

Նա վար իջեցրեց աչքերի կոպերը, յօնքերը վեր բարձրացրեց ու հիացած օրօրեց գլուխը:

— Ին թչուառ Կարապետ խանի տղան անցեալ տարի եկել էր Փարիզ: Բայց ոչինչ չտեսաւ խեղճ դժբախտը: Փարիզ ապրելը չէ միայն, գիտակից ու հասկացող պէտք է լինել, որ կարողանաս մի բան տեսնել, մի բան հասկանալ...

Նա ժպտաց ու վիզը ոլորելով ծռեց գլուխը: Այսպէս ծռած պահեց տիկին Սաթենիկն իր գլուխը, ամեն բան իմացողի յաղթական ժպիտը դէմքին: Քիչ յետոյ կամացուկ շոյեց թեւերի վրայ իջած հաղուստի սեւ ժանեակները:

Օգտուելով նրա անշարժ այդ դիրքից՝ Վարդենին գդուչօրէն սկսեց դիտել նրան: Այո՛, տիկին Սաթենիկը փոխուել էր եւ շատ էր փոխուել: Արտաքին այդ ձեւերի տակ նա աշխատում էր ցոյց տալ իր երբեմնի «մեծութիւնը», բայց չինծու էին այժմ այդ բոլորը: Պարզ էր, որ տիկին Սաթենիկն առաջուայ «մադամ Սաթենիկը» չէր: Այն թափը, որով նա սկսել էր մի ժամանակ իր կեանքը, իջել, պակասել էր... Բայց տիկին Սաթենիկը ճիգ էր թափում չկորցնել իր երբեմնի արժանապատուութիւնը:

Երբ նրանք մօտեցել էին արդէն թէյի սեղանին, տիկին Սաթենիկը դարձաւ յանկարծ Վարդենու կողմը եւ վեհանձնութիւն ու ներողամտութիւն արտայայտող դէմքով հարցրեց.

— Իսկ ինչպէ՞ս են հիմա ձերոնք:

Վարդենին անակնկալի եկաւ կարծես։

— Ոչինչ, այնպէս, լաւ են,— պատասխանեց նա մի քիչ շփոթուած։

— Եւ ո՞ւր է հիմա Զաւէնը։

— Զաւէ՞նը... Զաւէնը Թաւրիզ է, փորձում է տըպարանով զբաղուել... օգնել հայրիկին... Հայրիկս այժմ ծերացել, յոգնել է։

— Mais je pense bien.— շրթունքները իրար սեղմելով ասաց տիկին Սաթենիկը.— Իսկ ձեր տո՞ւնը, իսկ Մանի՞ն...

— Միշտ նոյնը...

— Քանի՜ քանի՜ տարիներ են անցել... — եւ տիկին Սաթենիկը թեթեւ մի հոգւոց հանեց ու թէյամանը վար դնելով մտածմունքի մէջ ընկաւ... — Իմ խեղճ ամուսնուս մահից յետոյ... Ու ես վճռեցի ծախել իմ տունը... Իմ սիրուն տունը, իմ պարտէզը...

Նա լռեց յանկարծ։ Զսպեց բարձրացող յուզմունքը... Շատ հեռու չէնար...

— Fifi. mon fils, viens ici, viens mon amour, viens mon enfant.

Ու երբ փոքրիկ, բայց արդէն ծերացած շունը, վզի զանգակները զնգզնգացնելով մօտեցաւ, տիկին Սաթենիկը յուզուած գրկեց նրան ու սկսեց ամուր-ամուր փայփայել, այնքա՜ն ամուր, որ խեղճ կենդանին սկսեց կաղկանձել։

Թեթեւ զանգի մի հարուած փրկեց դրութիւնը։

Տիկին Սաթենիկը գնաց դուռը բանալու։

Վարդենին ուրախացած նայեց դրան կողմը։

— Et voilà, et voici... Entrez, entrez donc, monsieur...

Հակառակ Վարդենու սպասածին, չէմքում յայտնուեց ճերմակ դէմքով, կապոյտ թափանցիկ աչքերով, միջին տարիքի մի մարդ։

— S'il vous plait, s'il vous plait,— ասաց տիկին Սաթենիկն ակնյայտ ուրախութեամբ լցուած ձայնով։ — Monsieur Joseph, monsieur Joseph... Ահաւասիկ, je vous présente, ահաւասիկ, ներկայացնում եմ ձեզ,

— Enchanté made...

Բայց տիկին Սաթենիկը չթողեց, որ mons. Joseph ը խօսքը վերջացնէ։

— Օ՜, mes enfants, օ՜, զաւակներս, եթէ դուք ճանաչէիք... si vous saviez seulement...

Մարդը շւարած նայեց տիկին Սաթենիկին ու թէեւ չհասկացաւ թէ ինչ է ասում «մադամ Սաթանը», զգաց, որ խօսակցութեան նիւթը ինքն էր ու լռեց։

— Charmant, extraordinaire մի մարդ։

Վարդենին ու Անուշը նայում էին Ֆրանսացուն եւ ինչե՜ր, ինչե՜ր էին մտածում, ինչե՜ր զգում...

— Դէ, մենք հիմա փոխուել ենք, չէ՞, ինչպէս ասացի, մի տեսակ եւրոպականացել ենք, վարժուել սրանց նիստ ու կացին, սրանց սովորութիւններին, որոնք մեզ համար դարձել են հարազատ։ — Լարած եւ պտուտակը բաց թողած մեքենայի պէս, շարունակում էր տիկին Սաթենիկը։ Նրա քիչ առաջուայ մելամաղձոտ տրամադրութիւնն այնպէս յանկարծ էր փոխուել, որ Վարդենին ու Անուշը զարմանքով էին նայում նրան։ Տիկին Սաթենիկն աշխատում էր Ֆրանսացու մօտ ուրախ երեւալ, հաճելի լինել նրան։ Իսկ Ֆրանսացին ոչինչ չէր խօսում. նրա դէմքն իսկ ոչինչ չէր արտայայտում. նա միայն թափանցիկ աչքերը չէր հեռացնում պատի ժամացոյցից։

Եւ պատի ժամացոյցը սկսեց հատ հատ խփել...

Մէկ, երկու... երեք...

Ու դեռ գարկերը չէին դադարել, յանկարծ դռների ամուր շրխկոց... Մէկը շտապ քայլերով ներս ընկաւ նախասենեակ... Այնտեղ մի բան գլորուեց ու աղմուկով վայր ընկաւ... Սենեակի դռները բացուեցին ու գունատ, յուզուած, մազերի դանդուրները ճակատին թափած, կարմրած, բորբոքուած աչքերով ներս ընկաւ Մարգարիտը...

Տիկին Սաթենիկն անմիջապէս ոտքի ցատկեց:

— Mais qu'est ce que c'est ça ?

Բայց Մարգարիտը չթողեց, որ նա մօտենայ իրեն. մի հայեացք դցեց ներկաների վրայ, անորոշ, շաղախուած մի հայեացք... Վարդենին ու Անուշն ակամայ ոտքի ելան...

Մարգարիտը մի րոպէ նայեց նրանց՝ ճանաչեց...

— Վարդենին է, Մարգարիտ,— ասաց տիկին Սաթենիկը՝ ջանալով իր ձայնի մէջ մտցրած շեշտով հասկացնել աղջկան, որ զսպէր իրեն,— Թաւրիզից են եկել, աղջիկս, Վարդենին է, ու իր քոյրը՝ Անուշը:

Մարգարիտը մօտեցաւ նրանց: Մնաց մի րոպէ, աչքերը Վարդենու աչքերի մէջ դցած...

— Թաւրիզի՞ց ես եկել... — հարցրեց խեղդուած ձայնով ու այնպէս կարօտով, այնպէս անկեղծ սիրով փաթաթուեց նրան...

Յետոյ գրկեց Անուշին, բայց շուտով հեռացաւ նրանից եւ առանց ուշադրութիւն դարձնելու կանգնած եւ իրեն բարեւին սպասող Ֆրանսացու վրայ՝ դուրս փախաւ սենեակից...

Դռների բախում...

Հարեւան սենեակում մէկն ինքն իրեն նետեց մահճակալի վրայ, եւ լուեց զսպուած հեկեկոցի ձայն...

◆

Երբ տիկին Սաթենիկը վերադարձաւ սեղանատուն, Վարդենին ու Անուշը ոտքի էին, նոյն դիրքի մէջ, ինչպէս որ թողել էր նրանց տիկին Սաթենիկը: Կանգնել էին ու զարմացած իրար էին նայում:

— Վարը... դռնապանուհու հետ անհաճոյ խօսակցութիւն է ունեցել... յուզել է դատարկ բանի համար, — փորձեց բացատրել տիկին Սաթենիկն ու խնդրեց, որ շարունակեն նստել, բայց Վարդենին արդէն ձեռքը մեկնել էր նրան:

— Մէկ ուրիշ անգամ յատկապէս կը գամ Մարգարտին տեսնելու համար,— ասաց նա անկեղծ ափսոսանքով սեղմելով տիկին Սաթենիկի ձեռքը:

— Mais bien sûr, ma chère, ուրիշ անգամ եկէք, անպայման եկէք,— ժպտաց տիկին Սաթենիկը շողոքորթ ժպիտով եւ կռացաւ իսկոյն համբուրեց Վարդենուն ու շոյեց Անուշի այտերը:

— Նամակ գրելիս, պատմէք ձերոնց մեր մասին,— ասաց նա՝ թեւը դցելով Վարդենու մէջքին,— ասէք որ եկաք, տեսաք մեզ... մեր բնակարանը, դաշ, ելեքտրականութիւն, confort moderne: Տիկին Հոռոմին թող իմ բօնժուրներս յայտնեն, ու ասեն, որ դուք ինձ մօտ, Փարիզում, ձմերուկ էլ կերաք:

Ու բարձրաձայն ծիծաղելով նա ուղեկցեց իր հիւրերին մինչեւ դուռը:

5

Փարիզ... Մի ոսկէ գնդակ...

Եւ աղմուկ, աղմուկ...

Սրճարանների ապակէ դռներն անընդհատ բացւում են ու փակւում, ցուցափեղկերը ճչում են գունաւոր լոյսերի շիթերով:

Եռուզեռ: Խաժամուժ:

Օդը լցւած է ծուխով ու կծու հոտով: Երկնքի կուրծքը օդանաւերն են ճեղքում: Գետինը ծածկւած է հազար ու մի տեսակ արագավազ կառքերով:

Ճռռում է հողը, տնքում են մարդիկ ու վազում, վազում քաղաքակրթութեան հսկայ անիւին կցւած, մեքենայի մասնիկների պէս:

Պանդոկների, ցածր առաստաղներով միալուսամուտ բազմաթիւ սենեակները լեցուն են ամեն տեսակի ընակիչներով, ամեն ազգի ու դաւանանքի: Նրանցից ամեն մէկը, քաշւած իր պատեանի մէջ, լուռ ու մունջ անհատի իր դոյութիւնն է ապրում, միանգամայն անտարբեր ուրիշների կեանքին: Նրանք ճանաչւում են դռների ճակատներին փակցրած սենեակի թիւով... Ու թէեւ ամեն օր հանդիպում են իրար, բայց օտար են մէկ-մէկու:

Փարիզ... Մի ոսկէ գնդակ...

Վարդենին ու Անուշն առաւօտը մտնում են Լուվր, երեկոյեան միայն տուն վերադառնալու նպատակով: Այն-

պէս բանաստեղծական, այնպէս դրաւիչ էին օրերը... Ցոգնած դուրս էին գալիս, մօտիկ սրճարանում մի քիչ հանգստանում եւ կրկին ներս էին մտնում՝ շարունակելու համար կիսատ թողած բաժանմունքը:

Նրանք կանգնում էին երկար-երկար, իւրաքանչիւր նկարի, իւրաքանչիւր արձանի առաջ:

Դաւթի նկարներին յատկացրած սրահում, բարձր պատերից կախւած բազմաթիւ նկարների կողքին, Վարդենին տեսել էր վերջապէս մադամ Բէկամիէ-ի իսկական ձեռանկարը, այն, որ դեռ տարիներ առաջ այնպէս յուզում էր նրա պատանի սիրտը: Այնտեղ, թաւիշ բազմոցի վրայ, բարակ հագուստի փեշերը գետնին փռած, մերկ ոտքերով, հոլանի թեւերով, սեւ մի ժապաւէն գանգուր մազերի մէջ, նստած էր մադամ Բէկամիէն:

Շատ բան չէր փոխւել Վարդենու հոգու մէջ անցած այդ տարիների ընթացքում: Նրա հոգին թրթռում էր ի տես գեղարուեստական այդ գործերի այնպէս, ինչպէս իր պատանի տարիքի մէջ: Երիտասարդ իր արիւնը թանձր հոսանքով բարձրանում, ծածկում էր նրա թարմ դէմքը, այտերը շիկնում էին ու վառւած աչքերը նկարից նկար էին անցնում:

Ահա Վիժիէ լը Բռէօն-ը,— քնքուշ դէմքով, գորովալի աչքերով, կրծքին սեղմած մանկամարդ իր աղջկան ... Ահա Ջիօկոնդան... Լէոնարդոյի Ջիօկոնդան, խոնաւ աչքերով, նուրբ շրթունքների երկու կողմերին զարմանալի վարպետութեամբ շինւած ծալքերով, որոնց շնորհիւ բացւում է խորհրդաւոր այդ կնոջ երեսին դէպի անմահութիւն թռչող ժպիտը...

« Սիրելի հայրիկ,— գրում էր Վարդենին հօրը,— կ'ուզէի, որ մօտս լինէիր: Կ'ուզէի քեզ հետ միասին

պտտել Փարիզը, այցելել թանգարանները... Երէկ ամբողջ օրը Տրոկադերոյի թանգարանումն էի: Այնտեղ են գտնուում ֆրանսական հին եկեղեցիների արձանապատ ճակատների կաւէ ու փայտէ ընդօրինակութիւնները:

« Իմ սիրելի հայրիկ, ինչպէս պատմել, ինչպէս նկարագրել քեզ այս բոլորը... Բայց եթէ տեսնէիր, թէ անծանօթ արուեստագէտների հանճարը ի՞նչպիսի հմտութեամբ է կարողացել ստեղծել մոնիումենթալ ոճը՝ հեռից դիտելու համար արուեստի հսկայ գործերը, իրենց բովանդակ գեղեցկութեամբ, դու եւս ինձ հետ միասին կը մնայիր զմայլուած, նրանց առաջ կանգնած:

« Ամենից հետաքրքրականը սակայն, գոթական արուեստի արձանագործութիւնն է, որով զարդարուած են տաճարների ճակատները, սիւներն ու կամարները: Ո՞վ կարող է այսօր թափանցել խորքն այն անծանօթ արուեստագէտների հոգիների, որոնք մտածելուց առաջ դգացել են, ապրել ու ստեղծագործել արձաններ, կիսանդրիներ, խորհրդաւոր կենդանիներ... — Տարօրինակ թռչուններ աբեղաների գլուխներով, որ երկար կտուցներով կոցահարում են խաղողի ողկոյզները... Երիտասարդ աղջիկներ, կէս աղաւնի, կէս կին՝ թառած որթի փարթամ ճիւղերի վրայ, որոնց վերից դիտում են շւարած աչքերով տարօրինակ այն թռչունները՝ աբեղաների գլուխներով: Մարդկային գլխով առիւծներ, բերանները լայն բաց ու երկնքին դէմ տուած, ոռնում են ասես ինչ որ ցանկութեամբ լցուած... Մի խումբ թռչուններ կէս-մարդ, կէս-կին, գլուխ-գլխի տուած, գաղտնի բաներ են հաղորդում իրար:

« Իսկ Եւայի սքանչելի արձա՞նը... Գեղեցիկ մի սալամանդր դրկած, խաղողի ու բազմատերեւ որթի ճիւղերով շինուած պատուանդանի վրայ կանգնած, եւ սալամանդրը՝ կրակի այդ խորհրդանիշը, ճչում է նրա գրկից, բերանը դէպի նա դարձրած...

« Իսկ քիմերանե՞րը, որ եկեղեցիների բարձունքներից ծամածռութիւններ են անում վարից վեր իրենց նայողներին: Նրանք կարծես ծաղրում են ամեն ինչ, որ համարւել է սրբութիւն մի ժամանակ... Հեթանոս գգացողութիւնը, թաքուն կերպով ապրել է կրօնաւոր այդ արուեստագէտների մէջ ու սպրթելով յաճախ իրենց մատների ծայրերից, թափւել է սառն այս քարերի վրայ: Եթէ այստեղ լինէիր, կը գնայինք միասին թանգարաններ, եւ ես քեզ ցոյց կը տայի ժպտուն առաքեալը Ռէյմսի հռչակաւոր տաճարի, ցոյց կը տայի Բալի Կոյսը եւ, վերջապէս, Ստրասբուրգի տաճարի «Գայթակղ»ի տարօրինակ արձանը, խնձորը ձեռքին, որի մէջքի վրայ սողալով դէպի վեր են բարձրանում օձեր, մողէսներ ու գորտեր...

« Որքա՜ն, որքա՜ն շնորհակալ եմ քեզնից, հայրիկ, որ հնարաւորութիւն տուիր ինձ ճգտելու եւ հասնելու իմ ապագային: Որքա՜ն երախտապարտ եմ քեզ: Երբ վերադառնամ, ինչպէ՜ս պիտի ջանամ հատուցանել քեզ այս բոլորը »...

6

Շողերն այդ տարի ժամանակից շուտ էին սկսել։ Փողոցներում, մեծ պարտէզների մէջ կառքերի վրայ դրուած թիթեղեայ ամանների պաղպաղակներն արագօրէն սպառւում էին։ Ծաղկէվաճառները, որ հակառակ կարտֆուստալների վրայ նկարուած գեղեցիկ ու մանկամարդ աղջիկների, բաղմածալք սեւ շրջազգեստ հագած խոշոր կազմուածքով ու լայն-լայն երեսներով կանայք էին, թառամած ծաղկէվինջերը թարմացնելու համար անդադար սառը ջուր էին ցանում կախ ընկած թերթիկների վրայ, որոնք սակայն աւաղ, չէին բարձրացնում իրենց թօշնած գլխիկները։ Մեծ քաղաքի տոթը խեղդում էր նրանց։

Խեղդւում էին եւ մարդիկ։ Բարձր տներն արգիլում էին թարմ օդի հոսանքը փողոցների մէջ եւ մարդիկ թուլացած ու գալկացած ապաւէն էին փնտրում մօտակայ պարտէզներում։

Լիւքսեմբուրգի կլոր աւազանի ջինջ ջուրը զովանալու պատրանքն էր ներշնչում մարդկանց, իսկ աղմուկով վար թափւող ու աւազանի մէջ փշրւող շատրւանի ձայնը, լեռներից շառաչելով հոսող պաղ ջրվէժի երգն էր յիշեցնում։

Բուսաբանական այգու հսկայ ծառերի տերեւախիտ ճիւղերի տակ վազվզում էին մանուկների խմբեր ու նախանձով նայում արհեստական առուների մէջ լողացող

բաղերին։ Հեռուից՝ պարտէզի խորքից լսւում էր ջրաշունի ճիչը, որ բոպէն մէկ անդամ խորասուզւում էր իրեն համար յատկապէս շինուած աւազանի մէջ, յետոյ անմիջապէս դուրս ցատկելու համար։

Բարձրաբերձ շինութիւնների ու եկեղեցիների սեւացած պատերը, դէմ էին տւել արեւին իրենց կարծր քարերն ու ամրարելով ջերմութիւնը ճառագայթների, շնչում էին կածես ծանր ու խորը։

Ինքնաշարժերը հեւում էին։ Հեւալով պատռում էին նրանք ծանրացած օդը մայրաքաղաքի փողոցների ու սլանում էին արագ՝ սեւ հետքեր թողնելով միջուղիների վրայ։

Վարդենին ու Անուշը անցնում էին ուսանողական թաղի երկար ծառուղիով։

Ճաշից յետոյ էր։ Բաղմաթիւ յայտարարութիւնների ու ցուցափեղկերի առջեւից անցնելուց ու ամեն ինչ մանրամասն դիտելուց յետոյ, նրանք թեքւել էին արդէն քովընտի մի փողոց։

Տոթը նեղում էր նրանց։ Երկինքն այնպէս ծանրացել, կախւել էր վար... Կապոյտի վրայ դեղին փոշի էր մաղւել։

Քայլում էին դանդաղ, առանց շտապելու, երբ յանկարծ, փողոցի հակառակ կողմի վրայ գտնւող մի տուն գրաւեց նրանց ուշադրութիւնը։ Մի տուն, որի բաց դրան առաջ երեւում էր ծանօթ մի առարկայ...

Կանգնեցին։

Այնտեղ, հեռու մայթի վրայ գտնւող այն տան դրան առաջ, խողովակը դէպի վեր ցցած, դրուած էր մի ինքնաեռ...

Նրանք մի պահ իրար նայեցին...

Ինքնաեռի տեսքը հարազատ մի թել շարժեց նրանց

հոգիներում: Անմիջապես յետ դարձան, անցան մայթը ու կարծես բնազդմամբ կանգնեցին փողոցի ծայրին:

Բաց դռների առաջ կանգնած էր մի երիտասարդ...

— Վստահ եմ, որ այդ երիտասարդը հայ է,— ասաց Վարդենին.— Եթէ երեսն այս կողմ դարձնէր...

Փողոցի անկիւնից իրեն վրայ յառած չորս հետաքրքիր աչքերի մագնիսական ո՞յժն էր արդեօք, թէ՞ ներսից եկող ուժեղ մի բնազդ՝ փողոցի դրան առաջ կանգնած երիտասարդը գլուխը դարձրեց նրանց կողմն այնպէս, կարծես մէկն իրեն ձայն տուաւ... Դարձրեց գլուխն ու հարցական աչքերով նայեց Վարդենու ու Անուշի կողմը:

— Կարծես թէ... — չշնչաց Վարդենին: Կարծես թէ այս երիտասարդը ծանօթ է ինձ...

Անուշը տարակուսանքով նայեց քրոջը:

— Այո, Անուշ... Նա այնքան նման է... Նա այնքան նման է Բարդէնին...

Աչքերը յառած երիտասարդի վրայ Վարդենին մնացել էր անշարժ կանգնած իր տեղում: Նա գիտէր, որ Բարդէնը Փարիզ էր: Գիտէր որ Փարիզ էր նաեւ Հայկը: Բայց ո՞ւր էին նրանք: Մեծ այդ քաղաքի մէջ...

— Մօտենա՞նք.. — հարցրեց Անուշը ցած ձայնով:

— Մօտենանք:

Դանդաղ ու կասկածոտ քայլերով երկուսով միասին առաջացան դէպի անծանօթը...

Բարձրահասակ երիտասարդը լարուած ուշադրութեամբ դիտում էր նրանց:

Ստեղծուել էր այնպիսի մի վիճակ, երբ օտար երկրում երկու համազգակիցներ հեռուից հեռու զգում են իրար, զգում արեան բջիջների գաղտնի հաղորդակցութեան միջոցով, առանց գիտակցութեան մասնակցութեան:

Տարբեր անձնաւորութիւնների մէջ գտնուող միատեսակ այդ բջիջները, որ իրար հետ կապուած են դարերից եկող, մեզ անծանօթ, հազար ու մի նրբին, բայց իրական կապերով, որ տարածութեան վրայ իսկ գգում, ճանաչում են իրար, սկսում են եռալ երակների մէջ, ձգտում են մօտենալ իրար, մօտենալ... Տաք, հարազատ՝ ջերմութիւն տուող մի հոսանք է ստեղծուում, ու անկարելի է այլեւս կանգնեցնել մղումը նրանց... Եւ բնազդը բռնում է ձեռքից ու տանում է քեզ: Տանում է տանում, լուսած միտքդ հլու հպատակուում է նրան, իսկ սիրտդ թաքուն հրճուանք է զգում:

Վարդենին ակամայ ձեռքը տուաւ Անուշին: Երիտասարդը մի քայլ առաջ եկաւ: Եւ այն վայրկեանին, երբ բոլոր զգացմունքների պայծառ լուսամուտների՝ երեք զոյգ սեւորակ աչքերի, վարագոյրը մի աննկատ ակնթարթի մէջ ցած ընկաւ յանկարծ, Վարդենին ու Անուշը դէմ-դիմաց եկան իրենց հօր վաղեմի բարեկամի՝ Գրիգոր աղայի որդուն...

Նրանց առաջ կանգնած էր Բարդէնը:

7

— Դո՞ւք... Փարիզում...

Բարդէնը յուզած երկար երկար թոթուեց Վարդենու եւ Անուշի ձեռքերը, որոնք իրենց հերթին չափազանց ուրախ էին այդ անակնկալ հանդիպումի համար: Իսկ երբ ներս մտան Բարդէնի աշխատանոցը, նրանց ուրախութիւնը կրկնապատկուեց: Այնտեղ, բազմոցի վրայ նստած էին Հայկն ու Արմաշը:

— Հայկ, Արմա՛շ,— գոչեց Վարդենին:

— Ի՜նչպիսի անսպասելի հանդիպում:

Արմաշը թեւերը բաց մօտեցաւ նրան:

Նրանք համբուրուեցին:

— Իսկ Շողե՞ը, իսկ հա՞յրդ:

Վարդենին սաստիկ յուզած էր: Արմաշը Փարիզում ... Ե՞րբ, ինչպէ՞ս էր եկել, ինչո՞ւ էր եկել...

Դեռ մի քանի տարի առաջ, երբ Սէթը Շողերի հետ միասին Հայաստան էին գնացել, ճանապարհները փակուել էին Հայաշխարհում տեղի ունեցող պատմական դէպքերի պատճառով ու Վարդենին ոչ մի լուր չունէր նրանցից: Բագրատի մեկնելիս նա գրել էր Շողերին, բայց ոչ մի պատասխան չէր ստացել ու ենթադրել էր, որ կեանքն իր գործը կատարել էր արդէն, եւ Շողերի հոգու մէջ Տիգրանը մոռացութեան էր մատնուել: Արմաշի մասին Վարդենին ոչինչ չգիտէր: Գիտէր միայն, որ որպէս կամաւոր նա կուել էր Հայրենիքի փրկութեան համար. լսել էր, որ մասնակից էր եղել Սարդարաբադի հերոսամարտին... Իսկ յետո՞յ...

Եւ ահա յանկարծ Արմաշը Փարիզում...

Ու Վարդենու յիշողութեան մէջ կայծակի արագութեամբ դարթնեց մայիսեան տօնի՝ պատանեկութեան իրենց շրջանի զբօսանքի այն օրը: Ինքը Շողերի հետ միասին սիրոցն էր զցում կանաչ խոտերի թաւիշի վրայ, Տիգրանը կռացած կանաչեղէնի կապոցի հանգոյցն էր բացում, հայոց լեզուի ուսուցիչը, բարի ժպիտը դէմքին նայում էր նրան... Իսկ ճաշից յետոյ, տեսչի ոգեւորիչ խօսքերից յետոյ, ահա, ահա պատանի, կրակոտ Արմաշը, թառը ձեռքին...

Նա աչքերը չէր կարողանում հեռացնել Արմաշից ու ձեռքը նրա ձեռքի մէջ՝ նայում էր ակնապիշ, կարօտցած մէկի պէս:

Արմաշը նոյն կրակոտ տղան էր: Կարծես տարիներ չէին անցել, կարծես նոյն պատանին լինէր: Նա միայն աւելի էր դեղեցկացել ու աչքերի բոցին խառնուել էին դիտակցութիւն եւ ինքնավստահութիւն:

Նրանք նստեցին կողք կողքի: Վարդենին, մի բոպէ մոռացած Բարդէնին ու Հայկին, հարցերի տարափ էր թափում Արմաշի վրայ:

— Հայրս վախճանուեց,— ասում էր Արմաշը,— իսկ Շողերը...

— Իսկ Շողե՞ը...

— Շողե՞ը, հին մտածելակերպի այդ աղջի՞կը... Շողերը, Վարդենի, բոմանտիզմի գոհը եղաւ:

— Մեռա՞ւ... — հարցրեց Վարդենին յուզած:

— Ոչ, ապրում է, բայց կոտրուած սրտով, փչրուած

հոգով։ Տիգրանի հիւանդութիւնը շատ ընկճեց նրան ու չի կարողանում այլեւս մոռանալ։

Այնուհետեւ Վարդենին իմացաւ, որ 1920 թուից յետոյ Արմաշը դարձել էր համայնավար եւ այժմ եկել էր Փարիզ ուսանելու, որպէսզի կրկին հայրենիք վերադառնայ։

— Թաւրիզից հեռանալուց յետոյ ես շատ բան տեսայ, Վարդենի...Բայց հետագայում իմ իդէալները փոխուեցին։ Պատմութիւնը յանկարծակի դարձրեց իր անիւը եւ ամեն ինչ շուռ եկաւ։ Ամեն ինչ շուռ եկաւ եւ իմ հոգում։ Ես կռուել եմ Սարդարաբադի հերոսամարտում՝ կռուել եմ հայրենիքիս փրկութեան համար, բայց եկաւ մի օր, երբ ես զգացի, որ այդ հայրենիքը կորստեան ճամբին է կանգնած այլեւս։ Ա՛հ, այնքան շատ էին մեր թշնամիները, այնպէս թշւառ էր մեր հայրենիքն այդ ժամանակ, Վարդենի... Նկարագրելը դժուար է։ Սովի ու հիւանդութիւնների ճիրանների մէջ էինք։ Մեռնում էին հարիւրներով, հազարներով... Թաղելու ժամանակ իսկ չկար։— լցնում էին դիակները սայլերի վրայ ու տանում, փոսն էին դցում... եւ այդպէս ամեն օր, ամեն օր... Սովը բացել էր իր ահռելի ճանկերն ու հիւծւում էր ժողովուրդը մեր։ Ճանապարհները փակ էին ամեն կողմից՝ մենք կտրուած էինք ողջ աշխարհից, շրջապատուած էինք թշնամիներով։ Ես աչքովս եմ տեսել այդ բոլորը, Վարդենի, ինքս եմ ապրել այդ բոլորը։ Ցուսահատութիւնը պաշարել էր ինձ... կարծում էի կորած ենք այլեւս եւ հոգիս հրաշքի էր սպասում։

Հրաշքի էր սպասում հոգիս, Վարդենի ու կատարուեց այդ հրաշքը։

1920 թիւն էր։ Օրհասական օրեր էին։ Ընկել էր արդէն Ալեքսանդրապոլը։ Ձմեռ էր, ցուրտ ու ձիւնոտ

ձմեռ։ Մենք մի քանի ընկերներով նետուել էինք անյայտութեան գիրկն ու մատնուած ընդհանուր չփոթին՝ գալիս էինք Երեւան... Գալիս էի՞նք. փախչում էինք... եւ փախչում էինք ոտքով, քաղցած ու ծարաւ, յանձնուած ձմեռուայ սոսկալի ցրտին՝ բուք ու բորանին։

Ամեն կողմ ճերմակ ձիւնն իր սառը սաւանն էր փռել։ Բարակ, մոխրագոյն մի գիծ, դօտիի նման փաթաթուել էր բլուրների լանջին. ճանապարհն էր։ Ա՛հ, որքան սոսկալի էր բնութեան սառն անտարբերութիւնն այդ պահին... Զարմանալի ու զարհուրելի ընկճուած վիճակ էի ապրում. — դուր էին եղել ուրեմն ամեն, ամեն ճիգ, դուր էր թափուել այնքան արիւնը մեր... ու զոհերը մեր... Իսկ ընկերներս չտապեցնում էին. պէտք էր քայլել քայլել։ Բայց մենք չգիտէինք թէ ո՞ւր ենք գնում, ինչո՞ւ ենք գնում՝ մեր վազն այնպէս անորոշ ու մութ էր դարձել...

Իրիկնադէմի արեւն իր ճառագայթները ցրել էր բլուրների ադամանդէ գագաթների վրայ։ Մենք քայլում էինք լուռ, անձնատուր եղած մեր սեւ մտքերին։ Եւ ահա այդ ժամանակ էր, Վարդենի, որ յանկարծ կատարուեց անսպասելի մի դէպք... Այդ ժամանակ էր ահա, որ իմ հոգում պայթեց յանկարծ յոյսը, Վարդենի...—

Հեռուից՝ ճերմակ-ճերմակ դաշտի միջից, միջոցը ճեղքելով, զարհուրելի արագութեամբ, փոխփոխելով ու ծփծփալով դէպի մեզ էր գալիս կարմիր հսկայ մի դրօշակ... Կարծես թէ կրակէ մի բոց պատռում էր սառած բնութիւնն այդ... Ա՛հ, մինչեւ այսօր չեմ մոռանում լեռների ու դաշտերի սպիտակ ձեան ֆօնի վրայ ծածանուող կարմիր այդ դրօշակը։

Մենք կանգ առանք։ Հոգիս վայրկենապէս դարձաւ ինքն իր վրայ եւ ըմբռնեց իրողութիւնը։ — Այդ նոր կառավարութիւնն էր, որ գալիս էր Երեւան, փոխարինելու

հին կառավարութեան։ Այդ նրանց ինքնաշարժն էր, որ սուրում էր այդպէս արագ ու շտապ։

Կարմիր այդ դրօշը գալիս էր որպէս նոր մի խորհուրդ, հայ աշխարհի առաջ նոր մի ճամբայ բանալու։

Ու ցուրտ այդ իրիկնամուտին, յոյսի տաք մի ճառագայթ վառեց իմ հոգում։

Ահա թէ ինչպէս սկսեց իմ նոր կեանքը, Վարդենի։

Քանի՞ քանի անգամներ Վարդենու շրթունքները շարժուեցին՝ ընդմիջելու համար Արմաշին, հարցնելու նրան թէ ո՞ւր է հիմա Բագրատը, իր հօրաքրոջ տղան՝ Բագրատը... Բայց ներքին մի յուզմունք արգելում էր նրան այդ հարցումն անել։

— Արմաշ... իսկ ո՞ւր է հիմա... իսկ ո՞ւր է հիմա... Ներսէսը...

— Ներսէսը Հայաստան է եւ տենդօրէն նուիրուել է աշխատանքի։

Ու մինչ նրանք խօսում էին այսպէս, իսկ Անուշը հետաքրքրութեամբ լսում էր նրանց, Բարգէնը հիացած նայում էր երկու քոյրերին։

— Տեսէք, տեսէք, տղերք, լաւ նայեցէք, դեռ չաւրըլած Արեւելքի ծաղիկներ են։

Ապա դառնալով Վարդենուն եւ նրա երկու հիւսերին որ նա հաւաքել ու փաթաթել էր իր սիրուն գլխի շուրջը, Բարգէնը բացագանչեց.

— Այո՛, անցել է ամբողջ մի շրջան, անցել է ամբողջ մի հոգեբանութիւն... Ու թէեւ ճիշտ է, որ պրպտող միտքս իմ առաջ բացել է նոր ձեւերի, նոր գեղեցկութիւնների բազմազան ուղիներ, բայց խոստովանում եմ, հոգուս խորքում թագուն մի կրակ է վառւում՝ անցեալ գեղեցկութիւնների կրակը։

— Եւ անցեալ սէրերի բոցը,— ծաղրեց Արմաշը։

— Ոչ ոք, ոչինչ ինձ այնքան չէր յիշեցնի իմ անցեալը,— շարունակեց Բարգէնը,— ինչպէս դու, Վարդենի ու... գլխիդ շուրջ փաթաթուած այս զոյգ հիւսերը...

— Ռոմանտիզմ,— ասաց Արմաշն ու ոտքի կանգնեց։

Այդ ժամանակ Անուշը սկսել էր արդէն դիտել Բարգէնի աշխատանոցը։

Բարգէնի աշխատանոցը, որ ոչ այլ ինչ էր բայց եթէ երբեմնի խանութ։ Բարգէնը նրան բաժանել էր երկու մասի, վարագոյրով գատելով այն անկիւնը, ուր գտնուում էր ջրի ծորակը։ Այդ՝ խոհանոցի բաժանմունքն էր։ Զախ անկիւնում ամրացրած էր տախտակէ մի գրադարան, ուր գետեղուած էին արուեստի վերաբերեալ հին ու նոր գրքեր, բազմատեսակ ամսագրեր, ուսումնասիրական երկեր։ Այստեղ էր նաեւ իր գրասեղանը ու մի սնտուկ, որ ծածկուած էր կապերտներով եւ որ ծառայում էր իբր բազմոց։ Սենեակի միւս մասում գտնուում էին նկարչի գործերը։

Ննջարանը գտնուում էր երկրորդ յարկում... սիւների վրայ ամրացրած էին լայն տախտակներ, որ կազմում էին յատակը փոքրիկ մի բարձրութեան։ Այդ բարձրութեան վրայ գտնուում էր անկողինը, շրջապատուած անթափանց վարագոյրներով։

Բարձրանում էր Բարգէնն այնտեղ «խոհանոցում» դրուած փայտեայ նեղ մի սանդուխով, որ ամեն անգամ սպառնում էր կոտրուել նրա խոշոր ու ծանր մարմնի ճընշումից։

Անուշն ամբողջապէս գրաւուել էր պատերից կախուած նկարներով, որոնց իմաստը լաւ չէր կարողանում ըմբռնել։ Նա սեւեռում էր իր աչքերը որեւէ մի նկարի վրայ,

աշխատելով հասկանալ նրա իմաստը, բովանդակությունը, բայց հազիւ էր կարողանում նշմարել ծանօթ որեւէ իրի թոյլ ուրուագծեր եւ ապա ամեն ինչ խառնւում էր իրար:

— Հասկանո՞ւմ ես մի բան իմ նկաներից, Անուշ:

Անուշն ուսերը թոթուեց:

— Այո՛, գիտեմ, նոր են այս բոլորը քեզ համար, նոր եւ մինչեւ անգամ տարօրինակ: Պատերազմը փոխեց ամեն բան, Անուշ, ու մենք խաղաղ, բայց լճացած մի կեանքի ափից, թռանք մէկ ուրիշ ափ... Ընկանք մէկ ուրիշ աշխարհ, ուր կախարդանքները մեքենայական են: Իմ գործերն արդիւնք են այդ թռիչքի: Շատ բան չես հասկանայ հիմա: Բայց եթէ երկար ապրես Փարիզում, ըմբռնես նրա ռիթմը, ու կարողանաս հոգու աչքերով թափանցել դարիս կեանքի ներքին ծալքերի մէջ, այն ժամանակ... այն ժամանակ... բայց չգիտեմ ո՞րն է լաւ... իմանա՞լ թէ՞ չիմանալ:

— Պատիւ ունիմ յայտնելու քեզ, Անուշ, որ եթէ ցանկանաս իմանալ, այսինքն՝ թափանցել դարիս կեանքի ներքին ծալքերի մէջ,— ասաց Արմաշը ծիծաղելով,— դու կարող ես ոչ թանգարաններ յաճախել, ոչ թատրոններ, ոչ գործարաններ, ոչ իսկ Սենայի ափը՝ դիտելու համար կամուրջների տակ ապրող մարդկանց, ոչ կեանքի բարձունքները ելլել ու ապա յատակն իջնել, այլ պէտք է միայն ծանօթանաս մեր սիրելի Հայկի, փարիզեան կեանքի եւ գործերի հետ:

Անուշը զարմացած լսում էր Արմաշին ու տակաւին ոչինչ չհասկանալով նրա խօսքերից՝ նայում էր Հայկին:

Հայկը, որ մինչ այդ զբաղւած էր Վարդենուն հարցումներ տալով, ձեռքերը մտցրեց գրպանի մէջ ու նայեց Արմաշին:

— Եթէ մենք այսօրւայ Հայկին տարբերուծենք գի-

տական ձեւով, կը ստացւի «դարիս կեանքի ներքին ծալքերը»,— շարունակեց Արմաշը.— Պատահարներին յանձնւած, բնազդներով լեցուն, մութով ու խաւարով պատած մի կեանք ու այդ խաւարի մէջ լուսաւոր մի շիթ, ոսկի մի ճառագայթ՝ իր բանաստեղծութիւնները: Դու դեռ առիթ կունենաս համոզւելու ասածներիս մէջ: Նա կարող է քեզնից արցունքներ խլել, եթէ արտասանէ իր գրւածքներից. կարող է քեզ մտատանջութիւնների ենթարկել, եթէ կարդայ իր պատմւածքներից: Բայց նա կարող է քո ծիծաղը շարժել, եթէ պատմէ իրական պատմութիւններ իր արկածալի կեանքի անսպառ շտեմարանից:

Անուշը հետաքրքրւած խնդրեց Հայկին պատմել իր կեանքի հետաքրքիր դրւագներից,— չէ՞ որ երեք տարի էր արդէն որ Հայկը Փարիզ էր:

Հայկը նստեց ու ոտքը ոտքին դցեց:

— Փարիզ գալու առաջին ամիսներին ֆրանսերէն լաւ չգիտէի: Ես եւ նա աշխատում էինք միեւնոյն գործարանում, այնպէս որ միջանցքում յաճախ էինք հանդիպում իրար:

Մի օր էլ մօտեցաւ ինձ ու հարցրեց՝

— «Սիրելի պարոն, ասացէք խնդրեմ, դուք ինձ ինչ տարիք կը տայիք»: Դէ, ես էլ որ շատ էի լսել Փարիզի կեանքի մասին, առանց երկար-բարակ մտածելու՝ ասացի. «Երեսուն ֆրանկ»: Աղջիկն այլայլւեց, բարկացաւ, կատաղեց ու կարմրած աչքերը վրաս սեւեռեց...

— Թողիր հեռացա՞ր,— հարցրեց Արմաշը:

— Չէ՛, եղբայր... Վերջը սենեակս եկաւ ու տասը ֆրանկով գոհացաւ...

Անուշի մարմնով սառը մի սարսուռ անցաւ: Նա

չծիծաղեց, նայեց զարմացած Հայկին, տհաճ մի զգացում արթնացաւ իր մէջ։

Ձծիծաղեց ե՛ւ Վարդենին, որ լուռ դիտում էր Հայկին։

— Մի անգամ էլ,— շարունակեց Հայկը,— վճռել էի հայի երես չտեսնել այլեւս. նեղացել, վիրաւորուել էի ամբողջ հայ ժողովրդից։ Փոխեցի թաղամասս, ոչ ոքի հասցէս չտուի, շատ քաղցած օրեր անցրի, յետոյ մտայ շաքարի գործարան, որպէս բեռնակիր։ Մնացի ինքս ինձ հետ... մէկ ամբողջ ամիս։ Մէկ ամբողջ ամիս տառապանք ու հրճւանք... Տառապանքիս պատճառը գործարանի գանձն էր. երբ նա գնդում էր, մէջքս ինքն իրեն ծռւում էր շաքարաւազի ծանր պարկը շալակելու համար։ Եւ ի՞նչպիսի պարկ... Եւ ժամեր անընդհատ։ Բայց այդ բոլորով ես հրճւում էի։ Հրճւում էի այն մտքից, որ ես մեն-մենակ եմ, անազգ, անհայրենիք... Մենակ ամբողջ տիեզերքի մէջ, ազատ ամեն ձեւի պարտականութիւններից, անընկեր, անբարեկամ, որին ոչ ոք չի սիրում եւ որ ինքը ոչ ոքի չի սիրում... Ազատ, ազատ մի անհատ... Մտածում էի՝ ինչ էր իմ կեանքը, ի՞նչ տուեց ինձ իմ ազգը։ Հայ անունն իմ առաջ բացեց տառապանքի ուղիներ ու դնալով ուժեղանում էր իմ արհամարհանքն իմ անցեալի հանդէպ։ Բայց...

Նա մի պահ կանգ առաւ ու աչքերը պտտցրեց բոլորի վրայ, ապա շարունակեց.

— Բայց պատահեց անակնկալ մի դէպք։ Գարնան արեւոտ մի առաւօտ «ազատագրուած» անհատս պտտում էր Բիւք Շօմօնի պարտէզի ծառուղիներով։ Երջանիկ էի մենութեանս մէջ։ Բարձրանում էի ժայռերի ծայրերը, իջնում էի ձորակներ, նայում էի բարձրից թափւող ջրերին. հոգիս հանգիստ էր։ Ու մէկ էլ յանկարծ... Փոթորիկ էր որ բարձրացաւ մէջս։ Ուզեցի թողնել հեռանալ, բայց «նա» մագնիսի պէս ինձ դէպի իրեն էր ձգում։ Փորձում էի երեսս դարձնել մէկ ուրիշ կողմ, չէի կարողանում սակայն։ Աչքերս շարունակ սեւեռւում էին իր վրայ։ Կամքիցս անկախ ես ընտրեցի յարմար մի քար, նստեցի ու սպասեցի։ Սպասեցի երկար... Չէր շարժւում։ Մարմինը թաղւած էր ժայռերի մէջ, գլուխը ծածկւած էր բարակ վերարկուով՝ արեւից պաստպարւելու համար, դուրս էր մնացել միայն ցցւած ահռելի մի քիթ։ Տարակոյս չունէի... Այդ քիթը հայկական ծագում պէտք է ունենար։ Երկար սպասեցի։ Մէկ էլ մարդն արթնացաւ։ Նստեց, յօրանջեց, նայեց շուրջը, ժպտաց արեւին, ծառին ու ծաղկին, յետոյ վեր կացաւ տեղից, չտկեց հագուստներն ու սկսեց քայլել։ Քայլեցի եւ ես... Ստուերի պէս հետեւում էի նրա իւրաքանչիւր քայլին։ Նա ինչաւ մէթրօ, ես նրա ետեւից։ Տոմս գնեց, ես նոյնպէս։ Դուրս եկաւ գետնայարկից, ես նոյնպէս... Նորից քայլեցինք ու մէկ էլ աչքերիս առաջ ծանօթ մի ցուցանակ՝

Ճաշարան Մայր Արաքս...
Հայերու ժամադրավայր։

Ներս մտանք «ժամադրավայրը» ու կրկին տեսայ հայեր, լսեցի հարազատ բարբառ... Այդ օրւանից ես նորից մնացի շղթայւած, կապւած իմ անցեալին, իմ ազգին։

— Դու կարող էիր կորչել, եթէ կամք ունենայիր, — ասաց Բարգէնը,— բայց բարեբախտաբար կամքդ թոյլ է։

— Չգիտեմ, բարեբախտաբա՞ր թէ՞ դժբախտաբար։

Այսպէս էր խօսում Հայկը։

Արմաշը մօտեցել էր սենեակի մէջտեղում վայտեայ

պատուանդանի վրայ դրուած կտաւին եւ ուշադրութեամբ դիտում էր չաւարտուած մի նկար։

Բարգէնի դէմքի վրայ տհաճ մի քօղ էր իջել։

— Գիտե՞ս ինչ, Բարգէն,— ասաց Արմաշը լրջութեամբ,— դիտեմ, ձեր այս տարեայ ցուցահանդէսին դու այս նկարդ է, որ պէտք է ցուցադրես, եւ սա ձեր ցուցահանդէսի գլուխ գործոցներից մէկը պիտի լինի։

Վարդենին ու Անուշը նոյնպէս մօտեցան կտաւին։

Արեւելեան դիմագծերով մանկամարդ մի կնոջ նկար էր այդ, տակաւին չաւարտուած, որի շուրջ թափուած էին աշնան հասուն մրգեր՝ տանձ ու խնձոր... Կնոջ դէմքի կէսը ծածկուած էր վառ կանաչ գոյնով, մինչ միւս կէսը թափանցիկ վարդագոյն էր։ Մազերը նկարուած էին ծովի կապոյտով։

Վարդենին աչքերը չէր հեռացնում նկարից. մի բան էր զգում կարծես... մի բան՝ ծանօթ մի դէմք պէտք է ստանար կարծես կիսաւարտ այդ նկարը... Ու յանկարծ տեսաւ... Գոյների երփներանգութեան միջից, իրեն էին նայում մի զոյգ աչքեր, այնքա՜ն ծանօթ, այնպէ՜ս դրաւիչ...

— Մարգարիտը...

Բարգէնը ցատկեց տեղից, վերցրեց արագութեամբ նկարն ու դարձրեց նրան հակառակ կողմը։

— Ցոյց կը տամ, երբ վերջանայ,— ասաց նա ու բռնեց Վարդենու թեւից։ Իսկ այսօր, Վարդենի, իսկ այսօր աւելի լաւ է, մեր ժամանակը նուիրենք մեզ, մեր անցեալին։ Որքան էլ նա տխուր ու անհրապոյր լինի, այնուամենայնիւ, թաքուն մի կայծ բորբոքւում է իմ մէջ ու ինձ տանում դէպի անցեալի յուշերը։

Հայկը Բարգէնից եւ Արմաշից դրամ վերցնելով գնաց գնումների։ Երբ քիչ յետոյ բեռնաւորուած վերադարձաւ, Արմաշն արդէն սեղանը ծածկել էր թերթերով։ Քիչ յետոյ բոլորը նստել էին սեղանի շուրջը, եւ Հայկը, անձեռոցն առաջը կապած, մատակարարի պաշտօն էր կատարում։

Գարեջրի շիշերը մէկը միւսի ետեւից բացւում էին։

Հայկն ուրախ էր չափից աւելի։ Նա նստել էր Անուշի կողքին ու մանրամասն հարց ու փորձ էր անում նրան Թաւրիզի իր ծանօթների, իր ընկերների մասին։ Արմաշը զբաղուած էր ճաշով։

Բարգէնն աթոռը մօտեցրել էր Վարդենուն եւ գլուխը կախ լսում էր նրա պատմութիւնները։ Եւ որքան շատ էր պատմում Վարդենին, այնքան աւելի լարւում էր Բարգէնի ուշադրութիւնը։ Նա բիբերը լայն-լայն բացած՝ նայում էր Վարդենուն։ Նրա դէմքի արտայայտութիւնը մատնում էր իր հոգու փոթորիկները։

— Այդ օրը,— շարունակում էր ցած ձայնով Վարդենին,— հայրս երկար երկար լացեց։ Առաջին անգամ չէր, որ այդպէս դժբախտ էի տեսնում իրեն։ Տիգրանի վիշտը հօրս կանխահաս ծերութեան է մատնել։ Ես սեղմըւել էի նրա թեւին, եւ մենք միասին քայլում էինք դաղաղի ետեւից...

Վարդենին կանգ առաւ մի վայրկեան։

— Քանի՞ տարեկան էր հայրդ, Բարգէն,— հարցրեց նա քիչ յետոյ ու տեսնելով Բարգէնի յուզմունքը՝ աւելացրեց, — ծերութիւնն էր պատճառը, գիտեմ... Մեզնից ոչինչ չէ կախւած։ Ի՞նչ կարող ենք անել։

Լռեցին։

— Իսկ յիշո՞ւմ ես Գրիգորիյ Եւանդուլիչին... Նա էլ լացեց։ Արցունքներ Գրիգորիյ Եւանդուլիչի անտարբեր դէմքի վրայ՝ կարո՞ղ էիր երեւակայել... Երբեմն-երբեմն տարօրինակ այդ մարդը, ցանկութիւն էր ունենում

Տիգրանի սենեակը մտնելու։ Նստում էր նրա մահճակալի մոտ, առանց մի բառ արտասանելու, անշարժ դիմագծերով... Ի՞նչի մասին էր մտածո՞ւմ... Ոչ ոք չգիտէր... Իսկ յետոյ դուրս էր գալիս նրա սենեակից, նոյն անտարբեր հայեացքով եւ սկսում էր Զաւէնի հետ իր անվերջանալի նարդին։ Ու յանկարծ այդ օրն արցունքներ... Հայրդ սիրուած մարդ էր, Բարգէն։

— Սիրուած, բայց լքուած...Յետո՞յ։ Պատմիր, Վարդենի, պատմիր ինձ ամեն մանրամասնութիւն։

— Մեկնումիս օրն ինձ մօտեցաւ Գրիգորիյ Եւանդուլիչը, եւ ես նրանից իմացայ, որ Ռօզը եւ մայրդ Լիոն են՝ քեռուդ մօտ, եւ որ դու Փարիզ ես։ Նա ինձ խնդրեց քեզ յայտնել, թէ ինքը փակեց Գրիգոր աղայի աչքերը եւ թէ նրա վերջին խօսքերը եղել են օրհնանքի ու երջանիկ ապագայի մաղթանքներ իր զաւակների համար։ Նա խնդրել էր քեզ յայտնել, թէ մի օր տուն վերադառնաս, վերանորոգես ձեր տունը եւ թէ այդ տան մէջ, մի օր նորից հնչէ խինդն ու ծիծաղը։ Թաղումից յետոյ, երբ տուն էինք վերադառնում, հայրս կրկնում էր անդադար. «Խեղճ Գրիգոր աղա, խեղճ Գրիգոր աղա, մարեց դըժբախտ մի կեանք... Այդ մարդը ոչինչ չխնայեց իր զաւակների երջանիկ ապագայի համար»։ Ես վախենում էի նրա այդ խօսքերից, Բարգէն... այնպէս ծեր ու ընկճուած էր երեւում ինձ հայրս... Ինձ թւում էր, որ...

— Քեզ թւում էր, որ նա էլ պէտք է մեռնէ, Վարդենի... Նա մեռած է արդէն... Մեռել է արդէն մի սերունդ, որ ա՛յնքան անձնազոհ եղաւ, որ վարեց դաշտվարներին ու հաւատաց, թէ մի օր պիտի պսակուի իր թափած ջանքերի արդիւնքը։ Իսկ ի՞նչ ստացաւ։ Արդիւնք չկայ։ Պատերազմը, յեղափոխութիւնը, ջարդն ու սովը եւ արտաքին ուրիշ պայմաններ մեր եւ մեր հայրերի միջեւ անասելի մի վիհ բացեցին։ Բայց կային եւ ներքին, անտեսանելի պատճառներ, որ մենք չէինք տեսնում ու չէինք զգում, չէինք հասկանում... Ու այդ էր իսկական վտանգը... Մենք կտրուում էինք մեր հարազատ միջավայրից, խորթանում էինք ու մեր հոգիների հուրը ցրիւ էինք տալիս օտար ուղիների վրայ... Մենք միշտ ու շարունակաբար խորացնում էինք վիհը, Վարդենի... Եւ այսօր մեր սերունդի հոգիներում մի ողբերգութիւն կայ։ Մենք չկարողացանք դարու մարդը դառնալ, մեր հոգու նժարների վրայ հէքեաթն ու մեքենան փոփոխաբար իջնում են, բարձրանում ու մեզ նետում բեւեռից բեւեռ։

Անուշը, որ չէր մասնակցում նրանց խօսակցութեան, ուշադրութեամբ լսում էր Բարգէնին, աշխատում էր անդրադառնալ նրա ասածների վրայ, վերլուծել նրա իւրաքանչիւր խօսքը։ «Մենք մեր հոգու հուրը ցրիւ ենք տալիս օտար ուղիների վրայ»... Ինքն ու Վարդենին, օտար այս ճամբաները բռնած, նոյն բանը չէի՞ն անում...

Հայկը ճաշը վերջացրած սկսել էր տխուր մի մեղեդի, նախ ցածրաձայն, յետոյ բարձր, աւելի բարձր։ Արմաշը ձայնակցում էր նրան։ Իսկ Անուշը յենուած բարձերին՝ մտածմունքի մէջ էր ընկել։

Մէկ ամիս առաջ էր...

Մեծ չորս անիւանի սայլը, լծուած երկու գոյգ նիհար ու ոսկրոտ ձիերով եկաւ ու լայն այն քարուանսարի քարքարոտ բակում կանգնեց։

Կապերտների կտորների մէջ փաթաթուած անկողիններ, փայտեայ սնդուկներ հագուստների համար, անձրեւանոց ու առձեռն պայուսակներ։

Քարքարոտ բակից բեռներով բարձած այն սայլը, բեռների գլխին ծալապատիկ նստած ճամբորդներով, ճըր-

ճռալով ու շուռ ու մուռ գալով դուրս եկաւ վայտեայ դարբասներից ու բռնեց Եւրոպա տանող ճամբան։

Եւրոպա էին գալիս։

Զորս նման սայլեր, սասնըվեց ձի, ութ կառապան ու մշակ եւ հայ ուսանողների մի խմբակ՝ մի ամբողջ կարաւան...

Գալիս էին, ո՛րը վարդն ու սոխակը շրթին, ո՛րը խաւարի քօղն աչքերին ու սրտին։ Գալիս էին կապոյտ ուլունքէ յուռուվթը թեւերին կապած, «աչուղի կարմիր խնձորը» սրտներին սեղմած։

— Այստեղ քարերը շատ խուշոր են, պէտք է իջնել։

— Այստեղ ձորը շատ մօտիկ է, ճամբան նեղ է, պէտք է իջնել։

Մէկ ուրիշ տեղ դեռն էր վարարել, հորդորդում բլուրն ի վեր պէտք էր բարձրանալ եւ այսպէս անվերջ... Ձիերը վարարել էին, եւ դետերը դժուարանց էին դարձել։ Բարձած այդ սայլերի գլխին նստած, վտանգաւոր էր դետն անցնել, եւ թուրք մշակներն աղմուկ-աղաղակով, երբեմն էլ սիրուն շերեր երգելով, ոտքերը մինչեւ ծնկերը բաց, թէ՛ մարդկանց եւ թէ՛ իրերը մէկիկ-մէկիկ շալակելով այս ափից միւս ափն էին հանում։

Մշակի մէջքին նստած, իրենք էլ հեռաւոր ու անորոշ, վայվայած գաղափարներ շալակած, հայ երիտասարդները յաղթահարում էին ամէն խոչընդոտ։

— Նայիր, Անուշ, նայիր, տես ինչ անխարդախ կանաչ է։ Հաւատա, որ արժէր այսքան նեղութեան,— ասում էր Վարդենին՝ հիացած։

Իսկ երաժշտութեան հետեւել ցանկացող երիտասարդը, սեւ մազերը հովին տուած, ձեռքերը մէջքին, անդրադարձիկի ծայրերը դուլպաների մէջ մտցրած եւ հաստ թելերով խաչաձեւ ոտքերին փաթաթած, անդադար

հիացմունքի բացագանչութիւններ էր անում եւ բանաստեղծութիւններ արտասանում։

Այսպէս եկան օրեր ու օրեր... Շատ դիշերներ լուսացան ու կրկին մթնեցին նրանց գլխին... Նրանք ուրախ էին, լի ինչ որ վառ, շատ վառ յոյսերով...Երիտասարդ, թարմ ուժեր, որ բացւող ծաղիկի պէս դէպի «լոյսն» էին ձգտում։

Խումբը մերթ մեծանում էր, այս ու այն քաղաքից իր մէջ մտնող նոր երիտասարդներով, մերթ փոքրանում՝ հիւանդացած ու զանազան վայրերում յետ մնացած ընկերների պատճառով։

Պատահում էր սայլ էր շուռ գալիս, ոտք ու գլուխ ջարդւում, ձիերն էին գլուխ առնում ու խոր ձորը տանող ճամբան բռնում... Պատահում էր հիւանդանում, ջերմ ու տենդի մէջ էին ընկնում...

Նման դէպքերով լեցուն էր ճամբան։

Բայց պէտք էր գնալ։

Երբեմն, երբեմն վարարած ջրերի ափին, կամ բաց մի դաշտի մէջ մեն-մենակ ընկած «չայչիխանաները» ապաստան էին տալիս նրանց։ Արեւելքի ճանապարհներին չինուած այդ սենեակները, որ այնքան նման էին իրար...

Ու Անուշը մէկիկ-մէկիկ յիշում էր նրանց...

Ո՞վ կարող էր իմանալ թէ քանի օրեր ու դիշերներ գլորուեցին նրանց գլուխների վրայով։ Ոչ օր գիտէին, ոչ ժամանակ։ Նետւել էին բնութեան գիրկն ու վազում էին դէպի մեծ մի գաղափար... Իսկ ճգտումի ճամբան...— թեթեւ ու անվիշտ եւ աննիւթ, աննիւթ...

Գալիս էին, իրենց յանձնած ամէն պատահարի, լցուած վերելքի անդուսդ թափով, ծարաւի հոգիներով... Գալիս էին դէպի հեռւում բացւած մի դուռ, փնտռումների դէպի նոր մի ուղի...

Իջնում էին ծուռ-մուռ ձորակներ, բարձրանում քարոտ բլրակներ, մերթ քամու ու անձրեւի տակ թրջւում, մերթ արեւի տակ կիզւում: Ցետոյ ամեն գիշեր լուսնի լոյսի տակ, գետի եզերքին, կամ խեղճ գիւղացու ծաղկազարդ բակում, սիրուն հէքեաթներ եւ երգ ու նւագ...

Զէ՞ որ դարուն էր:

Նշենիներն ա՛յնպէս էին ծաղկել, վարդի թփերի մօտ սոխակներն ա՛յնպէս էին դայլայլում...

Նրանք երգում էին օպերաներից, յուզւում Վերլէնով... Խորասուզւում էին նրանց մէջ փնտռելու համար ակը հոգու թելերի, սրտի յոյզերի...

Վերլէն... Վերդի...

Վարդի թփերի մօտ սոխակներն այնպէ՛ս էին դայլայլում եւ նշենիներն այնքա՛ն առատ էին ծաղկել...

. . .

Արմաշն ու Հայկը շարունակում էին երգել, Բարդէնը, որ յուզմունքից մի առ ժամանակ լռել էր, մնացել, վեր կացաւ տեղից, լցրեց բաժակն ու մեկնելով դաւաթն՝ ասաց.

— Խմենք, ընկերներ, մեր Իրականութեան կենացը, հակասութիւններով լի հայ Իրականութեան կենացը... Քիչ առաջ ես ասացի, որ մենք ապագայի պաշտամունքի ցաւով ենք բռնուած եղել միշտ ու որ այդ է եղել մեր վըտանգը: Իսկ այսօ՞ր... այդ նոյն ցաւով բռնուած հաւատանք, որ պէտք է յաղթենք, որ պէտք է յաջողենք... Մենք էլ հաւատանք...

Բոլորը դատարկեցին բաժակները:

— Խմենք այն մարդու կենացը,— վեր կացաւ տեղից Հայկը, — որ իր ամբողջ կեանքի ընթացքին, ծննդեան օրից մինչեւ մահ, ենթակայ լինելով բազմազան կլիմաների, յաղթահարելով արտաքին ամէն տեսակ ազդեցութիւններ, կը պահէ, կը պահպանէ իր հոգու ամբողջութիւնը: Նրա կենացը, ով կեանքի անհաւասար պայքարից դուրս կը գայ յաղթական՝ չկորսւած «ես»ով,— նա նայեց բոլորին,— որի՞դ կենացը, ուրեմն: Մենք՝ «փարիզցիներս» արժանի չենք այդ կենացին, իսկ դո՞ւք,— խօսքն ուղղեց նա Վարդենուն եւ Անուշին,— դուք եւս մի քանի տարի յետոյ մեզ պէս պիտի դառնաք... Բայց խմենք, հաւատանք, որ կան այդպիսիներն ու խմենք:

Մութն ընկել էր: Վարդենին վեր կացաւ տեղից:

— Ես հաւատացած եմ, որ կան այդպիսիները,— ասաց նա ու ձեռքը մեկնեց Բարդէնին:

Բարդէնը ժպտաց տխուր մի ժպիտով:

Նրանք մէկիկ-մէկիկ իրար ձեռք սեղմեցին:

Արմաշն ու Հայկը առաջ անցան ուղեկցելու համար Վարդենուն եւ Անուշին:

Աշխատանոցի թանձր ծուխից յետոյ, հաճելի էր մաքուր օդ շնչելը: Նրանք քայլում էին դանդաղ ու Արմաշը մէկ թեւը Վարդենուն, միւսն Անուշին, աշխատում էր զբաղեցնել նրանց:

— Ցուսով եմ, որ չձանձրացար մեզ հետ այս երեկոյ: — Ասաց Հայկը դառնալով Վարդենուն:

— Ընդհակառակը,— պատասխանեց Վարդենին անկեղծ ոգեւորութեամբ,— ընդհակառակը, Հայկ:

Նրանք շարունակեցին քայլել:

Ցանկարծ Հայկը, միանգամայն անսպասելի, թեւով հրեց Վարդենուն, ու ձայնը ցածրացրեց:

— Հաւանեցի՞ր Մարգարիտի նկարը:

Վարդենին գլխով հաւանութեան նշան արաւ:

— Իսկ գիտե՞ս նրա եւ Բարդէնի պատմութիւնը:

Նա հարցական նայեց Հայկին:

— Հա՞պա,— ասաց Հայկը,— բայց տիկին Սաթենիկը... «տա, տա՛, տա՛ տա», այսպէս է խօսում տիկին

Սաթենիկը,— «ասացէք այդ նկարչին, որ նա նկարիչ չէ, որ Փարիզում հազարաւոր նկարիչներ քաղցած փողոցներն են թափառում... տա, տա, տա, տա»... Տիկին Սաթենիկն ատում է Բաբդէնին, մինչ Մարգարի՞տը...աւաղ... մինչ Մարգարիտը սիրում է նրան...Միայն թէ Բաբդէնը չի հասկանում իր լաւը: Այժմ էլ կապւել է սեւամորթ մի աղջկայ հետ Զուզու անունով եւ դիշերները նրա հետ է անցկացնում... Քանի՛ քանի անգամներ Մարգարիտը նեղել է նրան, Բաբդէնը խոստացել է, երդւել, որ միայն նրան է սիրում, բայց ես, ես գիտեմ, որ նրա խոստումները երկար չէին տեւում: Դեռ մի քանի օր առաջ էր... Զուզուն արհեստանոցի մէջտեղում կանգնած բարձրաձայն երգում ու պարում էր, երբ յանկարծ Մարգարիտը դուռը բացեց... Բացեց, տեսաւ թէ չէ Զուզուին, անմիջապէս դուրս փախաւ... Բայց մէկ էլ նրա ետեւից դուրս եկաւ Զուզուն եւ բարձր ձայնով սկսեց բղաւել. «Mademoiselle, mademoiselle.. Մարգարիտը յետ նայեց, Զուզուն դէմքը ծամածռեց ու լեզուն ցոյց տւաւ նրան...

Այս բոլորը կատարւեց շատ արագ: Եւ ահա յանկարծ սոսկալի մի բարկութիւն իջաւ Բաբդէնի վրայ... Նա դունատւեց, կարմրեց ու վերցնելով յանկարծ Զուզուի գըլխարկն ու վերարկուն՝ նետեց կատաղութեամբ նրա երեսին... Ցետոյ մօտեցաւ, կոպտութեամբ բռնեց թեւից ու փողոց շպրտեց...

Վարդենին ու Անուշը, որ խորին յուզմունքով էին լսում այս բոլորը, նայեցին իրար... Նրանք անմիջապէս յիշեցին տիկին Սաթենիկի մօտ պատահածը...Հասկացան Մարգարիտի արցունքների պատճառը, երբ այն օրը նա այնպէս այլայլւած, ներս էր ընկել սենեակ...

Նրանք հասկացան ամբողջ եղելութիւնը:

Ծանր քարի պէս մի բան ճնշեց նրանց հոգիները:

8

Անցել էին ամիսներ:

Առաջին օրերի ոգեւորութեան յաջորդել էր արդէն փարիզեան յոգնութիւնը:

Անուշն ու Վարդենին դեռ չէին կարողանում բռնել տեմպը նոր կեանքի, ընթանալ ուրիշների հետ կողք-կողքի:

Ուրիշ աշխարհ էին ընկել կարծես:

Դժւար էր այդ բոլորը մանաւանդ Անուշի համար:

Անուշը...

Հէքեաթներով ու երազներով հիւսւած այդ հոգին..., որ դեռ մանուկ օրից սովոր էր նայել կեանքի երեւոյթների վրայ քննող աչքերով, որի հոգու մէջ տարիների ընթացքում կաթել էին բազմատեսակ տպաւորութիւնների չոգեր՝ մերթ զարմանալի ու հետաքրքրական, մերթ անբացատրելի ու առեղծւածային, ընկել էր այժմ մի ուրիշ աշխարհ՝ արեւելքից արեւմուտք...

Մի ուրիշ աշխարհ, ուր այլ էին փոխյարաբերութիւնները, ուրիշ էր ընթացքն առօրեայի, տարբեր էին հոգիները մարդկանց եւ այլ էր խորհուրդը կեանքի:

Իր հոգու աչքերով, աչքեր, որ այնպէս թափանցող էին՝ որ սիրում էին իջնել մինչեւ խորքը երեւոյթների ու դէպքերի, Անուշը սկսել էր արդէն դիտել եւ այս նոր կեանքը:

Բայց ընդհանուր աճապարանքի ու սոսկալի վաղքի մէջ նրա հոգին յոգնում, թուլանում էր եւ իր միտքն յաճախ կամուրջ էր նետում դէպի խաղաղ եւ անկնճիռ այն կեանքը, որ նա թողել էր իր ետեւում...

Խաղաղութիւն հոգու եւ մտքի...

Այժմ, երբ հեռու էր նրանցից, նա մէկիկ-մէկիկ յիշում էր ամեն մանրամասնութիւն... Յիշում էր մանաւանդ մանկութեան իր շրջանը, Բեհեղ տատին, նրա հէքեաթները... Եւ ամեն անգամ, երբ Արեւ աղջկայ շողշողուն հէքեաթն էր յիշում, մարմինը սառուում էր:

Այնպէս ցուրտ էր այս երկիրն իրեն համար...Ցուրտ ու խոնաւ:

Արեւ աղջկայ շողշողուն հէքեաթը, Անուշին յիշեցնում էր եւ իրեն՝ թրթռուն այն հին Անուշին,— տան կայծկլտուն ոգուն, որ կարծես Բեհեղ տատի հոգու ճառագայթներից լինէր շինուած: Գունագեղ գոյների ալիքներով յաւերժ ծփծփուն այն Անուշին՝ կարմիր արշալոյսի շողերի պէս շողշողուն, ջինջ ու պայծառ, որ տաճարներում վառուող մշտավառ կրակի նման, վառւում էր իրենց տան թաքնաթաքուր անկիւններում:

Իր հին այդ պատկերի առջեւ Անուշը տարօրինակ դուրդուրանք էր զգում: Հոգին մի պահ լցւում էր հեռուներից եկող ջերմացնող շողերով:

Ամեն անգամ, երբ բարձր յարկի իր լուսամուտից նայում էր երկնքին ու բիբերի մէջ անդրադառնում էր ցոլքն աստղերի, նա յիշում էր փոքրիկ Անուշին: Երբ արեւի ճառագայթները թափւում էին իր սենեակն ու նա վազելով նստում էր նրանց ճերմակ շողերի տակ, նրա միտքն անմիջապէս դէպի նա էր թռչում: Ծաղկավաճառի մօտից անցնելիս, ծաղիկների եւ վարդերի բոյրն ու գոյնը հին Անուշի երազներով լեցուն աչքերն էին արտացոլում:

Նա ամեն օր Վարդենու հետ միասին գնում էր համալսարան, վերադառնում տուն, պարապում, միւս օրը կրկին գնում համալսարան: Եւ օրերն արագօրէն յաջորդում էին իրար:

Ապրում էին նրանք համալսարանից ոչ հեռու, վեցերորդ յարկի նեղ մի սենեակի մէջ, որի մի հատիկ լուսամուտից երեւում էին իրենց տան դիմացի, աջի ու ձախի բոլոր սենեակները. եւ եթէ մօտենայիր լուսամուտին ու կռանայիր վար, ներքեւում կ՝երեւար քառակուսի փոքրիկ մի բակ, ուր երբեք արեւի շող չէր ընկնում, որովհետեւ չորս կողմից շրջապատուած էր բարձր ու մութ պատերով:

Պանդոկի անարեւ ու նեղ այդ բակը մերթ ընդ մերթ դառնում էր բեմ: Այստեղ էին գալիս փողոցի երգիչներն ու ջութակահարները, այստեղ էր գալիս փոքրիկ ռուս այն աղջիկը՝ կարմիր թաշկինակը գլխին կապած, ղնդզընդան թմբուկը ձեռքին: Գունաւոր շորեր ունէր նա, գունատ այտեր ու շատ երգելուց արդէն փչացած ձայն: Հայրը նւագում էր գարմոշկի վրայ եւ փոքրիկ աղջիկն իր զգայնոտ ձայնով երգում էր հին ռոմանսներ, պարում էր գնչուական պարեր:

Ռուս այդ աղջկայ երգերը Անուշին յիշեցնում էին Նատային:

Նատային ու Զաւէնին...

Տխուր յիշողութիւն... Ու այդ տխուր յիշողութիւնն իր ետեւից քաշում, բերում էր մի շարք ուրիշ յիշողութիւններ՝ երկարաբեխ չինովնիկներ, փայլուն ուսադիրներով սպաներ: Յետոյ այդ բոլորը կամաց-կամաց չքանում էին ու մնում էր միայն Զաւէնը:

Անուշը գիտէր, որ մեծ պատերազմից յետոյ ահագին տարադիրների հետ Նատան եւս դուրս էր եկել իր հայրենիքից ու այժմ գտնւում էր Փարիզում: Արմաշն էր

տեսել նրան։ Նատան երգում էր ռուսական մի ճաշարանում, որտեղ ծառայում էր եւ նրա հայրը — երբեմնի այն զինուորականը, որի մասին խօսելիս՝ Անուշը լիշում էր, Նատան այնպէս պարծանքով էր նայում իրենց...

Ուժեղ, հաստատուն ձայնով տարիքոտ մի կին Անուշենց բակի ամենօրեայ երգչուհին էր։ Միօրինակ ու միապաղաղ մի երգ գիտէր նա, որ երգում էր առանց որեւէ ելեւէջի, հանդարտ, սկզբից մինչեւ վերջ,— բարեխղճօրէն։ Յետոյ կանգնում էր բակի մէջտեղն ու սկսում էր խօսել։

— Ամուսինս սպանուեց պատերազմի դաշտում, պարոններ եւ տիկիններ, մնացի մենակ, պարոններ եւ տիկիններ ու չունեմ ոչ ոք այս աշխարհում, պարոններ եւ տիկիններ...

Անուշը լսում էր այս բոլորը, դիտում էր չրջապատը, յետոյ կրկին խորասուզուում իր պարապմունքների մէջ։ Իսկ հեռից մերթ ընդ մերթ երբեմնի Անուշն իր ոսկէման շողերն էր նետում նրա հոգու վրայ։

9

Ձմեռ էր։

Խոնաւ, անձրեւոտ ձմեռ։ Փարիզը հսկայ արեւածաղիկի պէս բացել էր իր ոսկէ թերթերն ու ծիծաղի կատաղի պոռթկումներ էր արձակում։

Լոյսեր, լոյսեր կարմիր ու կապոյտ, կապոյտ ու կարմիր ու մշուշի մէջ ճառագայթած ճչացող ցուցանակներ՝ Ֆոլի Բերժեռ, Մուլէն Ռուժ, մերկ աղջիկներ ու մերկ տղաներ... Ջազ, ջազ, ջազ։

Սրճարանների մէջ չպարուած կանայք, խուզած մազերով երիտասարդներ ու ամենուրեք զսպուած մի աղմուկ։ Աղմուկ, որի միջից ոչինչ պարզ չի լսուում.— ամեն տեսակի զգացողութիւնների, կրքերի արտառոց խառնուրդից գոյացած ձայների եւ ճիչերի խմբակցութիւն։

Սէն Միշել, Մոնպառնաս, բուլվառներ...Ապաշների թաղը, Կուպոլը, Օլիմպիան եւ Մորիս Շեվալիէի երգերը..

Ma mère,
Dites moi, ma mère...

Պառաւած Միստանգէթի ժպիտով շաղախուած դէմքը, ամեն անկիւնից աչքով է անում ու գոյդ ոտքերի սքանչելի սրունքները ճօճուում են օդի մէջ... Ցատկռտում են, թռչկոտում՝ վայրի, բռնազբօսիկ ոստոյններով վերվեր են նետուում ու յանկարծ Նոտր Դամի գլխի կանաչա-

գլեստ սրբերի վգին փաթաթուում... Հնչում է ջաղը, եկեղեցու մութ զանգուածի վրայ կասկածելի ստուերներ են թափուում ու լսուում է Միստինգէթի պառաւած ծիծաղի ձայնը.

« Fleur pérverse,
Qui nous verse
Tous ses parfums
Tour à tour... »

Եւ ամեն ինչ խառնուում է, կորսուում մշուշի մէջ:

Երեկոյ էր:

Գորշ երկնքից մաղուող մանր անձրեւի տակ, փայլփլող պողոտայի մէջտեղով, գլուխը քարշ գցած, հանդարտօրէն քայլում էր տարօրինակ մի մարդ:

Նրա հասակը բարձր էր, գլխին ունէր մոխրագոյն կէպի եւ ձեռքին փոքրիկ մի պայուսակ:

Առաջին յարկի վրայ գտնուող մեծ ու գեղեցիկ միջանցքի միջով, դէպի երկրորդ յարկ էին ձգուում ճերմակ, լայն աստիճաններ, որոնք վերջանում էին քառակուսի մի նախասենեակում: Նախասենեակի երկու կողմերում բացուում էին սրահներ՝ զարդարուած գեղարուեստական գործերով,— նկարներ, արձաններ, գորգեր, յախճապակէ անօթներ:

Այդ սրահներից ամենամեծը, որի յատակը ծածկուած էր կարմիր թաւիշով, զարդարուած էր հայ նկարիչների գործերով:

Ցուցահանդէս էր:

Մարդիկ գալիս էին, գնում:

Նրանք ներս էին մտնում գլուխները բարձր բռնած, աչքերն այս ու այն պատի, այս ու այն նկարի վրայից արագ սահեցնում, յետոյ շրջան էին անում, կրկին յետ գալիս ու մի նկարի առջեւ գամուում:

Կանգնում էին խորասուզուած, գլուխներն էին ծռում, մօտենում էին նկարին, հեռանում կրկին...

Այսպէս՝ պատահում էր օրինակ պատկառելի արտաքին ունեցող մի մարդ, արուեստի մասին իր ունեցած ըմբռնումներին վստահ ու հպարտ դրանով, կանգնում էր հիացած մի նկարի առաջ... Կանգնում էր նա մէկ ոտքն առաջ նետած, յենած միւս ոտքին, իրանը յետ գցած, աչքերը խոժոռ ու իմացականութեամբ լցուած... Մինչ մէկ ուրիշը, ազդուած նրա խորասուզուած այդ դիրքից, ակնոցները շտապ հագցնում էր քթի սապատին ու գլուխը երկարելով, մօտենում էր նկարին, մի րոպէ խանգարում պատկառելիին, յետոյ յետ-յետ էր գնում ու կանգնում հիացած նրա կողքին:

Հարուստ հայերը, մանաւանդ նրանք, որ հմուտ «կոլեքսիոնեռներ» էին համարուում եւ որոնց ներկայութիւնը նկարիչներին յոյս էր ներշնչում, առհասարակ աչքի տակով էին նայում նկարներին: Ինչ բան էր որ... Հայ նկարիչների ցուցահանդէս... Մի ակնարկով կարելի էր որոշել թէ «մի բան» կա՞ր, չկա՞ր... Իրենք այնպիսի մեծ-մեծ ցուցահանդէսներում էին եղել... Այնքա՜ն մեծ արուեստագէտների գործեր էին տեսել ու... գնել... այո, ու գնել... Իսկական արուեստագէտների գործեր: Հիմա ինչ որ հայ նկարիչների ցուցահանդէս...

Ցուցահանդէսը փակելու նախօրեակն էր:

Նկարիչների մեծ մասը ներկայ էր այդ օրն ու հանդիսաւոր տխրութեամբ՝ աշխարհիս ստեղծագործութիւնից մինչեւ այսօր արուեստագէտին չըմբռնելու, չգնահա-

տելու ճշմարտութեան դառնութիւնը դէմքերին, այս ու այն կողմ կանգնած, խօսակցում էին իրար հետ ու դեռ յոյսը չկորցրած նայում դռներին:

— Ոչ ոք ոչինչ չծախեց այս անգամ:

— Ոչ ոք, ոչինչ:

Հառաչում են, ջանալով ցոյց տալ, որ այո՛ իրենք գիտեն, այդպէս են մարդիկ, այդպէս են եղել նրանք միշտ, միշտ՝ դարեր շարունակ... Բայց այդ ոչինչ չի նշանակում, ոչինչ չի ապացուցում: Իսկ մանաւանդ հայ մարդիկ... Հայ իրականութիւնը...

— Եւ այն էլ Փարիզի մէջ: Երեսուն հազար նկարիչ կայ Փարիզում: Երեսուն հազար...

Ժպտում են մխիթարւած:

— Տաղանդն ի՞նչ անէ, ջանըմ:

— Ի՞նչ կարող է անել:

Նա նայում է վերից, բարձր իր հասակի ծայրից, փոքրիկ, սուր մօրուքը մի փոքր առաջ տնկելով, աչքերն իր սկզբունքներին հաւատարիմ մնալու աներերութեամբ լցւած, չյուսահատւող ու անտարբեր ներքեւ ապրող մարդկութեան բութ տգիտութեան...

Ցածրահասակ նկարիչը նայում է նրան ակնյայտ դայրոյթով:

— Ինքն իրեն Լէօնարդօ է կարծում...

Ու ակնոցները դառնում են նրա կողմը՝ ծաղրական մի ժպիտ ցոլացնելով ապակիների միջից:

— Լէօնա՛րդօ...— նկարիչ, փիլիսոփայ, գիտնական... Ինչու չէ՞: Խեղճ մարդ, մինչեւ ո՞ւր է նետել իր մեծամտութիւնը:

Մինչ փոքրիկ սուր մօրուքը խօսում է հանդարտութեամբ:

— Կախարդական բանալին ձեռքին նա մտաւ Տաճարից ներս ու մէկիկ-մէկիկ բանալով հրաշքների դռները՝ կարողացաւ գտնել համաձրութիւնը գիտութեան եւ արուեստի: Ի՞նչ կարելի է անել առանց կրթութեան... Մինչ մեր նկարիչները...

— Իբր թէ ինքը շատ կրթւած է:

— Հրաշքի գաղտնիքը կայանում է Լէօնարդոյի եւրակի մտաւոր կարողութիւնների եւ համբերութեամբ մշակւած արուեստագէտի իր տաղանդի միասնականութեան մէջ:

— Թուղթակի պէս միշտ նոյնն է կրկնում:

— Միաք, վարպետութիւն, ստեղծագործական թափ, այդ է որ Լէօնարդոյի ստեղծագործութիւնները դարձրել է մնայուն ու կատարեալ, թէ չէ այս փոքրիկ բաները... Մեր այսօրւայ նկարչութիւնը... Ոչինչ բաներ են սրանք:

Սրահի հակառակ կողմում արդիական ըմբռնումներով նկարիչներ են հաւաքւել եւ, դասական դպրոցին հետեւողների հասցէին դանդաղ որակումներ անելուց յետոյ, լուրջ վիճաբանութեան մէջ են:

— Ժամանակակից մեծ արուեստագէտ է Պիգասօն: Նրան հետեւելն արդէն պատիւ է մեզ: Նա անդամահատութեան է ենթարկում ամեն առարկայ, ձեւ: Ամեն ինչ կոտրատւում, հալւում է նրա ձեռքի տակ: Ձեւերի արագ յաջորդականութիւն, խուսափող տպաւորութիւններ, ակնարկների վայրկենական պատկերաւորում: Ամեն բան նրա մօտ կարծես մշտական հոսման մէջ է, բայց եւ միեւնոյն ժամանակ քարացած է կտաւի վրայ՝ յանկարծ կանգ առած մեքենայ խաղալիկի նման:

— Մեքենականութիւնն իր խորն ազդեցութիւնը թողեց նկարչութեան վրայ,— խօսում էր կապուտաչեայ մի նկարիչ, իսկ նրա ունկնդիրը նայում էր նրան լարւած

ուշադրութեամբ, առանց սակայն շատ բան հասկանալու։

Այդ երեւում էր նախ նրա աչքերից, որոնց նա աշխատում էր հնար եղածին չափ ըմբռնողի արտայայտութիւնը տալ, շրթունքների յաճախակի սեղմումից եւ գլխի թափահարումից, որով նա ուզում էր ասել որ այո՛, այո՛, հասկանալի է, հաս-կա-նա-լի է։

— Վերից վար դիտելու հնարաւորութեան շնորհիւ...

Ունկնդիրը բարեխղճօրէն նայում էր նրան. այդ մէկ կէտը շատ լաւ չըմբռնեց կարծես...

— Ինչպէ՞ս վերից-վար...

— Սաւառնակից երկիրը դիտելու հնարաւորութեան շնորհիւ, ստեղծուեց տեսողութեան նոր ձեւ — ուղղահայեաց պերսպեկտիւը, որ ոչնչացնում է առաջին պլանի գոյութիւնը։ Շնորհիւ սինէմայի, վայրկենական լուսանկարչութեան, մարդը ճանաչեց վայրկեանի քարացումը։ Արագութեան խենթ ընթացքի դարդացումը պատճառ դարձաւ, որ այսօրւայ գծագրութիւնը դառնայ ելեկտրիկ՝ ցատկռտող։ Մշնջենական շարժումը տուաւ դինամիզմի զգացողութիւնը։ Դարը հրկիզող նոր շարժումներ են սրանք։

— Ճշմարիտ արուեստը մաքուր, յստակ ներդաշնակութեան մէջ է։ Այն՝ ինչ որ ասում էին հին յոյները, այն՝ ինչ որ կոչւում է դասական։

— Իրապաշտութիւն, իրապաշտութիւն, այդ է ճըշմարիտ ճամբան...

Սրահի հեռաւոր մի անկիւնում, ցածլիկ բազկաթոռի վրայ մխրճուել նստել էր Անուշը։ Նստել էր նա խորասուզուած իր մտքերի մէջ, աչքերը յառած իրենից ոչ հեռու նստած Բարգէնի, Հայկի ու Վարդենու վրայ։

Բարգէնը տխուր էր։ Իր բարձր հասակը համարեա

երկտակուած, թեւերը բազկաթոռի թեւերին յենած, գլուխը յետ գցած ու սեւ աչքերն առաստաղին յառած, նա նայում էր անտարբեր մէկի պէս։ Մերթ ընդ մերթ կախում էր գլուխը, երեսն առնում ափերի մէջ եւ մնում անշարժ։

Հին, գոյնը կորցրած հագուստ ունէր նա, կարկատած կօշիկներ, դէմքը սակայն գեղեցիկ էր։

Նրա սեւ ու խիտ մազերի մօտ, ցորենի հասուն արտի պէս, Հայկի դեղին, ոսկէգոյն գլուխն էր երեւում։

— Շատ հասկանալի է,— ասում էր Բարգէնը,— շատ հասկանալի է։ Այստեղ հայը հանճար իսկ դառնայ, դարձեալ ոչ մի չօշափելի արդիւնքի չի կարող հասնել։ Թերթերը կը գրեն, գուցէ եւ նկարներիդ արտատպութիւնը դնեն, բայց երբեք չեն մոռանայ տակը աւելացնել peintre arménien... Ու կը մնաս խեղճ։

— Ասենք, հայը երբեք էլ հանճար չի դառնայ,— ասաց Հայկը ծիծաղելով։

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ Հայկ։

— Ինչո՞ւ։ Թերեւս որովհետեւ հայը շատ է սիրում կծկուել ինքն իր պատեանի մէջ։ Հայի տաղանդը շատ աւելի բարձրութիւնների կարող էր հասնել, եթէ միայն հայը կարողանար դուրս գալ իր հայութիւնից, նայէր աշխարհին բաց աչքերով, բաց հոգիով։

— Բայց սիրելի Հայկ, այդ խնդրին կարելի է մօտենալ նաեւ հակառակ ծայրից։ Ես շատ անգամներ եմ մտածել այդ հարցի մասին ու ինձ թւացել է երբեմն քո ասածների ճիշտ հակառակը։ Ձէ՞ որ վերջ ի վերջոյ, հայը միշտ ու միշտ բացել է իր հոգին ամեն տեսակի ազդեցութիւնների առաջ։ Մի ժամանակ Ցունաստանի, Հռոմի, Պարսկաստանի, իսկ հետագայում Եւրոպայի «լոյսն» էր քաշում նրան։ Գուցէ, Հայկ, գուցէ ընդհա-

կառակը պէտք է լինէր՝ դուցէ հանճարներ տալու համար հայը պէտք է աւելի ու աւելի խտացնէր իր մէջ իր ցեղի հոգեկան ուժը, շնչէր ու ապրէր առաւելապէս իր հողի վրայ, իր հողի բոյրով, իր երկրի օդով ու ամբարէր, ամբարէր իր մէջ ամեն ինչ որ իրն է, ինչ որ իր ցեղն իրեն է հասցրել դարերի ընթացքին, դարերի միջով:

Հայկը լռեց եւ ուսերը վեր քաշեց.

— Ո՞վ գիտէ...

Նրանք նստած էին Բարգէնի նկարների դիմացը: Երկու նկար էր ցուցադրել Բարգէնը, որոնցից մէկն առաջին իսկ վայրկեանին գամել էր իր վրայ Անուշի ուշադրութիւնը: Դա Մաղարիտի նկարն էր...

Արեւելքի աղջիկը... ձեռքին մի խնձոր... դէմքի կէսը կանաչ, միւս կէսը վարդագոյն եւ մազերը ծովի կապոյտ: Հուրհրան աղջիկ...

Բայց այն՝ ինչ որ դերել էր Անուշին, դա Մարգարիտի զարմանալի հայեացքն էր: Բարգէնը կարողացել էր խտացնել նրա մէջ ջերմութիւն, հուր ու կրակ, արեւելեան խմաստութիւն... Գաղտնիքների փսփսոցին ունկընդիր, տիեզերքի րիթմը ականջին:

Մարգարիտի աչքերը...

Նկարը վերջացել էր առանց «մոդելի», յիշողութեամբ, որովհետեւ շարաբաստիկ այն օրից յետոյ Բարգէնն այլեւս երբեք չէր կարողացել հանդիպել Մարգարիտին:

Զէին կարողացել հանդիպել նրան ոչ Անուշը եւ ոչ Վարդենին: Առաջին այցելութիւնից մէկ շաբաթ յետոյ, երբ նրանք կրկին այցելել էին տիկին Սաթենիկին, դրռնապանուհին նրանց յայտնել էր որ տիկին Սաթենիկն այլեւս այդ պանդոկում չի բնակւում:

Հեռացել էր նա այնպէս յանկարծակի...

Անսպասելի այս լուրը շատ յանկարծակի էր եղել մանաւանդ Վարդենու համար, ու նա ամեն հանդիպողի տիկին Սաթենիկի մասին տեղեկութիւններ էր հարցնում: Նրա համար անհասկանալի չէր տիկին Սաթենիկի այդ վերաբերմունքը: Պարզ էր՝ Մարգարիտը չէր ցանկացել այլեւս հանդիպել Բարգէնի հետ: Բայց Վարդենին մտածում էր իր եղբօր՝ Զաւէնի մասին... Զէ՞ որ իր վերջին նամակների մէջ հայրիկը գրել, յայտնել էր, որ Զաւէնը շուտով պէտք է ճանապարհուէր դէպի Փարիզ... եւ հայրիկը լիայոյս էր, որ ճամբորդութիւնն ու Փարիզը կը ցրէին նրան պատած յոռետեսութիւնը: Ու թէեւ Վարդենին գրել էր հօրը ու պատմել արդէն Մարգարիտի ու Բարգէնի սիրոյ պատմութիւնը, հայրիկը դեռ յոյսը չէր կտրում եւ կարծում էր, որ Զաւէնի Փարիզ գալով գործը մի կերպ կը կարգադրուէր...

— Եւ ի՞նչ անէ հիմա հայ արուեստագէտը, Հայկ,— շարունակում էր Բարգէնը յուզած,— ելք չկայ: Գնա՞յ, ուրանա՞յ ամեն ինչ, ուրանա՞յ իր ազգութիւնը, փոխէ՞ լեզուն ու դառնայ ուրիշ մի բան: Ոչ ոք չի կարող հասկանալ հոգեկան այն ապրումները, որոնց ենթակայ է այսօր հայ երիտասարդութիւնը: Մարդիկ չեն տեսնում դուցէ թէ ինչ է կատարւում՝ հայը կորցնում է հոգին... Ա՛հ, իսկ չկայ ոչինչ աւելի ողբերգական քան կորսուած հոգու ողբերգութիւնը...— Նա յուզած նայեց Մարգարիտի նկարին: — Նայեցէք,— ասաց յանկարծ,— նայեցէք խնդրեմ այս նկարին, սէր, կրակ, մաքրութիւն, բիւրեղութիւն եւ հոգի, հոգի... Մինչ խրած եմ ես ինչ որ ցեխի մէջ: Իմ մէջս լոյս է, իսկ դուրսս խաւար, ես սիրում եմ ապրել կապոյտ երկնքի տակ, բնութեան մաքրամաքուր կապոյտ երագն աչքերին երեխայի պէս, մինչդեռ ապրում եմ այս ծուխ ու մուրի դիրքն ընկած: Ես

ընդունակ եմ սիրելու իմ հոգու ամբողջ ուժով ու ես չեմ կարողանում սիրել... Ես այլասերված, հոգիս կորցրած արեւելքցի եմ, իսկական ես-ս կորցրած հայ եմ... Ես ոչ այս եմ, ոչ այն,— ոչ սառը տրամաբանող Արեւմուտքի մարդն եմ, ոչ հուրն ու բոցը հոգուս մէջ ամբարած արեւելքցին եմ:

Նա լռեց:

Ցանկարծ սրահը լուսաւորուեց: Վերից՝ յատուկ շինուած թաղերի մէջ թաղցրած ճրագներից, լոյսի քուրաներ թափուեցին վար: Նկարները նոր կենդանութիւն ստացան:

Ճիշդ այդ րոպէին էր, երբ առաջին յարկի գեղեցիկ սրահների մէջտեղից դէպի երկրորդ յարկ ձգւող ճերմակ ու լայն աստիճաններով, հանդարտութեամբ բարձրանում էր տարօրինակ այն մարդը... Բարձրահասակ ու խոշոր կազմուածքով տարօրինակ այն մարդը, որ հագել էր մոխրագոյն բաճկոն, սեւ անդրավարտիկ եւ ձեռքին բռնած ունէր նեղ ու տափակ փոքրիկ մի պայուսակ:

Խորը մտցրած դորշ կէպի-ի տակից, աջ ու ձախ նայելով, հանդիսաւորութեամբ բարձրանում էր նա շքեղ այդ աստիճաններից, առանց ուշադրութիւն դարձնելու լինող ու բարձրացող մորթազարդ կանանց ու վայելուչ հագնուած տղամարդկանց վրայ: Երբ հասաւ վերջապէս երկրորդ յարկի նախադաւիթը, զգուշութեամբ մօտեցաւ կարմիր թաւիշով ծածկուած սրահի ապակէ դռներին ու կռանալով, ձեռքի պայուսակը կամացուկ վար դրաւ:

Մտաւ սրահ:

Ամենքի պէս ընդհանուր մի ակնարկ նետեց պատերի նկարներին, ջանաց կարդալ սրա, նրա ստորագրութիւնը, նստեց մի քանի րոպէ թաւշէ աթոռի ծայրին, քորեց ականջն ու կրկին սկսեց քայլել:

Հերթով՝ մէկիկ-մէկիկ նայեց նա բոլոր նկարներին,

բոլոր արձաններին ու կամաց-կամաց առաջանալով եկաւ ու կանգ առաւ Մարդաբիտի նկարի առջեւ:

Կանգ առաւ թէ չէ՝ սկսեց բարձրաձայն ծիծաղել ու դառնալով մօտի երիտասարդին ասաց՝

— Էս ի՞նչ է, տո...

Երիտասարդը նայեց նրան լուրջ դէմքով: Այդ լուրջութիւնն աւելի զարմութիւն պատճառեց նրան եւ նա կրկին ծիծաղեց.

— Հա, հա, հա...

Մարդու արտաքինը, նրա համարձակ մուտքը, արդէն շատերի ուշադրութիւնն էր դրաւել:

— Ո՞վ է:

Ամենքը նայում էին նրա կողմը:

Իր բազկաթոռի վրայից Բարգէնը նոյնպէս սկսել էր հետաքրքրութեամբ նայել տարօրինակ այդ անծանօթին ... Իսկ անծանօթը շարունակում էր կանգնած մնալ նկարի առջեւ, որի խառը գոյների միջից ըստ երեւոյթին աշխատում էր որոշել բովանդակութիւնը:

Բայց այդ ժամանակ կատարուեց յանկարծ անսպասելի մի դէպք: Մարդը յանկարծ շուռ եկաւ... Շուռ եկաւ կարծես մի բանից ցնցուած, յետ-յետ գնաց, լայն թիկունքների վրայ ցցեց գլուխը եւ ուշադրութեամբ սկսեց դիտել... Անուշին...

Երկուսն էլ րոպէապէս քարացան:

Անուշն աչքերը լայն բացած նայում էր նրան...

Ահա, ահա խոշոր գլուխը, մազերի խուրձը գլխարկի տակից ճակատն ի վար ընկած... Ահա քիթը, հաստ շրթունքները, թիկնաւէտ հատակը...

— Սպասիր, սպասիր մի լաւ նայեմ է՛,— խօսեց յանկարծ մարդն ու առաջացաւ դէպի Անուշը:

Նրա ձայնը փարատեց ամեն կասկած:

— Արտո՛,— դոչեց Անուշը...

Հրեղէն ձին ճեղքեց ամպերը... Ոսկէ բաշը ձեռքին կարիճ ձիաւորը քշեց փրփրած երիվարն իր... Սեւ եափունջին փողփողաց նրա մէջքին ու ճերմակ փափախի տակից կայծ տուին աչքերը...

Գետնի վրայ դանուող խորհրդաւոր մի դուռ բացուեց, — կանաչ մարդագետին, դոյն-դոյն ծաղիկներ, պտղատու ծառերի շարաններ, ոսկէ տանձեր, յակինթէ խնձորներ... եւ այնտեղ, հեռուում բարտիների մօտ կանգնած, բրոնզէ արձանների պէս, ճերմակ ձիերի սանձը ձեռներին, հայդուկների խմբեր...

— Արտո՛, դո՞ւ... — դոչեց Վարդենին Անուշի հետեւից ու նրանք երկուսով վեր թռան նստած տեղերից:

Արտօն յուզւել էր:

Մի քանի րոպէ առաջ քահ-քահ ծիծաղող այն մարդը չէր կարծես: Նրա աչքերը լցւել էին անհուն սիրով ու կարօտով...

— Աղջի ջան, դուք էք՛... նայում եմ, նայում... Ես ի՞նչ իմանամ որ...

Նա յուզմունքից չգիտէր ինչ ասել ու քնքշութեամբ մերթ Անուշին, մերթ Վարդենուն էր նայում:

Անուշն ու Վարդենին բռնեցին Արտօի թեւից եւ ուրախ-ուրախ մօտեցրին նրան արդէն ոտքի կանգնած Հայկին ու Բարգէնին:

Հայկն անմիջապէս նոր մի բազկաթոռ բերաւ: Արտօին տեղաւորեցին իրենց մէջտեղն ու շրջապատեցին նրան:

— Գործից տուն էի վերադառնում. գիտէի, որ այսօր ցուցահանդէսի վերջին օրն է: Դէ, մեր հայ նկարիչներն են, չէ՞, ասացի գնամ, տեսնեմ թէ ի՞նչ են նկարում... Մենք էլ մի դաղափար ունենանք, չէ՞:

— Իսկ ինչո՞ւ էիք ծիծաղում իմ այս նկարի վրայ, հարցրեց Բարգէնը հետաքրքրւած:

Արտօն աչքերը դարձրեց նկարի վրայ ու սկսեց նորից ծիծաղել: Այնպէս ապատ, անկեղծ էր ծիծաղում Արտօն, որ բոլորը վարակւեցին նրանից:

Անխարդախ, հում, չտաշւած, չքաղաքակրթւած այդ մարդու ներկայութիւնը, չքեղ սալոնի մէջ, այնպէս յանկարծակի հաճելի թւաց բոլորին...

— Էդ դո՞ւ ես նկարել,— հարցրեց նա.— Բա ես ինչ իմանամ, ախպէր ջան... Կարմիր, կանաչ աղջիկ ես նկարել, ասես վարդերի փունջ լինի: Մարդն հօ էդ տեսակ չի լինում, չէ՞... Մազերն էլ կապոյտ ես արել, բնութեան մէջ կապոյտ մազ կա՞յ:

— Գիտես ո՞վ է Բարգէնը, Արտո,— հարցրեց Վարդենին, նկատելով, որ Արտօն չի յիշում Բարգէնին:

Արտօն գլուխը բացասական շարժեց ու միաժամանակ աչքերը յառեց Բարգէնի երեսին:

— Եաւաշ տեսնեմ... Հը՞... Կարծես թէ ծանօթ դէմք լինի...

— Այո՛, ծանօթ է, Արտո. Բարգէնը Գրիգոր աղայի տղան է, չե՞ս յիշում:

— Վահ, քո տունդ չքանդւի... ինչպէ՞ս չեմ յիշում, ինչպէ՞ս չեմ յիշում... Քո հայրը պատուական մարդ էր, լաւ էլ բաժակ բռնող էր, իմ արեւը... ազնիւ մէկն էր... Ուրեմն, դու էլ հիմա նկարիչ ես դարձել, հա՞... Լաւ, լաւ... Բայց էդ խեղճ աղջկան...

Ու Արտօն նորից դարձաւ դէպի նկարը:

— Արտո, Արտո,— ասաց յանկարծ Վարդենին մի բան յիշողի փութկոտութեամբ,— այդ նկարը տիկին Սաթենիկի աղջկայ՝ Մարգարիտի նկարն է... Դու յիշում ես, չէ՞, տիկին Սաթենիկին... Աա, խնդրեմ, երբեք-

երբեք չե՞ս հանդիպել նրանց այստեղ, Փարիզում... Ո՞ւր են ապրում հիմա... Դու գիտե՞ս նրանց նոր հասցէն:

Արտօն աչքերը լայն-լայն բացած՝ նայեց մէկ նկարին, մէկ Վարդենուն...

— Չէ՛... Ի՞նչ ես ասում... Էս մեր Մարգարիտն է... Ասենք աչքերը նման են է՛...

Ու առանց պատասխանելու Վարդենու հարցին, Արտօն վեր կացաւ տեղից, մօտեցաւ կրկին նկարին... Նայեց երկար-երկար... աջից, ձախից...

— Բաւականին նմանութիւն կայ, երբ որ լաւ նայես... — ասաց մտահոգ ու նստեց:

Վարդենին հարցական նայեց նրան:

Արտօն գլուխը բարձրացրեց:

— Այո՛,— ասաց,— տիկին Սաթենիկն իր ուզածն արաւ էդ խեղճ աղջկայ հետ:

Բարգէնն ուշադրութեամբ նայեց Արտօին:

— Դուք ճանաչո՞ւմ էք նրանց:

— Ճանաչում եմ... Ի հարկէ, որ ճանաչում եմ... Մէկ ամբողջ տարի միեւնոյն պանդոկի մէջ ենք ապրել:

— Հօրէլ Օրթո՞լան,— հարցրեց Վարդենին ծայր աստիճան հետաքրքրուած:

— Հօրէլ Օրթոլան:

— Իսկ ո՞ւր են հիմա նրանք:

— Հեռացան մեր պանդոկից նրանք չափազանց անսպասելի արագութեամբ,— սկսեց պատմել Արտօն: — Մի օր յանկարծ իմացայ որ չկան... Ե՞րբ էին մեկնել, ո՞ւր էին մեկնել չիմացայ:

— Ցետո՞յ: — Երբեք, երբե՞ք այլեւս չհանդիպեցիք նրանց,— հարցրեց Բարգէնը:

— Հանդիպեցի... Այո՛, հանդիպեցի... — Արտօն

տխրութեամբ գլուխը շարժեց: — Վերջերս, բոլորովին պատահմամբ հանդիպեցի:

Ամենքը հետաքրքրուած լսում էին նրան:

Բարգէնի դէմքը սաստիկ յուզած էր:

Մարգարիտի անակնկալ անհետանալը շատ խորն ազդեցութիւն էր թողել նրա վրայ... Իրեն համար իսկ անսպասելի ազդեցութիւն: Կորել էր կարծես թանկագին մի բան, վերջին մի կայծ երբեմնի բիւրեղ իր զգացմունքներից... Երբեմնի սիրող իր հոգուց:

Բարգէնը երբեք չէր կարող երեւակայել, որ Մարգարիտի կորուստն այդպէս ծանր ազդեցութիւն պիտի թողնէր իր վրայ: Տարիների փարիզեան կեանքն այնպէս էր յեղաթիւրել իր հոգին, որ Բարգէնը մոռացել էր իր իսկական էութեան ինչ լինելը: Սովորել էր ապրել առանց ինքն իր վրայ անդրադառնալու, փարիզեան կեանքի հետ համընթաց՝ գլտորուելով, պատէ-պատ զարնուելով: Մարգարիտի կորուստը կարծես սթափեցրել էր նրան:

— Ես գիտէի արդէն,— շարունակեց Արտօն հանդարտութեամբ,— գիտէի, որ տիկին Սաթենիկը նրա շուրջն էն ֆրանսացուն էր պտտցնում շարունակ, բայց չգիտէի որ... Վաղուց էր չէի տեսել, մի օր հեռու մի թաղամաս էի ընկել... Պատահմամբ մտայ մի խանութ ու տեսնեմ, ի՞նչ տեսնեմ... Միեւնոյն ֆրանսացին, սպիտակ դոգնոցը հագին, կշեռքի առաջ կանգնած գետնախնձոր է կշռում: Էս կողմ, էն կողմ... Պատի տակ նըստած էր ինքը՝ տիկին Սաթենիկը կար էր անում... Մէկ էլ գլուխս միւս կողմ դարձնեմ... Մարգարիտը կէսի առաջ նստած դրամներն է հաշուում: «Հա՛ բարեւ, բարեւ, բոնժուռ, բոնժուռ, ինչպէ՞ս էք»... Ճիշդն ասած, մի փոքր շփոթուել էի, չգիտէի՝ ի՞նչ ասեմ, ի՞նչ հարցնեմ: Հասկացել էի արդէն թէ գործն ինչո՞ւմն է... Էս կողմ,

էն կողմ, տիկին Սաթենիկը թէ դէ՝ «Հա, Մարգարիտն ամուսնացել է մըսիո Ժոզէի հետ»...

— Մըսիո Ժոզէի հե՞տ... ամուսնացե՞լ է արդէն... — դոչեց Վարդենին զարմացած ու յուզուած:

Արտօն գլխով դրական շարժում արաւ:

Վարդենին նայեց Անուշի կողմը:

— Ցիշում ես, չէ՞, այն Ֆրանսացուն:

— Ցիշում եմ... — պատասխանեց Անուշը:

Բարգէնը ձեռքը խփեց ծնկին:

— Մարգարիտ... եւ մըսիո Ժոզէ...

— Նստած էր կէսի առաջն ու դրամներն էր հաշւում: Նայեցի: Հերթիս էի սպասում: Լաւ էլ խանութ էր մարդի խանութը: «Մի, մի էքստրաօրդինեռ տղայ է,— ասում էր տիկին Սաթենիկը,— ինքն էլ գտարիւն Ֆրանսացի է»... — Շարունակում էր պատմել Արտօն, բայց Վարդենին այլեւս նրան չէր լսում... Նա մտածմունքի մէջ էր ընկել:

Մարգարիտն ամուսնացել էր... Մարգարիտն ամուսնացել էր... Իսկ Զաւէնը գալիս էր... Եւ ինքը կարծում էր թէ... մըսիո Ժոզէ... գտարիւն Ֆրանսացի...

— Իսկ էն ինչ երես էր Մարգարիտի երեսը... Ասուլած հեռու տանի: Դանակ խփէիր՝ արիւն չէր դուրս գայ... Կարծես թէ հոգին իրա մէջից վախել, գնացել էր: Աչքերը, ինչպէս որ շիւշա... Ամեն անգամ, որ ամուսինը յաճախորդի ձեռքն ապրանք դնելով, գոռում էր «էէս սիլ վու պլէ», էն խեղճ աղջիկը բարձրացնում էր կախ ընկած գլուխն ու ժպտալով նայում էր յաճախորդին... Բայց ի՜նչ ժպիտ... Մարդու լացն էր գալիս: Ժպտում էր, յետոյ իսկոյն լրջանում, սառում, մնում... Սիրտը չորացել էր կասես:

«Մարգարիտը, դաշնամուր եւ մենակեաց փշատենին»,— մտածեց Բարգէնը դառնութեամբ ու նայեց ակամայ իր նկարին:

Լռեցին:

— Մալխաս,— ասաց քիչ յետոյ Արտօն ու դարձաւ Հայկի կողմը: — Դէ, հիմա դու պատմիր նայեմ, մեր տղայ, ո՞ւր էիր մինչեւ հիմա:

Ու մինչ Հայկը պատմում էր Արտօին, թէ կեանքն իրեն ինչպէս ափէ-ափ նետեց, ինչպէս ընկաւ Փարիզ, վերյիշում էր Թաւրիզը, իրենց տունն ու ծանօթներին, իսկ Անուշն ու Վարդենին միջամտում էին անվերջ ու պատմում, պատմում, Վարդենին յանկարծ նկատեց, որ Բարգէնը չկայ: Նա անմիջապէս բարձրացաւ տեղից ու սկսեց աչքերով փնտռել Բարգէնին:

Հեռու, թափուր մնացած մի բազմոցի վրայ, մենամենակ նստել էր Բարգէնն ու գլուխն առել ձեռքերի մէջ:

Վարդենին կամացուկ մօտեցաւ նրան եւ ձեռքը դրեց նրա ուսին: Բարգէնը ցնցւեց, շտկւեց ու տխրութեամբ նայեց Վարդենուն:

— Վարդենի՛... Նստիր ինձ մօտ, Վարդենի, ես այնպէ՛ս մենակ եմ այսօր...

Վարդենին նստեց անմիջապէս:

— Տխրեցի՞ր... Մարգարիտն ամուսնացել է... Բայց չէ՞ որ միեւնոյն է, Բարգէն, Մարգարիտը եւ դու...

— Իրաւացի ես... Բայց կորցնելով Մարգարիտին, ես կորցրի ինձ... Այդ է որ ողբերգական է: Մարգարիտն իմ հոգու փրկութիւնն էր եւ ես չհասկացայ այդ:

Վարդենին նայեց նրան:

Բարգէնն անկեղծ էր խօսում:

Բայց յանկարծ Բարգէնը դարձաւ Վարդենու կողմը, երկու ձեռքերը մեկնեց դէպի նա, բռնեց նրա ձեռքը:

— Վարդենի... բայց այդ բոլորն անցաւ... անցաւ... Այդ երէկ էր... Այսօր ես ուզում եմ փոխուել այլեւս: Դու ասում էիր, որ մեր տան ապակիները կոտրատուած են եւ որ մեր տունը կիսաւեր վիճակի մէջ է հիմա... Ես ուզում եմ վերաշինել մեր տունը, Վարդենի: Ես ուզում եմ փախչել Արեւմուտքի այս հրէշից, որ «քաղաքակրթութիւն» անուան տակ չոգել է մեր բիլին ու խեղդում է մեզ: Պէտք է փախչել, փախչել... այլապէս ուշ կը լինի: Ես ուզում եմ դառնալ դէպի իմ իսկական էութիւնն ու ապրել իմ հոգու կապոյտով: Դու գիտե՞ս, Վարդենի, թէ ինչի՞ եմ ընդունակ ես... — Ես ընդունակ եմ մոռանալ ամեն -ամեն բան՝ անկումներով լեցուն իմ անցեալն ու գնալ... Բայց ես այնպէ՞ս մենակ եմ... Հաւատա՛, որ այն ինչ որ դու տեսնում ես, այն կեանքը, որով ապրում եմ այսօր, դա արտաքին շպարն է իմ հոգու, որի տակ թաղնուած է մարդը իր իսկական արժանիքներով: Հաւատա՛, հաւատա ինձ, Վարդենի...

Վարդենին ապշած նայում էր Բարդէնին: Նա լսում էր նրան ուշադրութեամբ ու կարեկցութեամբ, բայց պատասխանելու ոչինչ չէր գտնում:

— Նայում եմ այժմ ես իմ շուրջը... մենակ եմ, բոլորովին մենակ: Ու թւում է ինձ, որ դու՝ դու, որ եկել ես իմ ծննդավայրից, եկել այն հին աշխարհից, որտեղից եկել եմ եւ ես, դու միայն կարող ես ինձ հասկանալ, դու միայն կարող ես... Օգնիր ինձ, Վարդենի... Օգնիր ինձ...

Ու Բարդէնը փրկութիւն հայցող մէկի պէս՝ մէկի պէս, որ անդօր այլեւս լողալու, փոթորկուած ծովի ալիքների մէջ ընկած, ձեռքը նետում է առաջին պատահած տաշեղին, կրկնում էր անդադար՝

— Օգնիր ինձ, Վարդենի, օգնիր ինձ... Զգում եմ, որ յետոյ ուշ կը լինի այլեւս, ուշ կը լինի յետոյ... Իմ մէջ բոյն դրած մէկ ուրիշ ես-ս հուժկու իր գլուխը կը բարձրացնի մի օր ու կը կտրի իմ վերադարձի ճամբան: Հող, երկիր, հայրենիք ինձ համար անիմաստ խօսքեր կը դառնան ու կը կորչեմ ես: Փախչել, փախչել...

Նա ուժգնօրէն սեղմում էր իր ափերի մէջ Վարդենու դողացող ձեռքը:

Բայց այդ ժամանակ սրահի լոյսերը մարեցին: Կամաց-կամաց դուրս եկան ուշացած վերջին այցելուները: Արտօն, Հայկն ու Անուշն արդէն մօտենում էին նրանց:

Վարդենին զգուշօրէն ազատեց իր ձեռքը Բարդէնի ձեռքերից ու ոտքի ելաւ:

Մոխրագոյն լուսաւորութեան տակ մեծ այս սրահի պատերից կախուած նկարներն այնպէ՞ս խորհրդաւոր տեսք էին ստացել...

Ցար եւ նման Փարիզի պանդոկների ուրիշ սենեակներին, լայն մահճակալ՝ վրան բնբուլով չինուած խոշոր բարձ, բուխարեկ, ապակու տակ դրուած հնադարեան ժամացոյցով, որ երբեք չի գործում, լուացարան՝ տաք ու սառը ջրի ծորակներով ու քսանհինգ մոմանոց առաստաղին կպած մի լամպ.—

Արտօի սենեակը:

— Ի՞նչ զարմանալի զուգադիպութիւն, ի՞նչ զարմանալի զուգադիպութիւն,— կրկնում էր անդադար Արտօն եւ ուրախ-ուրախ գնում էր դալիս, գրկում մերթ Վարդենուն, մերթ Անուշին, շոյում էր նրանց գլուխները:

— Ուսանելու էք եկել, հա՞:

— Այո՛, Արտո, ուսանելու ենք եկել:

Արտոն նստեց նրանց կողքին: Ու սկսեց կրկին ու կրկին հարց ու փորձ անել նրանց Թաւրիզից, Նուբարից, Մարջան հօրաքրոջից... Յետոյ մտածմունքի մէջ ընկաւ ... Բայց այդ տեւեց միայն մի բոպէ, նա ժպտաց խոկոյն, վեր կացաւ տեղից, մօտեցաւ պահարանին, հանեց այնտեղից սպիտակ փոքրիկ ճրագը, վառեց, դրաւ սեղանին, բացատրեց, որ դա իր ինքնաեռն է, յետոյ հանեց պահարանից ամեն ինչ, որ ունէր՝ հաց, պանիր, իւղ, պտուղ եւ գինի ու ժպտաց կրկին:

— Այս գիշեր միասին պիտի ընթրենք,— ասաց նա ուրախացած երեխայի պէս:

Անուշը հետեւում էր նրա բոլոր շարժումներին:

Հայդուկ Արտո՞ն էր դա...

Ինչպիսի սովորական մարդ էր...

— Ինչո՞վ ես պարապում դու այստեղ, Արտո,— հարցրեց Անուշը, բայց զգաց յանկարծ, ինքն իսկ չիմանալով թէ ինչո՞ւ, որ չպէտք է հարցնէր... Պարզ այդ հարցն այնպէս տարօրինակ մի բովանդակութիւն ստացաւ յանկարծ, այնպէս նշանակալից դարձաւ...

Արտոն սակայն պարզութեամբ նայեց նրան եւ հանդարտ ձայնով պատասխանեց.

— Գործարան եմ գնում, սիրելիս, ինչպէս բոլոր լնձ նմանները: Է՛հ, տարաղիր վիճակ է:

— Ի՞նչ գործարան:

— Օթոմոբիլի գործարան:

— Դու օթոմոբի՞լ ես շինում:

Արտոն ծիծաղեց:

— Օթոմոբիլի վայտեայ կառուցածքի մի մասն եմ շինում միայն: Առաւօտեան ժամը 6-ից, մինչեւ երեկոյեան ժամը 6-ը: Այո՛,— շարունակեց նա,— այդպէս, ստիպուած ես:

Եւ Արտոն կանգնեց յանկարծ, կանգնեց ու սկսեց նկարագրել... Խոշոր ձեռքերով զանազան շարժումներ անելով, մատները բանալով ու փակելով՝ պատմածը տեսանելի դարձնելու համար:

— Մեծ մի աշխատանոց... Բազմաթիւ մեքենաներ, զանազանատեսակ... Երկար շարաններ բանւորների: Մի մասը պտուտակն է դարձնում, միւսն անիւի վերի մասը յղկում, երրորդը ներկում է, չորրորդը փայլեցնում: Դառնում են փրէզ-ները, տուպի-ները — մօրտէզները: Մարդը կանգնել է խոշոր մեքենայի առաջ ու բարձրացնում է ձեռքը, նորից իջեցնում: Նա յենւած է միշտ ոջ ոտքին, մէջքը ծռած, վիզը դէպի առաջ երկարած... Այսպէս տասը ժամ, այսպէս ամեն օր... Մեքենան դղրդում է, դառնում է կաչէ գօտին՝ պտտցնում խոշոր մի անիւ՝

Տիկ, տակ, տակ,
Տիկ, տակ, տակ...

Պէտք է շտապել, պէտք է միշտ շտապել: Վարանել չի կարելի. հարեւանն իր ժամանակին կը նետէ պիէսը. եթէ ուշանաս, հերթը կը կորչէ, «շղթան» կը կտրուէ: Երկու վայրկեան, երկու վայրկեանի մէջ պէտք է հասցնես... Ու այդ երկու վայրկեանների մէջ, ինչե՛ր ինչե՛ր չեմ վերյիշում ես... — աւելացրեց Արտոն վերստին նըստելով ու գլուխը կախելով... — Երբեմն-երբեմն մեքենայի տիկ-տակն ականջիս գուռնի ձայնի է նմանւում... Ու յիշում եմ... — Նա մի բոպէ լռեց, ձեռքով երեսը շփեց... — Ու լսում եմ... ա՛յ շաբաշ, ա՛յ շաբաշ... Ի՞նչ անեմ,— շշնջաց յանկարծ,— չեմ կարողանում՝ ուրիշին սիրել չեմ կարողանում այլեւս... Էս սիրտս չի կարողանում մոռանալ նրան...

Լռեց:

— Փոթորիկի պէս մի բան էր մեր կեանքը, փոթորիկի պէս մի բան... Քամիները ոռնացին, կայծակները հարւածեցին ու ջարդւած մեր նաւի բեկորները դուրս եկան անհարազատ ափեր... Իսկ յոյսերի ի՜նչպիսի օրեր ապրեցինք... Դու դեռ փոքր էիր,— Անուշ: Նստում էիր ծնկներիս վրայ ու փափախս գնում գլխիդ: Դու չէիր հասկանում... Հայաստան էին մեկնում երկու եւրոպացիներ. գնում էին բարենորոգումների ծրագիրն իրագործելու: Ու մէկ էլ յանկարծ՝ պատերազմ... Այնուհետեւ կամաւորական խմբեր, կռիւներ ու անխախտ համոզում, որ այսօր-վաղը Վան պիտի լինենք, Էրզրում պիտի դրաւենք: Ի՞նչ Վան, ի՞նչ Էրզրում: Նահանջ ու ջարդ ու մէկ միլիոն զոհ... Փոթորիկ էր, փոթորիկ: Սարդարապատի հերոսամարտի շնորհիւ կարողացանք պահել փոքրիկ մի հողամաս, որ 1920 թւին բոլշեւիկների ձեռքն անցաւ: Ես էլ մի կերպ ինձ զցեցի Բաթում, ապա Պոլիս, Ցունաստան, Բուլգարիա, յետոյ Փարիզ: Ո՞վ կարող էր երեւակայել, որ մի օր Փարիզում, հայ նկարիչների ցուցահանդէսի մէջ, պէտք է հանդիպէի քեզ, պէտք է հանդիպէի ձեզ: — Նա ժպտաց, կարճ, վաղանցիկ մի ժպիտով.— Այո՛, բազմազան են հայ ժողովուրդի ուղիները աղջիկս:

Սպիրտէ փոքրիկ ճրագի վրայ դրւած ջուրն աղմուկով եռում էր արդէն: Արտօն վերցրեց շրթունքը կոտրւած մի բաժակ, որ ծառայում էր իբր թէյաման, չոր թէյի մի բուռ նետեց նրա մէջ ու սկսեց լցնել բաժակները:

— Հիմա այլեւս ոչինչ չունեմ աշխարհիս երեսին՝ ոչինչ ու ոչ ոք, բացի... յիշատակների մի խուրջինից:

Ու նա ցոյց տւաւ պահարանի մօտի անկիւնում խնամքով տեղաւորւած, դունագեղ թելերից հիւսւած իր խուրջինը:

— Այդ խուրջինի մէջ է իմ ամբողջ հարստութիւնը՝

հոգեկան հարստութիւն, ի հարկէ... Երբեմն, երբեմն բացում եմ այն, հանում մէջի եղած չեղածը, նորից դասաւորում... Ու...

Արտօն ակնյայտ ուրախ էր, որ առիթ էր ներկայացել կրկին անգամ պատմելու իր խուրջինի մասին: Անուշը զգաց այդ ու չյապաղեց խնդրել Արտօին բանալ խուրջինը, ցոյց տալ իրենց թէ ինչեր կային նրա մէջ պահւած...

Արտօն վեր թռաւ տեղից: Անակնկալ այդ հանդիպումն այնպէս էր ուրախացրել նրան, որ նա պատրաստ էր ցոյց տալ ամեն-ամեն ինչ, խօսել ամեն-ամեն բանի մասին, ինչի մասին որ տարիներ լռել, սուս էր արել:

Արտօն զգուշութեամբ բարձրացրեց խուրջինը, տեղաւորեց աթոռի վրայ ու սկսեց քակել հանգոյցները:

— Ունեմ շատ հին լուսանկարներ, որոնք թերեւս ձեզ հետաքրքրեն:

Անուշը լցւած հետաքրքրութեամբ՝ դէմքը մօտեցրեց խուրջինին:

Առաջին իրը, որ Արտօն զգուշութեամբ դուրս քաշեց խուրջինի միջից, խոշոր մի ալբոմ էր: Մի բոպէ մնաց անշարժ, յետոյ ալբոմը մեկնեց երկու քոյրերին:

Լուսանկարների մի հաւաքածու էր, որի առաջին էջի վրայ ամրացրած էր Մարօի մեծադիր նկարը, սիրաշատ աչքերով, ծաղիկների մի փունջ կրծքին, երկու ձեռքերը կրծքին սեղմած:

Անուշն ու Վարդենին երկար-երկար նայեցին իրենց հօրաքրոջ աղջկայ հին այդ լուսանկարին:

— Նա մեռաւ,— մի պահ լռութիւնից յետոյ, հազիւ լսելի ձայնով արտասանեց Արտօն,— բայց իմ հոգում նա միշտ կենդանի է: Կեանքիս մէջ երկու անգամ եմ ես ուժեղ տառապել ու զգացել կսկիծի ամբողջ խո-

րութիւնը,— աւելացրեց նա հառաչելով,— սիրտս երկու անգամ է միջից ճեղքւել...

Անուշը, որ ծանօթ էր Արտօի եւ Մարօի սիրոյ պատմութեան, հարցական նայեց նրան,— երկու անգա՞մ էր սիրել արդեօք:

Արտօն այդ հայեացքին չպատասխանեց: Նա տխրութեամբ նայեց Անուշին ու դարձրեց ալբոմի էջը:

— Ճանաչո՞ւմ էք,— հարցրեց ցոյց տալով երկար մօրուքով ու բեխերով, հայդուկի տարազներ հագած ու կողք-կողքի կանգնած երկու անձնաւորութիւններ, որ յենւած իրենց հրացանների վրայ՝ նայում էին խրոխտ ու հաւատով լցւած աչքերով:

Թէ Անուշը եւ թէ Վարդենին անմիջապէս ճանաչեցին Արտօին ու իրենց հօրեղբայր Համբարձումին, որ Արտօի հետ անցել էր Կովկաս ու անհետ կորել:

Արտօն յուզւած էր... Աչքերը լայն-լայն բացած՝ գլուխը մօտեցրել էր նկարին... Կռացել էր կարծես իր անցեալի վրայ ու պրպտում էր նրան կեռ մի ունելի ձեռքին... Մի անցեալ, որ չկար այլեւս. անհետ կորած մի անցեալ, որի յիշողութիւնները հնամաշ ու դեղնած լուսանկարներ էին դարձել միայն... Անցեալ՝ լի ռոմանտիք զգացողութիւններով, որ այլեւս երբեք, երբեք չպէտք է կրկնւէր:

Նրանք կամացուկ գլուխները բարձրացրին ու նայեցին Արտօին... Նրա դէմքն այլայլւած էր, աչքերը լցւած էին անհուն տխրութեամբ: Պարզ էր, որ Արտօն ապրում էր այդ անցեալով, աշխատում էր միշտ հրահրել, միշտ վերակենդանացնել այն իր յիշողութեան մէջ:

— Երբ կարօտը շատ է տանջում հոգիս, այն ժամանակ փակում եմ դուռս, նստում մենակ ու... — մի պահ խօսքը կիսատ թողեց... — ու դնում եմ առջեւս այս տուփը:

Եւ Արտօն ձեռքը տարաւ դէպի խուրջինն ու հանելով այնտեղից փոքրիկ թիթեղեայ մի տուփ՝ դրաւ սեղանին:

— Այստեղ է տեղաւորւած իմ Հայաստանը,— ասաց նա երկիւղածութեամբ,— Այս է իմ սրբութիւնը...

Մի բուռ հող ու փոքրիկ մի սրւակ ջուր...

— Երբ բացում եմ այս արկղն ու դնում առաջս, անմիջապէս քակւում են թելերն յիշողութեանս ու միտքս ոլորապտոյտ ճանապարհներով յետ է դնում ու վերյիշում ամեն, ամեն կարօտ: Այս հողը Կարսի հողից է, իսկ ջուրը Երեւանից է: Տեսէք, քանի՞ տարի է անցել, դոյնն անգամ չի փոխել, փակ այս սրւակի մէջ մնացել է թարմ, յիշողութիւններիս պէս:

Ցետոյ Արտօն հանեց կլոր մի փափախ:

— Սա էլ, երբեմն-երբեմն տանը դնում, նստում եմ... Դէ, այստեղ անյարմար է փողոցում ծածկելը:

Արտօն փափախը դրաւ գլխին ու ժպտաց: Ցանկարծ նա ձեռքը մեկնեց ու խորհրդաւորութեամբ դուրս քաշեց խուրջինի խորքից երկար մի իր...

— Շո՞ւր...

— Այո՛, շուր, այս էլ Հայաստանից եմ բերել:

Ու ոգեւորւած՝ ծռեց փափախը: Ցենուեց մահճակալի երկաթին ու գլուխը վեր բռնած՝ սկսեց նւագել:

Սենեակը լցւեց «Հովւի բայաթի»ի մելամաղձոտ կլկլոցներով:

Արտօի մեծ ու կլոր մատները զարմանալի հմտութեամբ սահում էին շուրի անցքերի վրայով: Նուրբ ու տխուր ձայնը պարզ այդ գործիքի երազի միջից էր գալիս կարծես... Հեռո՛ւ-հեռո՛ւմ՝ դաշտեր ու ճերմակ

դառներ··· փոքրիկ մի հովիւ, սարի լանջին սիրուն մի գիւղակ, ու ծաղկած նշենիներ:

— Իսկ ա՞յս ինչ է, Արտո,— հարցրեց Վարդենին՝ դուրս քաշելով խուրջինի միջից հաստ ու խոշոր մի տետրակ:

Արտոն, որ գրպանից թաշկինակը հանած խնամքով շուրի ծայրն էր հորացնում, լրջացաւ իսկոյն:

— Դա՞, դա իմ միակ մխիթարութիւնն է,— ասաց նա՝ շուրն դնելով սեղանի վրայ ու ձեռքը տարաւ դէպի տետրակը:

— Հում նիւթ ապագայ պատմութեան համար: Որովհետեւ կարեւոր բաներ կան··· Մեզ պէս մարդիկ, մի տեսակ, ստիպւած են, այսպէս ասած, գրի առնել···

Եւ Արտոն սկսեց հանդարտութեամբ եւ հանդիսաւորութեամբ թերթել յուշատետրի էջերը:

Նրա հաստ շրթունքները իրար վրայ եկան, այտերի երկու ակօսներն աւելի խորացան եւ ճակատը կնճռոտուեց: Վարդենին մի րոպէ կռացաւ տետրի վրայ, բայց անմիջապէս գլուխը յետ քաշեց:

— Տես, տես, դաղտնի բան չկայ, պատմութիւն է, յուշերս են··· Գրել եմ ես գլխաւորապէս Կարսի մասին: Բիչ առաջ ասացի ձեզ, որ ես երկու անգամ եմ դաղցել մահուան սարսափը՝ սիրտս երկու անդամ է մէջտեղից պատուել··· Մէկ անդամ, երբ մեռաւ Մարօն, իսկ միւս անդամ, երբ Կարսը յանձնեցինք թշնամուն: Տասներկու գլուխ է: Եթէ դործարանն ու այդ անպիտան մեքենաները չլինէին, որ կլանում են իմ ժամանակը, արդէն վերջացրած կը լինէի: Առաջին գլխի վերնագիրն է՝ «Բէդլի-Ահմեդի կայարանում»: Այս կայարանում էր, որ զօրավար Բէյ-Մամիկոնեանի սիրտն առաջին կասկածն ընկաւ, թէ մենք Կարսը չպէտք է կարողանանք պաշտպանել:

Երկրորդ գլուխը կոչւում է՝ «Իմ դետն անցնելը»: Սա կարեւոր է, որովհետեւ իմ ունեցած ապրումները չափազանց հետաքրքիր էին: Դէ, ի՛նչ արած, հրացանն ու փամփուշտը փոխեցինք թուղթ ու դրչի:

Արտոն լռեց յանկարծ եւ պաշտօնական լրջութեամբ ուաքը դցեց ուաքին:

Ցաւալի եւ միեւնոյն ժամանակ ծիծաղելի մի բան կար նրա այդ լրջութեան մէջ:

Բիչ յետոյ նա դարձաւ, նայեց իր հիւրերին·

— Եթէ կուզէք,— ասաց,— գնանք մի փոքր պըտըտելու: Ես իմ պատմութիւնը կը շարունակեմ փողոցում:

Ու մէկիկ-մէկիկ հաւաքելով բոլոր իրերն ու դասաւորելով վերստին խուրջինի մէջ, նրանք միասին դուրս եկան փողոց:

Քաղաքը պլպլում էր աստղալի երկնքի պէս: Ամեն կողմից լոյսերի հեղեղ էր թափւում մայթերի վրայ: Պանթէոնի հրապարակից երեւում էին Լիւքսենբուրգի ծառերի դաղաթները: Հրապարակի աւազանի բազմաչիթ շատրւանը, ուրախ-ուրախ ժայթքում էր վեր ու ճերմակ փրփուր դարձած, փչրւելով յետ էր թափւում աւազանի ջրերի վրայ: Նրա մարդարիտէ կաթիլները մի պահ մնում էին օդում, իրենց թափանցիկութեան մէջ անդրադարձնելով բոլոր լոյսերը, որոնց ճառագայթները բեկւելով ջրի այդ գնդակների մէջ՝ դարմանալի երանդաւորումներով թափւում էին անցորդների բիրերի մէջ: Սրճարանների ապակիների ետեւ նստած մարդիկ անհոդ պուպրիկների նման ժպտում էին իրար, խօսում կարծես բնաւ իրենց չվերաբերող հարցերի մասին, անյոյզ ու անտարբեր հայեացքներով: Կարծես աներեւոյթ մի ձեռք՝ մեծ մի

երեխայ իր հաճոյքի համար խաղ էր սարքել խօսուն այդ տիկնիկներից ու այժմ դիտում էր վերից։

Պանթէոնը, ոլորուն իր սիւներով մութի միջից պատկառելի իր դեղեցկութիւնն էր պարտադրում բոլորին։

— Եօթերորդ եւ ութերորդ գլուխները նուիրուած են կռիւների նկարագրութեան։ Այսպէս, օրինակ, 1918 թւի կռիւները Կարսի ամրոցների վրայ ու այնուհետեւ նահանջը... Նահանջ մինչեւ Ալեքսանդրապոլ... Բայց ի՞նչ նահանջ։ Անկանոն, ցաք ու ցրիւ... Կարսից դեռ նոր դուրս եկած, թշնամին մեր թիկունքն էր անցել... Տեղի ունեցաւ կատաղի կռիւ, զօրքն ու ժողովուրդը խառնուել էին իրար ու մէկ էլ, ի՞նչ տեսնեմ...— Արտօն կանգնեց ...— այն ինչ որ տեսայ, երբեք, երբեք չպէտք է մոռանամ... Թշնամին դիրք էր բռնել բլրի գլխին,— նա ձեռքով նկարագրեց բլուրի ձեւն ու բարձրութիւնը,— գնդակների տարափը թափւում էր գլուխներիս... Այլեւս նահանջի համբայ չէր մնացել... Պառկել էինք բաց դաշտում,— գլուխը մտցրեց ուսերի մէջ,— ու անդօր ճիգով պատասխանում էինք նրանց հարուածներին։ — Թեւերը երկարած հրացանի խողովակը պատկերացրեց.— Մէկ էլ մէկը վեր կացաւ տեղից ու ցատկեց ձիու վրայ... Ցատկեց ու բղաւեց... «Տղէք ջան, ձեզ մատաղ, յառա՛ջ... ձեր հոգուն զուրբան»,— կանչեց ու քշեց ձին դէպի թշնամին։ Գնդակները շուրջը պար էին բռնել, բայց նա դոռում էր՝ «յառա՛ջ, յառա՛ջ, տղէք ջան, ձեր հոգուն մեռնեմ»... Մէկ էլ յանկարծ մի հոգու պէս բոլորը ոտքի ելան ու գոռալով ու կանչելով սկսեցին վազել նրա ետեւից... «Դէպի բլուր»։ Էսպէս եղաւ, որ ճամբան բացւեց, թշնամին փախաւ, ու մենք կարողացանք նահանջել։ Կարո՞ղ էք երեւակայել, թէ ո՞վ էր այդ քաջ երիտասարդը,

— ասաց Արտօն շեշտակի նայելով մերթ Վարդենուն, մերթ Անուշին, որ կանգնել էին նրա երկու կողմերում ու հետաքրքրութեամբ լսում էին նրան։

—Ո՞վ էր, Արտօ,— հարցրեց Անուշն, ինքը եւս վարակուած նրա յանկարծակի յուզմունքից։

— Այնուհետեւ ես նրան երկար փնտռեցի, երկար հարց ու փորձ արի, բայց մեր զօրաբաժինների ճամբան տարբեր էր... Ու ես նրան կորցրի։

— Բոլորովին չեմ կարողանում մտածել թէ ով կարող է լինել։

— Տիգրանն էր, Անուշ, Տիգրանը՝ եղբայրդ...

— Տիգրա՞նը,— գոչեցին Անուշն ու Վարդենին, ու մնացին քարացած... Վարդենին սեղմեց Արտօի թեւը...

— Դու չդիտե՞ս ուրեմն, թէ ի՞նչ է պատահել նրան... ախ, Արտօ...

Արտօն կանգնեց։

— Սպանե՞լ է...

— Զէ, չէ, Արտօ, Տիգրանը խելագարւել է...

Ու նրանք պատմեցին ամեն, ամեն ինչ։

Արտօն մռայլւեց ու լռեց։

Նրանք կանգ առան Café Source -ի լայնաբաց դռների առաջ։

10

1928 թիւն էր։

Անցնում էին տարիները տարիների ետեւից։ Վարդենին ու Անուշը սակայն չէին մտածում ծննդավայր վերադառնալու մասին։

Նուբարը վաղուց էր դադարել նրանց դրամ ուղարկել, եւ երկու քոյրերը ստիպված էին աշխատելով շահել իրենց ապրուստը։

Աշխատել եւ ուսանել միաժամանակ...

Գերբնական ճիգով բռնած կատաղի ժամանակը, խառնված ընդհանուր հոսանքին, հաւաքված ու ափերի մէջ ամուր սեղմած ցանկութիւններն իրենց, պայքարելով բոլոր խոչնդոտների դէմ, Վարդենին ու Անուշը վազում էին դէպի իրենց նպատակը։

Սկզբի շրջանում աշխատում էին դրասենեակում, յետոյ հիւսուածքի աշխատանոցում, բայց ի վերջոյ Հոքէլ Օրտոլանը դարձաւ նրանց փրկութեան աղբիւրը։

— Հիչ հոգ մի՛ ընէք,— ասում էր Շուշանը։ — Կամաց-կամաց ձեռներդ կը վարժուեն, վերջը մեքենայի դրամն ալ կը հանէք։ Այդքան բան սորված էք, հիմա ոօբին կարե՞լը չպիտի կրնաք սովրել...

Ու Շուշանը, կեանքի դէմ պայքարողի փորձուած արտայայտութիւնը դէմքին, խնամքով փաթաթում էր կարերի կապոցը։

Կարերի կապոցը...

Երբ առաջին անգամ Վարդենին թեւի տակ առած խոշոր այն կապոցը, տուն էր վերադառնում, ամօթից չիմացաւ թէ ինչպէս անցաւ փողոցով... Եւ երբ տուն ընկաւ, քաշեց անմիջապէս չուսամուտի վարագոյրը, — ի՞նչ կը մտածէին հարեւանները... Բայց նրանց մտահոգութիւնը երկար չտեւեց։ Նրանք շատ շուտով զգացին, որ այդ քաղաքում ոչ ոք իրենցով չէր հետաքրքրւում... Կայի՞ն, չկային, ո՞ւմ ինչ փոյթն էր...

Այնուհետեւ ամեն առաւօտ կանուխ Վարդենին նետւում էր փողոց։ Պէտք էր կարը ժամանակին հասցնել, կրկին տուն վերադառնալ, վազել համալսարան, նորից տուն, նստել մեքենայի առաջ, աշխատանքը ժամանակին վերջացնել, վազել դրադարան, իսկ առաւօտ կանուխ նորից դէպի մէտրօ։

Արագ-արագ դառնում էր մեքենան Վարդենու ձեռքի տակ եւ հագուստները մէկը միւսի ետեւից նետւում էին Անուշի կողմը, որ իր հերթին շտապ-շտապ ամրացնում էր նրանց օձիքները, գօտիները, կոճակները։

Այսպէս անցնում էր ժամանակը։

Այժմ մէկ տարի էր արդէն, որ Վարդենին աւարտել էր համալսարանը։

Մէկ ամբողջ տարի...

Առել էր վկայականը, փակել գզրոցի մէջ ո՞ւ... ու շարունակում էր կար անել...

Կար էր անում օրւայ ապրուստը հաղիւ շահելու համար, բայց չէր վերադառնում իր ծննդավայրը...

Վեց տարւայ փարիզեան կեանքն այնպէս է փոխել Վարդենուն... Նոր մարդը բարձրացել էր արդէն իր մէջ, նոր մարդը, որ չէր ուզում այլեւս յետ դառնալ դէպի

հինը, իսկ հոգու խորքում յոռետեսութիւնն իր սերմերն էր ցանում...

Յոռետեսութեան սերմերը, որ դնալով նոր ծիլեր էին արձակում ու աճում, աճում...

Բայց ո՞վ էր արդեօք այդ սերմերը թափել Վարդենու հոգու մէջ: Իր շրջապա՞տը, Փարի՞զը, թէ՞ Զաւէնի ժպիտը...

Մի քանի տարի էր արդէն, որ Զաւէնը Փարիզ էր: Իր գալու առաջին իսկ օրից նա յորդորում էր քոյրերին տուն վերադառնալ. գնալ հայրիկի եւ մայրիկի մօտ, որոնք ծերացել էին արդէն ու իրենց կարօտով էին ապրում:

— Փնտռումների անվերջ ճամբաներ ենք բռնել մենք, Վարդենի,— ասում էր Զաւէնը,— փնտռումների ճամբաներ... Եւ ով գիտէ թէ այդ ճամբին մեր կորցրածը աւելի շատ չէ՞, քան մեր գտածը: Պէտք է վերադառնալ, քանի ուշ չէ, որովհետեւ յետոյ ուշ կը լինի այլեւս... Մտածիր թէ ի՞նչ գնով, ինչպիսի ճիգով ես աշխատում դու ձեռք բերել թղթի այդ կտորը... Դու կը ստանաս այդ թուղթը եւ կը դնես զզրոցի մէջ, եւ նա այնտեղ էլ կը մնայ... Այնտեղ էլ կը մնայ, Վարդենի... Որ ի՞նչ: Աշխարհը շուռ է եկել եւ արժէքները փոխուել են: Մենք մի սերունդ ենք, որի առաջ ճամբաներ չկան: — Պոկուեցինք մեր միջավայրից, կտրատուեց շղթան, եւ մենք դարձանք ցաք ու ցրիւ ընկած օղակներ: Մեր հոգիներում անդունդներ բացուեցին... Աշխատիր չկապել քեզ մեր սերունդի հետ, Վարդենի, մի՛ փորիր անանցանելի այդ փոսերը քո առաջ:

Վարդենին աշխատել էր ապացուցել Զաւէնին, որ մարդը պէտք է միշտ ձգտէ առաջ գնալու, պէտք է ջանայ

լայնացնել իր մտքի հորիզոնը եւ այդպիսով յաղթահարել կեանքը:

— Առեղծուածային հարցեր են այժմ այդ հարցերը, Վարդենի, ամբողջ մարդկութիւնն այսօր հոգեկան տագնապ է ապրում: Ձե՞ս տեսնում ամեն բան հիմնուել է նիւթի վրայ: Անհատը կորցրել է այլեւս ինքն իրեն, մարդը կորցրել է իր հոգին, ստեղծուել է en série մի մարդկութիւն, իսկ դու եկել, բան ես փնտռում:

Այսպէս էր ասել Զաւէնը:

Եւ այն օրը, երբ Վարդենին վկայականը բացել ու փռել էր եղբօր առաջ, Զաւէնի դէմքի վրայով տխուր մի ժպիտ էր անցել...

Փարիզ գալուց յետոյ Զաւէնը վճռել էր այլեւս Թաւրիզ չվերադառնալ: Այստեղ նա հանդիպել էր Նատային ու նորից կապուել նրա հետ:

Առաջին շրջանում նա յաճախ էր այցելում իր քոյրերին, բայց կամաց-կամաց այդ հանդիպումները պակասում էին, ինչպէս եւ պակասում էին ծնողներին ուղղուած նամակները:

Նատայի մասին Անուշն ու Վարդենին զանազան բաներ էին լսում: Պատմում էին, որ նա ապրում էր մի ռուս երբեմնի սպայի հետ, բայց միաժամանակ սիրում էր Զաւէնին եւ չէր ցանկանում բաժանուել նրանից... Ասում էին որ նրանք երեքով միասին միեւնոյն բնակարանի մէջ էին տեղաւորուած, բայց Վարդենին ու Անուշը ստոյգ ոչինչ չգիտէին:

Ի՞նչ էր անում, ինչո՞վ էր զբաղւում ինքը՝ Զաւէնը, նրանք շատ բան չգիտէին: Գիտէին միայն, որ Զաւէնը Նատայի հետ միասին աշխատում էր միեւնոյն ճաշարանի մէջ: Բայց այդ մասին Զաւէնը բնաւ չէր խօսում իր քոյրերի հետ:

Ամեն անգամ, երբ Զաւէնը գալիս էր նրանց մօտ չէր մոռանում Վարդենուն իր հին հարցումը կրկնել՝ չե՞ն վճռել արդեօք տուն վերադառնալ։ Զաւէնը միշտ նոյն տեսակէտի վրայ էր կանգնած։ Իսկ ինչ վերաբերում է իրեն՝ իրեն վրայ Զաւէնն վաղուց արդէն խաչ էր քաշել կարծես։

Վարդենին ուսերն էր բարձրացնում ու դլուխը շարժում։

— Առայժմ ոչ։ Բայց վե՞րջը։ Վերջը պէտք է վերադառնան... Ի հարկէ, պէտք է վերադառնան, ի՞նչ պէտք է անեն այստեղ, Փարիզում...

Վերջը... Բայց ե՞րբ։ Այդ ինքն էլ չդիտէր։ Նա դիտէր միայն, որ Փարիզը կրծում էր իրեն, կրծում թէ հոդեպէս, թէ ֆիզիկապէս, բայց հեռանալ նրանից դժուարանում էր այլեւս...

Վարդենին զդում էր, որ Փարիզի պանդոկում, ուր ապրել էր ինքը, սրճարաններում, պողոտաների վրայ, լոյսերի մէջ հալուած, իր հոդուց մասնիկներ կային մնացած... Ու թէեւ այդ զգացմունքը նրան ցաւ էր պատճառում, բայց այդ այդպէս էր։

Ցաւ էր պատճառում, որովհետեւ նա դիտէր, զդում էր, որ Փարիզը իրեն հարազատ չէ, որ կապւելով նրա հետ իր աւաղ ոչ մի հեռանկար չկար։ Բայց ի՞նչ անէր... Չէ՞ որ այնտեղ, հեռու իր ծննդավայրում տխուր ու թախծոտ է ամեն բան, սուր ու տհաճ զգացողութիւնը մանր, ոչինչ կեանքի շարունակ պաշարում է մարդուն, եւ մեռնում են այնտեղ հոդու բոլոր թռիչքները...

Հեռու իր ծննդավայրում...

Ի՞նչ պէտք է անէր ինքն այնտեղ։

Վարդենին զդում էր այժմ, որ այնտեղ եւս անելիք չկար իր համար։

Իսկ ժամանակը սահում էր, սահում... եւ կարի մեքենան շարունակում էր արագ-արագ պտտել Վարդենու ձեռքի տակ՝

Տիկ տակ-տակ, տիկ, տակ...

Դառնում էր հսկայ ջրաղացքարը, դառնում ահռելի արագութեամբ... Փարիզն իր խելակորոյս ընթացքի մէջ էր շարունակ եւ Վարդենին ու Անուշը խառնւել էին արդէն այդ ընթացքին։

Իսկ տնից եկած նամակներն այնպէս տխուր էին...

«Տունն այժմ տխուր է ու դատարկ,— գրում էր Նուբարը,— պարտէզը լքւած է բոլորովին եւ վարդի թփերը երկարել, փռւել են սաքուի վրայ... Թթենու հովանու տակ Մանին ամեն առաւօտ, վաղեմի սովորութեան համաձայն, դցում է ճերմակ սփռոցը, ինքնաեռը վրան դնում, բայց մարդ չկայ, որ նստէ սեղանի շուրջը»...

Իսկ վերջին նամակը Տիգրանի մահն էր դուժում։ Նուբարն երկար-երկար գրել նկարագրել էր նրա թաղումը, իենց ապրումները...

Մենակ, մենակ էին այլեւս Նուբարն ու Մանին...

Մեն-մենակ։

Նուբարի վերջին այս նամակը ծանր, շատ ծանր տպաւորութիւն էր թողել Վարդենու վրայ։

Ամբողջ գիշեր տխուր ու սեւ մտքեր պաշարել էին նրան. դիտէր, որ այլեւս հասել էր ժամանակը եւ ինքը պէտք է մեկնէր... Պէտք էր գնալ ծնողների մօտ...Փարւել նրանց սիրոյն ու... ու մխրճւել մոայլ այն իրականութեան մէջ...

Պէտք էր գնալ այլեւս։

Այդ գիշեր Վարդենին երկար չքնեց։

Վարդենին չդիտէր սակայն, որ կեանքն իրեն համար մի այլ ուղի էր դծել։

11

«Պատուհանիս վեղկը քամու սուլոցի հետ անդադար դնում էր դալիս ու խփւում երկաթէ ձողերին՝ թը՛րխկ, թըրը՛խկ...

Նստած, կամ աւելի ճիշտ տարածուած էի երկար ճօճաթոռիս վրայ, վառարանին շատ մօտիկ, եւ աշխատում էի կենտրոնացնել մտքերս:

Այդ օրւայ իմ մտքերը... Տարածուն, անձեւ, հեռու-հեռու ժամանակներից պոկւած, գլխիս թափւած՝ մերթ մոռացւած, անցեալի յիշողութիւնների մէջ թաղւած սիրելի դէմքեր, մերթ մանուկ օրերիս մութի մէջ երեւակայած այլանդակ հրէշներ,— սենեակիս մէջ ձեւ ու մարմին առած երերուն առարկաներ:

Սենեակս լուսաւորւած էր դրսից եկող էլեկտրական պաղ լոյսով: Այդպէս լաւ էր՝ լուսինն էր յիշեցնում:

Աշխատանոցի մէջ խաղաղութիւն էր տիրում: Զարհուրելի աղմուկ հանող մեքենաներն այդ օրը չէին աշխատում: Լսւում էր միայն նրբանցքի դրան ձայնը, որ մերթ ընդ մերթ քամու ուժեղ հարւածներից աղմուկով դարնըւում էր պատին: Դրաշարներն էին միայն բարձրաձայն խօսում, եւ յաճախ կառավարչի հրամայական ձայնն էր թնդում:

Հոգուս մէջ ներդաշնակութիւն ստեղծելու համար, ես աշխատում էի կառչել որեւէ ձայնի, որ հնչէր անդադար ու միօրինակ եւ իջնելով թափրտացող հոգուս վրայ՝ հանգստացնէր նրան: Եւ այդ բոլոր ձայների մէջ պատուհանիս վեղկն էր միայն, որ քամու սուլոցից կարծես գիտակցօրէն դնում էր դալիս, բախւում էր երկաթէ ձողերին՝ թը՛րխկ, թը՛րխկ:

Ո՛վ գիտէ, թէ որքան ժամանակ ընկած էի այդպէս անշարժ ու դատարկ գլխով: «Մի կտոր հաց» դտնելու խնդիրը, որ մուրճի պէս կախւած է շարունակ մեր գլուխների վրայ, այս անգամ տպարանի դռնապանի պաշտօն ստանձնելով էր լուծւել ինձ համար:

Հալած արճիճի կծու ծուխն առաւօտ, իրիկուն, լցնում էր ողջ շէնքը: Քսանըչորս ժամ անընդհատ աղմըկում էին մեքենաները, թանաքները յաճախակի արկածի էին հանդիպում, իսկ պաշտօնից վտարւելու վտանգն ամեն րոպէ կախւած էր գլխիս:

Աչքերս կիսաբաց դիտում էի սենեակիս ծանօթ առարկաներն ու, տենդի մէջ գտնւողի պէս, ինքս ինձ հետ խօսում:

Գլուխս ուռել էր կարծես, մարմինս ծանրացել էր ու խոշորցել: Խսիրէ աթոռի կամարաձեւ յենարանից ինձ էր նայում մանրիկ աչքերով հսկայ մի գլուխ: Երկարաւուն քիթ ունէր նա, լայն, սեղմւած բերան ու գլխի աջ կողմում սեւ մի գունդ: Խոշոր կատուն, պահարանի մօտ նստած, պտտւող փայլուն աչքերով, ճերմակ ու սուր ատամներն էր ցոյց տալիս՝ մլաւում էր երեւի: Գրասեղանիս վրայ ստւերների արանքում, կանգնած էր թէյամանը, մեծացած, ուռած, մէկ ձեռքը մէջքին օղակ չինած, միւսը հարցական դէմ տւած պատին:

Մահճակալի կամարին նետւած վերարկուս աչքերիս առաջ ձեւաւորւում, երկար մի մարմին էր դառնում.— իմ երկրում, մանկութեանս օրերին տեսած ծանօթ մի

մարդ... ճիշտ ու ճիշտ նա.— կլոր գլխարկը գանկի ծայրին, աչքերը ծուռ, վերի շրթունքը պատռած ու ատամները թափած: Քաղաքի հնավաճառը... Նայում էր ինձ անշարժ ու յամառ աչքերով:

Թը՛րխկ, թը՛րխկ...

Անշարժ եմ:

Թը՛րխկ, թը՛րխկ...

— Ո՞վ է այդտեղ:

Բանտորներից մէկի ձե՞ռքն է վիրաւորուել, երեկոյեան նամակաբե՞ռն է արդեօք, թէ՞ նորեկ մի յանցախորդ: Ինչ կուզէ լինի, մի՞թէ ես իմ ցանկութեանս տէրը չեմ... Այսօր ես իմ դուռը ոչ ոքի համար չեմ ուզում բանալ: Ոչ ոքի եւ ոչ ոքի: Ինչ կուզէ լինի, կուզեն թող թեւիցս բռնեն դուրս նետեն փողոց, չպիտի բանամ:

Թը՛րխկ, թը՛րխկ:

Ու, յանկարծ, մարմնիս երկայնքով ինչ որ մի բան շարժուեց, ինչ որ մի բան ցնցուեց ու պոկուեց ինձնից... Կենդանի մի բան, որ վեր կացաւ, կանգնեց առջեւս մութ քօղից չինուած ստուերի նման թափանցիկ, շողոքորթ ու համակերպուող ժպիտը դէմքին...

Նայեցի: Ես էի: Իմ երկրորդ «ես»ն էր, որ այդպէս սիրալիր, համակերպուող ու շոյող ժպիտ էր ցոյց տալիս աշխարհին:

— Ի՞նչ կայ, ինչո՞ւ վեր ելար,— հարցրի:

— Պէտք է բանալ դուռը,— ասաց նա ու ժպտաց:

— Ի սէր աստծոյ, դոնէ մի ժպտա:

Նա ծիծաղեց հեգնոտ:

— Ժպտա՞մ... Բայց եթէ իմ ժպիտը չլինէր, դու վաղուց կորած էիր արդէն:

— Երբե՛ք,— ասացի զայրացած:

— Մէկ-մէկ թւե՞մ: Ցիշո՞ւմ ես, երբ քաղցած ու

անգործ էիր... բարկացած այս ու այն կողմն էիր ընկել՝ գործ էիր փնտռում, դրամ խնդրում... Բայց մարդիկ նայում էին քո անհրապոյր, քո պահանջկոտ դէմքին ու մերժում էին քեզ: Մերժում դրամ, գործ, ամեն օգնութիւն: Ինքնադատում էին ամեն քայլդ, պախարակում անճարակութիւնդ, իսկ դու միշտ մռայլ, դու միշտ անբաւական էիր...

— Ցետոյ ի՞նչ:

— Ցետո՞յ: Ցետոյ ես քեզ օգնութեան եկայ: Ցիշո՞ւմ ես, շաբաթի գործարանի դռների առաջ հերթի էիր կանգնել... Այդ օրը դու արթնացել էիր շատ կանուխ: Անքուն, մրսելով, առանց մի պատառ հաց բերանդ դնելու, կանգնել էիր ուրիշների կողքին: Զայրացած ու բորբոքուած էիր ոչ մարդկային վերաբերմունքի համար, չէ՞ որ երեք ժամ հերթի կանգնելուց յետոյ, ներս ընդունելու համար այնպէս անամօթաբար շօշափում էին թեւերի մկանները, ոտից գլուխ չափելով ձեզ, ձեր հասակն ու ոյժը հասկանալու համար: Երեք ժամ հերթի կանգնելուց յետոյ... Ոգեւորուած էիր, որ կարողանում ես բոլորի սրտից խօսել, համոզուած էիր, որ բոլորն էլ զայրացած են քեզ պէս: Եւ երբ հերթը քեզ հասաւ, արհամարհանքով նետեցիր թղթերդ քառակուսի պատուհանի ետեւ նստած այն մարդու առաջ: Մարդը խոժոռ-խոժոռ նայեց քեզ: Դու աւելի բարկացած պատասխանեցիր նրա հայեացքին: Ո՞ւ... Ու առանց թղթերդ նայելու, «գնա», ասաց, «տեղ չունինք այլեւս»: Դու յետ-յետ գնացիր ու զարմացած տեսար, որ քեզնից յետոյ շատերը, շողոքորթ ժպիտները դէմքերին ու գլխարկները ձեռներին, խնդրող ու հայցող հայեացքով մօտեցան քառակուսի պատուհանին: Նրանք ընդունուեցին, իսկ դու գլխիկոր տուն վերադարձար: Այդ օրն էր, որ ծնուեցի ես: Ու ես էի, որ առաջին անգամ քեզ

գործ հայթայթեցի կաշառելով այն մարդուն։ Ես էի, որ ճաշարանում սպասաւորի պաշտօն գտայ քեզ համար։ Ես էի վերջապէս, որ տպարանի այս գործը յաջողեցրի։ Այս բոլորը դու պարտական ես իմ ժպիտին։

Եւ նա քայլերն ուղղեց դէպի դուռը։

— Մի վայրկեան,— գոռացի եռեւից։— Ես իրաւունք չունիմ ուրեմն դէթ մի օր ապրելու ինքս ինձ համար։ Այսօր ես ուզում եմ մենակ լինել, ուզում եմ որ ոչ ոք, ոչ ոք, չխանգարէ իմ ներքին անդորրը. ուզում եմ լինել ազատ, ինքս, իմ հոգու հետ։ Ես իմ կամքի տէրը չե՞մ ուրեմն։

— Կամք, ազատութիւն...— ծիծաղեց նա հեգնոտ, դրանք բոլորը վերից են շղթայած, վերից։

Ճօճաթոռիս մնացած «ես»ս կծկուեց ու կպաւ պատին։

— Թը՛րխկ, թը՛րխկ։

Ստուերս մօտեցաւ դրան։ Նա արհամարհանքով նայեց վրաս ու ձեռքը մեկնեց փականքին։

Դուռը բացուեց։

Շէմքի վրայ յայտնուեց հսկայ մի ուրուագիծ, սեւ ժայռի պէս ծուռ-ծուռ գլխով, մինչեւ ականջները ճեղքուած, մութ խոռոչի նման ահռելի բերանով եւ ուռած շրթունքների միջից սպառնալից դուրս պրծած գիշատիչ ատամներով մի հրէշ։ Ուռած մարմինն աջ ու ձախ օրօրելով եւ երկաթեայ խոշոր կօշիկները դեռնին գարնելով՝ նա եկաւ ու ցցուեց առջեւս։ Վայրագ հայեացքով նայեց աջ ու ձախ, յետոյ յանկարծ փռուեց, նստեց յատակի վրայ։

Ծնկները դէմ տուաւ արմուկներին ու թաթերը դրաւ շերտաւոր ծնօտին։

Ինձնից պոկուած «ես»ս տեղ գրաւեց նրա դիմաց։

Սկսեցին իրար դիտել։ Մէկը՝ ահի ու հեգնանքի մութ ու հսկայ մի գանգուած, միւսը՝ քօղի պէս երերուն թափանցիկ մի ստուեր։

Երբեմն-երբեմն ստուերը դողում էր նրա ահռելի շունչի բախումից, երերում նստած տեղն ու հազիւ հազ էր կարողանում պահել հաւասարակշռութիւնը։ Նրա աչքերի մէջ վախը իր ճանկերն էր մխրճել, բայց նա շարունակում էր ժպտալ։

Զայրոյթը պաշարել էր ինձ։ Շունչս բռնած դուռում էի անձայն, «ախ մի՛ ժպտա, մի՛ ժպտա»...

Դեւը ինձ չէր նկատում, զուցէ իմ գոյութեան մասին դաղափար իսկ չունէր եւ աչքերը մեխած դիմացի ստուերիս, շարունակում էր ինչել։

Ցանկարծ ահագին մի իրարանցում առաջացաւ։ Սենեակիս առարկաները բոլորն էլ սկսեցին ժպտալ, անդամ ցածրաձայն քրքջալ... Մահճակալիս վրայի ծանօթ դիմագծերը ծամածուեցին։ Հրէշն անսպասելի արագութեամբ վար ու վեր շարժեց իր ձիու պոչի պէս հաստ յօնքերն ու դարձեալ անշարժացաւ։ Ու ահա, յանկարծ ստուերս սկսեց դառնալ փայտեայ խոշոր հոլի պէս,— այն, որ երեխաները հրապարակների վրայ դարձնում են ու շարժումը յարատեւելու համար մտրակի անդադար հարուածներ իջեցնում վրան, ճիշտ այդ հոլի պէս սկսեց դառնալ։

Դեւը սկսեց բարձրաձայն քրքջալ, եւ ես առաջին անդամ լինելով լսեցի իր ժանդոտ ձայնը, որ որովայնից էր դալիս։

— Այդպէ՛ս, այդպէ՛ս...

— Այդպէ՛ս, այդպէ՛ս...

Ստուերս այնքան պտտուեց, պտտեց, մինչեւ որ ու-

ժասպառ ընկաւ յատակին, նրա ոտքերի տակ: Իսկ նա շարունակում էր քրքջալ:

Զգիտեմ, որքան տեւեց այս տեսարանը: Մէկէն մէջս մի բան պայթեց: Օրւայ աշխատանքից ու առօրեայ խեղդող հոգերից ճզմւած հոգիս յանկարծ սկսեց թիւրըտալ, եւ բերանս լայն լայն բանալով, ամբողջ ուժովս գոռացի.

— Բաւական է, դո՛ւրս, դո՛ւրս այստեղից:

Դեւը մի վայրկեան լրջացաւ, նայեց չորս կողմը՝ պատի թռչունին, աթոռի մէջքին, թէյամանին եւ վերջապէս անբովանդակ եւ զարմանալի կլոր իր աչքերը յառեց վրաս:

— Օ՜... — ոռնաց խռպոտ իր ձայնով,— այս ի՞նչ նորութիւն է:

— Դուրս այստեղից, դուրս,— գոռում էի ես, առանց լսելու նրան:

— Հա՛, հա՛, հա՛... այդ դո՞ւ ես, փոքրիկ մարդուկ:

— Ես արհամարհում եմ քեզ,— ճչացի երեսին:

— Խղճուկ,— ասաց, շրթունքները զգւանքով իրար սեղմելով:

Վեր ցատկեցի անմիջապէս, ու ձեռքերս բռունցքներ չինած քայլերս ուղղեցի դէպի նա... Բայց յանկարծ հրէշը դերանանման իր թեւն ազատեց կղակի տակից եւ այնպիսի մի հարւած իջեցրեց գլխիս, որ հազիւ հազ ինձ դցեցի աթոռին:

— Հա՛, հա, հա,— լսւեց նորից իր ժանգոտ ու թունոտ քրքիջը: — Այդպէս ուրեմն, համարձակ ճիճու, տեսնում եմ, որ քեզ համար այս մի կտոր հացն էլ շատ է... Սպասիր, սպասիր, թշւառական:

Բայց այդ ժամանակ գետնին ընկած ստւերս սկսեց

նորից շարժւել ու դէպի հրէշը դարձրեց իր մշտական ժպտուն դէմքը:

Ա՜հ, զզւելի... ուզեցի ոտքով հարւածել, կոշիկիս ծայրով մէկ կողմ նետել իր թափանցիկ մարմինը, բայց վախեցայ ցաւ զգամ, մարմնական ցաւ...

Հրէշը խաղաղւեց, ձիու պոչ յօնքերը վեր բարձրացրեց, քիթն աւելի երկարեց ու լայն բերանը մինչեւ ականջները ճեղքելով՝ ծիծաղեց ներողամիտ ծիծաղով... Ցետոյ, յաղթական վեր կացաւ տեղից, ոստոստալով դնաց դէպի դուռն ու անհետացաւ:

Առաջին րոպէին ինչ որ թեթեւութիւն զգացի:

Գլուխս բարձրացրի ու սկսցի դիտել շուրջս:

Սենեակիս մէջ ամեն ինչ իր սովորական տեղն էր: Դրսից եկող էլեկտրական պաղ լոյսը շարունակում էր լուսաւորել նրան եւ պատուհանիս փայտեայ վեղկը քամու սուլոցի հետ միասին շարունակում էր իր միօրինակ հարւածները:

Թը՛րխկ, թը՛րխկ...

Տիրեց երկար ու սպասողական լռութիւն...

— Լաւ ազատւեցինք,— ծիծաղեց գետնի վրայ նըստած ստւերս:

— Վա՛տ, դեռ ծիծաղ ունես շրթներիդ:

— Ինչո՞ւ,— հարցրեց հեզ ու բարի ձայնով:

— Ինչո՞ւ ժպտացիր նրան:

Նա չպատասխանեց:

Ես ուրախ էի նրա լռութեան... Ու երեւի ամեն ինչ այդպէս էլ կը վերջանար խորն ու մութ այդ լռութեան մէջ, եթէ յանկարծ ականջիս չհնչէր ժանգոտ ու թունոտ այն քրքիջի ձայնը, որ քիչ առաջ լցրել էր սենեակը: Ո՞րտեղից էր գալիս այդ ձայնը: Դրան ետեւի՞ց, գետնի

տակի՞ց, առաստաղի՞ց... Նա ամեն տեղ էր, նա գալարուում էր պատերն ի վեր, նա իմ մէջ էր...

Բորբոքուեցի ու, մինչ պատրաստուում էի մի բան ասել, դարձայ դէպի սուերս... Այս անգամ նրա ժպտացող դէմքը քրքրեց ողջ էութիւնս... Արիւնս խփեց գլուխս, այլեւս ինձ զսպելու ոյժ չմնաց մէջս եւ, առանց երկար մտածելու, վերցրի կողքիս աթոռն ու շրա՜խկ՝ նրա կողմը նետեցի:

Հարուածս վրիպեց, բայց պատահեց անսպասելին:

Գետնի վրայ նստած սուերս կատարեալ ձեւ ու մարմին առաւ, արագութեամբ վեր ցատկեց տեղից, նայեց վրաս իր սոսկալիօրէն ժպտացող դէմքով ու՝

— Ապերախտ,— գոռաց ու յարձակուեց վրաս:

Պլլեցինք իրար:

Հարուածներ աջից, հարուածներ ձախից՝ դէմքիս, մէջքիս, գլխիս... Ի՜նչ անսպասելի ոյժ էր զարթնել իր մէջ:

—Ապերախտ, ի՞նչ ես դու առանց ինձ. ո՞վ ես դու առանց ինձ...

Անզօր էի այլեւս: Փուել էի յատակի վրայ ու յանձնուել նրա կամքին: Ականջիս հնչում էր նրա ուժեղ հարուածների ձայնը, որ դնում խառնուում էր պատուհանիս վեղկի հարուածների հետ:

Թը՛րխկ, թըրխկ...

Առաւօտեան իմ դիակը գտան սենեակիս մէջ»:

Հայկը տետրակը փակեց եւ նայեց բոլորին:

Փոքրիկ սրահը լի էր երիտասարդներով:

Ցածլիկ առաստաղի տակ ծուխը հաւաքուել, մնացել էր: Բոլորի դէմքերը մշուշապատուել, իսկ աչքերը՝ բոցավառուել էին:

Մի քանի բոպէ լռութիւնից յետոյ սկսուեց մտքերի փոխանակութիւն:

Կարծես յանկարծակիի էին եկել:

Նախագահը ժամանակ չունեցաւ անգամ սթափուելու: Ամեն կողմից ձայն էին խնդրում, բոլորը խօսել էին ուզում:

Ու խօսում էին, խօսում, խօսում: Ամեն մարդ ասելիք ունէր, ամենքի սրտի վրայ թանձրացած զգացմունքներ էին նստել, որ սեղմում, սեղմում էր նրանց:

Նախագահը փորձում էր ողջ հմտութիւնը յայտնաբերել: Պսպղուն ակնոցների տակից նա մերթ մէկին էր դիտում, մերթ միւսին, խնդրում էր հանդարտ խօսել, հերթի սպասել...

Սրահը, որ երիտասարդների սովորական հաւաքատեղին էր, զարդարուած էր նկարիչների գործերով եւ դանադան դեղարուեստական լուսանկարներով: Պատերի պատառները դեղեցիկ կերպով ներդաշնակում էին լուսամուտների դեղին վարագոյրների հետ: Մէջտեղում մեծ սեղանն էր դրուած, շուրջն աթոռներ շարուած: Աթոռներ կային դրուած նաեւ սրահի այս ու այն անկիւնում ու պատերի տակ:

Փոքրիկ մի վերնայարկ էր դա, ուր այդ օրը՝ կրակի ճաշից յետոյ տեղի էր ունենում երիտասարդների հերթական հաւաքոյթը: Հաւաքուել էին դրողներ, նկարիչներ, բանաստեղծներ: Այդտեղ էին եկել նաեւ Վարդենին ու Անուշը, իրենց հետ բերելով նաեւ Արտօին:

Վարդենին այնպէ՜ս յոգնած էր այդ օրը: Գաչուած մի անկիւն, գլուխը յենած պատին, նա բորբոքած աչքերն անդադար աջ ու ձախ էր պտտցնում: Նայում էր մերթ մէկին, մերթ միւսին, տեսնում էր խօսողների յուզուած դէմքերը, նրանց ջղային շարժումներն ու յոյ-

դերը: Փնտռող աչքեր, խուզարկող հայեացքներ՝ քսաներորդ դարի տենդով բռնված հոգիներ... Վարդենին գիտէր, որ ինքն էլ էր հիմա այդպէս, բոլոր այդ երիտասարդների նման: Այդպէս էր զգում, այդպէս յուզւում, ու մինչեւ անգամ շարժումների նմանութիւններ կային նրանց միջեւ...

Ա՛հ, նա այնպէ՞ս լաւ էր հասկանում այդ երիտասարդներին:

Ծանր մի տխրութիւն իջել, պարուրել էր Վարդենու հոգին: Տխրութիւն, որ վերջին ժամանակներն այնպէս սովորական էր դարձել, որից ազատուելու համար չգիտէր թէ ինչ պէտք է անէր: Իր շուրջն ամեն բան դատապարտուել, անհրապոյր էր դարձել: Անյայտ, անորոշ, սպառողական մի վիճակ էր ստեղծուել, որ մաղել էր նրա հոգու վրայ անթափանց ու մութ մի թախիծ: Ստեղծուած միօրինակ ու անբովանդակալի կեանքը ճգմել, խեղճացրել էր նրան:

Ի՞նչ անել, ի՞նչ անել, ինչպէ՞ս անել, կրկնւում էր անդադար նրա ուղեղի մէջ միշտ միեւնոյն հարցը: Եւ կարծես այդ հարցի պատասխանը գտնելու համար էր, որ Վարդենին այս ու այն կողմն էր ընկել: Գնում էր նա բոլոր հայկական երեկոյթներն ու հաւաքոյթները, բոլոր դասախօսութիւնները, մտնում էր այնտեղ, ուր հաւաքւում էին, վիճում ու յուզւում, բայց այդ հարցերը մնում էին իր սրտի ծայրին ցցւած, աչքերի բիբերից կախւած:

— Ընկերներ, ահա մեր առաջ փռւած է մի դիակ: Դրամատիրական հասարակարգն այդ է պահանջում մեզանից, այդ է պահանջում մարդուց՝ մեռցնել հոգին ու տիրանալ մարմնին: Հայկն իր այս գրւածքով կարողացել է պատկերացնել այդ: Հայկի հերոսը զոհ է այն կարգերին, ուր մարդը դարձել է մեքենայ եւ ուր գոյութեան պայքարի համար նա պարտաւոր է զարգացնել իր մէջ ստորին դծեր:

— Համակերպւել ու յարմարւել: Ինքնասպանութիւն չէ՞ այդ,— ճայնում է մէկ ուրիշը սեղանի ծայրից:

— Բայց այսօրւայ պահանջն է այդ:

— Այո՛, այսօրւայ պահանջը ստամոքսն է: Նիւթը դարձել է աստւած եւ յանուն այդ նիւթի մարդը համակերպւում, յարմարւում է ամեն բանի: Վիթխարի մի ուրւական աշխարհը շրջելու է դուրս եկել եւ թաթը մխրճել է մինչեւ խորքը մեր սրտերի: Մինչ մենք եկել, շրջում ենք հիմա Փարիզի լայն ու յղկւած մայթերի վրայով, կարծես քաոսի միջից: Բարձր սիւների վրայ, կլոր սպակիների տակ ճպճպում են ճրագները, սալայատակները պսպղում ու չարախինդ աղմկում են վայրագօրէն սլացող ինքնաշարժերի անիւների տակ: Իսկ մարդիկ, տարիների վարժութիւնից յետոյ, անտարբերութեամբ լցրել են իրենց դէմքերի աչքերը՝ փակելով ու կուրացնելով իրենց հոգու աչքերը: Լուսէ քաղաքի լուսէ բնակիչները... Շրջում ենք մենք այդ մայթերի վրայով՝ տառապած ու յոգնած, ու թէեւ չենք տեսնում մեր սեփական դիմագծերը, բայց զգում ենք, որ չարչարւած արտայայտութիւն ունենք: Փարիզը կրծում է մեզ, ընկերներ: Ցարմարւելու համար կեանքի ծանր պայմաններին, սնւելու ու մեր գոյութիւնը պահպանելու համար, մենք շատ գիջումների ենք գնում, շատ բան կորցնում մեր էութիւնից ու աննկատ ու չարունակ փչանում, հալւում, հիւծւում ենք:

Հայկը լուռ է: Տեսը ձեռքի մէջ խաղացնելով նա նայում է պատերի նկարներին: Չի լսում կարծես:

— Այդ հարցերը դարձել են այլեւս առեղծւածային,— գայրանում է մէկ ուրիշը աջից:

Ոչ ոք չգիտէ թէ նա ինչո՞ւ է գայրանում, բայց նա գայրանում է: Ամենքն են գայրանում կարծես, յուզւում, բորբոքւում:

— Ընկերներ, հարցը վերաբերում է ընդհանուր տաղնապին: Տաղնապ, որով համակւած է ողջ Արեւմուտքը: Մարդը կորցրել է իր իսկական պատկերն ու դարձել է մի սուեր: Տրորւել է նրա արժանապատուութիւնը, տրորւել է ինքը բնութիւնը՝ հոգին ու խիղճը: Ձէ՞ք տեսնում, որ դարերի ճիգով ստեղծւածը կաղապարւել, խարուսիկ կայունութիւն է դարձել արդէն: Ամեն ինչ հիմնրւել է միայն «առօրեայի» վրայ, իսկ նրանից այն կողմ ո՞ւմ ինչ թէ ի՞նչ կայ: Բաւական է հասնել մտքի կատարելութեան այն կէտին, երբ իւրաքանչիւր անհատ, առանց ցաւ զգալու, կարողանայ լռեցնել իր մէջ թաղուն այն ձայնը, որ լսելի է մեզ, երբ մենք մենակ ենք: Լուռ ու անաղմուկ այդ ձայնը... Մարդիկ հիմա վախենում են նրանից, միտքն անզօր է նրա առաջ, իսկ հոգուն թմրեցուցիչ դեղեր են խմեցնում անընդհատ: Այդպէս է պահանջում «առօրեան», «երջանկութիւնը» առօրեայ: Իսկ հոգին՝ չղթայւած, ծեծւած խեղճ հոգին մարդու, հեծում է անզօր, հեծում է թաղուն, քաղաքակրթութեան աչքերի առջեւ, մենակ ու անպաշտպան:

— Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ չանալ անպիծէն մեռցնել այն, ինչ որ ամենից կարեւորն է, այն՝ ինչ որ հիմքն է տիեզերքի, ինչ որ կորիդն է կեանքի, նպատակն անհունի... Ինչո՞ւ թմրեցնել, մեռցնել հոգին,— դոռում է բանաստեղծը նրա ետեւից:

Խօսողը դառնում է, նայում է նրան բորբոքւած աչքերով եւ չգիտէ ի՞նչ պատասխանէ:

— Ընկերներ, դէմ դիմաց ենք եկել մենք այժմ դառն իրականութեան: Իրականութիւն... հին հէքեաթի այն դեւը, կլանող ու լափող հրէշի կերպարանքով, որ եկել, չոգել է ահա հրապարակի վրայ՝ վայրագօրէն լափելու համար ամենօրեայ իր որսերը, յետոյ մեր երեսին քրքրջալու, հռհռալու համար: Մինչ մենք լցւած գաղափարական ցանկութիւններով նետւում էինք դէպի լուսէ ճամբաները... լցւած սիրով ու հաւատով, յոյսով ու ազնւորութեամբ... «Լոյս» փնտռող հայը, ազատութիւն տենչացող հայը, արդարութեան եւ ճշմարտութեան ձըգտող հայը եկել, կանգնել է հիմա ուղիների հանգոյցի այս կէտի վրայ: Ի՞նչ ենք հիմա մենք, ո՞վ ենք հիմա մենք, ո՞ւր ենք հասել, ի՞նչ ենք փնտռում:

Վառւած աչքերով Անուշը նայում է խօսողներին: Մէկ մէկին, մէկ միւսին... Նրա դէմքն այնպէս յուզւած էր այդ պահին... Այդ հարցերն այնքա՞ն էին յուզում նրան...

Լարւած ուղեղով ու լարւած զգացմունքներով հետեւում էր նա սրահի մէջ հաւաքւած այդ երիտասարդներին ու հեռաւոր իր անկիւնից դիտում նրանց:

Անուշը տեսնում էր, որ նրանցից իւրաքանչիւրն իր ասելիքն ունէր, բայց նրանց ասելիքներն այնքա՞ն տարբեր էին իրարից...

Խօսում էին, վիճում, քննադատում, բայց Անուշը զգում էր, որ այդ բոլորից յետոյ էլ նրանք մնում էին նորից անզօր ու անճար: Նրանց բոլորին թւում էր, որ պէտք էր մի բան անել՝ նոր, լաւ մի բան... Բայց ի՞նչ:

Ա՜հ, Արեւմուտքում սփռւած հայ երիտասարդութիւնը... Ներկայի մէջ մխրճւած ու հոգեկան ծանր վիճակի մատնւած այդ երիտասարդութիւնը, որ իր ապրուստը շահելու համար հազար ու մի դուռ էր բախում եւ որ մնում էր միշտ խեղճ ու ընկճւած: Ի՞նչ էր սպասում նրանց վաղը՝ նրանք իրենք իսկ չգիտէին. ո՞ւր էր

տանում նրանց կեանքը՝ նրանք չէի տեսնում: Կարծես թէ եկել էին բոլորն էլ ու դէմ առել անանցանելի մի պատի, իսկ կեանքը ճնշում էր, ճնշում նրանց:

Ու թւում էր Անուշին, որ եկել հասել էր արդէն ժամանակը... Ահա, ահա ու պէտք է կատարւէր անխուսափելին... պէտք է զարնւէին իրար բոլոր հակամէտ ուժերը, պէտք է բախւէին իրար բոլոր ուղիներն ու լոյսը պիտի ծագէր վերջապէս:

Այո՛, մի բան, մի շատ անհրաժեշտ բան պէտք է կատարւէր:

Եւ Անուշը զգում էր, որ իր եւ բոլորի հոգիների մէջ մի ամպ էր ուռել ու պիտի ճեղքւէր կարծես, մի թել էր ձգւել ուժգնօրէն ու պիտի փրթէր կարծես:

— Ով ենք մենք հիմա, ի՞նչ ենք մենք հիմա, ո՞ւր ենք հասել, ի՞նչ ենք փնտռում,— կրկնւում էին այս հարցերը նրա ուղեղի մէջ, իսկ երեւակայութեան առաջ Հայկի դեւը իր հսկայ մարմինն էր պտտցնում անդադար:

Դեւը... Մարջան հօրաքրոջ հէքեաթի դեւը՝ սեւ ժայռի պէս ծուռ-մուռ գլխով, կացինի մէկ հարւածով ճեղքւած հսկայ բերանով, լայն-լայն ականջներով այն դեւը...

Մինչ խօսողը շարունակում է.—

— Այնտեղ, այնտեղ են հոգու թռիչքները, այնտեղ է գեղեցկութիւնն ու խորհուրդը, երեւակայութեան անսման ոյժը, ենթադիտակցութեան կարողութիւնները, ներաշխարհի հարուստ կեանքը, բոլորի բոլորի աղբիւրները Արեւելքում են, իսկ մենք որոնումների ետեւից ենք ընկել ու չենք գտնում մեր փնտռածը: Չենք գտնում մեր փնտռածը, եւ մեր մէջ ստեղծւում է հոգեկան երկուութիւն, եւ այդ երկուութիւնը մեզ դադար չի տալիս: Եկել ենք մենք Արեւելքից, հասել այստեղ ու թէեւ այլեւս

անելիք չունենք Արեւմուտքում, բայց չենք ուզում տուն վերադառնալ: Ա՛հ, մեր հոգու ողբերգութիւնը...

Արտօն, որ քննողի արտայայտութիւն չինած իր դէմքին՝ լսում էր խօսողներին, շարժւեց նստած տեղն ու աչքերը յառեց Բարդէնի մռայլւած դէմքի վրայ: Բարդէնը կծկւել, նստել էր իր աթոռի վրայ ու ոչինչ չէր խօսում:

«Մեր հոգու ողբերգութիւնը... — մտածեց Անուշն ինքն իրեն.— դարերից չէ՞ գալիս արդեօք նա: Հայը, Արեւմուտքի քաղաքակրթութեան այդ երկրպագուն, որ սիրել է միշտ հեռուներում փնտռել «լոյսը»: Մենք տառապում ենք Արեւելքում, հոգիներս թռիչքներ են ուզում... Իսկ երբ այստեղ ենք գալիս, ահա թէ ի՞նչ է ստացւում... Ու չենք ուզում, այո՛, չենք ուզում այլեւս տուն վերադառնալ եւ սկսում է պայքարը երկու սկզբունքների միջեւ: Պայքար, որ դարեր շարունակ մեզ հանգիստ չի տւել,— պայքար հոգու եւ մտքի, Արեւելքի եւ Արեւմուտքի:

Անուշի միտքը սակայն յանկարծ ընդհատւում է: Բռունցքի ուժեղ մի հարւած ծանրութեամբ իջնում է սեղանին: Մէկը բորբոքւած վեր է թռչում տեղից:

— Երկսայրի սուրի ենք դէմ եկել արդէն: Ցոյց տալով ստեղծագործական իր կարողութիւնները, իր ոյժը, մարդը ստեղծել է մի նոր իրականութիւն, բայց յայտնաբերել է իր անսահման թուլութիւնը՝ հակումը ստրուկ դառնալու, ստրուկ մնալու: Բարձրացել է Դեւը անդունդից, եւ մենք ապրում ենք այլեւս հաստատած մի դարաշրջան, ուր իրար են բախւում ամեն կողմից եկող սկզբունքներն ու դաղափարները: Ուղիների մեծ հանգոյցակէտն է այս, եւ ահա ուղիների այս հանգոյցակէտի վրայ եկել ու կանգնել է նաեւ հայը: Եւ հայը, ընկեր-

ներ, տառապում է այսօր թէ՛ իբրեւ հայ, թէ՛ իբրեւ մարդ։

— Բայց ո՞րն է, ո՞րն է այսօր հայի ուղին,— ձայնում են նրան ամեն կողմից, ու բորբոքած աչքեր են պսպղում։

Անուշը նայում է խօսողներին։ Ուզում է կարծես մի բան ասել, ինքն էլ է ուզում մի բան ասել, բայց այդ ժամանակ տեղից բարձրանում է նախագահը։ Նա ձեռքով նշան է անում, որ լռեն։ Մինչ մէկ ուրիշը դոռդոռալով շարունակում է պարզել իր տեսակէտները։

— Ընկերներ, հոգեկան ընդհանուր տագնապի այս օրերին...

— Հոգեկան ընդհանուր տագնապի այս օրերին...

Արեւն իր ոսկէ շողերը քաշել էր արդէն տների տանիքների ու պողոտաների ծառերի կատարների վրայ։

Ա՜հ, այնպէ՜ս լաւ էր փողոցի օդը, այնպէ՜ս զովացնող ու թարմացնող։

Փողոցում Անուշն ու Արտօն քայլում էին կողք-կողքի։ Նրանց ետեւից գնում էին ուրիշները, որ դեռ շարունակում էին խօսել ու յուզւել։

— Տեսա՞ր, տեսա՞ր, Անուշ,— ասում էր Արտօն Անուշին,— նախագահը մտքերի փոխանակութիւնը յետաձգեց միւս ժողովին։ Դեռ պիտի շարունակեն։ Դեռ պիտի դան, հաւաքւեն էսպէս ու անխմաստ խօսքեր խօսեն, մտքեր յայտնեն։ Եկայ, որ տեսնեմ, իմանամ։ Բայց չէ, չէ, ախպէր, լաւ չեմ տեսնում, լաւ չեմ տեսնում էս երիտասարդներին... Այնպէ՜ս են յուզւում, դոռում, դոռդոռում...

Նրանք քայլում էին երկար ծառուղիով։

— Ուրիշ, ուրիշ մի մթնոլորտ է պէտք, Անուշ, այնպիսի մի մթնոլորտ, որ հոգով հանդիստ զգաս քեզ։ Իսկ դրա համար ժողովուրդի, բուն ժողովուրդի մէջ պէտք է լինես։ Այս գիշեր անպատճառ կը գաս մեր հանդէսին եւ, այ, այնտեղ կը տեսնես։ Այնտեղ էսպէս բաներ չես լսի, ժողովուրդն առողջ հոգեբանութիւն ունի, Անուշ։ Ինչպէս արդէն ասել եմ, առանձին մի սեղան կը վերցնենք ու մի լաւ քէֆ կանենք՝ կովկասեան քէֆ։ Այնտեղ է, որ դու կը լսես անկեղծ խօսքեր, եւ էսօրւայ էս զալմաղալից գլխումդ էլ ոչինչ չի մնայ, հաւատա չի մնայ։ — Շարունակում էր Արտօն։

Աջից ու ձախից, յետեւից ու առջեւից խումբ-խումբ քայլում էին երիտասարդները։

Մայիս էր։ Օդը մեղմ էր ու հաճելի։

Վարդենին Բաբդէնի հետ էր։ Բաբդէնը ծուռել էր դէպի նա ու խօսում էր, բորբոքւում։ Լուռ ու մտածկոտ Վարդենին լսում էր նրան։

Փողոցից արագ սահելով անցնում, գնում էին ինքնաշարժեր, ելեկտրաշարժեր ու մարդիկ, մարդիկ։ Հեռւում՝ պողոտայի ծայրին, ողողւած երեկոյեան արեւի դեղին ճառագայթներով, երեւում էր գոթիկ հին եկեղեցին, իր նրբին ծալքերով, ժանեակաւոր զարդերով ու արձաններով։

Որքա՜ն անտարբեր էր այժմ Վարդենին նրա գեղեցկութեան հանդէպ։ Անտարբեր էր նա նաեւ Բաբդէնի հանդէպ ու լսում էր նրան աւելի ակամայ։ Մինչ Բաբդէնի համար Վարդենին այլեւս ուրիշ մի նշանակութիւն էր ստացել։

Մարգարիտին կորցնելուց յետոյ, ծովում խեղդւողի պէս, Բաբդէնը կառչել էր Վարդենուն եւ իրեն իսկ հա-

մար անսպասելի կերպով Վարդենին դարձել էր կարծես թանկագին մի բան: Եւ այժմ Բարդէնը նրա շուրջն էր պտտում անվերջ, կարծես վախենալով կորցնել եւ նրան:

Բարդէնին թւում էր, որ Մարդարիտից յետոյ Վարդենին միայն կարող էր դրաւել նրա տեղը: Հոգիների տարօրինակ մի նմանութիւն կար նրանց երկուսի միջեւ... Ու նա երազում էր... երազում էր ամուսնանալ, վերադառնալ ծննդավայր, վերաշինել տունն իրենց ու հոգին իր...

Բայց որքան ուժեղանում էին Բարդէնի զգացմունքները, Վարդենին այնքան լրջանում ու կծկւում էր իր ներաշխարհի մէջ:

Բարդէնը նկատում էր այդ: Նա ուզում էր թափանցել Վարդենու հոգու մէջ, իմանալ, հասկանալ նրան... Բայց Բարդէնն ոչինչ, ոչինչ չէր կարողանում իմանալ:

Նա տեսնում էր միայն, որ մի աղջիկ դիմադրում էր իրեն ու յամառում: Եւ ուրիշ զգացումի կողքին նոր մի զգացում եւս բարձրացել էր իր մէջ,— արուի ինքնասիրութիւնը, որ առաջին անգամն էր դէմ-դիմաց եկել մի կնոջ, որ հակառակում էր իրեն...

Այդպէս չէր Մարդարիտը: Նա ինքն էր փնտռում Բարդէնին, նա ինքն էր շշնջում սիրոյ եւ փաղաքշանքի խօսքեր, որ նրան թւում էին բնական... Այդպէս էլ պէտք է լինէր...

Եւ Բարդէնը խօսում էր, խօսում. իսկ Վարդենին այլեւս չէր լսում նրան: Կողքից նրա ականջին հասնում էր այժմ ուրիշ մի խօսակցութիւն: Հայկն էր, ձեռքերը գրպանը դրած, գլուխը վեր, մի քանի ընկերներով շրջապատուած, քայլում էր նրանց կողքից:

— Քանի՞ տարի է, որ դու Փարիզ ես, Հայկ,— հարցնում էր նրանցից մէկը:

— Ութ տարի: Եւ այդ ութ տարիների ընթացքում տասնութ տեսակ գործ եմ արել:

— Գործարա՞ն:

— Գործարան, ճաշարան, կայարան...

— Ու երբեք չե՞ս մտածել ծննդավայր վերադառնալու մասին:

— Ոչ, ուզում եմ դեռ մի քիչ էլ օգտուել Փարիզից:

«Դեռ մի քիչ էլ օգտուել Փարիզից»,— կրկնում էր Վարդենին ինքն իրեն եւ չգիտէր թէ ինչո՞ւ այդ խօսքերը դառը տխրութիւն էին պատճառում նրան:

Երբ խումբը հասաւ պողոտայի անկիւնադարձին՝ կանգնեց: Արտօն ձեռքը մեկնեց Վարդենուն:

— Գիշերը կը հանդիպենք, ուրեմն:

Վարդենին գլխով հաւանութեան նշան արաւ:

Բաժանուեցին, եւ Անուշն ու Վարդենին բռնեցին իրենց պանդոկի ճամբան:

«Ոսկէզօծ բաշլըղներով,
Լազի շորեր թանկագին»...

Բազմութիւնն աստիճանաբար աւելի ու աւելի շատանում է: Աստիճանները լցուած են: Հայ գիւղացիներ բանւոր դարձած, երեխաներով եւ ընտանիքի բոլոր անդամներով, հայ աղջիկներ սեւաչեայ, խորը հայեացքով, կրակոտ ու մաքուր, հայ երիտասարդներ, վճիտ, յստակ արտայայտութեամբ:

— Տղայ, ծօ՛, դո՞ւն էլ այստեղ ես:

— Ի հարկէ այստեղ եմ։ Զաւակներիս նայէ, զաւակներիս։ Եռագոյն կտորից հագուստ եմ կարել իրենց համար։

— Այս կողմ նայիր, եղբայր, այս փոքրիկ տղային նայիր, երկարավիզ կօշիկ է հագել, փափախ դրել գլխին։ Սուր էլ ունի կողքին կախած։ Ի՞նչ անուշիկ երեխայ է, աչքերը վառում են կրակի նման։

— Տղայ, անունդ ի՞նչ է։

— Անդրանիկ, հայոց զինուոր, պարո՛ն։

Մի փոքրիկ աղջիկ մօր փէշից քաշելով, Ֆրանսերէն լեզուով հարցնում է, թէ այս բոլորը, որ բարձրանում են այսպէս աստիճաններից, հայե՞ր են արդեօք։

— Այո՛, այո՛, աղջիկս, բոլորը հայեր են։

— Հայերէն խօսէ, հայերէն,— գոռում են ձախից։

Աղջիկը լռում է անմիջապէս։ Նա հայերէն չգիտէ խօսել եւ կարծել է թէ պէտք չէ, որ գիտենայ։ Մի րոպէ միտքը պղտորւում է՝ ուրեմն վա՞տ է, որ ինքը հայերէն չգիտէ։ Հապա իրենց դպրոցում ոչ մի երեխայ հայերէն չի խօսում։

Սրահից լսւում է երաժշտութեան ձայնը։ Ժողովուրդը շտապ ներս է խուռնւում։ Ցանկարծ չշուկով անցնում է սրահով՝ «շը՛շտ–շը՛շտ» լռութիւն՝ խօսում են, խօսում են։

«Հայ ժողովուրդ։ Օտար, անհարազատ հորիզոնների տակ ցրւած, հայ ժողովուրդ, որ հեռու վայրերից եկել, հաւաքւել ես այսօր հայ խօսք լսելու»...

— Աման սիրտս թնդաց, հէնց իմանաս մի բան պոկւեց ներսս։

Սրահը մի հոգի դարձած լսում է խօսողին, որ եռագոյն դրօշակներով եւ ազգային հերոսների պատկերներով զարդարւած բեմից, անդադար մատը ճօճում է օդում։

«Հայրենիքն այնպիսի մի բան է,— ասում է նա,— որի մասին պէտք է խօսել միայն հոգու լեզուով։ Հայրենիքն այնպիսի մի բան է, առանց որի ոչ միայն դժւար է ապրել, այլ եւ չարժէ ապրել»։

— Հոգիս կարծես երկաթէ մի ձեռք առել է իր լայն ափերի մէջ ու սեղմում է, սեղմում։ Ես ի՞նչ գործ ունեմ Ռընօի գործարանում, ես սարի–ձորի մարդ՝ եկել էստեղ օթօ եմ շինում։ Իմ ի՞նչ բանն է օթօ շինելը...

«Բայց մենք չպէտք է յուսահատւենք։ Հաւատքի ջահը վառ պէտք է պահենք մեր հոգիներում...Մեր դատը արդարութեան դատ է»...

Ծափեր ու ծափեր։

Կողքի սենեակում սկսել էր արդէն նւագել արեւելեան երաժշտութիւնը։ Փոքրիկ սեղանների շուրջ նստել էին երիտասարդներ ու ծերեր։ Թնդում էին հայկական երգերը՝ դեղջկական, սիրային, յեղափոխական։ Պարպւում էին թաժակները վաղուց կորած ու այս իրիկուն կենդանութիւն առած ազգային հերոսների յիշատակին, որոնց շուրջ հիւսւած երգերը առասպելական բնոյթ էին ստանում։

«Ոսկէզօծ բաշլըղներով,
Լազի շորեր թանկագին»...

— Ես քո ձէնին մեռնեմ, բիձա ջան, էդ երգը մէկ էլ երգէ, հոգուդ դուրբան, մէկ էլ կանչէ։

— Տղայ, ես ձէն չունեմ, պառաւել, ծերացել եմ արդէն։

— Քո ճերմակ մազերին մատաղ, դու հին յեղափոխական ես, քո ձէնն էնդի աշխարհից է գալիս, կարծես թէ էնոնց ձէնն եմ լսում։

— Տղայ, դափը տաքացրու, դափը։

— Դափ խփողի թեւերը կոտրւեցին, ջանըմ...

«Ես էն սիրուն բոյին մեռնեմ
Իմ եարի,
Սեւ աչքերով, թուխ մազերով
Իմ եարի»...

— Հէնց իմանաս, մեր բաղի աղբիւրի կուշտին եմ: Թռչունները գլխիս ծիւ ծիւ են անում, պառաւ շունս թփերի տակ մրափել է, երեխէքս խնձորի ծառի ծայրից երգ են ասում... Վախ իմ տունը, վախ իմ բալէքը... — յանկարծ վեր է թռչում տեղից, աչքերը գցում է երիտասարդների վրայ.—

— Տղէք, ես ձեր հոգուն մեռնեմ, իմ յոյսն, իմ հաւատը դուք էք: Էս խմում եմ ձեր կենացը, ձեր արեւին մեռնեմ, ձեր մատաղ կեանքին մեռնեմ...

Սեղանի ծայրից բարձրանում է գունատ մի տղայ.

— Ընկերներ, ինձի մտիկ արէք: Ես որ կամ, որք տղայ եմ: Ծնողներիս աչքիս առջեւ մորթեցին, մեր տունն այրեցին, քրոջս սուլինահար արին. Ձիու մէջքից իրեն երեք անգամ վար նետեց, որ ազատուի. «Զեմ դնայ, կը մեռնեմ, չեմ դնայ»,— գոռում էր... Ես, ընկերներ, հարբած չեմ, լալիս եմ, բայց հարբած չեմ: Եւ ամեն իրիկուն այսպէս լալիս եմ... Ընկերներ, հիմա ես ոչ ոք չունեմ աշխարհիս երեսին, ոչ ոք, բայց ես... — յանկարծ աչքերն արիւնով լցւում են, շրթունքները դողդողում են, երեսը բռնկւում է եւ ձեռքն ամուր խփում է սեղանին.— Բայց ես վրէժ ունեմ իմ սրտի մէջ,— գոռում է անհուն զայրոյթով, իր ողջ էութիւնից խուժող ձայնով: — Սեղանի բաժակներն ու շիշերը դղրդում են, — վրէժ կուզեմ ես...

Մի բոպէ ամեն ինչ լռում է:

Քարանում են ամենքը:

Ու այդ մի բոպէի մէջ իւրաքանչիւրի սրտում մի բաց վէրք սկսում է մոմռալ... Իւրաքանչիւրի յիշողութեան մէջ դարհուրելի տեսարաններ են բացւում:

Այդ դեռ երէկ էր... — ժողովուրդը կիսամեռ ու քաղցած, Եփրատի ափին դեղերում էր վարակիչ հիւանդութիւնների ճանկերում: Շա՞տ էին... անթիւ, անհամար...

Այդ դեռ երէկ էր...

Մտրակների եւ սուլիների հարւածների տակ փախչում էին, մորթւում ու ոչնչանում:

. . .

Եւ երիտասարդ որբի բռունցքի հարւածից առաջացած այդ քար լռութեան մէջ մտքերի ըաղիօն մի սոսկալի ուժով ընդունեց անյայտութեան ու մոռացումի մատնուած եւ անհունի մէջ կորսւած դարհուրելի անցեալի բոլոր պատկերներն ու թրթիռները: Այդ մի վայրկեանի մէջ՝ երբ թառ նւագողը երգի առաջին տողը վերջացրած, ձեռքը բարձրացրել երկրորդ տողի ձայնանիշներն էր շօշափում ադէն, երբ նրա կողքին կանգնած երգիչը բերանը բացել ու երգի բառերն արտասանելու վրայ էր, երբ կռացած շիշը դեռ չէր վերջացրել լցնել կիսատ գինու բաժակը,— սրահը մի հոգի, մի զգացմունք դարձած, յափշտակեց գունատ տղայի վերջին բառը՝ վրէժ...

Քաչւած մի անկիւն, Վարդենին ու Անուշը դիտում ու լսում էին այս բոլորը:

Դեռ երեկոյթի սկզբից նրանք երկուսն էլ զարմանքով նկատել էին Արտօի բացակայութիւնը: Արտօն, որ ինքն էր յորդորել նրանց գալ այդտեղ այդ իրիկուն. ու խոստացել էր «կովկասեան քէֆ» անել նրանց հետ միասին... եւ յանկարծ ինքը չկար...

Երբ թառը վերսկսեց իր ընդհատւած նւագը, եւ նոր ու նոր երգեր թնդացրին կրկին սրահը, Վարդենին սկսեց

ուշադրութեամբ աջ ու ձախ նայել ու յանկարծ տեսաւ, որ դրան կողմից, սրան նրան ձեռքով մի կողմ հրելով, դլխարկը դլխին, կարճ ձեռնափայտը ձեռքին, յուզուած ու այլայլուած ներս ընկաւ Արտօն...

Վարդենին թեւով հրեց Անուշին: Անուշը նայեց դրան կողմը:

Ի՞նչ էր պատահել...

Անմիջապէս վեր կացան ու փորձեցին բազմութեան միջից առաջանալու դէպի Արտօն, որ արդէն հեռուից նկատել էր նրանց:

Արտօն դեռ չմօտեցած ձեռքն երկարեց ու յուզուած ձայնով ասաց.

— Ձեզ էի փնտռում, Վարդենի, ձեզ...

— Ի՞նչ է պատահել, Արտո,— վախեցած հարցրեց Վարդենին ու իրար վրայ թափուած աթոռների միջից մի կերպ անցնելով վերջապէս մօտեցաւ նրան:

Արտօն բռնեց նրա թեւից ու ձեռքով Անուշին նշան արաւ, որ մօտենայ:

— Գնանք, դնանք,— ասաց նա:

Վարդենին վարանոտ նայեց նրան:

— Գնանք այստեղից,— կրկնեց Արտօն եւ առանց սպասելու պատասխանի՝ առաջ անցաւ:

Վարդենին եւ Անուշը հետեւեցին նրան:

Ոգեւորուած հասարակութեան միջից անցնելով, նրանք դուրս եկան վերջապէս նրբանցք:

— Գնանք սրճարան: Տրամադրութիւնս այնքան վատ է, որ այս գիշեր այստեղ մնալ չեմ ուզում, բայց կուզէի ձեզ հետ լինել, կուզէի պատմել ձեզ այն, ինչ որ ես տեսայ այս իրիկուն...

— Գնանք, Արտո,— ասաց Անուշը մտերմաբար ու թեւը դցեց նրա թեւին:

Վարդենին հետաքրքրուած ու մտահոգուած՝ հետեւեց Անուշի օրինակին ու բռնեց Արտօի միւս թեւից:

Նրանք շուտով դուրս եկան փողոց:

— Խեղճ տղան կորել, դնացել ա... — ասաց վերջապէս Արտօն, հաղիւ դասելով յուզմունքը:

— Ո՞վ, Արտո:

— Մեղքն իմն է, իմը... Թաւրիզում ուզում էր մտնել խմբիս մէջ, չվերցրի, հիմա դնացել, կորել ա...

Թէ՛ Վարդենու եւ թէ՛ Անուշի հետաքրքրութիւնը ծայր աստիճանի էր հասել. նրանք երբեք Արտօին այդպէս յուզուած չէին տեսել, բայց զգացին, որ որեւէ հարց այդ պահին անպատասխան պէտք է մնար, ուստի եւ վճռեցին լռել:

Արտօն աստիճանաբար արագացնում էր քայլերը:

Նրանք լուռ հետեւում էին նրան:

Կիրակի երեկոյ էր: Սէն-Միշելի ծառուղին սովորականի պէս ծփում էր բազմութեամբ եւ սրճարանները լեցուն էին:

Մի քանի րոպէից յետոյ նրանք կանգնած էին արդէն Café Source-ի դռների առջեւ:

Ծուխ, ծանր ու անշնչելի օդ, պղտոր ուրուագծած դէմքեր, ձանձրոյթով ու բուռ անտարբերութեամբ նայող եւ ոչինչ չտեսնող աչքեր...

Ներս մտնողը մի վայրկեան շշմում էր, եւ աչքերի առջեւ մանր դնդակներ էին դառնում:

— Un bock, s'il vous plaît...

Դրսից եկող թարմ օդի հոսանքը մի պահ շարժում

էր ծխոտ մթնոլորտը. ամենքը նայում էին ներս մտնողներին:

Լոյսեր, սիւների գլխին յատուկ չինուած ապակէ լուսամփոփների տակից, լոյսեր առաստաղին զամուած բաղմաթիւ լապտերներից, պատերի մէջ ամրացուած խողովակներից, որոնք վերից վար վառուած էին գանազան գոյներով՝ կապոյտ, կարմիր, մանիշակագոյն ու կանաչ... Ծխի մոխրագոյն թափանցիկութեան միջից այնպէ՛ս յոգնեցնող, չշմեցնող էր ամեն ինչ:

Սեղանների շուրջ նստած մարդիկ զրուցում էին իրար հետ: Մի խումբ երիտասարդ կանայք ու աղջիկներ, ներկած աչքերը անդադար աջ ու ձախ ոլորցնելով եւ յօնքերը վեր ու վար անելով, սպասում էին յարմար «յաճախորդների»: Հեռաւոր անկիւններում իրար փարած զոյգեր համբուրւում էին՝ անդիտակ շրջապատի գոյութեան ու անտարբեր դիտողների հայեացքներին: Ոմանք թերթ էին կարդում, ուրիշները խօսում էին օրւայ ոճիրներից: Մատակարարները, ճերմակ բաճկոններով, սուրճն ու գարեջուրը նետում էին շտապ մարդկանց առջեւ ու հեռանում: Հեռւում բլօքի սիրահարներն անընդհատ աչքերը գցում էին դէպի խաղասենեակ տանող աստիճանները, իսկ վարի յարկից՝ մառանից, որի մուտքի վրայ գրւած էր «Բառ Ամերիկէն», լսւում էր խափշիկների երաժշտութեան ձայնը.

— Garçon, s'il vous plaît...

— Un bock, s'il vous plaît...

Ճերմակ Բօրդօ-ի շիշը սեղանի վրայ դրած, տաքացած երեսներով ու բորբոքւած ձայնով մի խումբ հայեր տաք-տաք վիճում էին: Նրանցից մէկը՝ դէր ու թիկնաւէտ, երբեմնի գինւորական, խոշոր գլխով եւ հաստ շրթներով, խռպոտ իր ձայնով բողոքում էր ինչ որ անարդարութեան դէմ:

—Ոչ, ոչ եւ ոչ,— ասում էր նա,— դուք ինձ հարցրէք, ինձ հարցրէք, ես մասնակցել եմ բոլոր մեծ կռիւներին, ես եղել եմ Սարդարապատի հերոսամարտում...

Եւ նա ոգեւորւած կրկին ու կրկին լցնում էր բաժակն ու պարպում եռանդով: Աչքերը սկսում էին փայլել:

— Անդրանիկի շքախմբի լուսանկարը տեսե՞լ էք,— տեղից կիսով չափ բարձրանալով խօսում է չերկէսկա հագած մէկը,— հապա էն կապուտ գօտիկը կապած, Անդրանիկի կուշտը կանգնած տղան, էն ո՞վ է: էն ես իմ: Մուրատի ձիու հետ Ջուխտակ քալող կտրիճ տղան, էն ո՞վ էր: էն ես իմ: Հին ժամանակ Պարսկաստանում Եփրեմի հետ բաժակ բռնողն էն ո՞վ էր...

Ցենւած աջ արմունկին ու խոշոր իր մարմնով կիսով չափ սեղանը ծածկելով, լայն երեսով մի մարդ պատմում էր կողքինին իր կեանքը:

— Փախստական էի,— ասում էր նա հրճւանքով՝ չեշտելով փախստական բառը,— կառավարութիւնն ինձ փնտռում: Տղաները բաղում քէֆ էին սարքել՝ խորոված, դինի, ծանօթ օրիորդներ եւ տիկիններ... Ես էլ նստել եմ ոնց որ էստեղ՝ առանց վախենալու...

Մէջքը յենում է թաւիշէ յենարանին, հաստ յօնքերը վեր է բարձրացնում, աչքերը լցնում է խրոխտ քաջին յատուկ ամեն վտանգ արհամարհողի արտայայտութեամբ եւ շարունակում.

— Մէկ էլ էն լսեմ թէ, տղէ՛ք ջան, ճղէ՛ք...

Ճաշարանատէր Սաշան, հարբեցողի իր աչքերը մասնագիտօրէն պտտցնելով սրճարանում նստած բոլոր կանանց վրայ, լսում է խօսողներին, մերթ ընդ մերթ ոլորում երկար բեխերն ու նրբացած իր ճաշակը ապացուցե-

լու համար, հայուհիների անհրապոյր լինելու մասին է խօսում...

Հեռու անկիւնում մեն-մենակ նստած բանաստեղծն արագ-արագ գրիչն է շարժում: Քաղցր շոյող խաժամուժը օրօրում է իր հոգին:

Նրա կողքին սեղանի շուրջ նստած մտաւորականները կարծիքների լուրջ փոխանակութեամբ են զբաղուած:

— Մնդիրներին պէտք է մօտենալ հասարակական տեսակէտից,— հնչում է Café Source-ի համալսարանաւարտ յաճախորդի ձայնը, որ արհամարհանքով լցուած հոգիով նայում է բոլորին՝ ծխախոտի թանձր ծուխը կլորցրած շրթունքներից ոլոր-ոլոր դուրս հանելով — պուֆ, պուֆ, պուֆ:

— Հասարակական տեսակէտից բոլորը ոչնչութիւններ են, դուրկ բարոյական սկզբունքներից,— շեշտակի նրա կողմը նայելով պատասխանում է ճեմարանաւարտ մտաւորականը, որ հակառակ բոլոր նախապդուշութիւններին միշտ ինքն իրեն վիրաւորուած է զգում, վիրաւորուած ծանօթներից եւ ընկերներից, տանտիրոջից, սրճարանի «գառնոն»ից եւ ամբողջ հայ ազգից... Չէ որ իրեն պէս «բառիս իսկական իմաստով» մտաւորականներ, այսպէս ասած, «զտարիւն» մտաւորականներ չկան ի վերջոյ... Իսկ մարդիկ՝ իսկ հայերը չեն կարողանում դնահատել իրեն:

Գլուխ-գլխի իրար մօտ խմբուածների արանքից երեւում է առատ ու խիտ մազերով մի գլուխ, որ աչքերն աջ ու ձախ պտտցնելով լրացնում է իր նախադասութիւնը.

— Պէտք է պատրաստ լինել համաշխարհային յեղափոխութեան համար:

Մինչ անգին նիհարակազմ մէկը բաց գոյնի իր աչքերի մէջ խորամանկներին յատուկ անմիտ ժպիտով թեք-թեք նայում է տափակագլուխ իր հարեւանին.

— Զգոյշ, բարեկամ... այն տղան մութ գործերով է զբաղուած...

— Ինչպէ՞ս հասկացար:

— Երբ տեսայ, անմիջապէս հասկացայ... ձեռքի բրոշիւրից,— հանդարտ խորհրդաւորութեամբ շշնջում է նիհարակազմը.— Գիտես որ հմուտ եմ: Դէմ դիմաց էինք: Ցանկարծակի բերի իրեն ու ձեռքից բրոշիւրը խլեցի: Յովհաննէս Թումանեանի «Գիքորն»էր... Էնտեղի հրատարակութիւն...

Գլուխ գլխի իրար մօտ խմբուածների արանքում նըստած առատ ու խիտ մազերով տղան երկու ձեռքով արագ նշան է անում իր խօսակիցներին: Գլուխներն աւելի են մօտենում իրար...

— Հեռուում նստած այդ մարդկանց տեսնում է՞ք... «Ներանցից» են:

— Հաստա՞տ, — աչքերն ուրախութիւնից, թէ՞ սարսափից չռելով հարցնում է կապուտաչեայ սպիտակամորթը, վարից վեր նայելով խօսողի երեսին:

— Ստոյգ աղբիւրից գիտեմ:

— Քանի որ ընկերն ասում է, ուրեմն մի բան գիտի,— շշնջում են երկու երիտասարդներն իրար ականջի, բայց այնպէս, որ «ընկերը» լսէ,— ուրեմն մի բան կայ:

— Դու բարա:

— Փանջ ու սէ:

— Մեզ պէտք է տային հարիւր հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն... չահար... Աշխարհիս բոլոր հայերը պէտք է գային այնտեղ... փանջ... Մեր հայրենիքը պիտի դառնար երեք, չորս միլիոնանոց մի պետութիւն: Հաշւած էր, որ եթէ այդպէս լինէր 1940 թուին հա-

յերի թիւը պէտք է հասնէր հինգ միլիոնի... Դու շէշ: Յետոյ կամաց-կամաց Երզնկայից դու-քա-եկ, մենք պէտք է յառաջանայինք դէպի Տիգրանկերտ, փանջ, դէպի Սեբաստիա, ու դէպի Կիլիկիա: Խփեցին, ձեռներիցս առին: Զա՛րկ:

— Նետէ՛:

Արտօի ամբողջ ճանապարհի ընթացքին պահպանած լռութիւնը, սրճարանի ծուխն ու խաժամուժը, հանդէսի մէջ ժողովուրդի սրտաշարժ ոգեւորութիւնը, երիտասարդ որբի յուզմունքը, այնպիսի ծանր տպաւորութիւն էին թողել Անուշի վրայ, որ նա իրեն մղձաւանջի մէջ ընկածի պէս էր զգում: Կարծես թէ ոչինչ չկար յատակ ու պայծառ նրան շրջապատող այդ իրականութեան մէջ եւ ամեն բան ծխոտ ու խեղդող էր:

Օդ, օդ, մի քիչ մաքուր օդ...

Թարմ ու մաքուր օդի կարիք էր զգում Անուշը, մինչ Արտօն նստած նրա կողքին խօսում էր զայրացած ու վրդովուած՝ պատմում էր անսպասելի իր հանդիպման ու իր լսածների մասին...

Վարդենին լարուած հետաքրքրութեամբ լսում էր նրան:

— Բայց ինչո՞ւ չմօտեցար, ինչո՞ւ չխօսեցիր իրեն հետ, Արտօ: Գոնէ յայտնէիր նրան, որ մենք Փարիզ ենք..

— Մօտենայի՞, խօսէի՞... Ինչե՞ր ես ասում, Վարդենի: Ինչպէ՞ս կարող էի ես այդ անել: Ես կուսակցական մարդ եմ, վերջապէս: Բայց երբ տեսայ նրան, անմիջապէս ճանաչեցի, թէեւ սրտումս դեռ կասկած կար: Նրանք քայլում էին իմ առջեւից: Ես դալիս էի հանդէսի վայրը, բայց վճռեցի հետեւել նրանց՝ ստուգելու համար թէ իրո՞ք նա էր, չէ՞ի սխալւում: Գնացին, գնացին, ես էլ նրանց յետեւից: Մտան «Սօսիէտէ Սաւանտ»: Ես էլ

մտայ: Բարձրացանք աստիճաններից: Սրահը լեցուն էր բազմութեամբ. ամենքը եկել էին Հայաստանի նորեկ ներկայացուցչի խօսքը լսելու... Մի ասա թէ Հայաստանի նորեկ ներկայացուցիչը...

Վարդենին աչքերը չէր հեռացնում սրճարանի ապակէ դռներից: Նա անհամբեր սպասում էր Բարգէնի ու Հայկի վերադարձին: Գիտէր, որ նրանք այդ դիշեր «Սօսիէտէ Սաւանտ» էին գնացել, Հայաստանից եկած ներկայացուցչի դասախօսութիւնը լսելու: Նրանք անպայման աւելի մանրամասն տեղեկութիւններ կը բերէին: Վարդենին չափազանց ափսոսում էր, որ ինքը բացակայ էր եղել այդ դասախօսութիւնից: Արտօի հաղորդած լուրը ակնյայտ յուզել էր նրան...Յուզել, բայց եւ ուրախացրել միաժամանակ...

— Տեսնէիք թէ ինչե՞ր, ինչե՞ր էր ասում... Ես, ասում էր, պատիւ եմ համարում պատկանել մի վարդապետութեան, որ...պատիւ է համարում...Մենք, ասում էր, փրկեցինք Հայաստանն ու հայ ժողովուրդը... Երէկուայ երեխան... Զգիտէ թէ ինչեր կորցրինք մենք:

Սրճարանի դուռը բացւեց վերջապէս: Իրար հետ տաք-տաք վիճելով ներս ընկան Բարգէնը, Հայկն ու Սրմաշը: Վարդենին անմիջապէս ոտքի ելաւ ու ձեռքերով նշան արաւ նրանց:

Խումբը մօտեցաւ:

— Գիտէ՞ք ով է եկել,— ասաց Հայկը դառնալով Վարդենուն ու Անուշին:

— Գիտենք: Արտօն պատմեց արդէն: Ասացի՞ք, որ մենք Փարիզ ենք:

— Ասացինք:

— Ձեր հարազա՞տ հօրաքրոջ տղան է այդ մարդը, Վարդենի,— հարցրեց Բարգէնը:

— Այո՛, Բաբդէն, մեր հարազատ հօրաքրոջ տղան։

— Ինչպէ՞ս չես յիշում, Բաբդէն,— դարձաւ դէպի նա Հայկը ջղայնացած,— ի՞նչ տարօրինակ յիշողութիւն ունես դու։ Բազրատը, որ «Փարիզ» տպարանի մեքենայի անիւն էր դարձնում... Չե՞ս յիշում։

— Բոլորովին չեմ յիշում։

Հայկն անհամբեր մի շարժում արաւ։

— Բազրատը Հայաստանի ներկայացուցիչ... դասախօսութիւն արուեստի մասին... Սրտանց ափսոսում եմ, որ ներկայ չէի։

— Բազրատը քո տեսած նախկին Բազրատը չէ այլ եւս, Վարդենի։ Նա հասուն մարդ է դարձել հիմա, ծանր ու կազմուած։ Իր աչքերի նախկին տխուր լրջութիւնը չի փոխուել սակայն։ Զգաստ, արթուն, գործունեայ մարդու տպաւորութիւն է թողնում։ Երբ մօտեցայ նրան՝ խսկոյն չճանաչեց ինձ. բայց երբ իմացաւ ով լինելս, շատ մտերմիկ ու սրտագին սեղմեց ձեռքս։ Հարցրեց քո մասին, ձեր ընտանիքի մասին, բայց մանաւանդ քո մասին... Ու դեռ նախ քան դասախօսութեան սկսուելը մենք իրար հետ երկար, երկա՜ր խօսեցինք։

— Ի՞նչ էր ասում։

— Հարցրու Արմաշին,— ասաց Հայկը։

Արմաշը ժպտաց։

— 1920 թուի նոյեմբերը, ասում էր, հայ բովանդակ կեանքի մէջ նոր մի դարագլուխ է բացել։

— Եւ ճիշտ էր ասում,— վրայ տուաւ Արմաշը։

Արտօն, որ յօնքերը կիտած մի կողմ էր քաշուել, բարկացած նայեց նրան։

— Ո՛չ, ճիշտ չէր ասում։ 1920 թուի նոյեմբերը կործանեց մեզ։ Կործանեց եւ խլեց մեզնից այն, ինչ որ դարերի շարունակ կորցրել էինք ու որ ձեռք էինք բերել վերջապէս։ Դուք վերջ ի վերջոյ, ինչ ուզում էք կարող էք մտածել, բայց գիտցէք, որ հայ ժողովուրդը, իր հոգու խորքում անչէջ մի կրակ ունի, եւ դա իր ազատութեան ու անկախութեան գաղափարն է... Ոչինչ չի կարող այլ եւս խլել մեզնից անկախ եւ միացեալ հայրենիքի սրբազան գաղափարը։ Եւ հայ ազգն արժանի է իր անկախ հայրենիքն ունենալու՝ իր զերազոյն իղձն է դա։

— Բայց ոչ հաւատալով ու յենւելով բուրժուական ու կապիտալիստական Եւրոպայի վրայ։ Հայկական հարցի միակ ու արմատական լուծումը, նրա պրոլետարական լուծումը հանդիսացաւ։ Նոյեմբերեան յեղափոխութիւնն էր, որ Հայաստանին տուաւ ազգային մշակոյթի զարգացման իսկական ազդակները։ Հրաշքի պէս մի բան էր դա հայ ժողովրդի եւ մեր հայրենիքի փրկութեան համար։

Արտօն հեգնական ծիծաղով նայեց Արմաշին։

— Թութակի պէս ամենքդ միշտ նոյն բանն էք կրկնում,— ասաց նա։

— Եւ զարմանալին այն է, որ դեռ մինչեւ այսօր կան մարդիկ, կան երիտասարդներ մինչեւ իսկ, որ յուսահատւում են ու հարցնում թէ ո՞րն է հայի ուղին,— ասաց Արմաշը՝ առանց ուշադրութիւն դարձնելու Արտօի ծիծաղի ու խօսքերի վրայ, խօսքն ուղղելով աւելի Հայկին։

— Այո՛, Արմաշ, եւ այդպէս հարցնողներն իրաւունք ունին,— խօսեց Հայկը վրդովւած։ Այդ հարցը հրատապ հարց է մեզ համար։ Մշուշապատ է մեր աչքին ամեն բան։ Չկայ ոչինչ վճիտ ու պայծառ։ Մեր սերունդը դժբախտ սերունդ է, յոռետես, ջղայնոտ ու յոգնած։ Ցոգնած՝ հոգար-հոգար անդամներ վիճաբանւած, տրորւած գաղափարներից։ Մեր ապագան դարձել է անորոշ։ Որի՞ն հաւատայ հայ երիտասարդը... Մեր գաղափարները, մեր

հաւատամքներն այնքա՞ն տարբեր են այսօր իրարից։ Խճողված, իրար խաչաձեւող, իրար հակասող... Մէկը փարած է իր ողջ էութեամբ հայրենիքի անկախութեան, միւսը կրակոտ թշնամի է նրան։ Արտօնները կառչած են իրենց հնին, ուրիշները ժխտում են հին արժէքներն ու գուրգուրում նոր գաղափարներ։ Բարձր ու հաստ մի պատ է ցցուած կարծես մեր առջեւ այսօր, նորեկ մեր սերունդի առջեւ, որ բաժանում է ամեն ինչ երկու ծայրայեղութիւնների, որ բաժանում է հայ ժողովուրդն իսկ երկու տարբեր մասերի... Եւ այդ ընկճում, խեղճացնում է մեզ։ Հայը երկրի մէջ եւ հայը երկրից դուրս... Եթէ սիրես ու ծառայես մէկին, թշնամի կը համարւես երկրորդին. եթէ նւիրւես երկրորդին՝ կը հալածւես առաջինի կողմից։ Վա՜ռ, խեղդող մթնոլորտ է ստեղծւել այսօր երիտասարդութեան շուրջ։ Բայց ո՞վ է մտածում նրա մասին, ո՞ւմ ինչ թէ ի՞նչ է սպասում նրան... Հայ երիտասարդի հոգեկան տագնապը սոսկալի է, սոսկալի է, Արմաշ, եւ նա չգիտէ, չգիտէ թէ ո՞րն է իր ուղին։

Արմաշը լուռ լսում էր նրան։ Հայկը բորբոքւել էր։

— Զարհուրելի այս ծովի մէջ հայ երիտասարդը, Արմաշ, իրեն համար աննկատ կերպով հալւում է, ձուլւում, կորցնում է իր ես-ը։ Իսկ յիշո՞ւմ ես, թէ ի՞նչ էին ասում մեզ մեր ուսուցիչները՝ աւարտական վկայականները մեր ձեռքը դնելով. «Կեանքը դեղեցիկ փնտռումների մի ճամբայ է։ Կեանքի մէջ ամեն բան կարող են խլել ձեզնից, բայց ոչ ոք չի կարող խլել ձեր հոգին, ձեր ինքնութիւնը, ձեր ես-ը»։ Եւ, սակայն, երբ իրականութիւնն է ցցուած մեր առջեւ, մենք տեսնում ենք բոլորովին տարբեր մի բան։

Լռեց եւ աչքերը դարձրեց բոլորի վրայ։

Անուշը, որ յենւած իր ափին՝ լուռ նայում էր մերթ Արմաշին, մերթ Հայկին, բռնեց անմիջապէս Հայկի հայեացքը։ Ո՞ր-քա՞ն դառնութիւն կար թաղւած այդ աչքերի մէջ։

Վարդենին օգտւեց տիրող լռութիւնից։

— Այդ հարցերի շուրջ ձեր վիճաբանութիւնը շատ կերկարի,— ասաց նա դառնալով Արմաշին,— դուք աւելի լաւ է պատմէք մեզ թէ ի՞նչ էր ասում Բաղրատը։

Արմաշը ժպտաց խոհոյն եւ, ի պատասխան Վարդենու առաջարկին, ձեռքը տարաւ գրպանը։

— Բաղրատի ճառը ես մանրամասն գրի եմ առել, կուզե՞ս, որ ասեմ։

Վարդենին գլխով հաւանութեան նշան արաւ։

Բարդէնը, որ Հայկի եւ Արմաշի խօսակցութեան ընթացքին հաղիւ էր զսպում իրեն, աթոռը մօտեցրեց Արմաշին ու զայրոյթով ու դառնութեամբ լցւած աչքերով սկսեց հետեւել նրա ընթերցանութեան։

«Այն, ինչ որ մի ժամանակ մենք անւանում էինք միտք եւ գրականութիւն, կամ կուլտուրա անունն էինք տալիս,— սկսեց կարդալ Արմաշը՝ հատ-հատ արտասանելով ու շեշտելով իւրաքանչիւր բառը,— իմպերիալիստական տիրապետութեան, կապիտալիստական դասակարգի անջատողական ձգտումների հուժկու զէնքն էր, ուղղւած բանւոր դասակարգի դէմ։ Դասակարգային հասարակութեան մէջ իշխում էր տիրող դասակարգի գաղափարախօսութիւնը։ Իշխում էին օրէնքներ, պատնէշի պէս ցցւած մի այլ գաղափարի առջեւ, որ ձգտում էր աշխատաւոր մասսաներին ազատագրել սոցիալական ստրկութիւնից եւ բանալ նրա առաջ նոր կուլտուրայի աներեւակայելի բարձունքներ։ Այսօր մեր երկիրն ազատագրւած է անցեալի տխուր ժառանգութիւնից եւ նոր արժէքներ է ստեղծում»։

Արտօն գայրացած, երեսը դարձրել էր պատի կողմը եւ աշխատում էր չլսել Արմաշին։ Հայկը ջղային շարժումներ էր անում։

«Մարքսիզմը սովորեցնում է մեզ, որ արուեստը իդէոլոգիական վերնաշէնք է, որ ծնւում է հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող տնտեսական փոխյարաբերութիւնից եւ որ իր հերթին ազդում է այդ փոխյարաբերութիւնների վրայ։ Արուեստը մենք դնահատում ենք տեսութեան եւ պրակտիկայի միասնութեան տեսակէտից, այսինքն՝ իդէոլոգիայի եւ դասակարգային պայքարի անբաժանելի կապի տեսակէտից։ Ուրիշ խօսքով՝ արուեստը մեզ համար յեղափոխական ուտիլիտարիստական մէկ ինդիր է, որ կոչուած է ծառայելու բանւոր դասակարգի գերագոյն շահերին՝ օգնելու նրան իր պայքարի մէջ»։

Այստեղ նա երկար բացատրեց ու տրամաբանեց իր առաջադրած գաղափարներն ու ի վերջոյ ասաց որ՝ «Մորհրդային արուեստի առջեւ դրուած են հագարաւոր խնդիրներ՝ պատռել դիմակները, մերկացնել հասարակական կեղծիքն ու սուտը, լուսաւորել մարդկանց գիտակցութիւնը, պատրաստել նրանց յաղթական պայքարի համար ու նուիրուել սոցիալիստական կառուցման գործին։ Մորհրդային արուեստը հանդէս է գալիս որպէս շահագործուող դասի արթնացած գիտակցութիւն եւ նոր կեանքի նոր պատգամներ է բերում մարդկութեան։ Բուրժուական արուեստը կեղծ է եւ ազգայնամոլ, յղի ազգամիջեան բախումներով, մինչդեռ պրոլետարական արուեստը միջազգային է, մարդկային է եւ եղբայրութեան ու հաւասարութեան սաղմերով բեղուն։ Բուրժուական արուեստն իր դասակարգի գաղափարախօսութիւնն է պարտադրում շահագործուող միլիոններին, մինչդեռ պրոլետարական արուեստը դասակարգերի վերացումն է։ Եւ մենք մենակ չենք»։

Ու նա յիշեց մէկիկ-մէկիկ Բարբիւսին՝ «Կրակ»ի եւ «Ես մեղադրում եմ» գրուածքների հեղինակին, Բերնար Շօին, Տէոդոր Դրայզէրին, որ իր նոր «Ողբերգական Ամերիկա» վէպով ջատագովն է հանդիսանում խորհրդային կարգերի, նոյնպէս Էպտոն Սինկլէրին, Ստեփան Ցւայգին, Ռոմէն Ռոլանին իր ազգերի համերաշխութեան սքանչելի երազով, եւ ուրիշներին։

— Իսկ ես ասում եմ քեզ, սիրելի Արմաշ,— դիմեց Հայկն Արմաշին — որ առանց ազգային զգացողութեան արուեստը գոյութիւն չունի։ Ինչպէս էլ որ գրես, ինչպէս էլ որ ստեղծագործես, անհատը՝ արուեստագէտի անհատը պիտի արտայայտուի, իսկ իւրաքանչիւր անհատ մասնիկն է իր ազգի։ Զգալ, մտածել անկախ՝ օդի մէջ, անկարելի է որեւէ ստեղծագործողի համար։ Իսկ դասակարգային պայքա՞ր, իսկ դասակարգերի վերացո՞ւմ... Դուք էք, որ ստեղծել էք արդէն ամենամեծ դասակարգն ու ամենախոր դասակարգային գրականութիւնը։

Արտօն գլխով հաւանութեան նշան արաւ Հայկին ու ծուռ-ծուռ նայեց Արմաշի կողմը։

Ու մինչ տաքացած խօսում էին այսպէս, Վարդենին խորասուզուել էր այլեւս իր մտածմունքների մէջ։ Նրա մտքերը շատ հեռու էին ներկաներից. նա մտովին տեղափոխուել էր դէպի անցեալը։ Ահա Բագրատը, Մարջան հօրաքրոջ Բագրատը... իր ծննդավայրի այն միջավայրում...

Ու Վարդենու առաջ բացւում, փուում էր նրա կեանքը, Մարջան հօրաքրոջ վիշտը, Բագրատի յուսահատ ու լքուած վիճակը...

Ու յիշում էր Վարդենին իր եւ Բագրատի միջեւ եղած վերջին տարիների մտերմութիւնը... Այդ յիշողութիւնը յուզում էր նրան...

Խորն այն զգացումը, որ տարիներ շարունակ թաղնուած մնացել էր նրա հոգում, տաք ու բուռն հոսանքով բարձրացել էր յանկարծ ու խեղդում էր նրան: Մոռացումի մատնուած ուժեղ մի զգացում... Վարդենին զգում էր, որ իր եւ Բագրատի միջեւ ստեղծուած երբեմնի ներքին կապը դեռ կար, դեռ շարունակւում էր: Ներաշխարհի մէջ թաղնուած զգացմունքները գլուխ էին բարձրացրել եւ հոգու մէջ թաղուած իղձերը, որոնց նա մեռած էր համարում, արթնացել էին արդէն: Ինչպէ՞ս ինքը չէր մտածել երբեք նրա մասին... Ինչպէ՞ս էր, որ իր սիրտը չէր դուշակել այդ անակնկալը...

Եւ ի՞նչն է պատճառը, որ Բագրատը մի ժամանակ անկումից անկում էր գնում, մինչ նոր մի միջավայր՝ հայրենիքի ծոցում, դարձրել էր նրան ահա հասարակութեան շահերին ծառայող մի անդամ: Իսկ իրե՞նք...Ի՞նքն օրինակ, որ այնքան ճիգով սովորեց ու աւարտեց, վկայականը գրպանի մէջ ամուր փակած նստել է ահա... Նստել է ու կար է անում, օրւայ ապրուստը միայն շահելու համար:

Բնական է, ի՞նչ կարող էր անել նա իր վկայականով... Միջավայր չկար, ասպարէզ չկար իրեն համար:

Ու Վարդենին յենւած ձեռքերի գոյդ ափերի վրայ, աչքերը կիսափակ վերյիշում էր ակամայ վերջին տարիների իր կեանքը, իր անզուգական ճիգը... Եւ այն օրը՝ վկայականը ստանալու «երջանիկ» այն օրը...

Երեկոյ էր: Մեն-մենակ բարձրանում էր նա պանդոկի աստիճաններից:

Պանդոկի աստիճանները... Ոլորապտոյտ, ողորկ այն ցանկապատը, որ սկսւում էր վերից ու կլոր-կլոր իջնում էր մինչեւ վար... Պատերը դեղին, նրբանցքի մէջ՝ աջ ու ձախ թւակալած դռներ...

Այդտեղ էր ապրել ինքը տարիներ ի վեր — թւագրւած դռներով, փոքրիկ խուցերով այդ բանտի մէջ...

Երկար, երկար տարիներ... Այնքա՞ն եռանդ, այնքա՞ն աւիւն խլեցին նրանք:

Եւ ի՞նչ տխուր էին այդ պատերը, որքա՞ն երկար, անվերջանալի երկար էին սանդուխները. իսկ դէմ-դիմաց վերջին աստիճանի ծայրին, դեղին դրան վրայ ամրացրած թիւ 51-ը...

Թիւ 51...

Տարիներ շարունակ, ամիսներ եւ օրեր, ցցւել էր նա իր առաջ՝ ամեն անդամ, երբ բարձրացել էր այդ աստիճաններից... Իսկ ապրում էր այնտեղ ծեր այն մարդը: Քսանհինգ տարի էր, որ ապրում էր նա թիւ 51-ում. սկսել էր ուրեմն այնտեղ երիտասարդ, խանդավառ մի կեանք, որ քսանհինգ տարիների ընթացքում սահել էր, անցել, անլոյս, անկրակ, չորս պատերի արանքում:

Ի տես այդ դրան Վարդենու մարմնով ուժեղ մի սարսուռ էր անցել: Ու վկայականը ձեռքին կանգնել էր նա այդ դրան առաջ, աստիճանների գլխին, լուռ ու դըլխիկոր: Յանկարծ ամեն բան այնպէ՞ս դատարկ, այնքա՞ն անիմաստ էր երեւացել Վարդենու աչքին... Կարծես երկաթեայ ծանր մի դուռ շառաչելով փակել էր յանկարծ նրա առաջ լայն ու ծանր իր փեղկերը: Եւ անթափանց ապադան փռել էր իր առաջ մութ մի տարածութիւն...

Անորոշ, աննպատակ մի ապագայ:

Դիպլոմ, վկայական...

Ինչի՞ էր պէտք, ո՞ւմ էր պէտք...

Այսպէս էր զգացել Վարդենին այն ժամանակ:

Իսկ ա՞յժմ, այժմ հոգին ջերմի էր բռնւել...

Բագրատը Փարիզում...

Վարդենին զգում էր կարծես, որ իր կեանքի մէջ

Ցանկարծ նա ընդհատեց խօսքը։

— Ի՞նչ էք ուզում, ախպէր ջան, ի՞նչ էք ուզում մեզնից վերջապէս... Միեւնոյն է մենք չկանք այլեւս, չկանք, չկանք այլեւս...

Նա բարկացած վեր կացաւ տեղից ու առանց մնաս բարեւ ասելու, շտապ դուրս եկաւ սրճարանից։

◆

Այդ գիշեր Անուշը տուն ընկաւ յոգնած ու տխուր, դատարկ, լքւած հոգիով։

Երբ վեցերորդ յարկի փոքրիկ այն սենեակի դուռը փակւեց նրանց ետեւից, Անուշն անմիջապէս ինքն իրեն նետեց մահճակալին ու թաղեց գլուխը բարձերի մէջ։

Ա՜հ, փոքրիկ այդ սենեակը... Կարծես պատերը փուլ էին գալիս նրա գլխին։ Այնքան նեղ, այնպէս սառն էր այնտեղ...

Որքա՜ն զգացմունքներ, յոյզեր ու ապրումներ իրար վրայ գալով, իրար բախւելով, մէկը միւսին հալածելով, մէկը միւսին չեզոքացնելով, գլորւել, անցել էին այդտեղից... Այդ սենեակի մէջ էր, որ երկար տարիներ բազմաթիւ մտքեր ու գաղափարներ իրար էին եկել, իրար վրայ կուտակւել ու այնպէս տանջել էին Անուշին։ Նրանք մերթ խեղճացրել էին նրան ու նա այնպէս անզօր, այնպէս անպէտք էր զգացել ինքն իրեն, մերթ յուսահատութեան էին մատնել նրան եւ Անուշը գլուխն ափերի մէջ առած լաց էր եղել... Ա՜հ, երիտասարդ իր հոգին երկար այդ տարիների ընթացքում այնքա՜ն բան էր զգացել...

Թանձր վարագոյրները, որ ծանրութեամբ իջել էին մինչեւ յատակը կտրել էին նրան ողջ աշխարհից։ Պատկից սենեակից լսւում էր հարեւանի ժամացոյցի համաչափ զարկը՝

Տիկ–տակ–տակ

Տի՛կ–տա՛կ...

Անուշի գլուխն ուռել էր։ Երազի մէջ լինէր կարծես։ Մարմինը թուլացել էր, ջղերը լարւել էին եւ գիտակցութեան վրայ թանձր մի մշուշ էր իջել ու չէր կարողանում այլեւս հանդստացնել հոսանքն անթիւ մտքերի, որոնք արճիճէ գնդակների պէս կլոր–կլոր պտտւում էին նրա գանգի մէջ, իրար բախւում, աղմկում ու դղրդւում վար թափւում, թափւում, թափւում...

Մղձաւանջ էր։

Ու թւում էր Անուշին, որ ինքը նստած է նեղ այն վերնայարկում։ Երիտասարդ դէմքեր, բորբոքւած աչքեր ամեն կողմից իրեն են նայում։ Միջոցի մէջ մերթ Հայկի ոսկէ գլուխն է երեւում, մերթ նախագահի ակնոցներն լեն փայլփլում...

— Ընկերներ... հարցերը դարձել են առեղծւածային...

— Հայը, ընկերներ... հայը տառապում է ե՛ւ իբրեւ հայ ե՛ւ իբրեւ մարդ...

Գոռում են, աղմկում։

Բայց յանկարծ ամեն ինչ փոխւում է...Անուշն ինքն իրեն դտնում է ծխոտ մի սրճարանում։

Ծանր, անշնչելի օդ, պղտոր ուրւագծւած դէմքեր... Իր շուրջը նստած են շաղախւած աչքերով ու խամրած դէմքերով մարդիկ ու խօսում են, խօսում, խօսում... վիճում են, բորբոքւում...

Բարդէնը ձեռքերը թափահարելով կանգնած է սըրճարանի մէջտեղը.—

— Peintre arménien ... Ի՞նչ էք ուզում մեզնից, ախպէր ջան, ի՞նչ էք ուզում մեզնից վերջապէս... միեւնոյն է մենք չկանք, չկանք այլեւս...

— Դու բարա...

— Փանջ ու եբ... մեզ պէտք է տային հարիւր հազար քառակուսի կիլոմետր տարածութիւն...

— Զտարիւն, զտարիւն մտաւորականութիւն...

Ցանկարծ զարմանալի մի աղմուկ լցնում է ողջ սրճարանը... Հինաւուրց մի խուրջինի թելեր քակւում են յանկարծ եւ դուրս է նետւում բրդէ մի վարիսխ, մի շէր... Իսկ օդում ձեռք ու ոտք առած իր թեւերն է թափահարում դեղնած մի յուշատետր...

Հեռու, հեռու հազիւ նշմարելի մի անկիւնից երեւում է Արտօն...

Արճիճէ գնդակները հսկայ զանգւած են դառնում: Զանգւածն իջնում է Անուշի աչքերի վրայ, սրտի վրայ, ճնշում է, ճնշում...

Գունատ մի տղայ դէմքը մօտեցնում է Անուշի դէմքին...

— Ես հարբած չեմ, հարբած չեմ... Ես ամեն գիշեր այսպէս լալիս եմ...

Անուշն այլեւս ոչինչ չի տեսնում: Հեռուից՝ ինչ որ մի փոսից լսւում են տարօրինակ ձայներ... Լաց ու ողբ, յետոյ գայրոյթ ու բողոք, մերթ սուր մի ճիչ, անկապ խօսքեր եւ բացագանչութիւններ...

— Օգնութի՛ւն, օգնութի՛ւն... — ճչում է Անուշը:

Ու ահա, ահա ամեն կողմից կրակի բոցեր, հրէ լեզուներ դէպի Անուշն են երկարում, քսւում են նրա մարմնին, երեսին... Ողջ սենեակը կրակի մէջ է: Բոցերն իրար են գալիս, հաւաքւում են, խմբւում, միանում...

— Հարբած չեմ, հարբած չեմ ես...

Բոցերի մէջ Նոտր-Դամի քիմերաները պար են բռնում, պարում են: Կոռնէյը, Մոլիեռն ու Ռասինը, իրենց դարի տարազներով զարդարւած անկիւնից անկիւն են ցատկռտում...

Անուշն այրւում է, Անուշը վառւում է: Իր շուրջը ծուխ է, իր ներսը մշուշ...

— Օդ, օդ, մի քիչ մաքուր օդ...

Բայց Անուշի ձայնը լսող չկայ: Իսկ մարդիկ շարունակում են խօսել, խօսել: Իրենք էլ չգիտեն այլեւս թէ ինչի մասին են խօսում: Պղտոր մտքերը թափւում են տախտակէ սեղանների, կեղտոտ մոխրամանների, դատարկ բաժակների վրայ...

. . .

Մութ էր:

Սենեակի խաւարը ճնշիչ ծանրութիւն էր ստացել: Դրսում բարակ անձրեւը սկսել էր մաղւել քաղաքի վրայ եւ լուսամուտների ապակիները միօրինակ թխթխկոցով լցնում էին լռութիւնը:

Անուշի բորբոքւած ուղեղի վրայ արդէն թմրութիւն էր իջել: Բայց այդ ի՞նչ էր...

Հեռուից՝ թանձրացած խաւարի միջից գլորւելով, գլորւելով դէպի Անուշն էր գալիս տարօրինակ մի առարկայ...

Նա նայում է զարմացած:

Խաւարն արգելում է նրան լաւ տեսնել: Բայց շուտով ոլորւելով առաջացող տարօրինակ առարկան զարմանալի արագութեամբ վեր է բարձրանում՝ այնպէս ինչպէս մէկը նրա ծայրից բռնէր ու բարձրացնէր, թափահարւում

է ու ահա Անուշի շլարած աչքերի առաջ բացվում, փլուզվում է արեւելեան մի գորգ...

Հազար ու մի նախշերով, հազարգոյն գոյներով, վառ ու ալեան ծաղիկներով զարդարված արեւելեան մի գորգ...

Անուշը նայում է, նայում եւ ի՞նչ է տեսնում...

Գորգի նախշերը մեծանում, մեծանում ծառեր, թփեր են դառնում... Նրա գոյն-գոյն թելերը պոկվում, ցրիւ են գալիս ու բաղմագոյն վարդեր բացվում, սփռվում են ամեն կողմ:

Անուշի համար այլեւս ամեն բան պարզ է: —

Գորգը գորգ չէ, այլ գունագեղ մի պարտէզ:

Յանկարծ ամեն կողմից՝ թփերի արանքից, ծառերի բներից, վարդերի միջից դուրս են նետվում ու պարտէզ թափվում ծանօթ ոգիներ, սիրելի դէմքեր... —

Ամենքը, ամենքն այդտեղ են՝ հէքեաթ այդ պարտէզի մէջ են... Այդտեղ է երկնքի Արեւ աղջիկը, կապտաթեւ էն թաւաբ զուշը... Տատի հէքեաթների բոլոր հերոսները... Այդտեղ է եւ ինքը Անուշը... Նրա աչքերը կապված են նախշուն մի թաշկինակով եւ ուրախ-ուրախ վազում է նա արահետից արահետ, ծիծաղում է, թռչկոտում... Իսկ իր շուրջը քրքջում ու թռչկոտում են բոլոր հին ընկերները, հէքեաթների բոլոր այն հերոսները...

— Չես բռնի, չէ, չես բռնի...

Աչքերը կապված են նախշուն թաշկինակով... Բայց ամեն ինչ այնպէս պայծառ, այնպէս ջինջ է երեւում Անուշի աչքին... Նա վազում է նրանց ետեւից, վազում խենթի պէս: Իր խենթ վազքի հետ վազում են կարծես եւ պարտէզի ծառերը, փոքրիկ արահետները երկար ճամբաներ են դառնում ու կանչում, կանչում են Անուշին:

Որքան գեղեցիկ, որքան պայծառ է երեւում ամեն ինչ:

Բայց յանկարծ...

Անուշը ցնցվում է:

Լսվում է ուժեղ մի դղրդոց... Շուրջն ամեն բան փուլ է գալիս ու խառնվում է իրար: Ամեն կողմից լսվում են զարհուրելի թնդիւններ... Թանձր խաւարը իջնում ու պարուրում է ամեն ինչ:

Եւ ահա թանձր այդ խաւարի միջից զանգուածային հսկայ մի մարմին տնկվում է յանկարծ Անուշի առաջ:

— Հա, հա, հա...

Անուշն անմիջապէս ճանաչում է նրան...

— Հօրաքոյր, հօրաքոյր...

Նրա առաջ կանգնած էր հէքեաթի դեւը: Ծուռ-մուռ ժայռի պէս անճոռնի գլխով, մինչեւ ականջները ճեղքված հսկայ բերանով, դիշատիչ ատամներով այն Դեւը...

Անուշն ուզում է ճչալ, ուզում է գոռալ, բայց Դեւն արդէն սկսում է մօտենալ նրան: Մօտենում է, մօտենում...

— Հա, հա, հա,— լսվում է նորից նրա ծանօթ քրքիջի ձայնը... — հա, հա,— Ու չչնջում է սարսուռ առաջացնող փսփսոցով,— կուզե՞ս աչքերդ բանամ:

Ու մինչ Անուշն ուզում է փախչել — Դեւը գերանանման իր թեւը երկարելով, ուռած մատները տանում է դէպի Անուշի նախշուն թաշկինակն ու քակում է հանգոյցը:

Թաշկինակը վայր է ընկնում:

Աշխարհը մթնում է:

Այլեւս ոչինչ չի երեւում: «Փախչել, փախչել...» մտածում է Անուշը... Ու գոյդ ձեռքերն առաջ մեկնելով, գերբնական մի ճիգով ճեղքում է նա խաւարն ու նետվում առաջ:

Սկսում է վազել։

Վազում է, վազում, թեւերը դէպ առաջ երկարած, դլուխը յետ դցած՝ բաց ընկածի պէս։

Խաւարը շարունակում է փռել նրա առաջ իր անթափանց տարածութիւնը։ Յետեւից Դեւը հալածում է անդադար։ Եւ յանկարծ Անուշը նկատում է, որ ինքն օդի մէջ է վազում այդպէս...

Օդի՞ մէջ...Կատաղի ու անդուսպ այդ թափո՞վ...—

Հող չկար իր ոտքերի տակ։

Նա զարհուրում է։

Վարը անդունդն է։

Խելակորոյս թռչում է նա խաւարի միջից... Իր մտքի մէջ ամեն ինչ խառնուել է իրար։ Շունչը կտրւում է կարծես։ Կարծր մի բան վերից սեղմում է, ճնշում...

— Հող, Հող...— ճչում է Անուշն ու արթնանում։

12

Ինքնաշարժը կանգնեց։

Բագրատը բռնելով Վարդենու թեւից նստեցրեց նրան կառքի մէջ։

Փարիզի լուսաւոր փողոցներով նրանք սլացան արագ ու սահուն։

Հաղարաւոր լոյսերի շլթեր իր գիրկն հաւաքած, հանդարտ վեհութեամբ հոսում էր Սենան՝ հեռու-հեռո՛ւներ տանող անծայր մի ճամբի նման։

Դղրդում էր ինքնաշարժը, իսկ հեռւում, մութի մէջ էյֆէլն էր վառւում, բոբբոքւում՝ բռնկում յանկարծ, հրդեհի բաւանների մէջ աստղեր բացում ու մարում...

Վարդենին իր ձեռքը Բագրատի ափերի մէջ պահած, նայում էր ու ժպտում նրան։ Իր սիրտը բացւել էր կարծես։ Նրան թւում էր, որ ինքն այդ օրւան էր սպասել տարիներ ի վեր։ Նա զգում էր, որ իր փնտրումների ու սպասումների հանդոյցի վրայ էր կանգնել արդէն։ — Յաւոտ այն հարցը՝ գնա՞լ, թէ չգնալ, որ տարիներ շարունակ մեխւել էր իր ուղեղի մէջ եւ հանգիստ չէր տալիս նրան, այսպէս անակնկալ կերպով լուծւել էր ահա ու կեանքը բացել, փռել էր իր առաջ մի այլ ուղի։

Ու ահա նստած էր նա Բագրատի հետ կողք-կողքի... Ինքնաշարժը սլանում էր այդպէս արագ, իսկ Վար-

դենու մոքի մէջ պատկերանում էր բովանդակութիւնն այն նամակի, որ նա գրել էր իր եղբօրը՝ Զաւէնին։

Ամեն, ամեն ինչ ասուած էր այնտեղ...

Վարդենին համոզուած էր, որ Զաւէնն իրեն կը հասկանայ։ Երկար այդ նամակը Վարդենին անձամբ էր տանում Զաւէնին յանձնելու համար... — Հիմա, երբ ամեն ինչ որոշուած էր արդէն...

Այն ճաշարանը, ուր աշխատում էր Զաւէնը, ճերմակ ռուսների ժամադրավայրն էր։ Այնտեղ վակ զոնների եւ թանձր վարագոյրների ետեւում, հնչում էին գնչուական երգեր ու հոսում էր սպիտակ օղին։

Երբեմնի մարդիկ այստեղ էին սպառում իրենց վերջին դրամն ու վերջին ճիգը։

Ներս մտնելու առաջին իսկ վայրկեանին, հսկայ մի գլուխ՝ ճաղատ ու տափակ, կռացաւ հանդարտօրէն ու կրկին վեր բարձրացաւ։ — Կարապետ Նիզոդոսեւիչն էր՝ ճաշարանի տէրն ու թագաւորը։

Սպասաւորներն անմիջապէս մօտ վազեցին ու նրանց յատկացրին ապատ մի սեղան։

Սրահի ծայրում շինուած էր փոքրիկ մի բեմ, որի վրայ ռուսական տարազներ հագած մի խումբ նուագում էր լարաւոր գործիքների վրայ։ Կարմիր լապտերներից ծորող լոյսը խառնւում էր բալալայկայի մեղմ հնչիւնին։ Արդիական հասարակ նկարներով զարդարուած պատերից բութ մի դդայողութիւն էր մաղւում։

Ցատակը ծածկուած էր կարմիր թաւիշով։

Մի քանի սեղանների շուրջ նստած մարդիկ, խամրած աչքերով, աչքեր, որոնց միջից ինչ որ անյայտ տանջանք ու մելամաղձութիւն էր ծորում, խմում էին ու լսում բեմից հոսող տխուր նուագը։ —

Պէտք էր չարչարել, քաշկռտել հոգին...

Ու լցւում էին բաժակները, մէկը միւսի ետեւից կուլ գնում։

— Дальше, голубчик, дальше...

Վարդենին դիտում էր իր շուրջը՝ ճաշարանատիրոջ, սեղանների շուրջ նստած այդ մարդկանց։ Նրա յիշողութիւնը թարմացել էր յանկարծ... Ահա-ահա երբեմնի այն մարդիկ՝ մօրուքը մէջտեղից կլիսած ու բեխերի հետ խառնած չինովնիկը, կատուի արտայայտութիւն ունեցող կառավարիչը... — իրենց քաղաքում, ռուսական հիմնարկութիւնների մէջ ծառայող պետական պաշտօնեաները, որ գալիս էին իրենց մօտ, երգում, խմում եւ «Կարապետի» մասին զանազան զարհուրելիքներ պատմում։ —

— Дальше, голубчик, дальше...

Սպասաւորները մատակարարում էին պատւիրած կերակուրները։

Բագրատը վիզաքշանքով նայում էր Վարդենուն։ Տարիներ էին անցել ու ահա նա կրկին հանդիպում է նրան։ Հանդիպում է բոլորովին այլ պայմանների մէջ, ուրիշ մի աշխարհում, բայց նոյն Վարդենուն։ Նա մեծացել էր միայն, աւելի զեղեցկացել։

Երագի պէս էին անցել այդ մի քանի շաբաթները Բագրատի համար, Փարիզում։ Ամեն օր նա գալիս էր Վարդենու մօտ եւ ժամեր ու ժամեր նրանք խօսում էին իրար հետ ու պատմում, պատմում... —

Վարդենին պատմում էր իր կեանքի, ապրումների ու իր տատանումների մասին. տատանումներ, որ վերջ չունէին կարծես։

— Ի՞նչ անել, Բագրատ, ի՞նչ անել,— կրկնում էր նա շարունակ։

Ու այժմ նստած իրար հետ կողք-կողքի Բագրատը

վիաղաքշանքով նայում էր նրան ու իր հաստատուն ձայնով պատասխանում նրա հարցերին:

— Քսաներորդ դարի մարդը,— ասում էր Բագրատը,— պէտք է դիտակցի իր անելիքը հասարակութեան մէջ: Նայիր շուրջդ: Երկու հզօր ուժեր իրար կոկորդից բռնած մահու եւ կեանքի պայքար են մղում: Մէկը յեղափոխական թափով ասպարէզ է եկել, քայլ առ քայլ հետապնդում է թշնամուն ու գրաւում է նորանոր դիրքեր, միւսը մահւան դատապարտուած նահանջում է: Երկաթեայ տրամաբանութեամբ կեանքն իր գործն է տեսնում: Միջադգային աշխատաւորութիւնն ասպարէզ ելած պատմութիւն է կերտում, եւ մենք՝ մեր երկիրը, Վարդենի, լծուած ենք յաղթողների սայլին ու քայլում ենք դէպի ապագայ: Մարդը, կատարեալ մարդը նա է, ով իր մեծ կոչումի գիտակցութիւնն ունի. նա երբեք չի տատանուի: Նրա վճիռները կը լինեն պարզ, կտրուկ եւ որոշ: Փորձիր մեռցնել քո մէջ հինը, Վարդենի, ու դու երջանիկ կը լինես: Փորձիր արթնանալ մի առաւօտ առանց անցեալի, առանց մխիթարի ու հոգին կաշկանդող հնի, որպէս ապատագրուած մի անհատ, որպէս նոր մարդ, նոր կեանքով ապրելու համար եւ դու երջանիկ կը լինես:

— Արթնանալ մի առաւօտ առանց անցեալի, առանց հոգին ու մխիթը կաշկանդող հնի... Որպէս ապատագրուած անհատ, որպէս նոր մարդ...

Խումբը սկսեց նւագել կովկասեան պարի մի եղանակ: Սեղանների շուրջ նստած մարդիկ սկսեցին ուրախ ուրախ ծափահարել: Ու մէկ էլ դուրթ մի խմբից, վեր ցատկեց չերկեսկա հագած վայելչակազմ մի վրացի, թեւերը լայն բացեց ու ընկաւ մէջտեղ:

— Կեցցէ՛ իշխանը, կեցցէ՛ իշխանը,— բղաւեցին ամեն կողմից:

Իշխանը սրահի մէկ ծայրից միւսն էր թռչկոտում: Մէկ քարանում էր յանկարծ, յետոյ նորից մանր-մանր քայլերով ասպարէզ էր նետւում:

— Ձերդ պայծառափայլութիւն, բռաւո, իսկապէս բռաւո: Շատն անցել քիչն է մնացել, ձերդ պայծառափայլութիւն, շուտով ազատութեան արշալոյսը կը ծագի մեր բոլորի հայրենիքներում եւ մի օր էլ այսպէս ուրախ կը պարենք մեր հայրենի սրահների մէջ:

— Ուզում են յետ դարձնել պատմութեան անիւը, չէնջաց Բագրատը ժպտալով Վարդենու ականջին,— բայց պատմութիւնն իր ճամբան ունի:

Վարդենին մտերմօրէն յենւել էր Բագրատին եւ ուշադրութիւն դարձած լսում էր նրան: Բայց յանկարծ Վարդենին ցնցւեց: Բարձրացրեց գլուխն ու նայեց Բագրատին:

Բագրատը վարի շրթունքն ատամների մէջ սեղմած, աչքերը յառել էր բեմին...

Այնտեղ, բեմի բարձրութեան վրայ, դեղջկական սարաֆանը հագին, ձեռքերը կրծքին ծալած, կանգնած էր... Նատան: Նրա կողքին, դիմաւոր ձեռքին...

Նրա կողքին դիմաւոր ձեռքին նստել էր Զաւէ՞նը...

Վիշտ ու թախիծ անելանելի
Սիրտս ցաւագին հեծեց,
Ախ, ինչու այս վիշտը, ծանր ու տխուր,
Ոչ ոք, ախ ոչ ոք չըմբռնեց...

Օ՛, այդ ձայնը... հոգի քաշկռտող այդ երգը...

Նատան...

Աչքերի նոյն արտայայտութիւնը, նոյն ձեւերն ու նոյն երգերը...

— Ա՛հ, կուզեմ, որ մեզ չտեսնեն,— գոչեց յուզ-

ւած Վարդենին ու գլուխը յետ-յետ քաշեց։ Բայց ինչո՞ւ։ Չէ՞ որ ինքը եկել էր Զաւէնին տեսնելու համար... Ինչո՞ւ տհաճ այդ զգացումը, ի տես իր եղբօր, գիթառը ձեռքին, Նատայի կողքին։

Նատան է՞ր մեղաւոր...

Գիթառի լարերը շարունակւում էին հնչել մելամաղձօրէն.—

Ախ, ինչու այս վիշտը ծանր ու տխուր
Ոչ nf, ախ, ոչ nf չըմբռնեց։

Անկիւնի պատը որոշ չափով ծածկում էր Վարդենուն ու Բագրատին եւ Զաւէնն ու Նատան չէին նկատում իրենց դիտողներին։

Բագրատը լուռ լսում էր։

Իսկ Վարդենուն թւում էր, որ այդ երաժշտութեան ամեն մի ձայնը, Նատայի երգի ամեն մի բառը ժամեր, ժամեր էին տեւում... Նրան թւում էր, որ այդ երգը վերջ չունէր այլեւս... Որ Զաւէնը դատապարտուած էր այդպէս հնչեցնելու իր գիթառի լարերն անվերջ ու անվերջ... Ու Վարդենին զգում էր, որ իր եղբայրը կորել էր այլեւս իր համար։

Ի՞նչ մթնոլոր էր այս։ Ովքե՞ր էին այս մարդիկ, ի՞նչ էին փնտռում։

Եւ այդ երգերը...

— Ինչպիսի հիւանդագին ապրումներով են լցուած այդ երգերը։ — Ասաց Բագրատը կռանալով դէպի Վարդենին,— այնպէս չէ՞։

Վարդենու աչքերը լցուած էին արցունքով։

Բագրատը ձեռքը դրաւ նրա ուսին։

— Դու ափսոսում ես մի բան, Վարդենի... Այդ երգը քեզ տխրութիւն է պատճառում։

Վարդենին հառաչեց։

— Այդ է՛րգը... Այո՛, Բագրատ... Ես ափսոսում եմ Զաւէնին...

Բագրատը մեղմութեամբ չոյեց նրա կախ ընկած գլուխը։

Երբ Նատան ու Զաւէնը վերջացրին վերջապէս իրենց երգն ու ծափերի տարափի տակ դուրս եկան բեմից, Վարդենին անմիջապէս ոտքի ելաւ։

Ու մինչ երաժշտութիւնը կրկին հնչեցնում էր կովկասեան մի եղանակ, նրանք մօտեցել էին արդէն դռներին։ Կարապետ Նիզոդոսեւիչի ճաղատ գլուխը նրանց առաջ կրկին վար ինչաւ ու հանդիսաւորութեամբ վեր բարձրացաւ։

Դռների մօտ, մի փոքր տատանումից յետոյ, Վարդենին սպասաւորի ձեռքի մէջ սահեցրեց պատրաստած իր նամակը եւ խնդրեց նրան յանձնել այն Զաւէնին։ Յետոյ շտապ բռնեց Բագրատի թեւից ու նրանք միասին դուրս եկան փողոց։

13

Կէս գիշերը վաղուց անցել էր արդէն: Զարմանալի եւ զարհուրելի մի խաղաղութիւն էր տիրում ամեն կողմ: Բազմայարկ տներ, փակւած լուսամուտներով, անշարժացած օթոներ, մթնած ցուցափեղկեր... Կարծես չար կախարդի անէծքով քարացած քաղաք լինէր Փարիզն այդ պահին:

Ուշ այդ ժամին, բաց մնացած մի սրճարանում նըստել էին Արտօն, Հայկն ու Բարդէնը:

Արտօն անհանգիստ էր· իր յօնքերից մէկը թռել, վեր էր բարձրացել: Նրանք երբեմն-երբեմն խօսքեր էին փոխանակում իրար հետ, յետոյ շարունակ ու շարունակ նայում պատից կախւած մեծ ժամացոյցին:

— Դեռ բաւական ժամանակ կայ,— ասաց Արտօն կարծես ինքն իրեն ու ձեռքով նշան արաւ, որ սպասաւորը դարեջրի բաժակները նորից լցնէ:

— Այսօր, ես աշխատելու չպէտք է գնամ, թող իմ աքաղաղն ինչքան ուզում է, կանչէ:— Նա լռեց մի վայրկեան, յետոյ շարունակեց գլուխը շարժելով,— Հէ՛յ գիդի օրեր... Մի ժամանակ, երբ աքաղաղը կանչում էր, շտապ արթնանում էի, հագնւում ու ընկնում այդիները՝ ոստիկանների աչքից պատսպարւելու համար, մինչեւ որ մութը նորից ընկնէր ու ես մի նոր թագստոց գտնէի ինձ համար... Հէ՛յ գիդի օրեր... Հիմա իմ աքաղաղը դործարանի սուլիչն է, որի ճչոցից մարդու սիրտն է ծակւում...

Անցաւ մի քանի րոպէ:

Լռութիւնը խզողը կրկին Արտօն էր:

— Այո, ես միշտ կարծում էի, որ վերջը էսպէս մի բան պէտք է պատահէր... Որ էդ աղջկայ ներսումը բաներ էին կատարւում... Միշտ լռակեաց, միշտ դիտող, խօսելիս էլ միայն հարցեր էր տալիս...

Բարդէնը գլուխը կախ լուռ լսում էր Արտօին, նրա մտքերը սակայն հեռու, հեռո՛ւ էին իր շրջապատից: Իր ուղեղի մէջ ոլորապտոյտ մի միտք էր ստեղծւել, որ գնում էր, գալիս ու կապւում էր բոլոր այն դէպքերի հետ, որոնք տարիների ընթացքում այնպէս դաշնակցել էին իրար հետ իրեն՝ Բարդէնի դէմ դուրս գալու համար, իրեն խորտակելու համար... Ամենքը, ամենքն իրեն հակառակ էին... — Ինքն ուզեց սիրել, չկարողացաւ, ինքն ուզեց վերադառնալ ծննդավայր, չինել իրենց տունը, չյաջողւեց...

Բարդէնի սիրտն այնպէս դառնացած էր ու այնպէս լցւած...

Հայկը քնատ ու յոգնած, գլուխը յենել էր սեղանին ու պղտորւած աչքերը յառած սրճարանի բաց դռների միջից երեւցող փողոցին, դիտում էր:

Փարիզն արդէն սկսել էր կամաց-կամաց արթնանալ:

Ծանր ապրանքատար ինքնաշարժեր՝ բեռնաւորւած կաթով, անցնում էին մէկը միւսի ետեւից: Դէպի շուկայ էին շտապում բանջարեղէններով եւ պտուղներով լիքը կառքեր: Մեծ քաղաքի թաքնաքաւուր խորքերից դուրս էին սողացել արդէն շիֆոնիէռները, որ մեծ զամբիւղները շալակած մօտենում էին դուրսը դրւած աղբի թիթեղեայ ամաններին, պրպտում նրանց ու իրենց զամբիւղների մէջ

13

Կէս գիշերը վաղուց անցել էր արդէն: Զարմանալի եւ զարհուրելի մի խաղաղութիւն էր տիրում ամեն կողմ: Բազմայարկ տներ, փակուած լուսամուտներով, անշարժացած օթոներ, մթնած ցուցափեղկեր... Կարծես չար կախարդի անէծքով քարացած քաղաք լինէր Փարիզն այդ պահին:

Ուշ այդ ժամին, բաց մնացած մի սրճարանում նըստել էին Արտօն, Հայկն ու Բարդէնը:

Արտօն անհանգիստ էր· իր յօնքերից մէկը թռել, վեր էր բարձրացել: Նրանք երբեմն-երբեմն խօսքեր էին փոխանակում իրար հետ, յետոյ շարունակ ու շարունակ նայում պատից կախուած մեծ ժամացոյցին:

— Դեռ բաւական ժամանակ կայ,— ասաց Արտօն կարծես ինքն իրեն ու ձեռքով նշան արաւ, որ սպասաւորը դարեջրի բաժակները նորից լցնէ:

— Այսօր, ես աշխատելու չպէտք է գնամ, թող իմ աքաղաղն ինչքան ուզում է, կանչէ:— Նա լռեց մի վայրկեան, յետոյ շարունակեց գլուխը շարժելով,— հէ՛յ գիդի օրեր... Մի ժամանակ, երբ աքաղաղը կանչում էր, շտապ արթնանում էի, հագնւում ու ընկնում այդիները՝ ոստիկանների աչքից պատսպարւելու համար, մինչեւ որ մութը նորից ընկնէր ու ես մի նոր թագստոց գտնէի ինձ համար... Հէ՛յ գիդի օրեր... Հիմա իմ աքաղաղը դործարանի սուլիչն է, որի ճչոցից մարդու սիրտն է ծակւում...

Անցաւ մի քանի րոպէ:

Լռութիւնը խզողը կրկին Արտօն էր:

— Այո, ես միշտ կարծում էի, որ վերջը էսպէս մի բան պէտք է պատահէր... Որ էդ աղջկայ ներսումը բաներ էին կատարւում... Միշտ լռակեաց, միշտ դիտող, խօսելիս էլ միայն հարցեր էր տալիս...

Բարդէնը գլուխը կախ լուռ լսում էր Արտօին, նրա մտքերը սակայն հեռու, հեռո՛ւ էին իր շրջապատից: Իր ուղեղի մէջ ոլորապտոյտ մի միտք էր ստեղծւել, որ գնում էր, գալիս ու կապւում էր բոլոր այն դէպքերի հետ, որոնք տարիների ընթացքում այնպէս դաշնակցել էին իրար հետ իրեն՝ Բարդէնի դէմ դուրս գալու համար, իրեն խորտակելու համար... Ամենքը, ամենքն իրեն հակառակ էին... — Ինքն ուզեց սիրել, չկարողացաւ, ինքն ուզեց վերադառնալ ծննդավայր, չինել իրենց տունը, չյաջողւեց...

Բարդէնի սիրտն այնպէս դառնացած էր ու այնպէս լցւած...

Հայկը քնատ ու յոգնած, գլուխը յենել էր սեղանին ու պղտորւած աչքերը յառած սրճարանի բաց դռների միջից երեւցող փողոցին, դիտում էր:

Փարիզն արդէն սկսել էր կամաց-կամաց արթնանալ:

Ծանր ապրանքատար ինքնաշարժեր՝ բեռնաւորւած կաթով, անցնում էին մէկը միւսի ետեւից: Դէպի շուկայ էին շտապում բանջարեղէններով եւ պտուղներով լիքը կառքեր: Մեծ քաղաքի թաքնաքաւուր խորքերից դուրս էին սողացել արդէն շիֆօնիէռները, որ մեծ գամբիւղները շալակած մօտենում էին դուրսը դրւած աղբի թիթեղեայ ամաններին, պրպտում նրանց ու իրենց գամբիւղների մէջ

հաւաքելով թղթերի, շորերի գանգան կտորներ, շտապ հեռանում էին դէպի ուրիշ եւ ուրիշ ամաններ:

Ահա եւ մայթ աւլողները, երկար ցախաւելներով, մէկը միւսի ետեւից սրբում էին մայթերը: Յատուկ ինքնաշարժեր ջրում ու խողանակում էին փողոցները: Ահա մայթերի մօտով, դեռնի տակից դուրս պրծած վտակը, կը գայ անձայն, կը մաքրի ու կը տանի բոլորն ու նորից կանյայտանայ դեռնի տակ... Ու Հայկը յանկարծ հարգատ մի բան զգաց այդ բոլորի հանդէպ: Կարծես թէ իր էութիւնը նոյնացել էր այլեւս այդ բոլորի հետ... Բայց երբ Արտօի աքաղաղը կանչի, երբ լոյսը բացուի, երբ նա նորից կանգնի դէմ-դիմաց Փարիզի կեանքին... Հայկը սոսկաց յանակրծ: Սառը մի զոռ անցաւ նրա մարմնի միջով: — Օրերի ու գիշերների անվերջ շարաններ պիտի յաջորդէին մէկ-մէկու՝ մէկը միւսի նման դորշ ու անիմաստ... Ինքը, ընկղմուած թանձր մի մշուշի մէջ, անկարող է դուրս պրծնել, ճեղքել կարծր խաւարն ու դուրս գալ մի նոր ասպարէզ...

Արտօն նայեց սրճարանի ժամացոյցին:

Ժամը մօտենում էր արդէն: Նա կամացուկ վեր եկաւ տեղից ու մօտեցաւ սպասաւորին: Բարգէնն ու Հայկը դուրս եկան փողոց:

— Եւ երբ լոյսը կը բացուի, Արտօները կը գնան գործարան, իրենց մեքենաների մօտ, ես ու դու, Բարգէն, կը սկսենք նորից մեր անվերջանալի երթն այս մայթերի վրայ... — ասաց Հայկը՝ յոգնած աչքերը յառելով Բարգէնի վրայ: — Ու այդպէս ամեն օր, այդպէս տարիներ ու տարիներ մենք կը շարունակենք սեւացած մայթերի վրայ մեր հոգիների վերջին կրակը սպառել... Մենք այլեւս մայթերի մարդիկ ենք դարձել, Բարգէն:

— Մայթերի մարդիկ... — կրկնեց Բարգէնը կարծես ինքն իրեն: — Էլ ինչո՞ւ ենք ուրեմն պղտորում մեր հոգիները, Հայկ, ինչո՞ւ ենք թունաւորում մեր միտքը դառն տենչերով, անօգուտ կարօտներով: Մայթերի մարդիկ... Ապրենք ուրեմն, որպէս այդպիսիք՝ իջնենք մինչեւ յատակն այն վայելքների, որ տալիս է մեզ այդ կեանքը... Մեր գիրկը հաւաքենք օտար հրապոյրները բոլոր ու սեղմենք նրանց մեր կրծքին այնպէս, որ նրանք հարգատ դառնան:

Հայկը տխրութեամբ նայեց Բարգէնին:

Արտօն սրճարանից դուրս եկաւ ու միացաւ նրանց: Նրանք առաջացան: Լուռ անցան փողոցը, բարձրացան գիմացի սանդուխներն ու մտան լայնաբաց կամարաձեւ դռներից ներս:

Կայարանը լցուած էր բազմութեամբ:

Մարդիկ գնում էին, գալիս, վազում էին, շտապում:

Սուր հնչում էին մեկնող գնացքների սուլիչները: Հայկը շտապ մօտեցաւ գնացքների մեկնումի ժամերը ցոյց տուող տախտակին ու քիչ յետոյ նրանք, երեքը միասին քայլերն ուղղեցին դէպի երկար մի մայթուղի:

Նրանք առաջանում էին դանդաղ՝ ուշադրութեամբ նայելով գնացքի բոլոր լուսամուտներին: Բայց ահա, ահա Վարդենու դլուխը... Կանգնած է նա լուսամուտի առաջ եւ թաշկինակով իրենց նշաններ է անում: Մօտեցան գնացքին: Արտօն մի վայրկեան կանգ առաւ, մի բան խորհողի պէս, յետոյ վճռական մի շարժումով բարձրացաւ գնացք:

Այնտեղ, գնացքի բաժանմունքներից մէկում, տե-

զաւորւել էին արդէն Վարդենին, Սրմաշն ու Անուշը եւ սպասում էին Բագրատին:

Արտօն հանեց թաշկինակը, սրբեց քրտնած ճակատը, յետոյ նայեց չորս կողմը:

Իրար ձեռք սեղմելուց յետոյ բոլորը կանգնել էին լուռ ու այլայլուած... Կարծես էլ ոչինչ չկար իրար ասելու, կարծես ամէն ինչ վաղուց ասուած էր արդէն ու այժմ մնում էր միայն մեկնելը, մեկնել ու հեռանալ:

Բարգէնը, որ մօտեցել էր Սրմաշին, աշխատում էր չնայել Վարդենուն: Նեղ եզրաւոր գլխարկի տակից Վարդենու դէմքը տարօրինակ մի արտայայտութիւն էր ստացել: Ի՞նչ էր մտածում նա արդեօք այդ պահին, Բարգէնը չգիտէր, մինչ Վարդենին իր հերթին լուռ դիտում էր Բարգէնին: Նա ուզում էր մօտենալ նրան, խօսել նրա հետ, բայց ինչի՞ մասին: Գուցէ կարելի լինէր փոխանակել նրա հետ մի քանի աննշան խօսքեր... Բայց չէ՞ որ միեւնոյն է, Բարգէնն իրեն չպիտի հասկանար: Օտարոտի մի զգացում կանգնել էր այլեւս նրանց հոգիների միջեւ:

Անուշը քաշւել էր դնացքի մի անկիւնն ու պարզ աչքերով դիտում էր այդ բոլորը:

Արտօն նստել էր Անուշի կողքին ու փորձւած մարդու նման դննում էր Վարդենու իրերը, որ դրւած էին նրա գլխի վերեւում:

— Երկաթուղին ինձ միշտ մի քիչ տխրութիւն է պատճառում,— ասաց Արտօն դառնալով Վարդենու կողմը: — Մարդը, որ գնում է, կարծես թէ հեռանում է քեզնից ընդմիշտ, կարծես թէ ուրիշ մի աշխարհ է գընում...

— Բայց այնտեղ, ուր գնում եմ ես, Արտօ, ուրիշ

աշխարհ չէ: Այնտեղ մեր բոլորի հոգիներից մասնիկներ կան, մեր իսկական հոգիներից, մեր ճշմարիտ էութիւնից մասնիկներ... Այն, որ կորցնում ենք այստեղ, կորցնում օրէ օր: Ուրիշ աշխարհը այս է, Արտօ:

— Բայց այսօր պատնէշներ են կանգնած մեր միջեւ, Վարդենի:

— Պատնէշները թղթէ են, Արտօ: Փորձիր հաւատալ մեր երկրի վերածնունդին, փորձիր հաւատալ, որ Արագածի փեշերի շուրջ վերաշինւում է մի նոր երկիր, ուր մի ժողովուրդ իր երջանիկ կեանքն է կոփում այսօր եւ դու կը տեսնես, որ այդ պատնէշները չկան այլեւս:

Արտօն գլուխը շարժեց: Նա նայեց Վարդենուն: Վարդենու աչքերն այնպիսի փայլ էին ստացել... Ցենւած լուսամուտին նա անդադար նայում էր դուրս, մէկին սպասողի անհամբերութեամբ: Եւ յանկարծ... Նա սկսեց թաշկինակն արագութեամբ ճօճել օդում...

Մայթուղու երկարութեամբ, աչքերը դնացքի լուսամուտներին յառած, արագ-արագ առաջանում էր Զաւէնը: Հեռուից նա նկատեց Վարդենուն ու քայլերն ուղղելով այն կողմը, շուտով հեւ ի հեւ ներս ընկաւ խցիկը:

— Որքան ուրախ եմ, որ եկար, Զաւէն,— գոչեց Վարդենին, ակնյայտ յուզմունքով վազելով դէպի եղբայրը,— որքան ուրախ եմ:

— Եկայ, եկայ... ինչպէս թէ՞ չգայի, Վարդենի, ինչպէս թէ չգայի... Զէ՞ որ...

Նա լռեց խսկոյն, բայց Վարդենին նկատեց, որ յուզմունք ու սրտառուչ մի բան կար թաղնւած նրա ձայնի մէջ: Նա կանգնեց եղբօր դիմաց ու սկսեց դիտել նրան անհուն սիրով լցւած քրոջ աչքերով:

Իր եղբայրն էր նա, իր եղբայրը...

Բայց Զաւէնը չթողեց, որ քոյրը երկար դիտէր

իրեն։ Նա շուտով վեր ելաւ տեղից, սկսեց քննել Վարդենու իրերը, հաշուել պայուսակները. լա՞ւ էին դրուած արդեօք, վար չընկնէին յանկարծ։ Յետոյ մօտեցաւ կըրկին Վարդենուն, բռնեց նրա ձեռքերն իր ձեռքերի մէջ ու քնքշօրէն սկսեց շոյել...

— Տաք հագուստներ ունե՞ս, քնելու տեղ ունե՞ս։ Զգոյշ եղիր ճանապարհին չմրսես։

Այդ խօսքերը, խօսելու այդ եղանակը... Զաւէնի ձայնի ելեւէջները...

Վարդենու մէջ քաղցր մի զգացում էր արթնացել։ Կարծես թէ Զաւէնը չէր խօսողը, կարծես թէ Նուրարն էր եկել ու խօսում էր այդպէս... Գուրգուրում էր իր դաւակին։

Հայրիկը...

Եւ Վարդենին առաջին անգամ լինելով նկատեց յանկարծ, որ իր եղբայրը՝ Զաւէնն այնքան, այնքան նման էր հայրիկին... Նոյն ճակատը, նոյն մազերը... ու ձայնի հոգատար նոյն այդ շեշտը...

Վարդենուն թւաց, որ տարիներ է վեր կորցրած իր եղբօրը գտել էր յանկարծ։ Իր մօտն էր նա այժմ իր հարազատ եղբայրը, այդտեղ էր հիմա։ Նա գրկեց Զաւէնին եւ սեղմեց նրան։

— Զաւէ՛ն...

Այո՛, այո՛, իր հարազատ եղբայրն էր նա։ Վարդենին գտել էր նրան մի վայրկեանի մէջ... Բայց որքան պիտի տեւէր այդ։ Գնացքը նորից պիտի բաժանէր նրանց միմեանցից ու կեանքը հեռու, հեռու պիտի տանէր նրան։ Ու թւաց Վարդենուն, որ ինքը գտել էր իր եղբօրը նորից՝ ընդմիշտ կորցնելու համար։

Վարդենու աչքերը լցուեցին արցունքով եւ նա հազիւ կարողացաւ դոպել ինքն իրեն։

Զաւէնը շարունակում էր շոյել քրոջ ձեռքերը։

— Անուշին ես մենակ չեմ թողնի։ Միշտ կայցելեմ իրեն, կօգնեմ մինչեւ որ նա իր գործն աւարտէ։

— Իսկ դո՞ւ, Զաւէն։

— Իսկ ես... Ես ակամայ այրել եմ նահանջի բոլոր կամուրջները, Վարդենի։ Բայց դա կարեւոր չէ հիմա... Կարեւոր չէ դա։ Բո նամակը ես կարդացի մեծ յուզումով։ Փորձել էիր բացատրել ինձ քո զգացմունքները։ Ես քեզ հասկանում եմ, Վարդենի։ Դու սիրում ես Բագրատին... Բագրատը լաւ տղայ է, իսկ դո՞ւ, դու դեռ երիտասարդ ես, վերցրու կեանքն այնպէս, ինչպէս սիրտդ է տենչում։ Ես ուզում եմ, որ դու երջանիկ լինես... Հասկանում ե՞ս, կատարեալ երջանիկ։

Վարդենին յափշտակուած կլանում էր Զաւէնի ամեն մի խօսքը։ Այդ խօսքերը սպեղանի էին նրա սրտի համար։ Նա իրեն այնպէս մեղաւոր էր զգում... մեղաւոր իր ծնողների առաջ, Զաւէնի առաջ... Բայց Զաւէնն այնպէս փոխուած էր այսօր։

Մեկնումի ժամը կամաց-կամաց մօտենում էր։ Սպասում էին Բագրատին։

Արտօն վեր կացաւ տեղից ու մօտեցաւ Վարդենուն։

— Վարդենի,— ասաց նա ձեռքը մեկնելով նրան.— կարդացած գրքի նման դու էսօր ծալում, մէկ կողմ ես նետում անցեալը, բայց եթէ մի օր յիշես մեզ, եղիր արդարամիտ։ Դու գնում ես այսօր մի երկիր...

— Նա գնում է այսօր հայրենիք, Արտօ, գնում է նուիրուելու նրա վերածնունդի մեծ գործին, խառնելու իր աշխատանքն ուրիշների աշխատանքին։

Զաւէնը դարձաւ, նայեց Արմաշին։ Ի՜նչ աչքեր էին այդ աչքերը... Ինչքան կամք ու հաւատ կար նրանց փայլի մէջ։ Կամք ու հաւատ... Հաւատ հանդէպ մի գործի,

մի գաղափարի, որի շուրջ համախմբուել են մարդիկ ու կոփում ու ստեղծում են ամբողջը նոր մի կեանքի: Ի՞նչ ինքը... իր անհամապատասխանութիւնը... Ու թւաց Զաւէնին, որ անհամապատասխան իր փիլիսոփայութիւնը, փոքրանում, փոքրանում, նեղանում ու վերածւում է փոքրիկ մի կէտի: Մի կէտ, որի վրայ իր հոգին պտտւում էր անհանգրուան ու մենակ: Ու թւաց Զաւէնին, որ կեանքը, անցեալն իր ամբողջ, լարած մի մեքենայ է եղել, որ պիտի դառնայ, դառնայ ու կանգ առնի մի օր...

— Այո՛, գնում եմ, Արտո,— պատասխանեց Վարդենին ագատելով ձեռքը եղբօր ձեռքից ու իր ափերի մէջ առնելով Արտոի մեկնած ձեռքը: — Երբ պատահի, որ մի օր, մենակ մնացած ժամանակ, բարձր յարկի քո այն սենեակում նստած, յիշես ինձ, եղիր անաչառ, Արտո:

Բայց այդ ժամանակ գնացքի երկար նրբանցքի մէջ երեւաց Բաղրատի բարձր հասակը: Գրեթէ միաժամանակ հնչեց առաջին սուլիչը...

Ու թէեւ ամենքն այդ րոպէին էին սպասում, սուլիչն այնպէս անսպասելի թւաց յանկարծ...

Հո՛ւ... հո՛ւ...

Ճչաց նա...

Բաղրատն արագ քայլերով ներս մտաւ խցիկը: Մի րոպէ հայեացքը պտտցրեց ներկաների վրայ, յետոյ մօտեցաւ մէկիկ-մէկիկ սեղմեց բոլորի ձեռքերը: Արտոն անշարժ մնացել էր կանգնած իր տեղում: Երբ Բաղրատը մօտեցաւ նրան, նրանք լուռ իրար ձեռք սեղմեցին ու երկար, երկար նայեցին իրար աչքերի մէջ:

Զաւէնը գրկեց Բաղրատին ու ջերմօրէն համբուրեց նրան:

— Քրոջս քեզ եմ յանձնում, Բաղրատ,— ասաց նա:

— Ցետոյ դարձաւ, գրկեց Վարդենուն:

Զաւէնի գրկից ազատւելով, Վարդենին սեղմեց իրեն Անուշի գանգրահեր գլուխը:

— Զաւէնը քեզ մենակ չի թողնի, Անուշ, իսկ յետոյ... — Բայց նա խօսքը չվերջացրեց:

Այդ ժամանակ, մինչ այդ լռած ու մի կողմ քաշւած Բարգէնը մօտեցաւ Վարդենուն, արագ բռնեց նրա ձեռքը, յետոյ առանց մի բառ արտասանելու, կռացաւ ու շտապ մի համբոյր դրոշմելով նրա վրայ, համարեայ վազելով դուրս եկաւ գնացքից:

Նրա ետեւից հերթով ցած իջան եւ բոլորը:

Գնացքում մնացին Վարդենին, Արմաշն ու Բաղրատը, որ կռացած նեղլիկ լուսամուտից նայում էին վար, ուր սկսել էր արդէն հրաժեշտի իրարանցումը:

Գնացքի մի ծայրից միւսը պաշտօնեաները դրօշակներով իրար նշաններ էին անում: Ուրիշ մի պաշտօնեայ երկար մուրճը ձեռքին թեթեւօրէն խփում էր անիւներին ու առաջանում:

Ցանկած շոգեկառքի սեւ ծխնելոյզից ծուխի թանձր պալաններ դուրս շպրտւեցին վեր: Մէկ անգամ էլ մեկ-նողներն ու մնացողները նայեցին իրար: Մէկ անգամ էլ լուսամուտից մեկնած ձեռքերը ճօճւեցին օդում եւ գնացքը տքաց ու հեւաց եւ կամաց-կամաց առաջացաւ՝ մութ կամարների տակից թանձր խաւարը ճեղքելով դէպի լուսաբաց մտնելու համար:

Ընթացող գնացքի հետ միասին Անուշը քայլում էր առաջ, առաջ... Ահա Վարդենու գլխարկի ծայրը, ահա Արմաշը, Բաղրատը...

Նա գրեթէ տարւել էր այդ ընթացքով...

Ընթացքո՞վ... թէ՞ Բաղրատի աչքերով... —

Կիսախաւարի մէջ, շարժւող գնացքի լուսամուտից դուրս նայող այդ աչքերը...

Այդ աչքերը...

— Բաղրա՛տ... Բաղրա՛տ...

— Մնաս բարեւ, Անուշ, մնաս բարեւ...

— Քո աչքերը նման են Բեհեղ տատի աչքերին, Բաղրատ... Բե– –հեղ տա–տի աչ–քե–րին...

— Հո՛ւ...

Ճչաց շողեկառքի սուլիչը վերջին անգամ ու գնացքը նեռուեց այլեւս տարածութեան դիրկը:

Ամենքն անշարժացած էին այլեւս:

Ամենքը նայում էին հեռու, հեռո՛ւ՝ երկաթէ գոյգ այն գծերին... ու նրանց վերը բարձրացող պալան–պալան թանձր այն ծուխին...

Մայթի վրայ քարացել, մնացել էր Արսոն:

Մէկը զգուշութեամբ բռնեց Անուշի թեւից:

— Անուշ...

Զաւէնն էր:

Լուրջ ու տխուր նա նայեց Անուշի աչքերին, իր ափի մէջ սեղմած պահելով կապոյտ թղթի մի կտոր... — մի հեռագիր, որ նա թաղցրել էր Վարդենուց... Մի հեռագիր, որ հայրիկի մահն էր գուժում:

Նուբարը մեռել էր:

Մեռել էր ու թաղել էին նրան արդէն... Գրիգորիյ Եւանգուլիչն էր հեռագրել:

Անուշը լուռ բարձրացրեց գլուխը: Նայեց եղբօրը: Ցեռոյ կրկին աչքերը սեւեռեց հեռուն, հեռո՛ւն...

Անհետացող ծուխի քուլաները պալան – պալան պտտւում էին օդում...

Անուշը նայում էր, նայում թանձր այն ծուխին, ոլոր–ոլոր պալաներին...

Ահա, ահա վերջին քուլաները կը բարձրանան վեր, վեր ու կը ցրւեն, կը ցրւեն օդում... Անուշի կեանքի պէս, Անուշի անցեալի պէս:

Գիշեր է:

Նստած վեցերորդ յարկի իր սենեակում, դրասեղանի առաջ, գլուխն ափերին յենած, Անուշը խորասուզւել է մտածմունքների մէջ:

Նրա աչքերը լցած են արցունքով:

Սեղանի վրայ ընկած է կապոյտ թղթի այն կտորը... — այն հեռագիրը, որ Նուբարի մահն էր գուժում...

Հայրիկը մեռել էր:

Մեռել էր ու թաղել էին նրան արդէն...

. . .

Գատակից սենեակից լսւում էր հարեւանի ժամացոյցի համաչափ դարկը՝

Տիկ–տակ–տակ

Տիկ, տակ...

Գատուհանի վարագոյրները ծանրութեամբ իջել էին մինչեւ յատակն ու կտրել էին Անուշին ողջ աշխարհից:

Այսպէս ուրեմն անցել էր մի ամբողջ դարաշրջան: Սահել էին տարիները տարիների ետեւից, դէպքերն ու դէմքեր յաջորդել էին իրար, ուղիները գլորւել էին մէկը միւսի ետեւից եւ դարը հասունացել էր:

Ու Անուշի մտապատկերի պաստառի վրայ, շարժանկարի արագութեամբ մէկիկ–մէկիկ դալիս էին անցնում օրերն իր անցած՝ մանկութիւն, պատանեկութիւն ու երէկն իր...

— Անո՜ւշ... Անո՜ւշ,— կանչում էին նրանք:

Ուղտերի մի կարաւան զօղանջելով ճեղքում էր հողին, մի նուռ էր տրաքում յանկարծ ու մուժի միջից լսւում էր տատի ձայնը... Հուր ու բոց բարձրացող թոնրի շրթից Հարսնուկ բաջու երգի ձայնն էր հնչում:

Խորը-խորը մի երկինք բացել էր ասես իր դիրկն ու հոգիները կուլ էին ընկել անհունի մէջ: Մինչ այնտեղ՝ հեռւում ճերմակաթեւ վրանի տակից լսւում էր թագուն փսփսոց:

Բայց այդ ի՞նչ երկար սանդուխքներ էին ցցած իր առաջ...

Երկա՜ր սանդուխքներ...որ տանում էին դէպի վեր, դէպի վեր...

Անուշին թւում էր, որ ինքը ելնում է տեղից ու մօտենում է սանդուխքներին: Բարձրանում է:

Բարձրանում է, բարձրանում, յետոյ հակառակ կողմից վար է իջնում:

Իրենց տան տանիքի վրայ է:

Աստղերը վերից կայծ են թափում տանիքի եւ բայնաճիւղ թթենու վրայ:

Նա կամացուկ մօտենում է վրանին եւ զգուշութեամբ բարձրացնում է վարագոյրի ծայրը: Ներսը մարդ չկայ սակայն...

— Հայրիկ, աստղերն ի՞նչ են:

— Հայրիկ, լուսինն ո՞վ է:

Լուռ է վրանը ու լուռ է երկինքը:

Շարունակում է քայլել տանիքի վրայ:

Իջնում է պատշգամբ, մտնում տուն: Սենեակներ, սենեակներ... Մէկը միւսի ետեւից բացւում են դռները բոլոր: Ամեն տեղ դատարկ է սակայն:

Ահա հայրիկի առանձնասենեակը... Գրասեղանը՝

հատ ու բարակ գրքերով, պատից կախւած աշխարհագրական քարտէսը... Մօտենում է պատին: Քարտէսի գոյները խամրել են եւ իրար են խառնւել սահմանները բոլոր: Հայրիկի բազկաթոռը... Սեղանի վրայ դրւած ապակէ թանաքամանը՝ գրիչը մէջը թաթախած... Բայց կեանք չկայ սենեակի մէջ...

Ո՞ւր են, ո՞ւր են:

Ցեռ է դառնում: Դրան անկիւնում, պոչը ցցած կանգնել է փիսոն..

— Փիսո, փիսո:

Բայց մնում է շւարած: Փիսոն անշարժ էր քարացած արձանի նման:

Վազում է ննջարան, նախասենեակ, պարտէզ...

— Մայրիկ,— ձայնում է:

Պարտէզում ճերմակ սիւռոցով ծածկւած սեղանի առաջ նստած է մայրը:

— Մայրի՜կ...

— Անո՜ւշ...

Անուշը վազում է, փաթաթւում նրան:

Մայրը շոյում է նրա մազերը: Լուռ ու քնքոյշ շոյում է մազերը:

— Գնացին, բոլորը գնացին... — Ասում է:

Տաք մի հոսանք բարձրանում, պարուրում է Անուշի ողջ էութիւնը: Ցեռոյ նա սեղմւում է մօր կրծքին ամուր, շատ ամուր ու պատմում է, պատմում, պատմում...

— Այո՛, մայրիկ, բազմաթիւ ուղիներով գնացին:

Մայրը բարձրացնում է գլուխը, նայում է Անուշին:

— Բազմաթիւ ուղիներով գնացինք մենք, մայրիկ, եւ բազմաթիւ ուժեր եկան ու բախւեցին մեր հոգիների մէջ: Բայց այդ բախումից ծնւել է հիմա նորը: Իրար են խառնւում եւ իրար մէջ են ձուլւում երազն ու իրականու-

ՀՀ Ազգային գրադարան
NL0325899

20459

ԳԻՆԸ 10 ՖՐ.

PRINTED IN FRANCE